

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԻՄԻՏՐԻ

**ԱՐՄԱՆԻ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ ԵՎ ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՍ
ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ
ԵՎ ՆՐԱՆՑ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԸՍՏ ՍԵՊԱԳԻՐ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ**

Հ.VIII

ԵՐԵՎԱՆ - 2014

9(47.925)

Ո-25

հշ

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԻՄԻՏՐԻ

6248

**ԱՐՄԱՆԻ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ԵՎ ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ
ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ
ՆՐԱՆՑ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԸՍՏ ՍԵՊԱԳԻՐ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ**

Յ.VIII



ԵՐԵՎԱՆ-2014

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3(22)

U 259

Խմբագիր՝ պատմական գիտությունների պրոֆեսոր Աթանասիոս Թ. Ֆոտոպուլոս (Հունաստան)

Սարգսյան Դ.Ն.,

U 258 Արմանի կամ Արմենիա և Ուրարտու կամ Արմենիա պետությունների ծագումը և նրանց մշակույթը ըստ սեպագիր աղբյուրների. Զ. VIII: Եր., Անտարես, 2014, 184 էջ:

Ժայռապատկերների, սեպագիր ու հիերոգլիֆիկ արձանագրությունների, հնագիտական նյութի և գիտական գրականության տվյալների հիման վրա գրքում ներկայացված է Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. III - I հազարամյակներում քաղաքական ասպարեզ եկած Արմանի կամ Արմենիա և Ուրարտու կամ Արմենիա պետությունների ծագումը և նրանց մշակույթը:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, հայ ժողովրդի ծագման և նրա մշակույթի հարցերով զբաղվողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3(22)

ISBN 978-9939-51-358-4



© Սարգսյան Դ.Ն., 2014

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

**ԱՐՄԱՆԻ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ (ՀԱՅԱՍՏԱՆ) ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇՄԱՐՅՈՒՄ ԸՍՏ ՇՈՒՄԵՐԱ - ԱՔՔԱԴԱԿԱՆ ՍԵՊԱԳԻ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ**

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

**ԱՐՄԱՆԻ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ (ՀԱՅԱՍՏԱՆ) ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇՄԱՐՅՈՒՄ ԸՍՏ ԱՔՔԱԴ ԵՐԿՐԻ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՎՈՐ
ՍԱՐԳՈՆ ԱՔՔԱԴԻ ՍԵՄԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՍԵՊԱԳԻ
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Արմանի երկիրը առաջին անգամ հիշատակվել է Աքքադ երկրի թագավոր Սարգոն Աքքադի (2633-2579) սեմական ծագում ունեցող աքքադական սեպագիր արձանագրություններում¹:

Արմանի երկրի տեղադրության հարցում ուշագրավ է այն փաստը, որ Վերին Միջագետքում գտնվող Աքքադ երկրից արևմուտք տարածված է եղել պատմական Հայկական լեռնաշխարհը, որտեղ էլ գտնվել է Արմանի կամ Արմենիա երկիրը: Արմանի երկրի կամ Արմենիա լեռնաշխարհի (հմմտ. Հայկական լեռնաշխարհի) համեմատությունը թույլ է տալիս Արմանի երկիրը տեղադրել Արմենիա լեռնաշխարհում կամ Հայկական լեռնաշխարհում: Այսպիսի համադրությունը հաստատ է, քանի որ ուրիշ Արմանի երկիր և Արմենիա երկիր, ինչպես նաև ուրիշ Հայկական լեռնաշխարհի և ուրիշ Արմենիա լեռնաշխարհի գոյություն չունեն ուրիշ մի այլ տեղ: Այս փաստը հաստատում է, որ Արմանի կամ Արմենիա երկիրը Շումերա-Աքքադական դարաշրջանում տեղադրվում է Հայկական լեռնաշխարհում (Արմենիա լեռնաշխարհում):

Արմանի կամ Արմենիա երկրի տեղադրության, նրա բնակչության էթնիկական ծագման և Աքքադ պետության մշակութային հարաբերությունների մասին տեղեկություններ են պահպանվել Սարգոն Աքքադի մի այլ արձանագրությունում, որը պատմում է իր այն արշավանքի մասին, որը կապված է Վերին Եփրատի արևմտյան կողմում գտնվող Փոքր Ասիայում տարածված Խաթթի ցեղերի

¹ E.Weidner, Der Zug Sagdons von Akkad nach Kleinasien, Lepzeg, 1922, page, 56.

(խեթական ցեղերի) Պուրուշխանդա քաղաքի հետ: Իր այդ արածանագրությունում Սարգոն Աքքադը պատմում է, որ Խաթթի երկրի Պուրուշխանդա քաղաքի սենական ծագում ունեցող առևտրականներից պատվիրակ է եկել և հայտնել իրեն, որ Պուրուշխանդա քաղաքի բնիկ իշխան Նուր-Դագանը հալածում է իրենց, որի պատճառով նրանք խնդրում են, որ Սարգոն Աքքադը օգնի իրենց:

Սարգոն Աքքադը համաձայնվում է և անմիջապես հարևան սահմանի վրա գտնվող Արմանի կամ Արմենիա (Յայաստան) երկրի վրայով արշավում է Պուրուշխանդա քաղաքի վրա, կարգի բերում Նուր-Դագանին: Այնտեղից վերադառնալիս, երբ Սարգոն Աքքադը կրկին հասնում է Արմանի կամ Արմենիա(Յայաստան) երկիր, նրա բնակիչներից իմանում է, որ իրենց երկրում այնպիսի լավ պտղատու ծառեր և բույսեր են աճում, որպիսիք Աքքադ երկիրը չունի: Սարգոն Աքքադը որոշում է նրանց տունկիներից տանել իր երկիր և բազմացնել դրանք: Սարգոն Աքքադի սեպագիր արձանագրությունում հիշատակվում են դրանց անուններ՝ *hashuru* «խնձոր»² *tutu* «թութ», *saluru* «սալոր», *sirdu* «սիրդու» անունները, որոնց տունկիները Սարգոն Աքքադը տարել է իր երկիր ու բազմացրել դրանք:

Այժմ պարզվում է, որ այդ ծառատեսակների անունները ունեցել են բնիկ հայերեն լեզվական ծագում: Այս փաստը հաստատում է, որ Արմանի երկրի անունը համապատասխանում է Արմենիա երկրի անվանը (դրանցից առաջինը գրվել է սենական ծագում ունեցող լեզուներով, իսկ երկրորդը, ինչպես պարզվել է հետազայում, գրվել է հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն լեզվով): Փաստորեն Արմանի կամ Արմենիա երկիրը եղել է արմենների կամ հայերի երկիրը, այսինքն՝ Յայաստան երկիրը, սկսած դեռևս Սարգոն Աքքադի ժամանակից, այսինքն՝ մ.թ.ա 2633-2579 թվականներից:

Այդպիսի փաստեր են արձանագրվել Արմանի կամ Արմենիա երկրի հետ կապված, երբ այն առաջին անգամ հիշատակվել է սեպագիր աղբյուրներում՝ մթա III հազարամյակում:

Սարգոն Աքքադի սեպագիր արձանագրությունները ընդհանուր տեղեկություններ են պահպանել նաև Աքքադ պետության բնակիչների էթնիկական կազմի և նրանց զբաղեցրած տարածքների մասին: Ըստ այդ տեղեկությունների, Աքքադ պետության բնակիչները բաժանվում են էթնիկական երկու խմբի, որոնց մի մասը կազմում էին սենական

² E.Weidner, Der zug Sargons von Akkad nach Kleinasien, Leipzig, 1922 (Boghazkoi-Studien-ի մեջ այդ տեքստը վերծանված և թարգմանված է):

ծագում ունեցող աքքադացիները, իսկ մյուս մասը կազմում էին շումերները, որոնք պատկանում էին հնդեվրոպական ռասային:

Ըստ Սարգոն Աքքադի արձանագրությունների տվյալների, Աքքադ երկրի հյուսիսային կողմում ապրում էին շումերները, իսկ այդ երկրի հարավային կողմում ապրում էին աքքադացիները: Ընդ որում, շումերները, երբ ապրում էին Աքքադ պետության հյուսիսային կողմում, սկսած մթա III հազարամյակից մինչև մթա III հազարամյակի կեսերը, ստեղծել էին գաղափարագրեր, իսկ մթա III հազարամյակի կեսից մինչև մթա III հազարամյակի վերջը ստեղծել էին վանկագիր սեպագրերը: Յենց մթա III հազարամյակի վերջից էլ շումերները աքքադացիների ճնշման տակ տեղափոխվում են Աքքադ երկրի հարավային կողմում ապրելու:

Շումերների ստեղծած սեպագրերից օգտվել են որոշ ժողովուրդներ, որոնց թվում նաև սենական ծագում ունեցող աքքադացիները: Սակայն Արմանի կամ Արմենիա (Յայաստան) երկրի բնակիչները չկարողացան օգտվել սեպագիր գրությունից, որովհետև այդ գրության համակարգի հնչյունների թվից գրեթե կրկնակի անգամ շատ էին Արմանի կամ Արմենիա (Յայաստան) երկրի բնակիչների, այն է՝ արմենների կամ հայերի լեզվի հնչյունների թիվը՝ այդ լեզվի հարստության, ճոխության պատճառով, իսկ շումերները այբուբեն են ստեղծել համեմատաբար քիչ հնչյուններ ունեցող լեզուների համար, որովհետև դրանց հետ աշխատելը ավելի հեշտ էր:

Յետագայում, երբ առաջ եկավ հնչյունագիր գրության համակարգը՝ վանկագիր գրության փոխարեն, այդ ժամանակ այբուբեն ստեղծվեց միայն քիչ հնչյունական կազմ ունեցող լեզուների համար: Ուստի առատ, ճոխ հնչյունական կազմ ունեցող արմենների կամ հայերի լեզվով գրություն չստեղծվեց այնքան ժամանակ, մինչև որ քաղաքական ասպարեզ եկավ հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը, և հասկացավ, որ հայ ժողովրդի ճոխ լեզվի համար պետք է ստեղծել առատ հնչյունական սիստեմ ունեցող այբուբեն: Եվ հանճարեղ Մեսրոպը ստեղծեց հայոց լեզվի համար ճոխ այբուբեն, որը կազմված էր ոչ թե 20-21 հնչյուններից, այլ 36 հնչյուններից, որոնք կգրվեն 39 տառով, այն ժամանակ էլ հայերեն լեզվով կստեղծվի գրության սիստեմ և այդ լեզվով էլ կսկսվի հայերեն լեզվով գրությունը:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՐՄԱՆԻ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ (ՅԱՅԱՍՏԱՆ) ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՔՔԱԴ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱԳԱՎՈՐ ՆԱՐԱՄՍԻՆԻ ՍԵՄԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

Աքքադացիները, որոնք մթա III հազարամյակի կեսից, երբ տեղափոխվում են Վերին Միջագետքի հյուսիսային կողմում ապրելու, օգտագործում են այդ հարմար դիրքը և սկսում են արշավանքներ գործել նաև իրենց շրջակայքում գտնվող այն երկրների վրա, որոնք տարածված էին «Արևելքի ներքին ծովից մինչև Արևմուտքի վերին ծովը (ulti tamdim eliniti Ša Šalam ŠamŠi adi tamdim šabliti Ša šit ŠamŠi) այդ արշավանքների ընթացքում նրանք կողոպտում են այդ երկրների բնակիչներին, իսկ նրանց երկրներն էլ դնում են հարկի տակ: Այդպիսի արշավանքի մասին է պատմում Աքքադ երկրի թագավոր Նարամսինը (2238 - 2202) իր այն արձանագրությունում, որը հայտնաբերվել է Հայկական լեռնաշխարհի ծայր հարավային կողմում տարածված Ամիդի կամ Դիարբեքրի (հմմտ. Տիգրանակերտի) մոտ տարածված Պիր-Հուսեին բնակավայրից: Արձանագրությունում Նարամսինը հիշատակում է իր դեմ ապստամբած այն 17 երկրների և նրանց թագավորների անունները, որոնց մեջ հիշատակվում են ինչպես հնդեվրոպական ծագում ունեցող խաթթի երկրի բնակիչները, այսինքն՝ խեթական ցեղերը, այնպես էլ Արմանի կամ Արմենիա (Հայաստան) երկրի բնակիչների և նրանց թագավոր Մատակինայի անունները. 1.«Անմայիլա՝ Գուդուսուայի կամ Գուսուայի թագավոր», 2.Ռակկի թագավոր Բուանա, 3.Լուպանիլա՝Ուլլիվիի թագավոր, 4.Նապալա...-ի թագավոր, 5.Պամբա խաթթի թագավոր, 6.Զիպանի՝ Կանեշի թագավոր, 7.Ռուր...Պուրուշխանդայից, 8.Հուվարուվա՝ Ամուրրուի թագավոր, 9.Տիսենի՝ Պուրասիի թագավոր, 10....., 11.Մատակինա՝ Արմանիի թագավոր, 12.Կիպպու՝ Եղևնիների թագավոր Ամանուս, 13.Թասսի ...-ի թագավոր, 14.Ուր-խարակ Լարակի թագավոր, 15.Ուր-բանդա՝ Նիկկիի թագավոր, 16.Իլլուշխունբայի՝ Տուրուկիի թագավոր, 17.Տիսբինկի՝ Կուրսաուրայի թագավոր»:³

Ակներև է, որ Նարամսինի դեմ ապստամբած 17 երկրներից մեկը եղել է նաև Արմանի կամ Արմենիա երկիրը, որի թագավորն էր Մատակինան: Այս փաստը ցույց է տալիս, որ Շումերա-Աքքադական դարաշրջանում Արմանի կամ Արմենիա (Հայաստան) երկիրը հասել էր թագավորության կամ պետության աստիճանի:

Ըստ Հ.Աճառյանի⁴ կարծիքի, Արմանի կամ Արմենիա (Հայաստան) պետության թագավոր Մատակինայի անվան հիմքում ընկած «մատա» արմատը համապատասխանում է հայերեն լեզվի «առու», «ամբարտակ» բառերին:

Հաշվի առնելով ինչպես Շումերա-Աքքադական սեպագիր արձանագրություններում հիշատակված Արմանի և հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով հիշատակված Արմենիա երկրանունների նույնության, Հայկական լեռնաշխարհում կամ Արմենիա լեռնաշխարհում նրանց տեղադրության, Սարգոն Աքքադի կողմից Արմանի կամ Արմենիա երկրից Աքքադ երկիր տարած պտղատու ծառերի տունկիների անունները հայերեն լեզվով կոչվելը, ինչպես նաև հետազոտողներից Հ.Աճառյանի կողմից Արմանի կամ Արմենիա երկրի թագավոր Մատակինայի անվան ստուգաբանության հետ կապված փաստերը կարելի է վստահորեն ասել, որ Արմանի կամ Արմենիա (Հայաստան) երկրի բնակիչները եղել են հնդեվրոպական ծագում ունեցող արմենները կամ հայերը: Ուստի Արմանի կամ Արմենիա (Հայաստան) երկիրը եղել է Հայկական պետություն:

Նարամսինի արձանագրության հայտնաբերման վայրից գտնվել է նաև Նարամսինի հաղթաքանդակը, որի վրա կերտված են ինչպես Նարամսինի զինվորների դիմաքանդակները, այնպես էլ նրանց արանքից դեպի վեր խոյացող Նարամսինի հսկա պատկերաքանդակը, որը հիմա պահվում է Լուվրի թանգարանում: Զինվորական այդ հարուստ տեսարանները ցույց են տալիս, որ հավանաբար այդ տարածքում է տեղի ունեցել Նարամսինի զորքի և նրա դեմ ապստամբած Արմանի կամ Արմենիա երկրի 17 երկրների միացյալ զորքի միջև մղվող ճակատամարտը:

Նարամսինի վերոհիշյալ արձանագրության մեջ հիշատակված 17 երկրները տարածվել էին Աքքադ երկրից դեպի արևմուտք: Դրանցից Արմանի երկիրը գտնվել է Վերին Եփրատից արևելք տարածված առաջավոր Ասիայում, իսկ մյուս 16 երկրները՝ հատկապես խաթթին,

³ E.Forrer, Die Boghazkoi-Texte in Umschrift, II, page 2; Sayce, JRAg, 1928. Page 206; Hrozny, <<Archiv Orientalin>>, I, N1.

⁴ Հ.Աճառյան Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Երևան Հ.ՅՍ, 1977, էջ 267.

Կանեշը, Պուրուշխանդան, հավանաբար նաև մյուս 13 երկրները տարածված էին Եփրատից արևմուտք գտնվող Փոքր Ասիայում: Նրանք Արմանի երկրին, նրա պետությունը միավորել են՝ հույսը դնելով նրա ընդարձակ տարածքի ու բազմաքանակ բնակչության ուժի վրա, որ գտնվել է Աքքադ երկրի արևմուտքում գտնվող ընդարձակ տարածքում, ուր ստեղծել էին հականարամսինյան դաշնություն: Ամբողջ դաշնության 17 երկրների գլուխն էր կանգնած Արմանի կամ Արմենիա պետությունը իր թագավոր Մատակինայի ղեկավարությամբ:

Թե ինչով է ավարտվում այդ ճակատամարտը, սեպագիր արձանագրություններում ոչինչ չի ասվում այդ մասին: Այդ կապակցությամբ ուշագրավ է այն փաստը, որ մինչև ճակատամարտի սկսվելը այնտեղ եկել ու կամավոր կերպով հավաքվել են այդ 17 երկրների զինվորները և նրանց թագավորները, որոնց անունները հիշատակվել են Նարամսինի վերոհիշյալ արձանագրությունում: Հավանաբար այդ կամավոր կռվի պատճառներից մեկն այն էր, որ Նարամսինը պահանջել էր բոլոր 17 երկրների թագավորներից հարկ վճարել, հակառակ դեպքում նրանցից ամեն մեկը իր կյանքի գնով պիտի պատասխան տար: Այսպես թե այնպես, բոլոր 17 երկրների թագավորների կյանքը վտանգի տակ էր: Հետևաբար նրանց համար ավելի գերադասելի էր միացյալ ուժերով հանուն հաղթանակի մեռնել ճակատամարտի դաշտում իրենց հավատարիմ զինվորների հետ: Եվ նետվել են... Դա հերոսություն էր, որը հավասարազոր էր անմահության, քանի որ նրանց կյանքի գնով փրկվում էին նրանց երկրները, նրանց բնակիչները, որոնց թվում նաև Արմանի կամ Արմենիա (Հայաստան) երկիրը, արմաններ կամ արմեններ (հայեր) բնակիչները, իրենց հավերժական եղբայր դարձած Խաթթի երկրի թագավորները ու Խաթթի երկրի եղբայրացած զինվորները...

Մարտի դաշտում ընկնում է նաև արքա Նարամսինը իր հավատարիմ զինվորների հետ, բայց նրանք իրենց մահից հետո գրկում են իրենց նվիրված քարե սառն պատկերաքանդակները դարձած...

Անցել է ժամանակը, բայց ոչինչ չի մոռացվել՝ ոչ կապուտակ ու գովաստուն Ուրմիա լիճը, որի ավազանում ապրում էին արմանները կամ արմենները, նրանց ընտանիքները՝ կանայք ու երեխաները, ոչ արծվի սլացք ունեցող Մատակինա թագավորը, ոչ էլ Արմանի կամ Արմենիա (Հայաստան) երկրի լեռներից բխող և հայոց գետերի հունով Ուրմիա լճի մեջ անբարված սառնորակ ու քաղցրահամ ջուրը և ոչ էլ այդ

լեռների, գետերի ու լճի համար կամավոր մարտի նետված արմանները կամ հայ ռազմիկները, որոնք ոգի դարձած սպասում են մեզ... չէ որ այդ տեղից է սկսվում Արմանի կամ Արմենիա - Հայաստան աշխարհը...):

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՐՄԱՆԻ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ (ՉԱՅԱՍՏԱՆ) ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՇՇՈՒՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱԳԱՎՈՐ ԱՇՈՒՐՅԱՆ ՍԱՐԳՈՆԻ ՍԵՄԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

Երկրորդ հազարամյակի սկզբին, երբ Աքքադ պետության անկումից հետո վերելք է ապրում Աշշուր կենտրոնը, երկիրը և պետությունը նրա անունով կոչվում են Աշշուր: Այդ պետության առաջին թագավորը ավանդության համաձայն ավելացնում է Աշշուր անունը իր անվան վրա: Դա է պատճառը, որ այդ պետության առաջին թագավոր Սարգոնը կոչվում է Սարգոն Աշշուր անունով:

Աշշուրյան Սարգոնը (1980-1948) հաշվի առնելով, որ նախորդ թագավորներից Սարգոն Աքքադը բարի դրացիական հարաբերությունների մեջ է եղել Արմանի կամ Արմենիա (Չայաստան) երկրի հետ, իսկ Նարամսին էլ ուզեցել է Արմանի կամ Արմենիա երկրի բնակիչներին՝ արմաններին կամ արմեններին (հայերին) դնել ծանր հարկի տակ և հարկ գանձել նրանցից, բայց վերջինս էլ հսկայական բանակ է կազմել նրա դեմ՝ հնդեվրոպական ծագում ունեցող խեթական ցեղերից, ինչպես նաև արմաններից-արմեններից կամ հայերից, իսկ այժմ, երբ խեթական ցեղերի ստեղծած դաշնությունը խիստ թուլացել է՝ երկարատև կռիվների հետևանքով, հարկավոր էր առիթն օգտագործել և նվաճել Արմանի կամ Արմենիա (Չայաստան) երկիրը, որպեսզի նոր հարկ ու տուրք հավաքել նրա բնակիչներից՝ արմաններից կամ արմեններից (հայերից)... Եվ Աշշուրյան Սարգոնը մեծ զորքով հարձակվում է Արմանի կամ Արմենիա (Չայաստան) երկրի վրա: Այս անգամ Արմանի կամ Արմենիա (Չայաստան) երկրին օգնության են հասնում Չայկական լեռնաշխարհի բնակիչները, որոնք ապրում էին Ուրմիա լճի ափին գտնվող Սիմեսի-Արմանի նահանգում(nagu), ճակատամարտը տեղի է ունենում հենց այդ նահանգում գտնվող Սիմեսի կիրճում: Թշնամու դիակներից բլուրներ են բարձրանում ճակատամարտի դաշտում: Ջոհվում են նաև Արմանի կամ Արմենիա (Չայաստան) երկրի զինվորները: Աշշուրյան Սարգոնը ստիպված լրացուցիչ զինվորներ է բերում Աշշուր երկրին ենթարկվող ժողովուրդներից, բայց անօգուտ՝ Աշշուրյան Սարգոնի զորքի կենդանի մնացած զինվորների գալարափողերը հայտարարում են ճակատամարտի ավարտը: Սիմեսյան-Արմանի կիրճը անցնում է Աշշուր

երկրին, իսկ մնացած ամբողջ Արմանի կամ Արմենիա (Չայաստան) երկիրը շարունակում է մնալ ազատ ու անկախ:⁵

⁵ E.Dhorm, <<Revue Biblique>>, Pariz, 1929, page 132; L.W.King, The annals of the Kings of Assiria, London, 1922, page 32.

ԱՐՄԱՆԻ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ (ՀԱՅԱՍՏԱՆ) ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ
ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐ ԱՐԱՄԵՏԻ ԱՐԿԻՎՈՒԹՅԱՆ 1 (1336-1305) ՍԵՄԱԿԱՆ
ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

Մթա երկրորդ հազարամյակի վերջին քառորդում Շուճերա - Աքքադական դարաշրջանում միջազգային ասպարեզում հայտնի Արմանի կամ Արմենիա (Հայաստան) երկիրը ոչ միայն պահպանել էր իր գոյությունը, այլև նրա անունը հիշատակվում է Ասորեստան և Բաբելոն երկրների անուններին հավասար: Այդ մասին տեղեկություն է պահպանվել Ասորեստանի թագավոր Ադադներարի I-ի(1336-1305) դաշնագրում⁶, որ նա կնքել էր Բաբելոնի թագավորի հետ, որը ավարտվել էր Ասորեստանի թագավոր Ադադներարի I-ի հաղթանակով: Արմանի կամ Արմենիա երկիրը հանդես է գալիս որպես նրանց սահմանները որոշող երկիր: Սա շատ կարևոր մի փաստ է, որը ցույց է տալիս, թե այդ ժամանակ Արմանի կամ Արմենիա պետությունը, երկիրը Սարգոն Աքքադի ժամանակից, այսինքն՝ մթա 2633-2579 թվականներից մինչև Ասորեստանի թագավոր Ադադներարի I-ի ժամանակաշրջանը, այսինքն՝ մինչև 1336-1305 թվականները՝ ամուր կերպով մնալով իր տարածքում, այն է՝ Ուրմիա լճի ավազանում գտնվող Արմանի կամ Արմենիա երկրի տարածքում՝ Աքքադ երկրի արևմուտքում, ուր գտնվում էր Ուրմիա լիճը և նրա ավազանում տարածված Արմանի կամ Արմենիա երկիրը և իր արմաններ կամ արմեններ բնակիչներով, ինչպես նաև մինչև նրանից դեպի հյուսիս տարածված Նաիրի երկրի ծովի կամ Վանա լճի ավազանում:

⁶ L.W.King, The Annals of the kings of Assiria, London, 1922, page, 32.
12

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐ ԱՇՇՈՒՐՆԱԾԻՐԱՊԱԼ II-Ի ՈՐԴԻ
ՍԱԼՄԱՆԱՍԱՐ III-Ի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԱՆԻ
(ԱՐՄԵՆԻԱ) ԵՐԿՐԻ ԹԱԳԱՎՈՐ ԱՐԱՄԵՏԻ ԴԵՄ ՄՂԱԾ ԾԱԿԱՍԱՄԱՐՏԻ ԵՎ
ՆՐԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Առաջին անգամ Ուրարտու տերմինը հիշատակել է Ասորեստանի թագավոր Աշշուրինածիրապալ II-ը (884-859): Եթե մինչ այդ երկիրը կոչվում էր Արմանի կամ Արմենիա անունով, ապա դրանից հետո այդ երկիրը սեմական ծագում ունեցող ասորերեն լեզվով գրված սեպագիր արձանագրություններում կոչվում է բոլորովին անհայտ Ուրարտու անունով:

Հետազոտողները հաճախ շփոթում են Ուրարտու երկրանունը Ուրուատրի ցեղամիության հետ, որի անվան տակ հիշատակվում են խուրի-շուբարիական երկրները, որոնց բնակիչները եղել են խուրի-շուբարիական ցեղերը: Ի տարբերություն դրա, Ուրարտուն նախ ցեղամիություն չէր, այլ երկիր էր, որի անվան տակ հաղես են գալիս Արմանի կամ Արմենիա երկրի բնակիչները, որոնք կոչվում են արմաններ կամ արմեններ, ինչպես նաև հայեր անունով: Այդ վերջինը եղել է նրանց ազգային, նրանց ցեղի անունը: Այդպես էլ նրանց երկրի ազգային, նրանց ցեղի անունը եղել է Հայաստան անունը, որը նշանակում է «հայերի երկիր», հայ ցեղի երկիր: Ասորեստանի թագավոր Աշշուրինածիրապալ II-ն էլ այդ Արմանի կամ Արմենիա երկիրը որպես նորություն, կոչել է Ուրարտու, նրա բնակիչներին էլ կոչել է ուրարտներ անունով:⁷

Իր թագավորության հենց առաջին տարում Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ը արշավանք է գործում Ուրարտու կամ Արմանի (Արմենիա) երկրի վրա: Նա սկզբից թափանցում է Ուրարտու կամ Արմանի (Արմենիա) երկրի Սուգունիա մարզի տարածքը, որը սկսվում էր նրան մոտ գտնվող Խուբուլշքիա երկրի տարածքից: Ուստի Սալմանասար III-ը իր արշավանքի մասին գրած արձանագրությունում պատմում է. «Ես դուրս եկա Խուբուլշքիայից և մոտեցա Սուգունիային՝ Արամե Ուարտացու ամրացած քաղաքին, պաշարեցի և ավերեցի այդ քաղաքը, սպանեցի նրա բազմաքանակ զինվորներին, գերի վերցրեցի,

⁷ 1. И.М.Дьяконов, Образование урартского государства и период его гегемонии в Передней Азии (конец IX-середины VIII в до н.э) (ВДИ, 1951, N2. Стр. 294).
13

գլուխներից շարեցի աշտարակ՝ քաղաքի դիմաց և կրակի մեջ վառեցի նրա շրջակայքի 14 բնակավայրերը: Ես դուրս եկա Սուգունիայից, իջա Նաիրի երկրի ծովի մոտ, իմ զենքը լվացի ծովի մեջ և գոհեր մատուցեցի իմ աստվածներին: Այդ ժամանակ ես պատրաստեցի իմ սեփական պատկերը և գրեցի նրա վրա գովքը Աշշուրին՝ վեհ տիրակալին, իմ տիրակալին, ինչպես նաև իմ հաղթանակների հզորությունը և կանգնեցրի ծովի վրա»:⁸

Դրանից հետո Սալմանասար III-ը անցնում է Գիլգամի երկիրը, Ասաու Գիլգացուց մեծ քանակի հարկ՝ ձիեր, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, ինչպես նաև Գինի և երկսապատանի ուղտեր վերցնում:

Այնուհետև Ասորեստանի թագավորը բաց է թողնում Ուրարտուի կամ Արմանի (Արմենիայի) վրա կատարած իր արշավանքը և շարժվում է Զյուսիսային Միջագետքում գտնվող լեռները, մտնում Բիտգամանի երկիրը, որից հետո թափանցում է Էնգիտե երկիրը, ինչպես նաև ներխուժում է Դայանեի կամ Դիաուխի (հետագա Տայք) երկիրը և մոտենում է Ուրարտու կամ Արմանի (Արմենիա) երկրի Արգաշթու արքայական քաղաքին. «Դուրս ելա Դայանեից ու մոտեցա Արգաշթուին՝ Արամե Ուրարտացու արքայական քաղաքին: Արամե Ուրարտացին վախեցավ իմ ուժեղ զենքի դառնությունից և իմ գայրացած ճակատամարտից, լքեց իր քաղաքը և բարձրացավ լեռները, Աղղուրու վրա: Ես բարձրացա լեռների վրա նրա հետևից և տվեցի մեծ ճակատամարտ լեռների մեջ, 3400 նրա զինվորներից իմ զենքով սպանեցի: Զորդառատ անձրևի նման ես թափվեցի նրանց վրա Աղադի նման, լեռները արյունով ներկեցի, ինչպես կարմիր բուրդը: Ես խլեցի նրանից ճամբարը, լեռներից տարա նրա մարտակառքերը, հեծյալներին, ձիերին, ջորիներին, նրա առատ հարստությունը, նրա գերիներին, նրա ունեցվածքը: Արամուն իր կյանքը փրկելու համար բարձրացավ սեպածև լեռները: Իմ արիության ուժով ես տորեցի նրա երկիրը վայրի ցուլի նման, քաղաքները դարձրեցի անապատ, ես քանդեցի Արգաշթուն իր շրջակայքի բնակավայրերով, ջնջեցի, այրեցի կրակով: Գլուխներից դարպասների դեմ աշտարակ դարսեցի, ոմանց հորեցի նրա մեջ, ոմանց՝ աշտարակի մեջ, մյուսներին ցցերի վրա, ոմանց՝ կույտի շուրջը:

Ես դուրս եկա Արգաշթուից և (բարձրացա Էրիտիա լեռան վրա): Պատրաստեցի իմ արքայական հսկայական պատկերը և գրեցի նրա վրա օրհնանքը Աշշուրին՝ իմ տիրակալին և նույնպես հզորության հաղթանակը, որ ես ունեցա Ուրարտուի վրա և կանգնեցրի Էրիտիա լեռան վրա: Դուրս եկա Էրիտիայից և մոտեցա Արամալեին՝ քանդեցի, ջնջեցի և հրկիզեցի նրա քաղաքները: Ես դուրս եկա Արամալեից և մոտեցա Ջանգիուանային «Կառավարիչը սարսափեց ճակատամարտից, գրկեց իմ ոտքերը, ես ընդունեցի լծկան ձիեր, խոշոր և մանր եղջերավոր անասուններ և խնայեցի նրան... Շարունակելով իմ արշավանքը ես իջա Նաիրի երկրի ծովի մոտ, լվացի ծովում Աշշուրի սարսափազդու զենքը, գոհաբերություններ արեցի: Իմ արքայական պատկերը պատրաստեցի և նրա վրա գրեցի գովքը Աշշուրին, վեհ տիրակալին, իմ տիրակալին, իմ խիզախության ուղու և փառապանծ գործերի մասին»:⁹

Այն կարծիքը, թե Ուրարտու երկիրը համապատասխանում է Սարգոն Աքքադի, Նարամսինի, Աշշուրյան Սարգոնի և Ասորեստանի թագավոր Ադադներարի I-ի սեմական ծագում ունեցող Արմանի և հնդեվրոպական ծագում ունեցող Արմենիա երկրին, որոնց բնակիչները եղել են արմանները կամ արմենները, չի հիմնավորվում, քանի որ Ուրարտու երկրանունը քաղաքական ասպարեզ է եկել Ասորեստանի թագավոր Աշշուրնաժիրապալ II-ի (884-859) և նրա որդի Սալմանասար III-ի (859-824) ժամանակից, որպեսզի այդ երկրին տրվող Արմանի կամ Արմենիա (Չայաստան) անունները դուրս մղվեն քաղաքական ասպարեզից: Դա հաստատվում է այն փաստով, որ երկրին տրվող Արմանի կամ Արմենիա, նրա բնակիչներին տրվող արմաններ կամ արմեններ (հայեր) անունները ծագել են շումերա-աքքադական դարաշրջանից, այսինքն՝ դրանից երեք հազար տարի առաջ, իսկ Ուրարտու կամ Ուրաշտու երկրանունը և նրա բնակիչներին տրվող ուրարտներ կամ ուրաշտներ անունները ծագել են Ասորեստանի թագավորներ Աշշուրնաժիրապալ II-ի և Սալմանասար III-ի ժամանակաշրջանում, քանի որ այդ երկիրը և նրա բնակիչները խանգարում էին Ասորեստանին թե Ուրմիա լճի ավազանում, և թե Բիանա կամ

⁸ И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (Из надписи Салманасара III (859-824 гг. до н.э) на монолите из Тушхана (Калху) (II-45), (Москва, 1951.) стр.295-296).

⁹ И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (Из надписи Салманасара III на монолите из Тушхана (Калху) (II 45, II-63), Москва, 1982, стр.295-296.

Վանա լճի ավազանում հիմնադրած իրենց հզոր Արմանի կամ Արմենիա անուններով կոչվող պետության գոյությամբ:

Շուներա-Աքքադական դարաշրջանում այդ երկիրը տարածված էր Ուրմիա լճի ավազանում, որտեղ հավասար ճակատամարտ են մղել Աքքադ երկրի թագավոր Նարանսինը (2238-2202) և Արմանի կամ Արմենիա (Յայաստան) երկրի թագավոր Մատակինան, իսկ Ուրարտու կամ Արմանի (Արմենիա) երկրի թագավոր Արամեն և Ասորեստան երկրի թագավոր Սալմանասար III-ը (859-824) Նաիրի երկրի ծովի կամ Վանա լճի ավազանում են ճակատամարտ մղել...

Այդ լճերի արանքներում իհարկե միշտ ապրել են Արմանի կամ Արմենիա (Յայաստան) երկրի բնակիչները՝ արմանները կամ արմենները (հայերը):

Արգաշթու արքայական քաղաքի շուրջը տարածված բարձր լեռների վրա Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի դեմ մղած ճակատամարտի ժամանակ Արմանի կամ Արմենիա (Ուրարտու) երկրի թագավոր Արամեի զորքը կրում է պարտություն, իսկ Արամե թագավորն էլ հեռանում է իր երկրից: Ուստի Արմանի կամ Արմենիա պետությունը կրում է պարտություն: Յետևաբար այդ պետությունը անկում է ապրում:

Այսպիսով, Վանա լճի ավազանում հանդես եկած պետությանը Ուրարտու անունը տրվել է Ասորեստանի թագավոր Աշշուրնաժիրապալ II-ի և նրա որդի Սալմանասար III-ի կողմից: Ուրմիա լճի ավազանում մթա III հազարամյակից այդ պետությանը տրվող Արմանի կամ Արմենիա անունով պետք է կոչել Արամե թագավորի պետությունը, որը որևէ անունով չի կոչվել, այն միայն հիշատակվել է որպես Արամե թագավորի պետություն:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

6248

Ուրարտական պետությունը քաղաքական ասպարեզ է եկել մ.թ.ա. IX դարի կեսին Յայկական լեռնաշխարհում տարածված Վանա լճի ավազանում: Ուրարտու երկրի մասին առաջին տեղեկությունները պահպանվել են Ասորեստանի թագավոր Աշշուրնաժիրապալ II-ի (883-859) սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված սեպագիր արձանագրությունում¹⁰: Եթե Աշշուրնաժիրապալ II-ի ժամանակ Ուրարտուն սոսկ մի երկիր էր, որն ենթարկվում էր Ասորեստանին, ապա նրան հաջորդող Սալմանասար III-ի (859-824) թագավորության առաջին տարում, այսինքն՝ մ.թ.ա. 859 թվականին այդ երկիրը թոթափել էր ասսուրական հարկային լուծը և իրեն հռչակել էր որպես Ասորեստանից անկախ պետություն՝ Արամե (859-832) թագավորի գլխավորությամբ¹¹: Այդ պետությունը գոյատևել է մինչև մ.թ.ա. VI դարի վերջին քառորդը, մասնավորապես մինչև մ.թ.ա. 522 թվականը:

Եթե այդ նորաստեղծ պետությունը սկզբում տարածված էր Վանա լճի ավազանում, ապա կարճ ժամանակից հետո, երբ նա դիմում է նվաճողական արշավանքների, նրա տարածքի մեջ է մտնում ոչ միայն ամբողջ Յայկական լեռնաշխարհը, այլև հարավից դեպի հյուսիս նրա սահմանները ձգվում են Բաբելոն կամ Բաբելոն երկրից մինչև Վերին ծովի կամ Սև ծովի հարավային կողմում տարածված Կուլխա կամ Կուլսիդա երկիրը, իսկ արևելքից դեպի արևմուտք նրա սահմանները ձգվում են Ուրտեխիմի կամ Արցախ երկրից և Փոքր Կովկասի լեռներից մինչև Անդրեփրատյան Մելիդու (Մալաթիա) և Կումախա (Կոմագենե) երկրները: Շուրջ մեկ դար այդ պետությունը ընթացել է վերելքի ուղիով և նրա ձեռքն է անցել Առաջավոր Ասիայի առաջնությունը: Նվաճումների հետևանքով նոր տեսք է ստացել Ուրարտու պետության ծագման հարցը:

¹⁰ И. М. Дьяконов, Ассирио – вавилонские источники по истории Урарту (АВВИУ) (Вестник древней истории (ВДИ), М., 1951, №2, текст №24, прим. 4.

¹¹ АВВИУ, №27 (I, 23; II, 45; II, 54).

Այժմ, երբ աշխատանք է տարվում ընդհանուր պատկերացում կազմելու մեր թվարկությունից առաջ Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցող պետության էթնիկական ծագման հարցը, առավել արդիական է դարձել այդ պետության ուսումնասիրությունը:

Աշխատության ժամանակագրական շրջանակները համընկնում են ուրարտական պետության գոյատևման շրջանակների հետ և, բնականաբար, ունեն շուրջ 337 տարվա ընդգրկում:

Թեև շուրջ երկու դար է, որ ուսումնասիրվել է ուրարտական պետության պատմությունը և մեծ աշխատանք է կատարվում այդ կապակցությամբ եղած սեպագիր ու հիերոգլիֆիկ արձանագրությունների և հնագիտական նյութի հայտնաբերման, մշակման ու հրատարակման գործում հետազոտողներ՝ Ֆ. Է. Շուլցի, Ս. Գյույարի, Ա. Սեյսի, Մ. Սմբատյանցի, Մ. Վ. Նիկոլսկու, Յ. Օրբելու, Ն. Մառի, Լեհմանն-Հաուպտի, Ի. Ֆրիդրիխի, Գ. Ա. Ղափանցյանի, Բ. Բ. Պիոտրովսկու, Յ. Ա. Մարտիրոսյանի, Ի. Մ. Դյակոնովի, Գ. Ա. Սելիքիշվիլու, Ֆ. Վ. Քյոնիգի, Ն. Վ. Հարությունյանի, Մ. Ա. Իսրայելյանի, Մ. Սալվինիի, Բարնետի, Ջ. Քլեյի և այլոց կողմից, բայց առայժմ հատուկ քննարկման առարկա չեն դարձել Ուրարտուի պետական կարգը, մասնավորապես այդ պետության ծագումը (նրա էթնիկական ծագումը), նրա պարբերացման (պերիոդիզացիայի) գլխավոր փուլերը, նրա կազմավորման գլխավոր փուլերը, Ուրարտուի պետական կառուցվածքը, այդ պետության կառավարման համակարգը: Հետազոտողները, թուցիկ կարգով անդրադառնալով այդ հիմնախնդիրներին, նրանց հարցում թույլ են տվել ոչ միայն թերություններ, այլև արմատական սխալներ: Հատկապես նրանք սխալներ են թույլ տվել ուրարտական պետության ծագման, մասնավորապես նրա էթնիկական ծագման հարցում: Չնայած ուրարտական պետությունը իր բուն տարածքով և իր բուն էթնոսով կապված է եղել Հայկական լեռնաշխարհի հետ, բայց հետազոտողներ Գ. Ա. Ղափանցյանը¹², Գ. Ա. Սելիքիշվիլին¹³, Բ. Բ. Պիոտրովսկին¹⁴, Ն. Վ. Հարությունյանը¹⁵, նկատի ունենալով, որ ուրարտական պետության սեպագիր արձանագրությունների լեզուն տարբերվում է հայերեն լեզվից, իսկ այդ

¹² Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, 1940, էջ 15-17.

¹³ Գ. Ա. Меликшвили, Наири-Урарту, Тбилиси, 1954, с. 20, 25, 77, 150-151, 153-155, 158, 177, 180-188, 190.

¹⁴ Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, с. 32, 43-44, 46-47, 50-51.

¹⁵ Н. В. Арутюнян, Биайнили (Урарту), Ереван, 1976, с. 12-13, 15, 19, 53-54, 56-57, 59, 60, 202.

պետության Ուրարտու անունը իր մեկ կամ երկու հնչյուններով հիշեցնում է կենտրոնական Միջագետքում մ.թ.ա. XIII դարում խուրիական ցեղերի կողմից ստեղծված Ուրուատրի ցեղամիության անունը, այն տեսությունն են առաջ քաշել, թե ուրարտական պետությունը իր անունով և իր բնակչության էթնիկական կազմով ծագել է Ուրուատրի ցեղամիությունից¹⁶: Փաստորեն, այդ հետազոտողների տեսությամբ Ուրարտու պետության բնակիչները, այսինքն՝ ուրարտները եկվոր են Հայկական լեռնաշխարհում, և նրանք ու նրանց լեզուն ունեն խուրիական ծագում: Սակայն, հակառակ այդ հետազոտողների տեսության, փաստերը ցույց են տալիս, որ պետությանը տրվող Ուրարտու անունը թե՛ իր հնչյունական կազմով, թե՛ իր բառական իմաստով և թե՛ իր բնակչության էթնիկական կազմով տարբերվում է ցեղամիությանը տրվող Ուրուատրի անունից, ինչպես նաև այդ ցեղամիության էթնիկական կազմից:

1) Եթե պետությանը տրվող Ուրարտու անվան բաղաձայնական արմատն է՝ RRT-ն, ապա ցեղամիությանը տրվող Ուրուատրի անվան բաղաձայնական արմատն է՝ RTJ-ն, որոնք իրենց հնչյունական կազմով, ակներևաբար, տարբերվում են իրարից:

2) Եթե պետությանը տրվող ^{KUR}Urartu «Ուրարտու» անունը կազմված է տվերջածանցից, որը այդ բառին տալիս է «աբսոլյուտ» (բացարձակ)¹⁷ իմաստ, իսկ նրա UR և AR գաղափարագրերից UR-ը ունի «լուսավոր» իմաստ, իսկ AR-ը՝ «անմատչելի» իմաստ¹⁸, որոնք բառասկզբում դրված KUR՝ «երկիր» սահմանիչի հետ նշանակում են «Լուսավոր անմատչելի երկիր» կամ «Անմատչելի լուսավոր երկիր»: Ի տարբերություն դրա, ^{KUR}Urartu «Ուրուատրի» ցեղանունը չունի ոչ տվերջածանց և ոչ էլ AR գաղափարագիր: Ուստի այդ ցեղանունը ինչպիսի իմաստ էլ ունենա, այն տարբերվում է պետությանը տրվող Ուրարտու անունից:

3) Եթե հիրավի հաստատ է, որ սեմական ծագում ունեցող լեզուներով հիշատակված Ուրուատրի ցեղամիության բնակիչները եղել են խուրիները, իսկ նրանց լեզուն եղել է խուրիերենը, ապա ներքոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ սեմական ծագում ունեցող

¹⁶ АВИИУ, №2.

¹⁷ Д. Н. Саркисян, Страна Шумбриа, Ереван, 1989, с. 11.

¹⁸ Л. А. Липин, Аккадский (вавилонско-ассирийский) язык, выпуск II, словарь, Л; 1957, с. 22, 70.

լեզուներով հիշատակված Ուրարտու պետության հիմնական բնակիչները եղել են հնդեվրոպական ծագում ունեցող արմենները կամ հայերը, իսկ նրանց լեզուն եղել է արմեներենը կամ հայերենը:

I). Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի (859-824) սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված սեպագիր արձանագրություններում հիշատակված «Նաիրի երկրի ծովի» կամ «Վանա լճի» ավազանում մ.թ.ա. 859 թվականին հանդես եկած Ուրարտու պետությունը, նրա ուրարտներ բնակիչները և նրա Արամե թագավորը¹⁹ համապատասխանում են հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդություններում հիշատակված «աղի ծովակի» կամ «Վանա լճի» ավազանում հանդես եկած Արմենիա պետությանը, նրա արմեններ բնակիչներին և նրա Արամ թագավորին՝ կապված Արամ թագավորի ավանդական որդի և ավանդական թագավոր Արա Գեղեցիկի և նրան սիրահետող Ասորեստանի ավանդական թագուհի Շամիրամի հետ²⁰:

Ավանդությունում հիշատակված Շամիրամի նախատիպն է համարվում Ասորեստանի թագուհի Սամնուրամաթը, որը եղել է Սալմանասար III-ի հարսը, նրա որդի Շամշի-Ադադ V (824-810) թագավորի կինը և Ադադներարի III (810-782) անչափահաս թագավորի մայրը, որը այդ անչափահաս որդու հետ 810-802 թվականներին կառավարել է Ասորեստանը: Նրա անունով հայտնի է սեպագիր մի արձանագրություն²¹: Սեպագիր մի արձանագրություն էլ նվիրվել է նրան²²: Շամիրամ կամ Սամնուրամաթ անունով միայն մի թագուհի է եղել Ասորեստանում: Ավանդական Արա Գեղեցիկից և նրան սիրահետող Շամիրամ - Սամնուրամաթից մեկ սերունդ առաջ ապրել են Արմենիայի թագավոր Արամը և Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ը, որը քաղաքական ասպարեզ է եկել մ.թ.ա. 859 թվականին: Հավանաբար այդ նույն ժամանակաշրջանում, այսինքն՝ 859 թվականին են քաղաքական ասպարեզ եկել նաև Արմենիայի թագավոր Արամը և նրա հիմնադրած Արմենիա պետությունը: Նախորդ շարադրանքից էլ իմացանք, որ մ.թ.ա. 859 թվականին են քաղաքական

¹⁹ АВИИУ, № 27 (I, 23; II, 45; II, 54), 29; 31.

²⁰ Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1961, I գլուխ, § 11; 14; 18:

²¹ W. Eilers, Semiramis (Entstehung und Nachhal einer attorientalischen, Gage, Wien, 1971), s.37.

²² W. Eilers, Semiramis (Entstehung und Nachhal einer attorientalischen), s. 36 (54).

ասպարեզ եկել Ուրարտուի թագավոր Արամեն և նրա հիմնադրած Ուրարտու պետությունը:

Այսպիսով, Ուրարտու և Արմենիա պետությունները համապատասխանում են իրար թե՛ ժամանակով, թե՛ տարածքով և թե՛ թագավորների անուններով: Հետևաբար դրանք նույնն են և իրենցից ներկայացնում են որպես մի պետություն: Դրանց անունների տարբերությունը առաջացել է այն լեզուների էթնիկական տարբերությունից, որոնցով ավանդվել են այդ անունները: Ընդ որում, սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով այդ պետությունը կոչվել է Ուրարտու, նրա բնակիչները կոչվել են ուրարտներ, նրա թագավորը կոչվել է Արամե, իսկ հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն լեզվով այդ նույն պետությունը կոչվել է Արմենիա, նրա բնակիչները կոչվել են արմեններ, նրա թագավորը կոչվել է Արամ:

II). Սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով գրված Աստվածաշնչում հիշատակված Ուրարտու երկիրը հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով Աստվածաշնչի թարգմանությունում (Vulgate)²³ կոչվել է Արմենիա երկիր, իսկ հայկական ժողովրդական ավանդություններում այն կոչվել է «մեր աշխարհ», «մեզ մոտ», այսինքն՝ Արմենիա երկիր (Հայաստան)¹⁵:

III). Սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով գրված Աստվածաշնչում հիշատակված Ուրարտուի թագավորությունը հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով Աստվածաշնչի թարգմանությունում (Vulgate)¹⁶ կոչվել է Արմենիայի թագավորություն, իսկ հայկական ժողովրդական ավանդություններում այն կոչվել է «մեր ազգի թագավորություն» (այսինքն՝ Արմենիայի թագավորություն կամ հայաստանի թագավորություն)¹⁷:

IV). Սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով գրված Աստվածաշնչում հիշատակված Ուրարտուի լեռները հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով Աստվածաշնչի թարգմանությունում (Vulgate)¹⁸ կոչվել են Արմենիայի լեռներ:

Ակներև է, որ սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով գրված Ուրարտու երկիրը, Ուրարտուի թագավորությունը և Ուրարտուի

²³ Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), с. 33.

¹⁵ Խորենացի, Հայոց պատմություն, գիրք 1, գլուխ ԻԳ, էջ 124:

¹⁶ Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), с. 33.

¹⁷ Խորենացի, Հայոց պատմություն, գիրք 1, գլուխ ԻԲ, էջ 122:

¹⁸ Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), с. 33.

լեռները Աստվածաշնչի հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով թարգմանությունում կոչվել են Արմենիա երկիր, Արմենիայի թագավորություն և Արմենիայի լեռներ: Ի լրացումն դրան փաստեր կան, որոնք ցույց են տալիս, որ սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով հիշատակված Ուրաշտու երկիրը և նրա ուրաշտներ բնակիչները հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն և էլամերեն տարբերակներում կոչվել են Արմինա երկիր և արմիներ բնակիչներ: Այդպիսի փաստեր են հայտնաբերվել Դարեհ I-ի «Բեհիստունյան» և «Նակշի-ռուստամյան» եռալեզու սեպագիր արձանագրություններում:

V). Դարեհ I-ի (522-485) «Բեհիստունյան»¹⁹ եռալեզու (պարսկերեն, էլամերեն, բաբելոներեն) սեպագիր արձանագրության սեմական ծագում ունեցող բաբելոներեն տարբերակում հիշատակված Ուրաշտու երկիրը և նրա ուրաշտներ բնակիչները այդ նույն արձանագրության պարսկերեն և էլամերեն տարբերակներում կոչվել են Արմինա երկիր և արմիններ բնակիչներ:

VI). Դարեհ I-ի (522-485) «Նակշի-ռուստամյան»²⁰ եռալեզու (պարսկերեն, էլամերեն, բաբելոներեն) սեպագիր արձանագրության սեմական ծագում ունեցող բաբելոներեն տարբերակում հիշատակված Ուրաշտու երկիրը և նրա ուրաշտներ բնակիչները այդ նույն արձանագրության պարսկերեն և էլամերեն տարբերակներում կոչվել են Արմինա երկիր և արմիններ բնակիչներ:

Մեր կողմից հայտնաբերված այս 6 փաստերի հիման վրա մենք հայտնագործել ենք լեզվական կայուն մի օրենք, որի համաձայն սեմական ծագում ունեցող ասուրերեն, եբրայերեն, բաբելոներեն լեզուներով հիշատակված Ուրարտու (Ուրաշտու) երկիրը և նրա ուրարտներ (ուրաշտներ) բնակիչները համապատասխանում են հնդեվրոպական ծագում ունեցող Արմենիա (Արմինա) երկրին և նրա արմեններ (արմիններ) բնակիչներին: Լեզվական այս կայուն օրենքը մենք կիրառել ենք սեմական ծագում ունեցող այն բոլոր տեքստերի նկատմամբ, որոնցում հիշատակվել են Ուրարտու (Ուրաշտու) երկիրը և նրա ուրարտներ (ուրաշտներ) բնակիչները, որոնցում չկան հնդեվրոպական և հնդիրանական լեզուներով նրանց

¹⁹ F. H. Weissbach, Die Keilinschriften Der Achameniden, Leipzig, 1911, s. 30-31, §26; s.36-37, §30; s. 60-61, §52.

²⁰ F. H. Weissbach, Die Keilinschriften Der Achameniden, s. 86-89, §3.

թարգմանությունները, ինչպիսիք կային արմենական կամ հայկական ժողովրդական ավանդություններում, Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունում և «Բեհիստունյան» ու «Նակշի-ռուստամյան» արձանագրությունների պարսկերեն և էլամերեն տարբերակներում: Այդպիսի տեքստերի թիվը հասնում է 35-ի²¹: Ուստի մեր կողմից հայտնագործված ամբողջ տեքստերի թիվը վերևում հիշատակված 19 նամակների հետ հասնում է 54-ի: Այդ ամբողջ տեքստերի մասին հանգամանալից կխոսենք սույն աշխատության առաջին գլխում:

Այժմ անհրաժեշտ է խոսել Ուրարտու կամ Արմենիա պետության հիմնական բնակիչների, այն է՝ ուրարտների կամ արմենների լեզվի, ինչպես նաև այդ պետության սեպագիր արձանագրությունների լեզվի, այն է՝ բիաիներեն լեզվի նմանությունների և տարբերությունների մասին:

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ «Ադի ծովակի» կամ «Վանա լճի» ավազանում մ.թ.ա. IX դարի կեսից հանդես եկած երկիրը, պետությունը հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդությունները կոչել են Արմենիա, նրանց բնակիչներին կոչել են արմեններ, իսկ սեմական ծագում ունեցող ասորեստանցիները այդ նույն երկիրը, պետությունը կոչել են Ուրարտու, նրանց բնակիչներին կոչել են ուրարտներ: Սպասվում էր, որ այդ Արմենիա կամ Ուրարտու պետության տարածքում գտնվող սեպագիր արձանագրությունների լեզուն պետք է համապատասխաներ արմենների լեզվին: Բայց դրա փոխարեն այնտեղ գրված սեպագիր արձանագրությունների լեզուն տարբերվում էր արմենների լեզվից, իսկ նրանց երկիրն էլ կոչվում էր ոչ թե Արմենիա, այլ կոչվում էր Բիաինիլի: Հետազոտողները հաշվի չեն առել սեպագիր այդ արձանագրություններով գրված այն կարևոր փաստը, որ Արամե թագավորի մահից հետո փոխվում է երկրի արքայական դինաստիան, քանի որ նրա նոր թագավոր Սարգուրի I-ը (832-822) ասուրերեն լեզվով գրած իր սեպագիր արձանագրություններում իրեն համարում է ոչ թե Արամե թագավորի որդին, այլ համարում է ոմն Լուֆիպրիի²² որդին, որը թագավոր չի եղել: Սարգուրի I-ն էլ գրում է ասուրերեն լեզվով սեպագիր արձանագրություններ, որոնց մեջ նա իր երկիրը կոչում է ոչ թե Ուրարտու անունով, ինչպես կոչել են ասորեստանցիները, այլ

²¹ АВИИУ, с. 361.

²² Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи (УКН), М., 1960, №1-3.

նրանից տարբեր Նաիրի անունով: Այս փաստը թույլ է տալիս ասելու, որ Սարգուրի I-ը էթնիկապես կապված էր ոչ թե Ուրարտու կամ Արմենիա երկրի, այլ Նաիրի երկրի հետ: Սարգուրի I-ի որդին և նրան հաջորդող թագավոր Իշպուհնին էլ (822-810) իր թագավորության ժամանակ գրում է երկլեզվյան արձանագրություն ասուրերեն լեզվով և տեղական լեզվով, որոնցից ասուրերեն տարբերակում նա իր երկիրը, եթե իր հայր Սարգուրի I-ի օրինակով կոչում է Նաիրի անունով, ապա տեղական լեզվով տարբերակում իր երկիրը կոչում է Բիաինիլի անունով:

Նաիրի և Բիաինիլի երկրները Հայկական լեռնաշխարհում որոնելիս իրենց վրա ուշադրություն են հրավիրում, նախ՝ Արածանիի հյուսիսային ավազանում մ.թ.ա. XIII դարում 43-60 փոքր-փոքր թագավորություններից կազմված Նաիրի (^{KUR}Nairi)²³ ցեղամիությունը, ապա այդ փոքր-փոքր թագավորություններից մեկի՝ Դայանի թագավորության գլխավորությամբ մ.թ.ա. IX դարում 31 երկրներից կազմված պետության կազմում մտնող Բիանի (^{KUR}Biani)²⁴ երկիրը, որը համապատասխանում է հետագա Կարսի մարզի Վանանդ գավառին (հմմտ. Վանանդ գավառի անվան «Վան» (բիա) արմատը և Բիանի երկրանվան «բիա» (վան) արմատը):

Փաստորեն Նաիրի և Բիաինիլի (Բիանի) երկրները կապվում են Արածանի գետի հյուսիսային ավազանի տարածքի և նրա էթնիկական աշխարհի հետ: Բիաինիլին (Բիանին) եղել է Սարգուր I-ի և նրա արքայական ղնաստիայի բնօրրանը:

Նաիրի անունը օտար չի եղել նաև Արածանիի հարավային ավազանում տարածված ուրարտներին կամ արմեններին: Այդ տարածքի կենտրոնում գտնվող «Աղի ծովակը» կամ «Վանա լիճը» Սալմանասար III-ի սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված սեպագիր արձանագրություններում կոչվել է «Նաիրի երկրի ծով»²⁵ անունով: Դա նշանակում է, որ Նաիրի-բիաինական էթնիկական աշխարհը, նրա լեզուն թեև տարբերվել է հնդեվրոպական էթնիկական ծագում ունեցող արմենների կամ ուրարտների լեզվից, բայց ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրանք ունեցել են ցեղակցական կապ, որը շատ հեռավոր է եղել: Նոր արքայական դինաստիայի թագավորները՝ սկսած այդ արքայական դինաստիայի

²³ АВИИУ; № 3-7 № 10 (IV, 43).

²⁴ УКН, № 127 (I, стр. 8).

²⁵ АВИИУ, № 27 (II), 54.

հիմնադիր Սարգուրի I-ից, մասնավորապես նրա որդի Իշպուհնինի (822-810) ժամանակակից սեպագիր արձանագրություններ են գրել ոչ թե այդ պետության հիմնական բնակիչների, այն է՝ արմենների կամ ուրարտների լեզվով, այլ քաղաքական ասպարեզ նոր երևան եկած բիաինացաների լեզվով²⁶, իսկ ասորեստանցիները, բաբելոնացիները, երրայացիները, պարսիկները, էլամցիները իրենց արձանագրությունները գրել են իրենց լեզուներով: Փաստորեն արմենների կամ ուրարտացիների լեզվով սեպագիր արձանագրություններ երբեք չեն գրվել: Այդ լեզուն գործ է ածվել միայն բանավոր խոսակցության ընթացքում: Դրա պատճառն այն էր, որ սկսած շումերների ժամանակակից սեպագիր արձանագրությունները գրվել են այն լեզուներով, որոնք ունեցել են փոքր հնչյունական կազմ, քանի որ նրանց հետ աշխատելը ավելի հեշտ է եղել: Այդպիսի լեզուների հնչյունների թիվը չի անցել 20-22 հնչյուններից: Այդ է պատճառը, որ նախասիրությունը տրվել է բիաիններեն լեզվին, որի հնչյունների թիվը հասել է 20-ի, այլ ոչ թե արմեններենին կամ ուրարտերենին, որի հնչյունների թիվը հասել է 36-ի, որոնք գրվել են 39 տառով: Եթե միապաղաղ (տրաֆարետ) ձևով ժայռերի, քարերի վրա գրվող բիաիններեն սեպագիր լեզուն հնարավորություն չի ունեցել զարգանալու, հարստանալու և դառնալու համաժողովրդական լեզու և դուրս մղել ասպարեզից արմենների կամ ուրարտների բանավոր, խոսակցական լեզուն, ապա հակառակ դրան, արմենների կամ ուրարտների բանավոր, խոսակցական լեզուն, որը մինչ այդ էլ համազգային լեզու էր, դրանից հետո էլ ժամանակի ընթացքում ավելի է հարստանում, հզորանում ու դառնում համաժողովրդական ու բանավոր, խոսակցական լեզու, երբ դադարել է գործածությունից բիաիններեն սեպագիր գրությունը: Նույնիսկ վանկագիր սեպագրությունից հետո էլ, երբ վերջինիս փախարհնելու է գալիս հնչյունագիր գրությունը, որից դարձյալ կարող էին օգտվել միայն փոքր հնչյունական կազմ ունեցող լեզուները և անցնել հնչյունական գրությանը, իսկ առատ հնչյունական կազմ ունեցող արմեններեն կամ ուրարտերեն լեզուն այդ ժամանակ էլ չի կարողացել գրության անցնել այնքան ժամանակ, մինչև որ հանձարեղ Մեսրոպ Մաշտոցը հասկանալով դրա պատճառը և արմեններեն կամ ուրարտերեն լեզվի համար ստեղծեց սեփական գրության սիստեմ, ու նոր սկսվեց արմեններեն կամ ուրարտերեն լեզվով գրությունը: Այս

²⁶ УКН, № 19.

ամբողջ փաստերը հաշվի չեն առնվել վերոհիշյալ հետազոտողների կողմից, որոնք էլ չտեսնելով արմենների կամ ուրարտների նույնությունը, բայց սեպագիր դարաշրջանում արմենների լեզվով գրության բացակայության պատճառով արմեններին համարել են երկրորդ ցեղեր և դուրս են թողել նրանց ունեցած տեղն ու դերը Հին Արևելքի պատմագրությունից:

Եթե այս եզրակացությունը սկիզբ է առել մեր կողմից բացահայտված վերոհիշյալ 6 արձանագրությունների տվյալների հիման վրա, ապա այն հաստատվում է մեր կողմից քննարկվող հարցի կապակցությամբ բոլորովին նոր բացահայտված սեմական ծագում ունեցող 48 տեքստի տվյալներով, որոնց մեջ հիշատակվել են սեմական լեզուներով ավանդված Ուրարտու (Ուրաշտու) երկրի անունը և նրանց ուրարտներ (ուրաշտներ) բնակիչների անունը:

Այդ 48 արձանագրություններից 2-ը գրվել են սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով, որոնց մասին կխոսվի վերջում, 1-ն էլ գրվել է սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով, իսկ մնացած 45 տեքստերը գրվել են սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով: Մեր սույն աշխատության մեջ այդ 45 արձանագրությունները ներկայացված են ըստ այդ արձանագրությունները գրող թագավորների կառավարման թվականների հաջորդականության: Այդ 46 տեքստերից մեկը պատկանում է Ասորեստանի թագավորներից Աշշուրնաժիրապալ II-ին (883-859), 6-ը պատկանում են Սալմանասար III-ին (859-824), 4-ը պատկանում են Թիգլաթպալասար III-ին (745-727), 24-ը պատկանում են Սարգոն II-ին (722-705), 1-ը պատկանում է Սինախերիբին (705-681), 3-ը պատկանում են Ասարխադդոնին (680-669), 5-ը պատկանում են Աշշուրբանապալին (668-633): Սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված այդ 45 տեքստերում հիշատակված Ուրարտու երկիրը և նրա ուրարտներ բնակիչները հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով թարգմանվում են Արմենիա երկիր և արմեններ բնակիչներ:

Սեմական ծագում ունեցող վերոհիշյալ 2 արձանագրություններից I-ի հեղինակը անհայտ է: Այդ արձանագրության մեջ հիշատակված Ուրաշտու երկիրը տեղ է գտել 612-609 թթ. ասսուրական պետության կործանման մասին գրված բաբելոնական ժամանակագրություններում: Այդ արձանագրություններից երկրորդի հեղինակն է եղել մ.թ.ա. 415թ. աքեմենյան պետության կողմից Ուրաշտու երկրի բնակիչների, այն է՝ ուրաշտների վրա նշանակված կառավարիչ

(saknu) Շամեշ-բարաքուն: Այդ երկու արձանագրությունների մեջ հիշատակված Ուրաշտու երկիրը և ուրաշտներ բնակիչները հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն լեզվով թարգմանվում են՝ Արմինա երկիր, արմիններ բնակիչներ: Սակայն հիշատակված 48 արձանագրությունները չունեն նման թարգմանություններ, ինչպիսիք ունեին վերոհիշյալ 6 արձանագրությունները: Բայց մենք հաշվի ենք առել հիշյալ 6 արձանագրությունների թարգմանությունների տվյալները և ստեղծել ենք լեզվական կայուն մի օրենք, որը տարածել ենք այդ 48 տեքստերի վրա և բացահայտել ենք այդ արձանագրությունների մեջ հիշատակված Ուրարտու (Ուրաշտու) երկրի և նրա ուրարտներ (ուրաշտներ) բնակիչների անունների վրա ու բացահայտել նրանց ճշգրիտ թարգմանությունները: Դրանից հետո վերոհիշյալ 6 արձանագրությունները և 48 արձանագրությունները իրար միացնելով ստացել ենք 54 արձանագրություններ, որոնք իրենց միանման թարգմանություններով միավորվելով իրար հետ ցույց են տալիս, որ Ուրարտու (Ուրաշտու) երկիրը և նրա ուրարտներ (ուրաշտներ) բնակիչները համապատասխանում են հնդեվրոպական և հնդիրանական լեզուներով հիշատակված Արմենիա (Արմինա) երկրին և նրա արմեններ (արմիններ) բնակիչներին:

Այսպիսով, սեմական ծագում ունեցող Ուրարտու (Ուրաշտու) երկիրը և նրա ուրարտներ (ուրաշտներ) բնակիչները և հնդեվրոպական ու հնդիրանական ծագում ունեցող Արմենիա (Արմինա) երկիրը և նրա արմեններ (արմիններ) բնակիչները նույնն են: Նրանց անունների տարբերությունները առաջացել են այն լեզուների էթնիկական տարբերություններից, որոնցով ավանդվել են այդ անունները: Ուստի համարձակորեն կարող ենք ասել, որ ուրարտական պետությունը դա արմենական կամ հայկական պետություն է՝ Հայկական լեռնաշխարհում, մասնավորապես Վանա լճի ավազանում գրաված իր տարածքով:

Այս բացահայտումը բոլորովին նոր խոսք է Ուրարտու կամ Արմենիա պետության մուք հարցերը լուսաբանելու գործում: Փաստորեն այդ հայտնագործման շնորհիվ ի հայտ է գալիս, որ Արմենիա պետությունը և նրա արմեններ բնակիչները գոյություն են ունեցել և հիշատակվել են Ասորեստանի թագավորներ Սալմանասար III-ի (859-824), Թիգլաթպալասար II-ի (745-727), Սարգոն II-ի (722-705), Սինախերիբի (705-681), Ասարխադդոնի (680-669), Աշշուրբանապալի (668-631) կողմից, որոնց սեպագիր տեքստերում

հիշատակվել է այդ պետությանը տրվող Ուրարտու անունը, որը հնդեվրոպական և հնդիրանական լեզուներով թարգմանվում է Արմենիա (Արմինա): Ինչ վերաբերում է Ուրարտու երկրին, մասնավորապես նրա տարածքին, այդ տարածքի մեջ մտնող լեռներին, ապա այն հիշատակվել է «Ուրարտու երկրի լեռներ» անունով, որը հնդեվրոպական և հնդիրանական լեզուներով թարգմանվել է «Արմենիա երկրի լեռներ»(super montes Armentae): Սա ապացուցում է, որ դեռևս համաշխարհային ջրհեղեղի ժամանակ այդ երկիրը կոչվել է Ուրարտու կամ Արմենիա անունով:

Չետագոտողների կողմից հիմնավոր չեն ուսումնասիրվել նաև ուրարտական կամ արմենական պետության ծագման պարբերացման (պերիոդիզացիայի) փուլերը, այսինքն՝ նրա քաղաքական ասպարեզ գալու արշալույսի, նրա վերելքի, վայրէջքի և անկման փուլերը: Մինչև այժմ հետազոտողները հատուկ քննարկման առարկա չեն դարձրել ուրարտական կամ արմենական պետության վերջին թագավորներ Սարգուրի IV-ի, Էրիսենայի, Ռուսա III-ի և Ռուսա IV-ի կառավարման թվականները: Չետագոտողների աշխատություններում միասնական կարծիք գոյություն չունի, թե կոնկրետ կերպով երբ է ավարտվել ուրարտական կամ արմենական պետության վայրէջքի փուլը և երբ է սկսվել այդ պետության անկման փուլը (եթե հետազոտողներից Լեհմանն-Չաուպտը անկման փուլի սկիզբը հաշվում է մ.թ.ա. 585 թվականից²⁷, ապա Գ.Ա. Մելիքիշվիլին՝ մ.թ.ա. 590 թվականից²⁸): Մինչև այժմ չի պարզաբանվել ուրարտական կամ Արմենական պետության անկման գործընթացը. այն տեղի է ունեցել միանգամից, թե ունեցել է երկարատև գործընթաց:

Չետագոտողների աշխատություններում ըստ ամենայնի չեն վերլուծվել նաև ուրարտական կամ արմենական պետության կազմավորման փուլերը, որոնցից առաջինը սկսվել է այդ պետության քաղաքական ասպարեզ գալու արշալույսից, իսկ երկրորդը, երբ սկսվել են այդ պետության նվաճողական արշավանքները: Չի բացահայտվել, թե այդ փուլերից յուրաքանչյուրի ժամանակ ինչպիսի բնույթ է ունեցել ուրարտական կամ արմենական պետությունը: Մանրակրկիտ չի ուսումնասիրվել երկրորդ փուլում նվաճված երկրների քանակը, նրանց էթնիկական կազմը: Հատուկ քննարկման

²⁷ C.F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, II (2), Berlin, 1931, S. 81.

²⁸ Г.А. Меликшвили, Напу-Урарту, сmp. 320.

առարկա չի դարձել այն հարցը, թե ուրարտական կամ արմենական պետության վայրէջքի փուլում նվաճված երկրներից ու էթնիկական խմբերից որոնք են անջատվել Ուրարտուից կամ Արմենիայից և որոնք են ամուր կերպով մնացել այդ պետության կազմում, չի բացահայտվել, թե վայրէջքի փուլում Ուրարտուի կամ Արմենիայի կազմում մնացած նվաճված երկրների տարածքները և նրանց բնակչությունը մոտավորապես այդ պետության տարածքի ու բնակչության որ մասն են կազմել:

Չետագոտողների աշխատություններում ըստ փուլերի չի վերլուծվել Ուրարտուի կամ Արմենիայի պետական կառուցվածքը՝ կապված նրա տարածքի, սահմանների, նրա բնակչության էթնիկական կազմի, վարչա-տարածքային բաժանման, ինչպես նաև նրանց փոփոխության պատճառների հետ: Գրեթե բոլոր հետազոտողների աշխատություններում Ուրարտուի կամ Արմենիայի պետական կառուցվածքը շփոթվել է կամ այդ պետության կազմավորման կամ թե նրա կառավարման համակարգի հետ:

Չետագոտողների աշխատություններում ընդհանրապես չի քննարկվել ուրարտական կամ արմենական պետության կառավարման համակարգը: Չետագոտողները այդ հարցը շփոթել են Ուրարտուի կամ Արմենիայի պետական կառուցվածքի հետ: Նրանք խոսում են երկրի արքունիքի, թագավորների, նրանց խորհրդականների, մարզերի պետերի, զորահրամանատարների մասին, բայց դա էլ հիշատակել են ոչ թե ուրարտական կամ արմենական պետության կառավարման համակարգի, այլ Ուրարտուի կամ Արմենիայի պետական կառուցվածքի տակ, թեև այդ պաշտոնյաներին թվարկելը դեռ չի նշանակում, թե վերլուծվում է ուրարտական կամ արմենական պետության կառավարման համակարգը: Իրականից ուրարտական կամ արմենական պետության կառավարման համակարգի մասին խոսելիս նախ և առաջ պետք է առանձնացնել այդ պետության կենտրոնական կառավարման համակարգը տեղական կառավարման համակարգից, այնուհետև՝ պետք է առանձնացնել կենտրոնական Ուրարտուի կամ Արմենիայի կառավարման համակարգը հպատակ (այդ թվում նվաճված) երկրների կառավարման համակարգից, բացահայտել կենտրոնական Ուրարտուի կամ Արմենիայի և հպատակ (այդ թվում նվաճված) երկրների կառավարման օրգանների տարբերություններն ու ընդհանրությունները, և վերջապես՝ պետք է հատուկ քննարկման առարկա դարձնել Ուրարտուի կամ Արմենիայի

իրավական և հարկային համակարգերը՝ որպես ուրարտական կամ արմենական պետության կառավարման համակարգի բաղկացուցիչ մասեր:

Այս չլուծված հիմնախնդիրներն են պատճառը, որ առայժմ ուրարտական կամ արմենական պետության պատմությունը գրվել է տարերայնորեն, չի հասել ամփոփ վիճակի: Ահա սրանք են այն պատճառները, որ այժմ անհրաժեշտություն է զգացվում ստեղծել աշխատություն, որը մինչև այժմ եղած հայտնի սեպագրական ու հնագիտական նյութի հիման վրա ներկայացնի Ուրարտուի կամ Արմենիայի պետական կարգը՝ զերծ մնալով վերոհիշյալ սխալներից ու թերություններից: Նման նպատակ է հետապնդում մեր կողմից ներկայացվող սույն աշխատությունը:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՏԵՂ ԳՏԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուրարտու կամ Արմենիա պետության ծագման կամ նրա պետական կարգի հետ կապված նորությունները:

1) 1. Ի հայտ է բերվել Ուրարտու կամ Արմենիա երկրանվան, նրա ուրարտներ բնակիչների անվան տարբերությունները և ուրուատրի ցեղամիության անվան, նրա ուրուատրիներ բնակիչների անվան տարբերությունը ինչպես հնչյունական կառուցվածքի, այնպես էլ բառական իմաստի տեսակետից, 2. քննադատվել է հետազոտողներ Գ. Ա. Ղափանցյանի, Գ. Ա. Մելիքիշվիլու, Բ. Բ. Պիտորովսկու, Ն. Վ. Յարունյանի տեսակետը Ուրարտու երկրանվան ու նրա ուրարտներ բնակիչների անվան և Ուրուատրի ցեղամիության անվան ու նրա ուրուատրիներ բնակիչների անվան համադրության հարցում, 3. ընդգծվել է Ուրուատրի ցեղամիության կապը խուրրիական էթնիկական աշխարհի հետ, 4. ի հայտ է բերվել ուրարտների էթնիկական նույնությունը հնդեվրոպական ծագում ունեցող արմենների կամ հայերի էթնիկական աշխարհի հետ, 5. բացահայտվել է միևնույն պետությանը տրվող Ուրարտու և Արմենիա անունների և նրա միևնույն բնակիչներին տրվող ուրարտներ և արմեններ անունների առաջացումը տարբեր էթնիկական ծագում ունեցող սեմական, ինչպես նաև հնդեվրոպական լեզուների տարբերություններից, 6. հիմնավորվել է միևնույն պետությանը և միևնույն բնակիչներին սեմական ծագում ունեցող լեզուներով տրվող Ուրարտու (Ուրաշտու) և ուրարտներ (ուրաշտներ) և հնդեվրոպական ծագում ունեցող լեզուներով տրվող Արմենիա (Արմինա) և արմեններ (արմիններ) անունների նույնության իսկությունը, 7. ընդգծվել է միևնույն պետությանը և նրա միևնույն բնակիչներին տրվող անուններից Ուրարտու (Ուրաշտու) և ուրարտներ (ուրաշտներ) անունների ժամանակավոր բնույթը և Արմենիա (Արմինա) ու արմեններ (արմիններ) անունների արմատական բնույթը, 8. ի հայտ է բերվել միևնույն Ուրարտու կամ Արմենիա պետության բանավոր, խոսակցական լեզվի ու այդ պետության սեպագիր գրավոր լեզուների տարբերությունը, 9. ցույց է տրվել միևնույն Ուրարտու կամ Արմենիա պետության բանավոր, խոսակցական լեզվի կապը այդ պետության ուրարտներ կամ արմեններ բնակիչների լեզվի հետ, իսկ այդ պետության գրավոր լեզվի կապը նախորդած ծագում ունեցող Դայաենի

պետության կազմում մտնող Բիանի երկրի բնակիչների՝ բիա-
նացիների լեզվի հետ, 10. պարզաբանվել է բիաիներեն լեզվի
հնչյունների քանակի տարբերությունը, ուրարտների կամ արմենների
լեզվի հնչյունների քանակից 11. ի հայտ է բերվել բիաինացիների
այբուբենի կազմվելը 20 հնչյուններից, իսկ ուրարտների կամ
արմենների այբուբենի կազմվելը 36 հնչյուններից, որոնք գրվել են 39
տառով, 12. բացահայտվել է Ուրարտու կամ Արմենիա պետության
սեպագիր արձանագրությունները ուրարտների կամ արմենների
լեզվով չգրելու, այլ բիաինացիների լեզվով գրելու պատճառը՝
կապված փոքր հնչյունական կազմ ունենալու և սեպագիր
արձանագրությունները փոքր այբուբեն ունեցող լեզվով գրելու հետ,
13. հիմնավորվել է հնդեվրոպական ծագում ունեցող ուրարտերեն կամ
արմեներեն լեզվի ու նաիրյան ծագում ունեցող բիաիներեն լեզվի շատ
հեռավոր ցեղակցական կապը, 14. ի հայտ է բերվել բիաիներեն լեզուն
բաղաբական ասպարեզից դուրս մղվելու ժամանակի հարցը՝ կապված
վանկագիր սեպագրությանը հաջորդող հնչյունագիր գրությամբ
փոխվելու հետ, 15. բացահայտվել է հնչյունագիր գրության ժամանակ
դարձյալ ուրարտական կամ արմենական լեզվով գրությանը չանցնելու
պատճառը, 16. հիմնավորվել է ուրարտերեն կամ արմեներեն լեզվով
գրության առաջացումը Մաշտոցյան այբուբեն ստեղծելու հետ, 17. ի
հայտ է բերվել Մաշտոցյան այբուբենով ուրարտերեն կամ արմեներեն
այբուբենով ճոխ թարգմանություն կատարելու պատճառը՝ կապված
արմեներեն բանավոր լեզվի ճոխության հետ, 18. բացահայտվել են
բիաիներեն լեզուն համազգային լեզու չդառնալու պատճառները, 19. ի
հայտ է բերվել Մաշտոցյան այբուբենը ստեղծելուց հետո ուրարտերեն
կամ արմեներեն լեզուն համազգային լեզու դառնալու պատճառները:
20. բացահայտվել են ուրարտական կամ արմենական պետության
ծագման, վերելքի, վայրէջքի ու անկամ պարբերացման
(պերիոդիզացիայի) գլխավոր փուլերը, 21. ի հայտ են բերվել այդ
փուլերի տարբերության գլխավոր պատճառները, 22. բացահայտվել
են ուրարտական պետության վերջին թագավորների (Սարգուրի IV,
Էրիմենա, Ռուսա III, Ռուսա IV) ժամանակագրությունները, 23. ի հայտ
են բերվել ուրարտական կամ արմենական պետության վայրէջքի
փուլի վերջին և ամբողջ անկման փուլի ժամանակագրությունները, 24.
բացահայտվել են ուրարտական կամ արմենական պետության
դինաստիական կառուցվածքի մեջ ուրարտական կամ արմենական

դինաստիաների առկայության փաստերը՝ կապված Արամեի և
Էրիմենայի հետ, 25. մատնանշվել են ուրարտական կամ արմենական
պետության անկման փուլի հետ կապված Լեհմանն-Յաուպտի և Գ.Ա.
Մելիքիշվիլու տեսությունների սխալ արմատները, 26. ի հայտ են
բերվել վերելքի փուլը մինչև Ռուսա I-ի ժամանակը ձգելու տեսության
սխալ հիմքերը, 27. Յետագոտվել են ուրարտական կամ արմենական
պետության ծագման ու կազմավորման գլխավոր փուլերը (բուն
ուրարտական կամ արմենական փուլը և տարբեր երկրներ նվաճելուց
հետո ստեղծված փուլը կամ վերելքի փուլը, ինչպես նաև նվաճված
երկրներից շատերի անջատվելու փուլը կամ վայրէջքի փուլը), 28.
բացահայտվել են ուրարտական կամ արմենական պետության
ծագման բնույթը և նրա փոփոխության պատճառները, 29.
հետագոտվել են նվաճումների ճանապարհով Ուրարտու կամ Արմենիա
պետության կազմում մտած երկրների թիվը, 30. բացահայտվել է
Ուրարտու կամ Արմենիա պետության կազմում հայալեզու ցեղերի,
այսինքն՝ ուրարտների կամ արմենների ամուր կերպով մնալու
պատճառներն ու հետևանքները: 31. բացահայտվել է Ուրարտուի կամ
Արմենիայի պետական կառուցվածքը՝ կապված այդ պետության
տարածքի, սահմանների, բնակչության և վարչատարածքային
բաժանման, ինչպես նաև նրանց փոփոխության պատճառների հետ,
հայտնաբերվել են ուրարտական կամ արմենական պետության
բնակչության կազմում հայալեզու ցեղերի, այսինքն՝ արմենների կամ
հայերի ճնշող մեծամասնություն գրավելու պատճառներն ու
հետևանքները: 32. բացահայտվել են ուրարտական կամ արմենական
պետության կառավարման համակարգի բնորոշ գծերը՝ կապված բուն
Ուրարտուի կամ Արմենիայի և հպատակ (այդ թվում նվաճված)
երկրների կառավարման տարբերության հետ, ի հայտ են բերվել
Ուրարտուի կամ Արմենիայի պետության հարկային և իրավական
համակարգերը՝ որպես ուրարտական կամ արմենական պետության
կառավարման համակարգի բաղկացուցիչ մասեր, բացահայտվել են
կենտրոնական Ուրարտուի կամ Արմենիայի և հպատակ (այդ թվում
նվաճված) երկրների կառավարման օրգանների տարբերություններն
ու ընդ-հան-րությունները, 33. ի հայտ են բերվել ուրարտական կամ
արմենական թագավորների արձանագրությունների վերջում
գետեղված պատժի (սանկցիայի) չափերը Գ. Ա. Ղափանցյանի կողմից
«անեծքի բանաձևեր» ընկալելու սխալ արմատները:

Աշխատության գործնական նշանակությունը որոշվում է նրանով, որ Ուրարտու կամ Արմենիա պետության ծագման ուսումնասիրման փորձը կարող է դառնալ ինչպես Առաջավոր Ասիայի, այնպես էլ Փոքր Ասիայի ժողովուրդների պետությունների ծագման, նրանց վերելքի ու վայրէջքի ուսումնասիրման տեսանկյուններից մեկը:

Չետագոտության մեջ կատարված վերլուծությունները, տեսական ընդհանրացումները կոչված են օգնելու, որոշակի աստիճանով լրացնելու հայրենական պատմագիտության մեջ գոյություն ունեցող բացթողումները և վերացնելու սխալները:

Աշխատությունում պարունակվող գիտական տեղեկությունները, եզրակացությունները և առաջարկությունները կարող են օգտակար լինել պետական կարգի հարցի վերակառուցման և այդ հարցի ուսումնասիրման աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Դրանք կարելի է կիրառել պետական կարգի հարցի վերակառուցման դասախոսական ու հրատարակչական պրոպագանդայի խնդիրներում:

Չետագոտության նյութերը կարող են օգտագործվել Առաջավոր Ասիայի և Փոքր Ասիայի ժողովուրդների հին պատմության ընդհանրացնող աշխատությունների նախապատրաստման ընթացքում, պետական կարգի հարցի վերաբերյալ աշխատություններում, երկրի ընդհանուր պատմության դասընթացի վերաբերյալ դասագրքերի ու ձեռնարկների ստեղծման մեջ: Նրանք օգտակար կլինեն նաև բուհերում հին պատմության ու մշակույթի հատուկ դասընթացների ընթերցման և համապատասխան թեմա-տիկայի գծով անցկացվող սեմինարների ժամանակ:

Մեծ ուշադրության են արժանի նաև աշխատությունում օգտագործվող շումերական, աքքադական (ասսուրա-բաբելոնական) և բիհիմական սեպագիր տեքստերից վերցրած պետության ծագումը, նրա պետական կարգը արտացոլող տերմինների տառադարձումները, մեկնաբանությունները և թարգմանությունները: Դրանց արժեքը բարձրանում է հատկապես նրանով, որ հայրենական պատմագրության մեջ դրանց մի մասը առաջին անգամ է օգտագործվում, և ընթերցողը դրանց միջոցով անմիջապես ծանոթանում է սեպագիր լեզուներին, նրանց հուշարձաններին:

Ուրարտու կամ Արմենիա պետության ծագումը, նրա պետական կարգի պատմությունը վեր հանելու համար մեզ հիմք են ծառայել հետևյալ սկզբնաղբյուրները, որոնք կարելի է բաժանել 8 խմբի:

1. Ուրարտական կամ արմենական աղբյուրները²⁹. - Սրանք ուրարտական կամ արմենական թագավորների սեպագիր տարեգրություններն ու արձանագրություններն են: Դրանք իրենցից ներկայացնում են հենց իրենց՝ ուրարտական կամ արմենական թագավորների ձեռքով կատարված գործերի նկարագիրը և դիտելի են որպես պատմական հավաստի սկզբնաղբյուրներ: Ուրարտացիները կամ արմենները իրենց արձանագրությունները գրել են ինչպես բիհիմերեն, այնպես էլ ասսուրերեն լեզուներով: Ուրարտական կամ արմենական արձանագրությունները հայտնի են Սարգուրի I-ի (832-822) ժամանակից: Սարգուրի I-ը իր արձանագրությունները գրել է միայն ասսուրերեն լեզվով: Բիհիմերեն լեզվով արձանագրությունները սկիզբ են առել Սարգուրի I-ի որդի Իշպուլիմի (822-810) ժամանակից: Ինչպես Իշպուլիմի, այնպես էլ հետագայում Ռուսա I-ի (735-713) արձանագրություններում տեղ են գտել նաև բիլինգվալները (երկ-լեզվյան արձանագրությունները), որոնք գրվել են բիհիմերեն և ասսուրերեն լեզուներով: Մեզ են հասել Ուրարտուի կամ Արմենիայի թագավորներից Արգիշթի I-ի (786-764) և նրա որդի Սարգուրի II-ի (764-735) տարեգրությունները, որոնք գրվել են բիհիմերեն լեզվով: Կան նաև մի շարք սեպագիր նամակներ, որոնք ունեն թագավորական հրամանագրերի իմաստ:

Ուրարտական կամ արմենական աղբյուրները հիմնականում կրում են ռազմական, մասամբ նաև շինարարական կամ տնտեսական, կրոնական ու սոցիալական բնույթ: Ռազմական բնույթի տեքստերը պատմում են ուրիշ երկրների, մասնավորապես Դայանի-Դիաուխի պետության, Խաթե ու Էթիունի ցեղամիությունների վրա ուրարտացիների կատարած արշավանքների, ասպատակությունների, այդ երկրները և ցեղամիությունները նվաճելու, ավերելու, կողոպտելու,

²⁹ Տառադարձումներ և ռուսերեն լեզվով թարգմանություններ - Գ.Ա. Мелукашвили, Урартские клинообразные надписи (УКН), М., 1960: Այդ աշխատությունը առաջին անգամ տպագրվել է "Вестник древней истории" ամսագրի 1953-1954 թվականների էջերում: Այժմ այն շարունակում է հրատարակվել հավելվածներով, տես՝ В.Д.И., 1971, №3-4: Սեպագիր տեքստեր, տառադարձություններ և գերմաներեն լեզվով թարգմանություններ - F.W. König, Handbuch der chaldischen Inschriften (Handbuch), Graz, I, 1955; II, 1957: Վերջերս ուրարտական արձանագրությունների տառադարձումներ և ռուսերեն լեզվով թարգմանություններ է հրատարակել Լ.Վ. Չարությունյանը-Н.В. Арутюнян, Корпус урартских клинописных надписей (УКН), Ереван, 2001: Վերջերս բիհիմերեն լեզվով հայտնաբերված նոր սեպագիր արձանագրությունների ժողովածու է հրատարակել Մ. Սալվինին (M. Salvini, Ayanis, I, Roma, 2001):

գերեվարություն կատարելու, մարդկանց սպանելու, ստրկացնելու, հարկի ու տուրքի տակ դնելու, ուրարտական կամ արմենական պետության դեմ նվաճված ժողովուրդների բարձրացրած ապստամբությունները զենքի ուժով ճնշելու, ուրարտական կամ արմենական զորքի ստորաբաժանումների ու նրանց սոցիալական կազմի, ուրարտական կամ արմենական փախստականների սոցիալական կազմի ու նրանց փախուստի պատճառների և այլ հարցերի մասին: Շինարարական կամ տնտեսական, կրոնական ու սոցիալական բնույթի տեքստերը պատմում են բնակավայրերի ու կրոնական բնույթի օբյեկտների, բնակավայրերի բնակիչների սոցիալական կազմի, ուրարտական կամ արմենական պետության բնակչության էթնիկական կազմի, ուրարտական կամ արմենական պետության ծագման, նրա պարբերացման (պերիոդիզացիայի) փուլերի, այդ պետության կազմավորման, Ուրարտուի կա Արմենիայի պետական կառուցվածքի, այդ պետության կառավարման համակարգի մասին:

1) Ասսուրական աղբյուրներ³⁰.

ա) Թագավորական տարեգրություններ և արձանագրություններ³¹.

- Այս աղբյուրները կրում են ռազմական բնույթ և պատմում են Նաիրի

³⁰ Ասսուրա-բաբելոնական աղբյուրները, այն չափով, որքանով դրանք վերաբերում են Յարդակական լեռնաշխարհին-ուրարտական կամ արմենական պետությանը, ռուսերեն թարգմանությամբ և կարևոր ծանոթագրություններով ներկայացված են Ի.Ս. Դյակոնովի АВВІУ (ВДИ, 1951, №2, 3, 4) աշխատության մեջ: Ժողովածուում կան մի քանի բացթողումներ: Դրանք, այն չափով, որքանով վերաբերում են մեր բնմային, ներկայացված են սույն աշխատության հետագա շարադրանքում:

³¹ Թագավորական տարեգրությունների և արձանագրությունների անգլերեն թարգմանության ժողովածուում տրված է D.D. Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia, Chicago, I, 1926; II, 1927 աշխատությունում: Դրան զգալի չափով հնացած աշխատությանը, փոխարինելու է գալիս A.K. Grayson, Assyrian Royal Inscriptions, Wiesbaden, vol. I, 1972; vol. II, 1976 ժողովածուում: Յրատարակված հատորներում ընդգրկված են ներառյալ Աշշուրնափրապալ II-ի տեքստերը: Բացթողումները լրացնելու համար, որոնք հիշատակված են ծան. 2-ում, աքքադական տերմինաբանության և սահմանիչների, ինչպես նաև տողային բաժանումների հաշվարկով, մեր կողմից օգտագործվել են հետևյալ հրատարակությունները, որոնք պարունակում են առանձին թագավորների տարեգրությունների և արձանագրությունների սեպագիր տեքստերը, առանձին դեպքերում նաև տառադարձությունները և թարգմանությունները (տես նաև ծան. 4-5) A.H. Layard, Inscriptions in the Cuneiform Characters from Assyrian Monuments, London, 1851; H.C. Rawlinson, The Cuneiform Inscriptions of Western Asia, vol. III, London, 1870; S. Birch, Cuneiform Text of the Balawat Inscriptions of Salmanasar III (The Bronze Ornaments of the Palace Gates of Balawat, London, 1880); E. Schrader, Keilinschriftlichen Bibliothek (KB), Berlin, I, 1889; II, 1890; H. Winckler, Die Keilinschrifttexte Sargons, Band I, Leipzig, 1889; H. Winckler, Šupria (Altorientalische Forschungen, II, Leipzig, 1901); P. Rost, Die Keilinschrifttexte Tiglat-Pileasers III,

ցեղամիության թագավորությունների, մասնավորապես նրանցից Դայանի թագավորության, ինչպես նաև ուրարտական կամ արմենական պետության վրա ասսուրական թագավորների կատարած արշավանքների, ասպատակությունների, ավերածությունների, կողպուտի ու թալանի մասին: Թեև այս աղբյուրներում զգալի է ասսուրական թագավորների ինքնագովեստից բխող չափազանցության կնիքը, բայց և այնպես դրանք իրենցից ներկայացնում են հենց իրենց՝ ասսուրական թագավորների ձեռքով կատարված զործողությունների նկարագիրը և դիտելի են որպես պատմական հավաստի սկզբնաղբյուրներ: Դրանցից են Աշշուրնափրապալ II-ի (884-859), Սալմանասար III-ի (859-824) տարեգրություններն ու արձանագրությունները: Ասսուրական սկզբնաղբյուրներում այնպիսի տեղեկություններ են պահպանվել Ուրարտու կամ Արմենիա պետության ծագման մասին, որոնք չեն հիշատակվել Բիաինական սեպագիր արձանագրություններում: Ասորեստամի թագավորներից Ուրարտուի կամ Արմենիայի պետական կարգի մասին, որոնք բացակայում են բիաիներեն լեզվով գրված սկզբնաղբյուրներում:

Այս բնույթի պատմական սկզբնաղբյուրներից են Սալմանասար III-ի արձանագրություններն ու տարեգրությունը, որոնք առաջին անգամ տալիս են բուն Ուրարտուի կամ Արմենիայի բազմակողմանի նկարագիրը: Դրանցում Սալմանասար III-ը պատմում է Ուրարտուի կամ Արմենիայի վրա կատարած իր հինգ արշավանքների մասին, որոնցից չորսին մասնակցել է ինքը և գլխավորել բուն Ուրարտուի կամ Արմենիայի ասպատակությունները, ավերածությունները, կողպուտն ու թալանը: Սալմանասար III-ի տեքստերը տեղեկություններ են

Leipzig, 1893; E.A.W. Budge and L.W. King, Annals of the Kings of Assyria (AKA), I, London, 1902; C.F. Lehmann-Haupt, Materialien sur 11teren Geschichte Armeniens und Mesopotamiens (Materialien), Berlin, 1907; A. Billerbeck und F. Delitzsch, Die Inschriften auf den Schicnen (Beiträge sur Assyriologie und Semitischen Sprachwissenschaft, Band VI, Leipzig, 1909); L. Messerschmidt, Keilschrifttexte aus Assur historische Inhalts (KAH), I, Leipzig, 1911; F. Thureau-Dangin, Une relation de la huitième campagne de Sargon, Paris, 1912; O. Schroder, Keilschrifttexte aus Assur historische Inhalts (KAH), II, Leipzig, 1922; E.F. Weidner, Die Annalen des Königs Aššurbêl-kala von Assyrien (Archiv für Orientforschung (AFO), Berlin, 1930, Bd. VI, ²/₃; Th. Bauer, Ein Erstbericht Asarhaddons (Zeitschrift für Assyriologie und verwandte Gebiete, NF, VI, ³/₄, 1931); F. Thureau-Dangin et M. Dunand, Til-Barsib, Paris, 1936; R. Borger, Der "Gottesbrief" (Die Inschriften Asarhaddons König von Assyrien, Gras, 1956).

պահպանել Ուրարտուի կամ Արմենիայի պետության ծագման մասին: Սալմանասար III-ի տեքստերի տվյալները ավելի բարձր արժեք են ստանում, երբ հաշվի է առնվում, որ նրա առաջին երեք արշավանքների ժամանակաշրջանից, երբ Ուրարտուում կամ Արմենիայում իշխում էր Արամե կամ Արամ թագավորը (859-844), ուրարտական կամ արմենական արձանագրությունները մեզ չեն հասել, և Ուրարտուի կամ Արմենիայի կյանքի մասին մենք տեղեկություններ ենք քաղում միայն Սալմանասար III-ի տեքստերից:

Ուրարտու կամ Արմենիա պետության ծագման, նրա վերելքի մասին տեղեկություններ են պահպանվել նաև Ասորեստանի թագավորներ Շամշի-Ադադ V-ի (828-810), Թիզլաթպալասար III-ի (745-722) և Սարգոն II-ի (722-705) տարեգրություններում և արձանագրություններում: Եթե Շամշի-Ադադ V-ը պատմում է իր զորահրամանատարի գլխավորությամբ Ուրարտուի կամ Արմենիայի տարածքում ասսուրական զորքի կատարած ասպատակությունների մասին, ապա Թիզլաթպալասար III-ը և Սարգոն II-ը անձամբ իրենք են մտել Ուրարտու կամ Արմենիա, ասպատակությունների, ավերածությունների, կողոպուտի ու թալանի ենթարկել երկիրը, և այդպիսով նրանց տեքստերի հաղորդած տեղեկությունները ավելի հավաստի են:

Ասորեստանի թագավոր Ասարխադդոնի (680-669) արձանագրությունները տեղեկություններ են պահպանել հանուն Շուբրիա երկրի Ուրարտու կամ Արմենիա պետության պայքարը Ասորեստանի դեմ³²:

բ) Յետախուզական նամակներ³³. -Սրանք վերաբերում են Սարգոն II-ի ժամանակաշրջանին: Ինքնըստինքյան հասկանալի է, որ հետախուզական նամակները գրված լինելով ականատեսի կողմից, ճշմարիտ ու հավաստի տեղեկություններ են պահպանել: Բնականաբար, նամակների հեղինակների տեսադաշտը ավելի նեղ է, նրանցում շոշափվում են ավելի կոնկրետ հարցեր, քան թագավորական արձանագրություններն ու տարեգրությունները: Քաղաքական վիճակին վերաբերող տեղեկություններին զուգընթաց նամակներում տեղ են գտել նաև Ուրարտու կամ Արմենիա պետության,

³² Д.Н Саркисян, Страна Шубриа, гл. III, с. 41-57.

³³ E.F. Harper, Assyrian and Babylonian Letters, I-XII, London, 1892-1914, № 144, 197, 646; L. Waterman, Royal Correspondence of the Assyrian Empire, Ann Arbor, I-IV, 1930-1936, №№144, 197, 646.

նրա պետական կարգի վերաբերյալ փաստեր, որպիսիք բացակայում են ուրարտական կամ արմենական աղբյուրներում:

գ) Բարձրաքանդակներ³⁴. - Ուրարտու կամ Արմենիա պետության ծագման, նրա շինարարական արվեստի վերաբերյալ տեղեկություններ են պահպանել Սալմանասար III-ի Բալավաթյան պալատի բրոնզե դարպասի բարձրաքանդակների տեսարաններից մի քանիսը:

Ընդհանրապես Բալավաթյան բարձրաքանդակները հարուստ նյութ են տալիս Ասորեստանի կողմից նվաճված ու ասպատակված երկրների (որոնց թվում նաև Ուրարտուի կամ Արմենիայի) զորքի, օգտագործած զենքի, բնակավայրերի շինարարական կառուցվածքի, այդ բնակավայրերի բնակիչների, նրանց տարագի, զարդերի, նրանցից խլված ունեցվածքի մասին: Ասսուրական վարպետները ձգտել են դրանց պատկերման զանազանությամբ ներկայացնել համապատասխան երկրների տարբերությունները, անշուշտ, հիմք ընդունելով տվյալ երկրի յուրօրինակության գծերը: Այս տեսակետից բարձրաքանդակները դիտվում են որպես տվյալ երկրի արվեստի, մշակույթի, կենցաղի, զբաղմունքների, տնտեսության ձևերի, բնակչության խավերի, բնակչության էթնիկական տիպի, ինչպես նաև զորքի ստորաբաժանումների և նրանց օգտագործած զենքի տեսակների ու ձևերի պատմության կարևոր աղբյուրներ:

2) Բաբելոնական ժամանակագրություններ³⁵. - Դրանք գրվել են սեպագրերով և տեղեկություններ են հաղորդում ինչպես Ասորեստանի, այնպես էլ Ուրարտուի կամ Արմենիայի և ուրիշ այլ երկրների մասին: Ժամանակագրությունների հաղորդած տեղեկությունները, բնականաբար, գտնվել են ժամանակի շրջանների մեջ: Նրանցում բաբելոնացիները, սուղ և ճշմարիտ, առանց չափազանցության նկարագրել են կարևոր նորությունները, որոնք հասել են իրենց և, իհարկե, առաջին հերթին Ասորեստանից ստացվածները: Ուստի ժամանակագրությունները ներկայացնում են պատմական իրական անձնավորությունների իրական գործողությունները:

3) Պարսկական սեպագիր արձանագրություններ³⁶. - Սրանք նույնպես պատմում են պատմական իրական անձնավորությունների ու

³⁴ L.W. King, Bronze Reliefs from the Gates of Salmanasar King of Assyria, London, 1915, plates I-XII, XXXVII-XLII, Band I (1-6); II (1-6); VII (1-6).

³⁵ C.J. Gadd, The Fall of Nineveh, London, 1923; И.М. Дьяконов, Малая Азия и Армения около 600г. до н.э. и северные походы вавилонских царей (ВДИ, 1981, 12), стр. 34 и прим. 29-30.

³⁶ F.H. Weissbach, Die Keilinschriften der Achämeniden, Leipzig, 1911, S. 8-75.

նրանց իրական գործողությունների մասին և դիտվում որպես պատմական իրական աղբյուրներ:

4) Աստվածաշունչ³⁷. - Եբրայերեն լեզվով գրված և հին արևելքի պատմության համար շատ կարևոր այս աղբյուրի տվյալները, թեև սեպագիր աղբյուրների հետ համեմատած նվազ արժանահավատ են, որովհետև դրանք մեծ մասամբ առնված են ավանդություններից ու լեգենդներից, հագեցած նաև կրոնական շնչով, այնուամենայնիվ, հետաքրքրական տեղեկություններ են պարունակում Ararat (Արարատ) կամ Urartu (Ուրարտու) երկրի, նրա թագավորության, ինչպես նաև լեռների մասին:

5) Հին հունական աղբյուրներ. - Սրանց շարքին են պատկանում պատմահայր Հերոդոտոսի (484-425) «Պատմություն ինը գրքից»³⁸, Քսենոփոնի (430-356) «Կյուրոպեդիա» և «Անաբասիս»³⁹, Դիոդորոս Սիկիլիացու (մ.թ.ա. I դար) «Պատմական գրադարան»⁴⁰, Ստրաբոնի (մ.թ.ա. 63-մ.թ. 21) «Աշխարհագրությունը»⁴¹ աշխատությունները: Պատմական այս աղբյուրների մեր կողմից օգտագործված նյութը հիմնականում հյուսվել է ավանդությունների և լեգենդների տվյալների հիման վրա, որոնց գործողությունները տեղի են ունեցել հիշյալ հեղինակների ապրած ժամանակաշրջաններից շատ առաջ (բացի Քսենոփոնի «Անաբասիսի» գործողություններից) ու բոլորովին օտար երկրներում: Սակայն, այսուհանդերձ, այդ աշխատությունները սեպագիր աղբյուրների ու Աստվածաշունչի համեմատությամբ պարունակում են լրացուցիչ նյութեր Ուրարտուի կամ Արմենիայի պետական կարգի, մասնավորապես նրա քաղաքական կյանքի ու էթնիկական կազմի բացահայտման վերաբերյալ:

6) Հայկական աղբյուրներ. -

Ա) Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»⁴².- Իր աշխատությունում Մովսես Խորենացին տեղեկություններ է պահպանել Ուրարտուի կամ Արմենիայի պետական կարգի, մասնավորապես նրա քաղաքական կյանքի ու էթնիկական կազմի հետ կապված որոշ հարցերի մասին: Խորենացու աշխատությունը սեպագիր աղբյուրների, Աստվածաշունչի ու հունական աղբյուրների համեմատությամբ պարունակում է բոլորովին նոր տեղեկություններ, որոնք հաստատում են, թե հայոց պատմահայրը օգտվել է նաև լրացուցիչ ավանդություններից, որոնք, հավանաբար, պահպանվել են ժողովրդական բանավոր գրույցներում:

Բ) «Աշխարհացույց»⁴³. - 7-րդ դարի գրավոր աղբյուրներից է: Տալիս է Հայկական լեռնաշխարհի աշխարհագրությունը, նրա վարչատարածքային բաժանման պատկերը: Սեպագիր աղբյուրների և «Աշխարհացույցի» տվյալների համեմատությունը արժեքավոր նյութ է տալիս Ուրարտուի կամ Արմենիայի պետական կարգի, մասնավորապես նրա վարչական բաժանման և քաղաքական կյանքի հետ կապված որոշ հարցերի լուսաբանման համար:

Սույն շարադրանքի ընթացքում մենք ծանոթացանք Ուրարտու կամ Արմենիա պետության ծագման, նրա պետական կարգի հետ կապված հետազոտողների որոշ տեսակետներին: Այդ հարցերի հետ կապված նրանց այլ տեսակետներին մենք կժանոթանանք հետագա շարադրանքի ընթացքում:

³⁷ Священные книга (Ветхого завета, для употребления евреям), Вена, 1877, том. I, Книга бытия (пятокнижие Моисея), гл. VIII, стк. 3-4, гл. X, стк. 2-5; II книга царей (IV книга царств), гл. XIX, стк. 36-37 (срав. Исаия, гл. XXXVII, стк. 37-38); Иеремия, гл. LI, стк. 11, 27-28, 37.

³⁸ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986, գիրք I (§§72, 103, 110, 180, 194), III (§§93, 94), V (§§49, 52), VII (§§73, 79):

³⁹ Քսենոփոն, Կյուրոպեդիա, Երևան, 2000, գիրք II (§4), III (§§1, 2, 3, 33); նրա Անաբասիս, Երևան, 1970, գիրք III (§5), գիրք IV:

⁴⁰ Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, Երևան, 1985, գիրք 14(7-30), 31(17-27), 40(4):

⁴¹ Strabonis, Geographica, recogn. A. Meineke, vol. I-III, Lipsiae, 1915-1925, lib. XI (§4, 8, 12, 14).

⁴² Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Երևան, 1961, գիրք I, գլուխ 10-32, գիրք II, գլուխ 50:

⁴³ Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 107, 111, 114:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆ ԸՍՏ ՍԵՊՏԱԳԻՐ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ուրարտուի մասին առաջին տեղեկությունները պահպանվել են Ասորեստանի թագավորներ Աշշուրնափրապալ II-ի (883-859) և Սալմանասար III-ի (859-824) սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված սեպագիր արձանագրություններում: Եթե Աշշուրնափրապալ II-ի ժամանակ Ուրարտուն հանդես է եկել որպես սոսկ մի երկիր, որը ենթարկվում էր Ասորեստանին²⁴, ապա Սալմանասար III-ի ժամանակ Ուրարտուն հանդես է գալիս որպես Ասորեստանից անկախ մի պետություն, որը ուներ իր թագավորը, իր արքայական քաղաքը, իր զորքը (նրա թագավորն էր Արամեն (Արուսուն, Արաման)), նրա արքայական քաղաքն էր Արգաշքուն, որը գտնվում էր Արծանիա կամ Արածանի գետի միջին ավազանից դեպի հարավ և Վանա լճից դեպի հյուսիս ձգվող տարածքում, նրա թագավորը ուներ իր զորքը, որի զինվորների թիվը հասնում էր 3400-ի²⁵:

Արամե թագավորից մեզ արձանագրություններ չեն հասել, որի պատճառով պարզ չէ, թե ինչ անունով է նա կոչել իր երկիրը, իր պետությունը կամ հիմնականում ինչպիսի էթնիկական կազմ է ունեցել նրա երկրի բնակչությունը: Սակայն այդ բացը ինչ-որ չափով լրացվում է Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված սեպագիր արձանագրությունների տվյալներով: Սեպագիր այդ արձանագրություններում Արամեի երկիրը, նրա պետությունը սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով կոչվել է Ուրարտու անունով: Ըստ այդ արձանագրությունների տվյալների, Արամեի ժամանակ նրա պետությունը կազմված էր վարչատարածքային 4 միավորներից: Դրանք էին՝ Արգաշքուն, Արամալին, Ջանգիունան, Սուգունիան²⁶: Վարչատարածքային այդ միավորներից ամեն մեկը իրենից ներկայացնում էր մի քաղաք կամ մի քաղաք-ամրոց՝ իր շրջակայքում գտնվող բազմաթիվ բնակավայրերով հանդերձ: Արգաշքուն վարչատարածքային միավորը գտնվել է Դայանի երկրի հարևանությամբ տարածված Արածանի գետի միջին ավազանից

դեպի հարավ ձգվող տարածքում, Արամալի վարչատարածքային միավորը գտնվել է նրանից դեպի հարավ ձգվող տարածքում, նրան հաջորդել է Ջանգիունա վարչատարածքային միավորը, որը տարածված էր Վանա լճի արևելյան երկարությամբ, իսկ Սուգունիա վարչատարածքային միավորն էլ տարածված էր նրանից դեպի արևելք և հասնում էր մինչև Խուբուշքիա և Գիլգանիա երկրները: Վարչատարածքային այդ միավորներից Արգաշքունի կենտրոնը, այսինքն՝ Արգաշքուն, ինչպես ընդգծվել է վերևում, եղել է Արամե թագավորի արքայական քաղաքը: Էթնիկական առումով վարչատարածքային այդ միավորներից ամենից առաջ իր վրա ուշադրություն է հրավիրում Արամալին: Վարչատարածքային այդ միավորի անվան հիմքում ակներևաբար ընկած է «արմ» արմատը և «լի» բառամասը: Ընդ որում, այդ «արմ» արմատը, հիրավի, համապատասխանում է հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունների «արմ» արմատին: Ինչ վերաբերում է «լի» բառամասին, ապա նա ունի բազմակիության, հոգնակիության իմաստ (իմաստ. հայերեն լեզվի «լի», «լի ու լի» բառերը): Սեպագիր արձանագրությունների ընձեռած այս փաստերը ցույց են տալիս, որ ուրարտական պետության քաղաքական ասպարեզ գալու արշալույսին նրա Արամալի վարչատարածքային միավորի բնակիչները եղել են արմենները կամ հայերը: Այս միտքը հաստատվում է նաև սեպագիր արձանագրությունների ընձեռած այն փաստով, որ ուրարտական պետության քաղաքական ասպարեզ գալու արշալույսին նրա առաջին թագավորը և այդ պետության հիմնադիրը կրել է Արամե անունը: Այդ անվան հիմքում նույնպես ընկած է «արմ» արմատը, որը ցույց է տալիս այդ թագավորի արմենական կամ հայկական ծագումը: Այս փաստն էլ հաստատում է, որ ուրարտական պետությունը հիմնադրել են արմենները կամ հայերը իրենց Արամե թագավորի գլխավորությամբ: Նշված փաստերը հիմք են տալիս ասելու, որ երկիրը սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով կոչվել է Ուրարտու, նրա բնակիչները կոչվել են ուրարտներ անունով, իսկ այդ երկրի հետ կապված փաստերը ցույց են տալիս, որ այդ երկիրը զուգահեռաբար կոչվել է Արմենիա անունով, իսկ նրա բնակիչները կոչվել են արմեններ անունով: Ասուրական արշավանքների հետևանքով ժամանակի ընթացքում քաղաքական ասպարեզը թողնում են այդ երկրի Արգաշքուն, Ջանգիունա և Սուգունիա քաղաք-ամրոցները: Կանգուն է մնում Արամալին: Հետագայում, երբ Ուրարտու կամ Արմենիա պետությունը բռնում է

²⁴ АВИИУ, № 24 прим. 4.

²⁵ АВИИУ, № 27 (I, 23, II, 45, II, 54).

²⁶ АВИИУ, № 27 (I, 23, II, 45, II, 54).

վերելքի ճանապարհ և դիմում նվաճումների ու իրեն ենթարկում ամբողջ Հայկական լեռնաշխարհը, փոխվում է նաև նրա վարչատարածքային բաժանումը: Ուրարտուի կամ Արմենիայի վարչատարածքային բաժանման հիմքում դրվում է մարզային բաժանումը: Ուրարտուն կամ Արմենիան բաղկացած էր բազմաթիվ մարզերից: Դրանցից մեկն էր Արմարիլի (Արմարիյալի) կամ Արմիրալի մարզը: Այդ մասին տեղեկություններ ենք քաղում մ.թ.ա. 714թ. Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի (722-705) կողմից Ուրարտուի կամ Արմենիայի վրա կատարված արշավանքի մասին գրված տեքստի հետևյալ հատվածից. «Ես ուղևորվեցի Սանգիրուբե մարզի ամրացած քաղաքներից, ժամանեցի Արմարիլի մարզը: Բուբուզի բերդը, Խունդուր քաղաքը, որ շրջապատված էր երկու պարիսպներով, որտեղ աշտարակի մուտքի մոտ եղել են հաստատված բերդախրամի մոտ... Այալե քաղաքը, Ծիմիշպալա քաղաքը, Ծիմիունաք քաղաքը, Արնա քաղաքը, Շարնիա քաղաքը՝ յոթ ամրացած քաղաքները իրենց շրջակայքի 30 բնակավայրերի հետ միասին, որոնք տեղադրված էին Ուբիանդա լեռան ստորոտում, դրանք բոլորը ես ավերեցի, հավասարեցրի հողի հետ. նրանց տանիքի գերանները կրակով վառեցի, բոցի վերածեցի... Անցնելով գնացի Արբու քաղաքի՝ Ուրսայի ցեղի բնակավայրի վրա, Ռիյար քաղաքի՝ Սարդուրիի բնակավայրի վրա, նրանց շրջակայքի 7 բնակավայրերը, ուր բնակվում էին իր եղբայրները, իր արքայական զարմը, և որտեղ ավելի ուժեղ էր պաշտպանությունը, այս քաղաքները ես քանդեցի, հավասարեցրի հողի հետ, ավերեցի նրա աստծո՝ Խալդիի տաճարը: Ես ուղևորվեցի Արմարիյալիից, անցա Ուփգիբու լեռան վրայով, որը խայտաբղետ մարմարից էր, որը ծածկված էր նոճիներով, ժամանեցի Այադի մարզը⁴»:

Սարգոն II-ի ժամանակաշրջանի ասսուրական հետախուզական նամակներում Արմարիլի (Արմարիյալի) մարզի անունը հիշատակվում է Արմիրալի ձևով: Այդ նամակներից մեկի տեքստի տվյալների համաձայն, Արմիրալին եղել է Ուրարտուի կամ Արմենիայի գլխավոր մարզերից մեկը. «Ուրարտուի 5 մարզերի պետերը մուտք գործեցին Ուեսի քաղաք. Աեթնուն...- թեմի մարզի պետը, Կակկադանուն, այն մարզի պետը, որը Ուքայացիների դիմացն էր, Սաբուաթան, որը

⁴ F.Thureau-Dangin, Une relation de la huitième campagne de Sargon (RHCS), Paris, 1912, p.42-44, lin. 269-279; АВИИУ, № 49 (269).

Կանիուն մարզի պետն էր, Սիպլիան, որը Ալզի մարզի պետն էր, Յուբուն, որը Արմիրալիու մարզի պետն էր - ահա նրանց անունները»: Երանք մուտք գործեցին Ուեսի քաղաք՝ «Ուղտատիրոջ քաղաքից»: Այժմ նրանք ոտքի են կանգնեցրել այնտեղի ուժերը, նրանց զորքերը կլինեն ուժեղ: Թագավորը դուրս եկավ Տուրուշպայից և գնաց Կանիուն քաղաք⁵»:

Արմարիի (Արմարիյալի) կամ Արմիրալի մարզը ձևավորվել է նախկին Արամալի վարչատարածքային միավորի հիմքի վրա: Սակայն նրա համեմատությամբ Արմարիլին կամ Արմիրալին ավելի ընդարձակ տարածք է գրավել, քանի որ այն իր մեջ ներառել է ոչ թե մեկ, այլ արդեն 9 քաղաք-ամրոցներ (Բուբուզի, Խունդուր, Այալե, Ծիմիշպալա, Ծիմիունաք, Արնա, Շարնի, Արբու, Ռիյար) իրենց շրջակայքի 37 բնակավայրերով: Տարածքի այդ ընդարձակումը անշուշտ տեղի է ունեցել երկրի անկում ապրած վարչատարածքային միավորների՝ Արգաշքուի, Ջանգիունայի, Սուգունիայի տարածքների հաշվին: Իր մեջ միավորելով Ուրարտուի կամ Արմենիայի նախնական, նրա բուն տարածքը, Արմարիլին կամ Արմիրալին եղել է նրա բուն մարզը: Արմարիլին կամ Արմիրալին եղել է նաև Ուրարտուի կամ Արմենիայի արբունի մարզը, քանի որ նրա Արբու և Ռիյար քաղաքներում ապրել են երկրի արքաները, իսկ այդ քաղաքների շրջակայքի 7 բնակավայրերում ապրել են երկրի արքայական տան անդամները՝ արքաների եղբայրները, նրանց «արքայական զարմը»: Անշուշտ այդ մարզում է գտնվել Ուրարտուի կամ Արմենիայի նոր մայրաքաղաք Տուշպան (Վանը): Այդ մարզում է գտնվել նաև երկրի գլխավոր աստված Խալդիի տաճարը: Արմարիլի կամ Արմիրալի մարզը ունեցել է նաև զարգացած տնտեսություն, ինչպես նաև իր մարզի զորքը, իր կառավարիչը (պահպանվել է մարզի կառավարիչներից Տուբուի անունը): Ուրարտուի կամ Արմենիայի թագավորները երկրի ներքին ու արտաքին հակասությունները լուծելու գործում հենվել են Արմարիլի կամ Արմիրալի մարզի՝ նրա կառավարիչի, նրա զինվորական ուժի վրա: Այդ մարզի անվան հիմքում էլ, բնականաբար, ընկած է հնդեվրոպական ցեղերի կողմից հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունների «արմ» արմատը և նրա

⁵ R.F. Harper, Assyrian and Babilonian letters (HABL), vol.V, 1896, № 444; L. Waterman, Royal correspondence of the Assyrian Empire (RCAE), Ann Arbor, vol. I, 1930, № 444; R.F.Pfiever, State letters of Assyrian (SLA), New- Haven, 1935, № 8; АВИИУ, № 50 (4).

բնակիչներն էլ, ինքնըստինքյան, եղել են արմենները կամ հայերը⁶: Հիմնականում հայկական կերպարանք ունեն այդ մարզի մեջ մտնող վերոհիշյալ քաղաքանունները, օրինակ՝ Արբու քաղաքանվան հիմքում ընկած է հայերենի «արփի» (արև) արմատը, որով կազմվել են հայոց Արփա, Արփի, Արփենի, Արփավետ տեղանունները, իսկ Արնի քաղաքանվան հիմքում ընկած է հայերենի «առնա» (հաստատուն, անընկճելի) արմատը, որով կազմվել են հայոց Առնա, Առնատ, Առնե, Առնիստ տեղանունները և այլն: Այս փաստերն էլ ցույց են տալիս, որ պետության վերելքի ժամանակաշրջանում էլ երկիրը սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով շարունակել է կոչվել Ուրարտու, նրա բնակիչները շարունակել են կոչվել ուրարտներ անուններով, իսկ այդ երկրի հետ կապված փաստերը ցույց են տալիս, որ այդ երկիրը զուգահեռաբար շարունակել է կոչվել Արմենիա անունով, իսկ նրա բնակիչները շարունակել են կոչվել արմեններ անունով: Նշված փաստերը հաստատում են, որ Ուրարտուի հիմնական բնակիչներն են եղել արմենները կամ հայերը, իսկ Ուրարտու պետության բնակիչների լեզուն եղել է արմենների կամ հայերի լեզուն, այսինքն՝ արմեներենը կամ հայերենը (այս մասին հանգամանալից կխոսվի հետագա շարադրանքում): Այս փաստերով ընդգծվում է , որ ուրարտական պետությունը իր բուն տարածքով, ինչպես նաև իր բուն էթնոսով կապված է եղել Հայկական լեռնաշխարհի և նրա հիմնական բնակիչների, այսինքն՝ արմենների հետ, որոնց սեմական ծագում ունեցող ասորեստանցիները կոչել են ուրարտներ, նրանց Արմենիա երկիրն էլ կոչել են Ուրարտու:

⁶ Ռ.Ն. Սարգսյան, Էրեբունի անվան մեկնաբանման հարցի շուրջ (ԼՀԳ, 1990, № 8), էջ 58-62; նրա՝ Ուրարտացիներ, ալարողներ, արմեններ հարցի մասին (ՊԲՀ, 1991, №1), էջ 196-200; նրա Ուրարտական պետության հայկական ծագման հայտնաբերումը ըստ սեպագիր արձանագրությունների և բարձրաքանդակների (Նորք, Երևան, 2003, №4), էջ178):

§ 1. ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ՍԽԱԼՆԵՐԻՔՆԵԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտողներ Գ.Ա. Ղափանցյանը⁷, Գ.Ա Մելիքիշվիլին⁸, Բ.Բ. Պիոտրովսկին⁹, Ն.Վ. Հարությունյանը¹⁰ նկատի ունենալով, որ ուրարտական պետության սեպագիր արձանագրությունների լեզուն տարբերվում է արմեներեն կամ հայերեն լեզվից, իսկ այդ պետության Ուրարտու անունը արտաքնապես, իր մեկ կամ երկու հնչյուններով հիշեցնում է կենտրոնական Միջագետքում, մասնավորապես Արիմու քաղաքի, Նինվեյից հյուսիս տարածված Մուծրու երկրի և շուբա-րիական կամ խուրրիական ծագում ունեցող Կուսմուխա երկրի առնչությամբ գտնվող խուրրիական ցեղերի կողմից մ.թ.ա. XIII դարում կազմավորված և այդ նույն ժամանակաշրջանում էլ ասսուրական պետության արշավանքների հետևանքով քայքայված ու անկում ապրած Ուրուատրի¹¹ ցեղամիության անունը, այն տեսությունն են առաջ քաշել ու մինչև հիմա էլ իշխող դարձրել գիտական աշխարհում, թե ուրարտական պետությունը իր անունով, իր բնակչության էթնիկական կազմով և իր լեզվով ծագել է Ուրուատրի ցեղամիությունից, նրա խուրրիական ծագում ունեցող բնակչությունից, նրա խուրրիական ծագում ունեցող լեզվից:

Սակայն, հակառակ այդ հետազոտողների տեսության, սեպագիր արձանագրությունների ստորև բերվող փաստերը ցույց են տալիս, որ պետության Ուրարտու անունը բոլորովին էլ կապ չունի Ուրուատրի ցեղամիության անվան հետ, իսկ նրա բնակիչների Ուրարտներ անունը և նրանց լեզուն բոլորովին էլ խուրրիական ծագում չունեն:

1. Եթե ^{KUR}Urartu «Ուրարտու» անվան բաղաձայնական արմատն է՝ RRTJ-ն, ապա ^{KUR}Uruatri «Ուրուատրի» անվան բաղաձայնական արմատն է՝ RTJ-ն, որոնք, ակներևաբար, տարբերվում են իրարից:

2. Այդ անունները տարբերվում են նաև իրենց բառական իմաստով: Եթե դրանցից Ուրարտու անվան՝ RRTJ բաղաձայնական արմատի TJ վերջածանցը դրվել է այդ բառի վրա, որպեսզի նրան

⁷ Գ.Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 15-17

⁸ Г.А. Меликишвили, Наир- Урарту, Тбилиси, 1954, с. 20,25,77,150-151,153-155,158,177,180-188,190.

⁹ Б.Б Пиотровски, Вамское царство (Урарту), М., 1959, с. 32,43,44,46-47,50-51.

¹⁰ Н.В. Арутюнян, Биайинли (Урарту), Ереван, 1970, с. 12-13, 15,19,53-54,56-57,59,60,202.

¹¹ АВИИУ, № 2, прим.4,11.

հաղորդի բացարձակ (աբսոլյուտ) իմաստ¹², ինչպես դա տեղի է ունեցել Սուբարտու տեղանվան հետ, որը աքքադական տեքստերում հիշատակվել է նաև գաղափարագիր ծնով և կազմված է եղել SU և BIR գաղափարագրերից և TУ վերջածանցից¹³: Ուստի Ուրարտու երկրանունը նրա օրինակով կարելի է բաժանել UR և AR գաղափարագրերի և TУ վերջածանցի, որոնցից UR գաղափարագիրը ունի «լուսավոր» իմաստ, իսկ AR գաղափարագիրը՝ «անմատչելի» իմաստ, որոնք բառասկզբում դրված KUR «երկիր» սահմանիչի հետ նշանակում են «Լուսավոր անմատչելի երկիր» կամ «Անմատչելի լուսավոր երկիր»: Ի տարբերություն դրա, Ուրուատրի ցեղամիության անունը ինչպես TУ վերջածանց, այնպես էլ AR գաղափարագիր չունի: Յետևաբար ինչպիսի իմաստ էլ ունենա Ուրուատրի ցեղամիության անունը, այն, բնականաբար, կտարբերվի Ուրարտու երկրի անվան կամ պետության անվան վերոհիշյալ իմաստից: Փաստորեն Ուրարտուն և Ուրուատրին տարբերվում են իրարից ոչ միայն իրենց հնչյունական կառուցվածքով, այլև իրենց բառական իմաստով: Ուստի հետազոտողները սխալվել են Ուրարտու պետության կամ երկրի անվան և Ուրուատրի ցեղամիության անվան համադրության հարցում:

Յետազոտողները սխալվել են նաև Ուրարտու պետության սեպագիր արձանագրությունների լեզվի հարցում, երբ նրան վերագրել են խուրրիական ծագումը: Նրանք հաշվի չեն առել սեպագիր այդ արձանագրություններով գրված այն կարևոր փաստը, որ Արամե թագավորի մահից հետո փոխվում է երկրի արքայական դինաստիան, քանի որ նրա նոր թագավոր Սարգուրի I-ը (832-822) ասուրերեն լեզվով գրած իր սեպագիր արձանագրություններում իրեն համարում է ոչ թե Արամե թագավորի որդին, այլ ոմն Լյուբիպրիի¹⁴ որդին, որը թագավոր չի եղել: Նա գրում է ասուրերեն լեզվով սեպագիր արձանագրություններ¹⁵, որոնց մեջ նա իր երկիրը կոչում է ոչ թե Ուրարտու անունով, ինչպես կոչել են ասորեստանցիները, այլ նրանից տարբեր Նաիրի անունով: Այս փաստը թույլ է տալիս ասելու, որ Սարգուրի I-ը էթնիկապես կապված է ոչ թե Ուրարտու կամ Արմենիա երկրի, այլ Նաիրի երկրի հետ: Սարգուրի I-ի որդին և նրան հաջորդող

թագավոր Իշպուլինին (822-810) իր թագավորության ժամանակ գրում է երկլեզվյան արձանագրություն¹⁶ ասուրերեն լեզվով և տեղական լեզվով, որոնցից ասուրերեն տարբերակում, եթե նա իր երկիրը, իր հայր Սարգուրի I-ի օրինակով, կոչում է Նաիրի անունով, ապա տեղական լեզվով տարբերակում իր երկիրը կոչում է Բիաինիլի անունով: Նաիրի և Բիաինիլի երկրները Հայկական լեռնաշխարհում որոնելիս իրենց վրա ուշադրություն են հրավիրում, նախ՝ Արածանի հյուսիսային ավազանում մ.թ.ա. XIII դարում 43-60 փոքր-փոքր թագավորություններից կազմված Նաիրի (^{KUR}Nairi)¹⁷ ցեղամիությունը, ապա՝ այդ փոքր-փոքր թագավորություններից մեկի՝ Դայանի թագավորության գլխավորությամբ մ.թ.ա. IX դարում 31 երկրներից կազմված պետության կազմում մտնող Բիանի (^{KUR}Biani) երկիրը¹⁸, որը համապատասխանում է հետագա Կարսի մարզի Վանանդ գավառին (հմմտ. Վանանդ գավառի անվան «Վան» արմատը և Բիանի երկրանվան «Բիան» արմատը, որոնք նույնն են):

Փաստորեն Նաիրի և Բիաինիլի (Բիանի) երկրները կապվում են Արածանի գետի հյուսիսային ավազանի տարածքի, նրա էթնիկական աշխարհի հետ: Բիաինիլին (Բիանին) եղել է Սարգուրի I-ի և նրա արքայական դինաստիայի բնօրրանը:

Նաիրի անունը օտար չի եղել նաև Արածանի հարավային ավազանում տարածված ուրարտներին կամ արմեններին: Այդ տարածքի կենտրոնում գտնվող «Ադի ծովակը» կամ «Վանա լիճը» Սալմանասար III-ի սեմական ծագում ունեցող սեպագիր արձանագրություններում կոչվել է «Նաիրի երկրի ծով»¹⁹ անունով: Դա նշանակում է, որ Նաիրի-բիաինական էթնիկական աշխարհը, նրա լեզուն թեև առաջին հայացքից տարբերվել է հնդեվրոպական էթնիկական ծագում ունեցող ուրարտների կամ արմենների լեզվից, բայց ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրանք ունեցել են շատ հեռավոր ցեղական կապ: Նոր արքայական դինաստիայի թագավորները՝ սկսած այդ արքայական դինաստիայի հիմնադիր Սարգուրի I-ի, մասնավորապես նրա որդի Իշպուլինիի (822-810) ժամանակից սեպագիր արձանագրություններ են գրել ոչ թե այդ

¹² Д.Н. Саркисян, страна Шубриа, Ереван, 1989, с. 11.

¹³ Л.А. Липин, Аккадский (вавилонско-ассирийский) язык, выпуск II, словарь, Л., 1957, с. 21, 70

¹⁴ УКН, № 1-3, 318, стк. 1.

¹⁵ Там же, стк. 2.

¹⁶ УКН, № 19, ассир-текст, стк. 3; урарт-текст, стк. 3

¹⁷ АВИИУ, № 3-9, 10 (IV, 40).

¹⁸ УКН, № 127, I, стк. 8.

¹⁹ АВИИУ, № 27, (II, 54).

պետության հիմնական բնակիչների, այն է՝ ուրարտների կամ արմենների լեզվով, այլ քաղաքական ասպարեզ նոր երևան եկած Բիաինացիների լեզվով²⁰, իսկ ասորեստանցիները, բաբելոնացիները, եբրայացիները, պարսիկները, էլամցիները իրենց արձանագրությունները գրել են իրենց լեզուներով: Փաստորեն ուրարտների կամ արմենների լեզվով սեպագիր արձանագրություններ երբեք չեն գրվել: Այդ լեզուն գործ է ածվել միայն բանավոր խոսակցության ընթացքում: Դրա պատճառը այն էր, որ սկսած շումերների ժամանակից սեպագիր արձանագրությունները գրվել են այն լեզուներով, որոնք ունեցել են փոքր հնչունական կազմ, քանի որ նրանց հետ աշխատելը ավելի հեշտ է եղել: Այդպիսի լեզուների հնչյունների թիվը չի անցել 20-22 հնչյուններից: Այդ է պատճառը, որ նախասիրությունը տրվել է բիաիներեն լեզվին, որի հնչյունների թիվը հասել է 20-ի, այլ ոչ թե ուրարտերենին կամ արմեներենին, որի հնչյունների թիվը հասել է 36-ի, որոնք գրվել են 39 տառով: Եթե միապաղաղ (տրաֆարետ) ձևով ժայռերի, քարերի վրա գրվող բիաիներեն սեպագիր լեզուն հնարավորություն չի ունեցել զարգանալու, հարստանալու և դառնալու համաժողովրդական լեզու և դուրս մղել ասպարեզից ուրարտների կամ արմենների բանավոր, խոսակցական լեզուն, ապա հակառակ դրան, ուրարտների կամ արմենների բանավոր, խոսակցական լեզուն, որը մինչ այդ էլ համազգային լեզու էր, դրանից հետո էլ ժամանակի ընթացքում ավելի է հարստանում, հզորանում ու դառնում համաժողովրդական բանավոր, խոսակցական լեզու, երբ դադարել է գործածությունից բիաիներեն սեպագիր գրությունը: Նույնիսկ վանկագիր սեպագրությունից հետո էլ, երբ վերջինիս փոխարինելու է գալիս հնչյունագիր գրությունը, որից դարձյալ կարող էին օգտվել միայն փոքր հնչյունական կազմ ունեցող լեզուները և անցնել հնչյունագիր գրությանը, իսկ առատ հնչյունական կազմ ունեցող ուրարտերեն կամ արմեներեն լեզուն այդ ժամանակ էլ չի կարողացել գրության անցնել այնքան ժամանակ, մինչև որ հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը հասկանալով դրա պատճառը և ուրարտերեն կամ արմեներեն լեզվի համար ստեղծել է սեփական գրության սիստեմ, ու նոր սկսել է ուրարտերեն կամ արմեներեն (հայերեն) լեզվով գրությունը: Այս ամբողջ փաստերը հաշվի չեն առնվել վերոհիշյալ հետազոտողների կողմից, որոնք էլ չտեսնելով արմենների և

²⁰ ԿԿԻ, № 19.

ուրարտների նույնությունը, սեպագիր ժամանակաշրջանում արմենների լեզվով գրության բացակայության պատճառով արմեններին համարել են եկվոր ցեղեր և դուրս են թողել նրանց ունեցած տեղն ու դերը Հին Արևելքի պատմագրությունից: Վերոհիշյալ շարադրանքից հասկանալի է, որ երկիրը արքայական դինաստիայի անունով կոչվել է Բիաինելի անունով, իսկ միջազգային ասպարեզում սեմական ծագում ունեցող ասսուրերեն, բաբելոներեն, եբրայերեն լեզուներով կոչվել է Ուրարտու (Ուրաշտու) անունով, իսկ հնդեվրոպական և հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն, էլամերեն և լատիներեն լեզուներով կոչվել է Արմենիա (Արմինա) անունով: Այդպիսի երևույթ է տեղի ունեցել նաև հետագա ժամանակաշրջանում՝ հայկական նոր պետականության օրոք: Երկիրը արքայական դինաստիաների կողմից կոչվել է Երվանդունի, Արտաշեսյան, Արշակունի, Բագրատունի անուններով, իսկ միջազգային ասպարեզում այն կոչվել է Արմենիա անունով:

Նաիրյան ծագում ունեցող բիաիներեն լեզուն թե բառապաշարի և թե հնչյունաբանության, ձևաբանության և շարահյուսության հարցերում հիմնականում մոտ էր կանգնած հնդեվրոպական էթնիկական աշխարհին, քան թե խուրրիականին: Եթե բիաիներեն լեզվում ընդհանրապես 7 բառեր կան, որոնք ունեն խուրրիական ծագում՝ **(1) pišu**

«ուրախություն», 2) eti «վերաբերմամբ», 3) šan «ինձ», 4) išaš «ես», 5) arid ավելացնել», 6) ipri «տեր», 7) huradi «զինվոր», ապա հնդեվրոպական ծագում ունեցող բառերի թիվը հասնում է շուրջ 51-ի: Ընդ որում – I) հնդեվրոպական ծագում ունեցող մայր լեզվի և բիաիներեն լեզվի ընդհանուր բառեր, արմատներ են՝ 1) ag «տանել», 2) par «վարել, քշել տանել», 3) aluki «որոշել», 4) ulišie «այլ», 5) ebaniuki «երկիրս», 6) atubi «ուտեն, կերա», 7) parie «հեռի» (մինչև): II) հնդեվրոպական ծագում ունեցող խեթերեն լեզվի և բիաիներեն լեզվի ընդհանուր բառեր, արմատներն են՝ 8) hatubi «հատանեն», 9) tini «անուն», 10) ašubi «բնակեցնել», 11) kai «առաջ», 12)- ukl «իմ», 13) edia «աստեն», «այնտեղ», 14) lakudulia «փլցնել», 15) ini «այս», 16) ulh «հոտել», 17) averaš –ili «օգնական զորքերին», 18) tubi «պարտավորեցնել», 19) šer «սար», 20) tek «տակ», («հիշատակել» = հիշողության մեջ գցել), 21) nih «հավաքել» (զորքը), 22) badg- ul-ubi «ցրիվ տվի»: III) Հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն լեզվի և բիաիներեն լեզվի ընդհանուր բառեր, արմատներն են՝ 23) abili «ավել», 24) ebani «երկիր», «ավան»,

25) eure (ewri) «տեր», 26) inukani «նույն», «ինքն», 27) ištini «այստեղ», «աստեղ», 28) edini «անդ», «անդէն», «այնտեղից», 29) ul «ուղի», «գնալ», «ուղևորվել», 30) uduli «գինի», «տոլի» (վայրի խաղող), 31) meš «մես- ություն» (նվիրվածություն), 32) sutuk-ubi «ավերեցի» (շոգ- անեմ), 33) šani «սան» (կաթսա), 34) ^DAra «Արա աստծու անուն», 35) ^DAraša «Արտտի աստված», «Արածելու աստված», 36) armuzl «սերունդ» (արմատ, գ- արմ), 37) pahini «պախրե» (եգ, կով), 38) hatubi «հատ- անեմ» (կտրեցի, անջատեցի), 39) šeerī «ավելցուկ», «բարձր» (սար, սարակ, գագաթ), 40) šue «ծով», 41) šišul - dulini «ծես» (ծիսական արարողություն), 42) qiura, qira «հող» (երկիր) (հմմտ. էրկիր, էրկին հայերեն բառերը), 43) pili «պեղեմ», «ջրանցք», 44) veli «գունդ» (գեղ, գյուղ, գեղչուկ), 45) uiri «գեր, գիրուկ» «հայ. յոյր», 46) ulh «հոսել» (հմմտ. հայ. ուղիս «ջրի հոսանք, հորձանք»), 47) ulg-uše «առողջություն» (հայ. ողջ, որը ծագում է օլգից), 48) iphulie «փշրե» (հայ. փխուր, փշուր), 49) urb - ulini «զոհեցին, զեղեցին» (հայ. որոփել, =հեղուկը բաժակում լցնել), 50) kapiše «ցորենի չափ», (հայ. «կապիճ»), 51) patari «քաղաք», «պատած, պարսպապատված տեղ», 52) uštabi «արշավեց», «շտապեց», 53) hubi «հովիտ», 54) ulžu «ուղտ», 55) bili «ավել», 56) šure «սուր», 57) šare «ծառ»²¹:

Ինչպես նախորդ շարադրանքում ընդգծվել է, որ բիաիներեն լեզուն և ուրարտերեն կամ արմեներեն (հայերեն) լեզուն ցեղակիցներ են: Նրանցով հիշատակված տեղանուններում թեև կան որոշ հնչյունական տարբերություններ, բայց իրենց արմատների ամբողջական կառուցվածքով և իմաստներով դրանք գրեթե նույն են: Օրինակ՝

- 1) B –ն կարող է փոխվել վ-ի (Erebuni=Երևան, Aršibini=Արծիվ, Biani=Վան),
- 2) Z –ն կարող է փոխվել ջ-ի, ձ-ի (Zabaha=Ջավախք, Alzini=Աղձն),
- 3) L –ն կարող է փոխվել դ-ի (Abilianihī=Աբեղեանք, Halītu=Խաղտի(ք), Šulusu=Շողուկ),

- 4) H –ն կարող է փոխվել h-ի, η-ի, խ-ի (Hate=Հայ(ք), Aštuhini=Աստեղան, Huzana=Խոզան),
- 5) U –ն կարող է փոխվել գ-ի, ա-ի, ո-ի (Uelikuni=Չեղաքունի, Urtehini=Արցախ, Tšpa=Snuս),
- 6) D –ն կարող է փոխվել տ-ի (Diauehi= Տայ(ք)),
- 7) Q –ն կարող է փոխվել գ-ի, ք-ի (Quliani= Գուլի(ջան), Qulmeri=Քղիմար),
- 8) ia –ն կարող է փոխվել ա-ի (Giarniani=Գառնի),
- 9) š –ն կարող է փոխվել ս-ի (Šašnuini=Սասուն),
- 10) t –ն կարող է փոխվել ց-ի (Urtehini=Արցախ),
- 11) e –ն կարող է փոխվել ա-ի (Meliani=Մալաթիա),
- 12) lh –ը կարող է փոխվել փ-ի (Nihria=Նփր(կերտ)),
- 13) p –ն կարող է փոխվել փ-ի (Šupani=Օտփք),
- 14) K –ն կարող է փոխվել կ-ի (Kumaha=Կոմագենե) և այլն:

Այս տեղանունների նույնությունը իր հերթին հաստատում է, բիաիներեն և ուրարտերեն կամ արմեներեն (հայերեն) լեզուների ցեղակցական կապը:

Ակներև է, որ խուրրիերեն և բիաիներենի ընդհանուր բառեր, արմատները շատ քիչ են ու անցան, իսկ հնդեվրոպական ու բիաինական ընդհանուր բառերը, արմատները շատ են ու նշանակալից:

Գրեթե այդպիսի անհամաչափություն գոյություն ունեւր նաև հնչյունաբանության, ձևաբանության և շարահյուսության գծով: Հնդեվրոպական ծագում ունեւր ուղղական հոլովի «s (š) », սեռական հոլովի «i», հայցական հոլովի «n», ներգոյական հոլովի «a», հոգնակի թվի սեռական-տրական հոլովների «-awe» վերջավորությունները, ինչպես նաև բայի եզակի թվի III դեմքի «tu» վերջավորությունը, հոգնակի թվի I դեմքի «- uše» վերջավորությունը (teruše «մենք դրինք»), ածականի կազմությանը մասնակցող «- hi (ni)» ածանցը, որը համազոր է հայերենի «ական», «ային» ածանցներին, բայի չեզոք սեռի կազմությանը մասնակցող «a» ածանցը (որի օրինակով կազմվել է հայերենի չեզոք սեռի բայը, օրինակ՝ uštabi «արշավեց», uštadi «արշավեցի», nunabi «եկավ»), բայի կրավորական սեռի կազմությանը մասնակցող «a» լծորդը, բայի վերջում դրվող «b» մասնիկը, որը հայերեն լեզվում դառնում է «-աւ=վ» (տես՝

²¹ Գ.Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 28-30, 30-33, 37-40:

Biani=վան, ebani=աւան, abili dubi=ավելացրի(abili=ավել), -uzi II - izi բառաստեղծական ածանցները, որոնցով կազմվել են բիաիներենի armuzi «տոհմ» և հայերեն լեզվի պարկուճ, բրդուճ, կճուճ բառերը):

Բիաիներեն լեզվին բնորոշ են՝ 1) թեքման սիստեմի (հոլովման և խոնարհման) կազմվելը՝ բառավերջից մասնիկների կցումով, ինչպես հնդեվրոպական ծագում ունեցող հայերենում ու խեթերենում է, 2) ածական որոշիչների դրվելը գոյականից առաջ, իսկ դերանունները լինում են կամ ինքնուրույն կամ կցույթի ձևով, որպիսի բնույթ ունեն հնդեվրոպական ծագում ունեցող խեթերենը և հայերենը, 3) հատկացուցիչը դրվում է ոչ թե սեռական հոլովով, այլ իր հատկացյալի հոլովով, 4) հոլովների շատությունը՝ 7 հոլով, ինչպես հնդեվրոպական ծագում ունեցող հայերենում և խեթերենում է, 5) շախկապների պակասը, ինչպես հայոց Մոքսի և Շատաղի բարբառներում է, 6) «հ» բաղաձայնով սկսվող հասարակ բառերի պակասը, որը յուրահատուկ է խեթերենին և հայերենին (այդպես է նաև խուրիերենը):

Ակներև է, որ հնչյունաբանության, ձևաբանության և շարահյուսության հարցում բիաիներեն լեզվի և խուրիերեն լեզվի միջև առանձին ընդհանրություններ չկան: Հակառակ դրան, բիաիներենի և հնդեվրոպական լեզուների միջև գոյություն ունեն հսկայական քանակության ընդհանրություններ, որոնցից գուրկ է խուրիերեն լեզուն: Հետևաբար բիաիներեն լեզուն բառապաշարի, հնչյունաբանության, ձևաբանության և շարահյուսության գծով կապված է հնդեվրոպական ծագում ունեցող լեզուների էթնիկական աշխարհի հետ²²:

²² Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 23-28, 28-35:

ՀՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆ ԸՍՏ

- 1) Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի սեմական ծագում ունեցող Կարխի կամ Տուշխանի մոնոլիթ սեպագիր արձանագրության,
- 2) Հայկական ժողովրդական ավանդությունների,
- 3) Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունների,
- 4) «Բեհիստունյան» և «Նակշի-ռուստամյան» սեպագիր արձանագրությունների

Եթե հիրավի հաստատ է, որ սեմական ծագում ունեցող լեզուներով հիշատակված Ուրուատրի ցեղամիության բնակիչները եղել են խուրիները, իսկ նրանց լեզուն եղել է խուրիերենը, ապա հակառակ հետազոտողների վերոհիշյալ տեսությանը, մեր կողմից բացատրվել են նոր տեքստեր, որոնք ցույց են տալիս, թե սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված արձանագրությունների Ուրարտու երկիրը, նրա ուրարտներ բնակիչները, նրա ուրարտերեն լեզուն համապատասխանում են հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն և լատիներեն լեզուներով հիշատակված արձանագրությունների Արմենիա երկրին, նրա արմեններ բնակիչներին, նրա արմեններեն լեզվին, իսկ սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով հիշատակված արձանագրությունների Ուրաշտու երկիրը, նրա ուրաշտներ բնակիչները, նրա ուրաշտերեն լեզուն համապատասխանում են հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն և էլամերեն լեզուներով հիշատակված արձանագրությունների Արմինա երկրին, նրա արմիններ բնակիչներին, նրա արմիններեն լեզվին:

Ստորև կներկայացնենք այդ ամբողջ փաստերը ըստ ժամանակի հաջորդականության՝ դրանց հերթական համարները նշանակելով հռոմեական թվանշաններով:

I. Ասորեստանի թագավոր Սալմանասար III –ի (859-824) սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված Կարխի կամ Տուշխանի մոնոլիթ սեպագիր արձանագրությունում²³ հիշատակված «Նաիրի երկրի ծովի» կամ «Վանա լճի» ավազանում մ.թ.ա. IX դարի կեսին,

²³ АВВВУ, № 27 (I, 23; II, 45; II, 54); 29; 31.

մասնավորապես մ.թ.ա. 859 թվականին հիշատակված Ուրարտու երկիրը, ինչպես նաև Ուրարտու թագավորությունը կամ Ուրարտու պետությունը, նրա ուրարտներ բնակիչները և նրա Արամե թագավորը համապատասխանում են հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդություններում դարձյալ մ.թ.ա. IX դարում հիշատակված «Ադի ծովակի» կամ «Վանա լճի» ավազանում հանդես եկած Արմենիա երկրին, ինչպես նաև նրա Արմենիա թագավորությանը կամ Արմենիա պետությանը, նրա արմեններ բնակիչներին և նրա Արամ թագավորին՝ կապված Արամ թագավորի որդի և նրան հաջորդող ավանդական Արա Գեղեցիկ թագավորի և նրան սիրահետող Ասորեստանի ավանդական թագուհի Շամիրամի հետ²⁴:

Ավանդությունում հիշատակված Շամիրամի նախատիպն է Ասորեստանի թագուհի Սամմուրամաթը (824-802), որը եղել է Սալմանասար III-ի հարսը, նրա որդի Շամշի-Ադաթ V (824-810) թագավորի կինը և Ադաթներարի III (810-782) անչափահաս թագավորի մայրը, որը իր այդ անչափահաս որդու հետ (810-802) թվականներին կառավարել է Ասորեստանը: Նրա անունը հիշատակվել է երկու սեպագիր արձանագրություններում: Այդ արձանագրություններից մեկի հեղինակը հենց ինքն է. «Արձանագրությունը Սամմուրամաթի՝ պալատի տիկնոջը բազմաց թագավոր Շամշի-Ադադի, Ասորեստանի թագավորի, մորը Ադադ-Ներարիի, թագավոր բազմաց, թագավոր Ասորեստանի, 4 ծեգերի թագավոր Սալմանասարի հարսի»²⁵: Արձանագրություններից երկրորդը նրա և նրա որդի Ադադ-Ներարիի III-ն է նվիրել Ասորեստանի Կալխու-Նիմրուք քաղաքի կառավարիչ Բել-տարծի-Իլունան. «Հանուն ողջության Ադադ-Ներարիի՝ Ասորեստանի թագավորի, իր տիրոջը և հանուն ողջության Սամմուրամաթի՝ պալատի տիկնոջը, իր տիրուհու²⁶»:

Այն կանայք, ովքեր ձգտել են արքայական գահի, նրանց շուրջ ժողովուրդը հյուսել է ավանդություններ՝ աղավաղելով կամ փոխելով նրանց իրական անունը, նրանց ներկայացրել է ցանկասեր կնոջ կերպարով²⁷: Այդպիսին է հայկական և հունական ավանդություններում

²⁴ Խորենացի, Հայոց պատմություն, I գլուխ, § 11;14;18:

²⁵ W. Eilers, Semiramis (Entstehung und Nachhaleiner attorientalischen, Sange, Wien, 1971), S. 37.

²⁶ W. Eilers, Semiramis (Entstehung und Nachhaleiner attorientalischen), S.36 (54).

²⁷ Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 8, Երևան, 1982, էջ 441: (Այդտեղ էլ Շամիրամի նախատիպը համարվում է Սամմուրամաթը):

Շամիրամի կերպարը: Նրա իրական անունն է եղել Սամմուրամաթ, բայց ավանդություններում փոխվել է և դարձել Շամիրամ: Այս ենթադրությունը հաստատվում է այն փաստով, որ Սամմուրամաթ անունով միայն մի թագուհի է եղել Ասորեստանում, բայց փոխվել է նրա իրական Սամմուրամաթ անունը և նա կոչվել է Շամիրամ անունով: Ավանդական Արա գեղեցիկից և նրան սիրահետող Շամիրամ-Սամմուրամաթից մեկ սերունդ առաջ ապրել են Արմենիայի թագավոր Արամը և Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ը: Նրանցից Սալմանասար III-ը քաղաքական ասպարեզ է եկել մ.թ.ա. 859 թվականին: Փաստորեն այդ նույն ժամանակաշրջանում է քաղաքական ասպարեզ եկել նաև Արմենիայի թագավոր Արամը: Անշուշտ այդ նույն ժամանակաշրջանում է քաղաքական ասպարեզ եկել նաև նրա հիմնադրած Արմենիա պետությունը: Նախորդ շարադրանքից էլ իմացանք, որ մ.թ.ա. 859 թվականին են քաղաքական ասպարեզ եկել Ուրարտուի թագավոր Արամեն և նրա հիմնադրած Ուրարտու պետությունը, Ուրարտու թագավորությունը: Այսպիսով Ուրարտու և Արմենիա պետությունները համապատասխանում են իրար թե ժամանակով, թե տարածքով, թե բնակիչներով և թե թագավորների անուններով: Հետևաբար այդ պետությունները նույնն են և իրենցից ներկայացնում են որպես մի պետություն, բայց տարբեր անուններով: Դրանց անունների տարբերությունը առաջացել է այդ նույն լեզուների էթնիկական տարբերությունից, որոնցով ավանդվել են այդ անունները: Ընդ որում, սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով երկիրը կոչվել է Ուրարտու, նրա թագավորությունը կամ այդ պետությունը կոչվել է ուրարտու, նրա բնակիչները կոչվել են ուրարտներ, նրա թագավորը կոչվել է Արամե, իսկ հնդեվրոպական ծագում ունեցող այդ նույն երկիրը կոչվել է Արմենիա, նրա թագավորությունը կամ պետությունը կոչվել է Արմենիա, նրա բնակիչները կոչվել են արմեններ, նրա թագավորը կոչվել է Արամ անունով:

II. Սեմական ծագում ունեցող երրայերեն լեզվով գրված Աստվածաշնչում հիշատակված 'RRJ (Uratu) «Ուրարտու» երկիրը²⁸, որտեղ ըստ Եսայու (մ.թ.ա. VIII դար) մարգարեության, ապաստան են գտել Ասորեստանի թագավոր Սինախերիբի (705-681) հայրասպան որդիները, հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով

²⁸ Священные книги, т.1, Вена, 1877, II книга царей (IV книга царств), гл. XIX, с. 648, стк. 16-37 (срав. Исаия, гл. XXXVII, стк.37-38); АВИИУ, № 62).

Աստվածաշնչի թարգմանություններում (Vulgate) կոչվել է «Արմենիա երկիր»²⁹ (in terram Armeniorum), իսկ հայկական ժողովրդական ավանդություններում այն կոչվել է «մեր աշխարհ», «մեզ մոտ», այսինքն՝ Արմենիա երկիր «Չայաստան»³⁰:

Նախորդ շարադրանքում մենք իմացանք, որ Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով մ.թ.ա. IX դարի կեսին հիշատակված Ուրարտու երկիրը հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդություններում կոչվել է Արմենիա երկիր, իսկ սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով Եսայի մարգարեի կողմից մ.թ.ա. 681 թվականին, այսինքն՝ մ.թ.ա. VII դարի սկզբին գրված Աստվածաշնչի սույն հատվածում էլ հիշատակված Ուրարտու երկիրը հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով թարգմանությունում (Vulgate) կոչվել է Արմենիա երկիր: Ուստի կարել է եզրակացնել, որ սեմական ծագում ունեցող ասուրերեն և եբրայերեն լեզուներով հիշատակված Ուրարտու երկիրը հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն և լատիներեն լեզուներով կոչվել է Արմենիա երկիր:

III. Սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով Երեմիա մարգարեի կողմից (625-586) գրված Աստվածաշնչում հիշատակված 'RRJ (Urartu) «Ուրարտու»³¹ թագավորությունը (որին Երեմիա մարգարեն մ.թ.ա. 594 թվականին կոչ է անում միանալ Մեդիայի, Սանայի և Սկյութիայի թագավորություններին ու միացյալ ուժերով տապալել Բաբելոնը), որը հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով Աստվածաշնչի թարգմանությունում (Vulgate) կոչվել է «Արմենիայի թագավորություն»³² (regibus Armeniae), իսկ հայկական ժողովրդական ավանդություններում այն կոչվել է «մեր ազգի թագավորություն», այսինքն՝ արմենների կամ հայերի թագավորություն³³:

Նախորդ շարադրանքից մենք իմացանք, որ Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով մ.թ.ա. IX դարի կեսին հիշատակված Ուրարտուի թագավորությունը հնդեվրոպական ծագում ունեցող հայկական

ժողովրդական ավանդություններում կոչվել է Արմենիայի թագավորություն, իսկ սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով մ.թ.ա. VII-VI դարերում գրված Աստվածաշնչի սույն հատվածում էլ հիշատակված Ուրարտուի թագավորությունը հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով թարգմանությունում (Vulgate) կոչվել է Արմենիայի թագավորություն: Ուստի կարել է եզրակացնել, որ սեմական ծագում ունեցող ասուրերեն և եբրայերեն լեզուներով հիշատակված Ուրարտուի թագավորությունը հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն և լատիներեն լեզվով կոչվել է Արմենիայի թագավորություն:

IV. Սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով գրված Աստվածաշնչում հիշատակված 'RRJ (Urartu) «Ուրարտուի» լեռները³⁴, որոնց վրա, ըստ Եսայի մարգարեի, համաշխարհային ջրհեղեղի ժամանակ հանգրվան է գտել Նոյ նահապետի տապանը, հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով Աստվածաշնչի թարգմանությունում (Vulgate) կոչվել են «Արմենիայի լեռներ»³⁵ (super montes Armeniae):

Ի դեպ, հույները նույնպես թարգմանել են Աստվածաշունչը (Septuaginta): Բայց նրանք Ուրարտու երկրանունից առանձնացրել են 'RRJ բաղաձայնական արմատը, որի ամեն մի բաղաձայնից առաջ դրել են իրենց այբուբենի «A» տառը և ստացել են Ararat «Արարատ» բառը, որի վրա էլ ավելացրել են Աստվածաշնչում հիշատակված «երկիր», «թագավորություն» և «լեռներ» բառերը և ստացել են «Արարատ երկիր», «Արարատի թագավորություն», «Արարատի լեռներ» կապակցությունները, որոնց մեջ ի դեմս 'RRJ բաղաձայնական արմատի, փաստորեն, պահպանվել է Ուրարտու անունը առանց թարգմանության:

Ի տարբերություն հույների, լատինացիները թարգմանել են Ուրարտու անունը և ստացել են Արմենիա անուն, որի վրա էլ ավելացրել են Աստվածաշնչում հիշատակված «երկիր», «թագավորություն», «լեռներ» բառերը և ստացել են «Արմենիա երկիր», «Արմենիայի թագավորություն», «Արմենիայի լեռներ» կապակցությունները: Հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդությունները տապանակիր լեռ են համարել

²⁹ The Bible Latin Vulgate, 2 kings, chapter 19, Lin.36-37.

³⁰ Խորենացի, Հայոց պատմություն, գլուխ ԻԳ, էջ 124:

³¹ Священные книги, т.І, Вена, 1877, Книга Иеремии, гл.ХІХ, с.648, стр. 36-37.

³² The Bible Latin Vulgate Jeremiah, chapter 51, Lin. 27-28, 37.

³³ Խորենացի, Հայոց պատմություն, գիրք I, գլուխ ԻԲ, էջ 122:

³⁴ Священные книги, т.І, Вена, 1877, Книга бытия, гл.VIII, с.11, стр.3-4.

³⁵ The Bible Latin Vulgate, Genesis, chapter 8, Lin.3-4.

Արմենիայի լեռներից ամենաբարձրը՝ Մասիս լեռը, որի վրա էլ համաշխարհային ջրհեղեղի ժամանակ հանգրվանել է Նոյ նահապետի տապանը և այդ ջրհեղեղի կործանումից փրկել է մարդկային ցեղի մի հատվածը, որից հետո սկսվել է ետջրհեղեղյան ժամանակաշրջանի մարդկային ցեղի բազմացումն ու տարածումը երկրագնդի վրա:

Յետազոտողներից Գ.Ա. Մելիքիշվիլու³⁶ կարծիքով Ուրարտու կամ Արմենիա պետությունը անկում է ապրել մ.թ.ա. 590 թվականին, երբ Մեդիայի (Մարաստանի) թագավոր Կիաքսարն այդ պետության վրայով արշավում է դեպի արևմուտք՝ Լյուդիա երկրի թագավոր Կրեսուսի գործի դեմ կռիվ տալու նպատակով: Յետազոտողներից Լեհմանն-Յաուպտը³⁷, հակառակ Գ.Ա. Մելիքիշվիլու, այն կարծիքն է հայտնել, թե Ուրարտու կամ Արմենիա պետությունը անկում է ապրել մ.թ.ա. 585 թվականին, երբ ավարտվել է Կիաքսարի և Կրեսուսի հինգ տարի տևող պատերազմը և կնքվել է հաշտության պայմանագիր, որի համաձայն Յալիս գետից դեպի արևմուտք տարածված երկրները անցնում են Կրեսուսի գերիշխանության տակ, իսկ այդ գետից դեպի արևելք տարածված երկրները, որոնց թվում նաև Ուրարտու կամ Արմենիա երկիրը, անցնում են Կիաքսարի գերիշխանության տակ: Ինչպես երևում է, թե Գ.Ա. Մելիքաշվիլուն և թե Լեհմանն-Յաուպտին հայտնի չի եղել Ուրարտու կամ Արմենիա պետության անկման թվականի մասին ռեալ փաստ: Յետևաբար այդ հետազոտողներից թե մեկի և թե մյուսի կարծիքը ստույգ չէ: Դրանք, ավելի շուտ, առանց որևէ գիտական փաստի, չհիմնավորված ենթադրություններ են և հետևաբար դրանք ժխտվում են մեկը մյուսի կողմից: Ընդհակառակը, սեպագիր արձանագրություններում պահպանված գիտական փաստերը հաստատում են, որ Կիաքսարի և Կրեսուսի պատերազմի ժամանակ Ուրարտու կամ Արմենիա պետության թագավորն է եղել Սարգուրի IV-ը (635-585), որը հայկական ժողովրդական ավանդություններում կոչվել է Պարույր³⁸ անունով: Եթե մ.թ.ա. 585 թվականի պայմանագրով Ուրարտուն կամ Արմենիան պիտի զրկվեր իր ինքնուրույն պետությունից և իր ինքնուրույն թագավորից, ապա այդ որոշումը չի կենսագործվել, քանի որ Սարգուրի IV-Պարույրից հետո Ուրարտու կամ Արմենիա երկիրը ունեցել է ևս 3 թագավորներ. դրանք էին՝

³⁶ Գ.Ա. Меликишвили, Наири-Урарту, с.320.

³⁷ C.F. Lehmann-Haupt, Armenien einget und jetzt, Band II (2), Seipzlg, 1931, s. 110-125.

³⁸ Խորենացի Յայոց պատմություն, I գիրք, էջ163-168, 173-174:

Էրիմենան, Ռուսա III-ը և Ռուսա IV-ը, որոնք հայկական ժողովրդական ավանդություններում հիշատակվել են այլ անուններով: Ընդ որում, 1) Էրիմենան հիշատակվել է Մյուս Յայկակ և Տիգրան անուններով, 2) Ռուսա III-ը հիշատակվել է Երվանդ Սակավակյաց և Արմեն անուններով, 3) Ռուսա IV-ը հիշատակվել է Տիգրան անունով: Սկզբից հիշատակված Տիգրանը ավելի վաղ է ապրել, ուստի նրան պայմանական կարգով կկոչենք Տիգրան ավագ, իսկ երկրորդ Տիգրանին, որը ուշ է ապրել, նրան կկոչենք Տիգրան կրտսեր: Սակայն այդ 3 թագավորների ժամանակագրությունները մեզ չեն հասել: Այդ բացը կարելի է լրացնել նրանց ժամանակ գոյություն ունեցող և նրանց հետ անմիջական շփման մեջ գտնվող հարևան երկրների թագավորությունների ժամանակագրությունների միջոցով: Այդպես են որոշել նաև նախորդ ժամանակաշրջաններում գոյություն ունեցող Ուրարտու կամ Արմենիա պետության թագավորների ժամանակագրությունները:

Մեզ հետաքրքրող Էրիմենայի (Տիգրան ավագի, Մյուս Յայկակի) ժամանակակիցն է եղել Մեդիայի (Մարաստանի) թագավոր Աստիագեսը կամ Աժդահակը, որը կառավարել է 585-550 թվականներին: Ռուսա III-ի (Երվանդ Սակավակյացի, Արմենի) ժամանակակիցն է եղել և նրա հետ շփման մեջ է գտնվել Պարսկաստանի թագավոր Կյուրոս մեծը, որը կառավարել է 550-529 թվականներին: Ռուսա IV-ի (Տիգրան կրտսերի) ժամանակակիցն է եղել Պարսկաստանի թագավոր Կամբյուսեսը, որը կառավարել է 529-522 թվականներին, ինչպես նաև Պարսկաստանի նոր թագավոր Դարեհ I-ը, որը իր թագավորության առաջին տարում կամ մ.թ.ա. 522 թվականին է շփման մեջ գտնվել Ռուսա IV-Տիգրան կրտսերի հետ: Յետևաբար, Ուրարտուի կամ Արմենիայի նախկին թագավոր Սարգուրի IV –ի (Պարույրի) թագավորությունը ավարտվել է մ.թ.ա. 585 թվականին և սկսվել է այդ երեք նոր թագավորների իշխանությունը:

1. Էրիմենայի (Տիգրան ավագի, Մյուս Յայկակի) ժամանակագրությունը համընկել է 585-550 թվականների հետ:

2. Ռուսա III-ի (Երվանդ Սակավակյացի, Արմենի) ժամանակագրությունը համընկել է 550-529 թվականների հետ:

3. Ռուսա IV-ի (Տիգրան կրտսերի) ժամանակագրությունը համընկել է 529-522 թվականների հետ, որից հետո նոր անկում է ապրել Ուրարտու կամ Արմենիա երկրի պետությունը:

Այդ երեք թագավորների անուններով պահպանվել են սեպագիր արձանագրություններ: Դրանցից Էրիմենայի (585-550) արձանագրությունում աղարտված է նրա հայրանունը, միայն պահպանվել է նրա հոր անվան առաջին վանկը, որը ընթերցվում է 'A[r...] կամ 'R[ս...]³⁹: Եթե Էրիմենան լիներ Սարգուրի IV թագավորի որդին, ապա նրա հայրանվան առաջին վանկը պետք է լիներ 'A[r...] կամ Sar[...] վանկը, բայց վերևում ընդգծվեց, որ այդպես չէ: Իր արձանագրություններում Էրիմենան չի հիշատակում, որ իր հայրը թագավոր է եղել: Այս երկու փաստերը հիմք են տալիս ասելու, որ Էրիմենան Ուրարտու կամ Արմենիա պետության թագավոր Սարգուրի IV-ի որդին չէ: Նա արքայական ծագում չի ունեցել: Հետևաբար նա ստեղծել է բոլորովին նոր արքայական դինաստիա:

Մ.թ.ա. 585 թվականին, առանց պայմանագրի որոշումը կենսագործելու, մեռնում է Կիաքսարը: Նրան Մեդիայի (Մարաստանի) գահին հաջորդում է Աստիագեսը, որը հայկական ժողովրդական ավանդություններում կոչվել է Աժդահակ⁴⁰ անունով: Նրա գահ բարձրանալու հենց սկզբից, ինչպես տեղեկացնում են հայկական ժողովրդական ավանդությունները⁴¹, Ուրարտու կամ Արմենիա պետությունը ապստամբում է Մեդիայի (Մարաստանի) թագավոր Աժդահակի դեմ, որը ձգտել է կենսագործել մ.թ.ա. 585 թվականի պայմանագրի որոշումը և զրկել Ուրարտուն կամ Արմենիան սեփական պետությունից և սեփական թագավորից: Այդ պայքարի ընթացքում էլ քաղաքական ասպարեզը թողել է երկրի նոր թագավոր Սարգուրի IV-ը կամ Պարույրը: Սակայն Աժդահակի (Աստիագեսի) դեմ մղվող ուրարտների կամ արմենների պայքարը ավելի մեծ չափերի է հասել, երբ այդ պայքարի գլուխն է անցել արքայական ծագում չունեցող, բայց ժողովրդի կողմից արքա հռչակված Էրիմենան (Մյուս Հայկակը կամ Տիգրան ավագը)⁴²: Այդ պայքարը շարունակվել է մինչև մ.թ.ա. 550 թվականը, երբ Պարսկաստանն էլ սկսում է Աժդահակի դեմ իր

³⁹ Գ.Ա. Меликишвили, УКН, № 457, печать, стк.1.

⁴⁰ Խորենացի, Հայոց պատմություն, I գիրք, էջ 129-134:

⁴¹ Դ.Ն. Սարգսյան, Ուրարտական պետության պատմության պարբերացման գլխավոր փուլերը, (Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2005, № 3, էջ 205-206, 208-209, 211-214):

⁴² Դ.Ն. Սարգսյան, Ուրարտական պետության պատմության պարբերացման գլխավոր փուլերը, (նշվ. աշխ, էջ 205-206, 208-209, 211-214):

պայքարը Կյուրոս Մեծի⁴³ զլխավորությամբ: Այդ միացյալ պայքարի հետևանքով մ.թ.ա. 550 թվականին նվաճվում ու կործանվում է Մեդիայի (Մարաստանի) մայրաքաղաք Էկբատանը, տապալվում է այդ երկրների պետությունը և ըստ հայկական ժողովրդական ավանդությունների, Էրիմենայի (Տիգրան ավագի, Մյուս Հայկակի) ձեռքով սպանվում է Աժդահակը (Աստիագեսը):

Էրիմենա թագավորին հաջորդել է նրա որդի Ռուսա III-ը (550-529) (Երվանդ Սակավակյացը, Արմենը): Մեզ են հասել Ռուսա III-ի անունով 2 սեպագիր արձանագրություններ⁴⁴: Նա կառավարել է Կյուրոս Մեծի օրոք և պահպանել է իր անկախ պետությունը, իր արքայական թագը, բայց Պարսկաստանին վճարել է զինվորական ու դրամական հարկ՝ իր երկրի սահմանները անվտանգ պահելու համար⁴⁵: Նրա որդի Ռուսան (հետագայում Ռուսա IV թագավորը կամ հայկական ժողովրդական ավանդություններում՝ Տիգրան կրտսերը), երբ դեռ արքայազն էր, իր զորքով, այսինքն՝ Ուրարտու կամ Արմենիա երկրի զորքով միանում է Պարսկաստանի թագավոր Կյուրոս Մեծի զորքին, և նրանք միացյալ ուժերով մ.թ.ա. 538 թվականին նվաճում են Բաբելոնը⁴⁶: Դա թերևս Երեմիա մարգարեի վերոհիշյալ կոչի իրականացումն էր Ուրարտուի կամ Արմենիայի թագավորության և նրան օգնող ուժերի ջանքերով, բայց ուշ ժամանակաշրջանում:

Ռուսա III –ին հաջորդում է նրա որդի Ռուսա IV-ը (529-522) (Տիգրան կրտսերը): Մեզ է հասել Ռուսա IV-ի անունով մի սեպագիր արձանագրություն⁴⁷: Նա կառավարել է Կամբյուսեսի օրոք՝ պահպանելով իր անկախ պետությունը և իր արքայական գահը մինչև մ.թ.ա. 522 թվականի սկիզբը: Իսկ մ.թ.ա. 522 թվականի երկրորդ կեսին, երբ Կամբյուսեսի մահից հետո երկրի գահը անցնում է Դարեհ I-ին, վերջինս իր թագավորության հենց սկզբում, ինչպես տեղեկացնում է Հերոդոտոսը⁴⁸, վարչա-քաղաքական ռեֆորմ է անցկացնում, որի հետևանքով վերացնում է Պարսկաստանի գերիշխանության տակ

⁴³ Խորենացի, Հայոց պատմություն, I գիրք, էջ 126:

⁴⁴ Գ.Ա. Меликишвили, УКН, № 458; № 458a.

⁴⁵ Դ.Ն. Սարգսյան, Ուրարտական պետության պատմության պարբերացման գլխավոր փուլերը, (Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2005, № 3, էջ 211-214):

⁴⁶ Դ.Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 211-214:

⁴⁷ Գ.Ա. Меликишвили, УКН, № 456.

⁴⁸ Հերոդոտոս պատմություն ինը գրքից, IV, § 89, էջ 196:

գտնվող երկրների անկախ պետությունները և նրանց անկախ թագավորներին, նրանց երկրները դարձնում է պարսկական սատրապություններ, իսկ նրանց անկախ թագավորների փոխարեն նշանակում է պարսկական ծագում ունեցող սատրապներ: Այդպիսի վիճակի է արժանանում Պարսկաստանի դաշնակից Ուրարտուն կամ Արմենիա պետությունը, և ուրարտներ կամ արմեններ բնակիչները դրվում են պարսկական ծանր հարկի տակ: Ուրարտու կամ Արմենիա երկրում սատրապ է նշանակվում Դարեհ I-ի փեսա Արտոքմեսը՝ Ռուսա IV (Տիգրան կրտսեր) թագավորի փոխարեն: Սեփական անկախ պետությունից և սեփական անկախ թագավորից զրկված Ուրարտու կամ Արմենիա երկիրը պայթարի է ելնում պարսկական բռնապետության դեմ, հինգ արյունահեղ, կենաց ու մահու ճակատամարտեր մղում պարսկական բազմամբոխ զորքի դեմ: Այդ պայթարը տեղի է ունենում երկու փուլով: Կռիվների առաջին փուլում Ուրարտու կամ Արմենիա երկրի բնակիչները՝ ուրարտները կամ արմենները մ.թ.ա. 522 թվականին հասնում են հաղթանակի և թշնամու ղուրս է քշում երկրի սահմաններից, իսկ երկրորդ փուլում, երբ փոխվում է պարսկական զորքի զորահրամանատարը՝ նախկինում եղած արմինական (խարմինական) կամ ուրաշտական ծագում ունեցող Դադարշիշին փոխարինում է պարսկական ծագում ունեցող Վահունիսան և պարսկական զորքն էլ նոր, թարմ համալրում է ստանում, մ.թ.ա. 521 թվականին Իզալայի ճակատամարտում հասնում է առավելության, ներխուժում Ուրարտու կամ Արմենիա երկրի սահմաններից ներս ու երկիրը ենթարկում իրեն:

Այդ արյունահեղ, երկարատև ու համառ պայթարի մասին Դարեհ I-ը պատմում է «Բեհիստունյան» եռալեզու սեպագիր արձանագրությունում: Մենք մեջբերում ենք այդ արձանագրության շատ սեղմ բովանդակությունը:

V. Դարեհ I-ը իր թագավորության երրորդ տարում, այսինքն՝ մ.թ.ա. 520 թվականին գրած «Բեհիստունյան» եռալեզու (պարսկերեն, էլամերեն, բաբելոներեն) սեպագիր արձանագրությունում հիշատակում է, որ իր դեմ ապստամբած երկիրը հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն լեզվով կոչվել է ^{KUR}Armina «Արմինա», նրա բնակիչները կոչվել են 'arminaia «արմիններ», հնդիրանական ծագում ունեցող էլամերեն լեզվով այդ երկիրը կոչվել է ^{KUR}Harmina

«խարմինա», նրա բնակիչները կոչվել են 'harminaia «խարմիններ»⁴⁹, իսկ սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով այդ նույն երկիրը կոչվել է ^{KUR}Uraštu «Ուրաշտու», նրա բնակիչները կոչվել են 'uraštaia «ուրաշտներ»⁵⁰:

Ակներև է, որ Դարեհ I-ի դեմ ապստամբած երկրին տրվող Արմինա, խարմինա, Ուրաշտու երկրանունները և այդ երկրի բնակիչներին տրվող արմիններ, խարմիններ, ուրաշտներ անունները անխզելիորեն կապված են միմյանց հետ, քանի որ նրանց հիմքում ընկած է միևնույն ցեղը, որը տարբեր էթնիկական ծագում ունեցող լեզուներով կոչվել է տարբեր անուններով: Ընդ որում, հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն և էլամերեն լեզուներով այդ նույն ցեղը կոչվել է արմին կամ արմիններ, իսկ սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով այդ նույն արմին կամ արմեններ ցեղը կոչվել է ուրաշտ կամ ուրաշտներ անունով:

Հակառակ այս արմատական փաստի, հետազոտողները, որոնց թվում նաև Բ.Բ. Պիտտովսկին, այն կարծիքն են հայտնել, թե արմիններ (խարմիններ) ցեղը և ուրաշտներ (ուրարտներ) ցեղը, ինչպես նաև Արմինա (խարմինա) երկիրը և Ուրաշտու (Ուրարտու) երկիրը իրարից տարբեր են: Այսպիսի հետևության պատճառը այն է, որ այդ հետազոտողները մինչև հիմա էլ չեն ընկալել, որ Արմինա (խարմինա), Ուրաշտու (Ուրարտու) և արմիններ (խարմիններ), ուրաշտներ (ուրարտներ) անունները տարբեր էթնիկական ծագում ունեցող լեզուներով հորջորջումներ են, իսկ նրանց հիմքում անփոփոխ մնացել է նույն ցեղը:

Այսպիսի արմատական բացահայտումը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները:

1) Սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով հիշատակված Ուրաշտու երկիրը, նրա ուրաշտներ բնակիչները և հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն և էլամերեն լեզուներով հիշատակված Արմինա (խարմինա) երկիրը, նրա արմիններ (խարմիններ) բնակիչները նույնն են:

⁴⁹ Խարմինան և խարմինները նույն Արմինան և արմիններն են, միայն թե բառասկզբում էլամերենի ուղղագրության համաձայն ավելացել է «խ» հնչյունը:

⁵⁰ F.H.Weissbach, Die Keilinschriften der Achämeniden, Leipzig, 1911, s. 30-31, §26; s.36-37, § 30; s.60-61, § 52, s 86-89, § 3.

2) Նույնն են նաև սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով հիշատակված Ուրարտու երկիրը, նրա ուրարտներ բնակիչները և հնդեվրոպական ծագում ունեցող Արմենիա երկիրը, նրա արմեններ բնակիչները, որոնք հիշատակվել են հայկական ժողովրդական ավանդություններում և Աստվածաշնչի լատիներեն լեզվով թարգմանություններում:

3) Բոլոր այն դեպքերում, երբ հիշատակվում են սեմական ծագում ունեցող Ուրարտու (Ուրաշտու) երկիրը և նրա ուրարտներ (ուրաշտներ) բնակիչները, նրանք իրենցից ներկայացնում են հնդեվրոպական և հնդիրանական ծագում ունեցող Արմենիա (Արմինա, Խարմինա) երկիրը և նրա արմեններ (արմիններ, Խարմիններ) բնակիչները: Այդպես էլ ազատ կերպով կարելի է թարգմանել դրանք, երբ անհրաժեշտություն է զգացվում: Այդպես է թարգմանվել Աստվածաշնչի սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով հիշատակված Ուրարտու անունը լատիներեն լեզվով:

Այս փաստերը ակամայից հերքում են Բ.Բ. Պիոտրովսկու այն կարծիքը, թե արմենները մ.թ.ա. VI դարում են հանդես եկել այն տարածքում, որտեղ մ.թ.ա. IXդ. քաղաքական ասպարեզ է եկել Ուրարտու պետությունը: Սակայն վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ ուրարտները ու արմենները նույնն են և նրանք են հիմնադրել այդ պետությունը մ.թ.ա. IX-VI դարերում: Հետևաբար Բ.Բ. Պիոտրովսկին սխալ է:

«Բեհիստունյան» արձանագրության ընդարձակ շարադրանքում տեղեկություն է հայտնվել այն մասին, որ Դարեհ I-ը զորք է ուղարկում այդ Արմինա (Խարմինա) կամ Ուրաշտու երկրի վրա, որ ճնշի նրա ապստամբությունը: Չորքի հրամանատարն էր արմինական (Խարմինական) կամ ուրաշտական ծագում ունեցող Դադարշիշը: Ապստամբ արմինները (Խարմինները) կամ ուրաշտները ճակատամարտ են տալիս իրենց երկիր ներխուժած թշնամական Պարսկաստանի զորքի դեմ: Առաջին ճակատամարտը տեղի է ունեցել Արմինա (Խարմինա) կամ Ուրաշտու երկրի ներսում գտնվող Ջուզա ավանում, երկրորդը՝ Տիգրա բերդում, երրորդը՝ Ուհիամա բերդում: Այդ երեք ճակատամարտերն էլ ավարտվում են արմինների (Խարմինների) կամ ուրաշտների հաղթանակներով, և թշնամու զորքը դուրս է քշվում Արմինա (Խարմինա) Ուրաշտու երկրի սահմաններից, ճողոպրում և կուտակվում Ատրեստանի Իզալա մարզում՝ ամբողջ ձմեռվա ընթացքում: Հաջորդ տարում պարսկական զորքը ստանում է նոր

համալրում, փոխվում է զորքի հրամանատարը (նոր հրամանատար է նշանակվում պարսկական ծագում ունեցող Վահունիսան): Արմինա (Խարմինա) կամ Ուրաշտու երկրի զորքը հույսը դրած միայն իր սեփական ուժի վրա, չորրորդ ճակատամարտն է տալիս Իզալայում: Սակայն, հաշվի չի առնվել պարսկական զորքի թարմ ուժերով համալրումը, որի պատճառով էլ Արմինա (Խարմինա) կամ Ուրաշտու երկրի զորքը անհաջողությամբ է մատնվել պարսկական զորքի կողմից: Ոգևորված դրանով պարսկական զորքը ներխուժում է Արմինա (Խարմինա) կամ Ուրաշտու երկրի սահմաններից ներս, հինգերորդ ճակատամարտն է տեղի ունենում պարսկական զորքի և Արմինա (Խարմինա) կամ Ուրաշտու երկրի զորքի միջև այդ երկրի Աուտիյարա կամ Խաութիյարա գավառում, որտեղ կրկին առավելության է հասնում պարսկական զորքը: Այդ ճակատամարտից հետո Արմինա (Խարմինա) կամ Ուրաշտու երկիրը ենթարկվում է Պարսկաստանին: Երկրի սեփական թագավոր Ռուսա IV-ի (Տիգրան կրտսերի) փոխարեն Արմինա (Խարմինա) կամ Ուրաշտու երկրում պարսկական ծագում ունեցող կառավարիչ կամ սատրապ է նշանակվում Արտոքմեսը:

VI. «Նակշի-ռուստամյան» եռալեզու (պարսկերեն, էլամերեն, բաբելոն-ներեն) սեպագիր արձանագրության մեջ Դարեհ I-ը հիշատակում է իր անցկացրած վարչա-քաղաքական ռեֆորմից հետո պարսկական պետությանը հարկատու 30 երկրների շարքում 20-րդ տեղը գրավող այն երկրի անունը, որը հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն լեզվով կոչվում է ^{KUR}Armina «Արմինա», հնդիրանական ծագում ունեցող էլամերեն լեզվով կոչվում է ^{KUR}Harmina «Խարմինա», իսկ սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով այդ նույն երկիրը կոչվում է ^{KUR}Uraštu «Ուրաշտու» անունով⁵¹: Արձանագրության մեջ

հիշատակված այդ 30 երկրները, որոնք նվաճվել են պարսկական պետության կողմից, գրվել են իրենց սեփական պետությունից և սեփական թագավորներից: Այդ երկրները վերածվել են պարսկական սատրապությունների կամ իշխանությունների, որոնց վրա կառավարում են պարսկական ծագում ունեցող սատրապները կամ կառավարիչները: Նախորդ շարադրանքում մենք «Բեհիստունյան» արձանագրության տվյալներից իմացանք, որ այդ վարչատարածքային ռեֆորմի դեմ պայքարի է դուրս եկել Արմինա (Խարմինա) կամ Ուրաշտու երկիրը: Բայց այդ ապստամբությունը ճնշվել է Դարեհ I-ի

⁵¹ F.H. Weissbach, Die Kelen Schriften der Achämeniden, s. 86-89, § 3.

հսկայական մեծ ջանքերի շնորհիվ: Արմինա (Խարմինա) կամ Ուրաշտու երկիրը մյուս երկրների նման զրկվում է սեփական պետությունից, սեփական թագավորից և վերածվում պարսկական սատրապության կամ իշխանության, որի վրա իշխում է պարսկական ծագում ունեցող սատրապը կամ կառավարիչը:

Դարեհ I-ը իր «Նակչի- ռուստամյան» արձանագրությունում հիշատակում է իրեն հարկ վճարող այդ 30 երկրների անունները: Իսկ հետագայում Յերոզոտոսը հիշատակում է այդ երկրներից Դարեհ I-ի կողմից գանձվող հարկի ու տուրքի չափի մասին:

Ըստ Յերոզոտոսի «Պատմություն ինը գրքից» աշխատության տեղեկությունների, Դարեհ I-ը Արմենիա (Արմինա, Խարմինա, Ուրաշտու) երկրից և նրա շուրջ գտնվող փոքր երկրներից, մասնավորապես Պակտյուիկեից գանձել է 400 տաղանդ⁵²: Այդ հարկի ու տուրքի մեծ մասը անշուշտ վճարել են հին արևելքի երբեմնի ամենահզոր պետության բնակիչները՝ արմինները (խարմինները) կամ ուրաշտները: Ի տարբերություն դրա, Կյուրոս Մեծի ժամանակ Արմինա (Խարմինա) կամ Ուրաշտու պետությունը Պարսկաստանին վճարել է ընդամենը 50 տաղանդ⁵³, որը միջին հաշվով շուրջ 8 անգամ փոքր է, քան Դարեհ I-ի ժամանակ վճարված հարկից ու տուրքից: Փաստորեն Դարեհ I-ի ժամանակ նվաճված այդ 30 երկրներից միջին հաշվով շուրջ 8 անգամ ավելի հարկ է գանձվել: Յետևաբար Դարեհ I-ի ժամանակ նվաճված այդ երկրների ժողովուրդների վիճակը շուրջ 8 անգամ ավելի ծանր վիճակի մեջ է հայտնվել, քան Կյուրոս Մեծի ժամանակ: Յետագոտողները, մասնավորապես նրանցից Բ.Բ. Պիտտորվսկին, Ուրարտու (Ուրաշտու) երկիրը, նրա ուրարտներ (ուրաշտներ) բնակիչները հակադրել են Արմենիա (Արմինա) երկրին և նրա արմեններ (արմիններ) բնակիչներին: Այդ հետագոտողների կարծիքով արմեններ (արմիններ) բնակիչները Ուրարտու (Ուրաշտու) պետության տարածքում հանդես են եկել ընդամենը մ.թ.ա. VI դարից, իսկ ուրարտները (ուրաշտները) շատ վաղուց են հանդես եկել այդ տարածքում: Ըստ այդ հետագոտողների կարծիքի, մ.թ.ա. VI դարում նոր թափանցած արմենները (արմինները) դուրս են քշում երկրից ուրարտներին (ուրաշտներին) և տեղ դառնում նրանց բնակավայրերին: Սակայն այս կապակցությամբ պետք է հաշվի առնել այն փաստերը,

⁵² Յերոզոտոս, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986, VII գիրք, § 93, էջ 197:

⁵³ Քսենոփոն, Կյուրոսպեդիա, Երևան, 2000, III գիրք, գլուխ I, էջ 104:

որոնք ցույց են տալիս սեմական ծագում ունեցող ասուրերեն, բաբելոներեն, եբրայերեն լեզուներով հիշատակված Ուրարտու (Ուրաշտու) երկրի և նրա ուրարտներ (ուրաշտներ) բնակիչների համապատասխանությունը հնդեվրոպական և հնդիրանական ծագում ունեցող Արմենիա (Արմինա) երկրին և նրա արմեններ (արմիններ) բնակիչներին՝ սկսած ուրարտական պետության քաղաքական ասպարեզ գալու արշալույսից մինչև այդ պետության անկումը, որը մանրակրկիտ ներկայացված է ինչպես վերոհիշյալ արձանագրություններում, այնպես էլ ներքոհիշյալ աղյուսակներում:

I ԱՂՅՈՒՍԱԿ (Սալմանասար III- ի հետ կապված փաստերը)

- 1) Սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված Ուրարտու երկիրը
- 2) հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդու-թյուններում թարգմանվել է Արմենիա երկիր:
 - 1) Սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված Ուրարտուի թագավորությունը
 - 2) հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդու-թյուններում թարգմանվել է Արմենիայի թագավորություն:
- 1) Սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված Ուրարտներ բնակիչները
- 2) հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդու-թյուններում թարգմանվել են արմեններ բնակիչներ:

II ԱՂՅՈՒՍԱԿ (Աստվածաշնչի հետ կապված փաստերը)

- 1) Սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով հիշատակված Ուրարտուի լեռները
- 2) հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով թարգմանվել են Արմենիայի լեռներ:
 - 1) Սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով հիշատակված Ուրարտու երկիրը
 - 2) հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով թարգմանվել է Արմենիա երկիր:
 - 1) Սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով հիշատակված Ուրարտուի թագավորությունը

2) հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով թարգմանվել է Արմենիայի թագավորություն:

III ԱՂՅՈՒՍԱԿ (Հայկական ժողովրդական ավանդությունների հետ կապված փաստերը)

1) Սենական ծագում ունեցող երրայերեն լեզվով հիշատակված Ուրարտու երկիրը, որտեղ ապաստան են գտել Սինախերիբի հայրասպան որդիները,

2) հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդություններում կոչվել է «մեզ մոտ», «մեր աշխարհ», այսինքն՝ Արմենիա երկիր:

1) Սենական ծագում ունեցող երրայերեն լեզվով հիշատակված Ուրարտուի թագավորությունը, որի օգնության է դիմել Երեմիա մարգարեն,

2) հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդություններում կոչվել է «մեր ազգի թագավորություն», այսինքն՝ Արմենիայի թագավորություն:

IV ԱՂՅՈՒՍԱԿ («Քեհիստունյան» և «Նակշի-ռուստամյան» եռալեզու (պարսկերեն, էլամերեն, բաբելոներեն) արձանագրությունների հետ կապված փաստերը)

1) Յնդիրանական ծագում ունեցող պարսկերեն լեզվով հիշատակված Արմինա երկիրը

2) սենական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով թարգմանվել է Ուրաշտու երկիր:

1) Յնդիրանական ծագում ունեցող պարսկերեն լեզվով հիշատակված արմիններ բնակիչները

2) սենական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով թարգմանվել են ուրաշտներ բնակիչներ:

1) Յնդիրանական ծագում ունեցող էլամերեն լեզվով հիշատակված խարմիններ բնակիչները

2) սենական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով թարգմանվել են ուրաշտներ բնակիչներ:

1) Յնդիրանական ծագում ունեցող էլամերեն լեզվով հիշատակված խարմինա երկիրը

2) սենական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով թարգմանվել է Ուրաշտու երկիր:

Վերոհիշյալ աղյուսակներից I-ում ընդգծվել է, որ սենական ծագում ունեցող ասուրերեն լեզվով հիշատակված՝ 1) Ուրարտու երկիրը, 2) Ուրարտուի թագավորությունը, 3) ուրարտներ բնակիչները հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդություններում թարգմանվել են՝ 1) Արմենիա երկիր, 2) Արմենիայի թագավորություն, 3) արմիններ բնակիչներ:

Աղյուսակներից II-ում ընդգծվել է, որ սենական ծագում ունեցող երրայերեն լեզվով Աստվածաշնչում հիշատակված՝ 1) Ուրարտուի լեռները, 2) Ուրարտու երկիրը, 3) Ուրարտուի թագավորությունը հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով թարգմանություններում (Vulgate) վավերացվել են՝ 1) Արմենիայի լեռներ, 2) Արմենիա երկիր, 3) Արմենիայի թագավորություն:

Աղյուսակ III-ում ընդգծվել է, որ սենական ծագում ունեցող երրայերեն լեզվով հիշատակված՝ 1) Ուրարտու երկիրը և 2) Ուրարտուի թագավորությունը հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդություններում թարգմանվել են՝ 1) «մեզ մոտ», «մեր աշխարհ», այսինքն՝ Արմենիա երկիր և 2) «մեր ազգի թագավորություն», այսինքն՝ «արմեններ ազգի թագավորություն»:

Աղյուսակներից IV-ում ընդգծվել է, որ հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն և էլամերեն լեզուներով հիշատակված 1) Արմինա (խարմինա) երկիրը, 2) արմիններ (խարմիններ) բնակիչները սենական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով թարգմանվել են՝ 1) Ուրաշտու երկիր, 2) Ուրաշտներ բնակիչներ:

Այս փաստերը ցույց են տալիս, որ սենական ծագում ունեցող Ուրարտու (Ուրաշտու) երկիրը, Ուրարտու (Ուրաշտու) թագավորությունը, ուրարտներ (ուրաշտներ) բնակիչները համապատասխանում են հնդեվրոպական և հնդիրանական ծագում ունեցող Արմենիա (Արմինա) երկրին, Արմենիա (Արմինա) թագավորությանը և արմեններ (արմիններ) բնակիչներին: Դրանց անունների տարբերությունը առաջ է եկել այն լեզուների էթնիկական տարբերությունից, որոնցով ավանդվել են այդ անունները: Ընդ որում, դրանցից առաջինները հիշատակվել են սենական ծագում ունեցող ասուրերեն, երրայերեն, բաբելոներեն լեզուներով, իսկ երկրորդները հիշատակվել են հնդեվրոպական և հնդիրանական ծագում ունեցող հայերեն, լատիներեն, պարսկերեն, էլամերեն լեզուներով:

Այդ աղյուսակների փաստերը ցույց են տալիս, թե ինչպես Ուրարտու, Ուրաշտու երկրները, նրանց ուրարտներ, ուրաշտներ բնակիչները, այնպես էլ Արմենիա, Արմինա երկրները, նրանց արմեններ, արմիններ բնակիչները նույնն են, քանի որ Ուրարտու և Ուրաշտու երկրանունները, նրանց ուրարտներ, ուրաշտներ բնակիչների անունները ազատ կերպով թարգմանվում են Արմենիա և Արմինա երկրանուններով և արմեններ, արմիններ բնակիչների անուններով:

Վերևում՝ «Բեհիստունյան» արձանագրության կապակցությամբ մեր կողմից կատարված այն վերլուծությունը, թե Ուրարտու (Ուրաշտու), Արմենիա (Արմինա) երկրանունների և ուրարտներ (ուրաշտներ), արմեններ (արմիններ) բնակիչների անունների հիմքում ընկած է միևնույն արմատը, որը սեմական ծագում ունեցող լեզուներով կոչվել է ուրարտ (ուրաշտ), իսկ հնդեվրոպական ծագում ունեցող լեզուներով այն կոչվել է արմեն (արմին) անուններով: Թեև էթնիկապես տարբերություն ունեցող լեզուներով դրանք արտաքինապես տարբերվում են իրարից, բայց ներքուստ, այսինքն՝ իրենց ներքին իմաստով, իրենց ներքին բովանդակությամբ դրանք նույնն են:

«Նակշի-ռուստամյան» արձանագրությունում էլ դրանք նույնն են: Ընդ որում, հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն լեզվով այդ արմատը կոչվել է արմին, հնդիրանական ծագում ունեցող էլամերեն լեզվով կոչվել է խարմին, իսկ էթնիկապես նրանցից տարբեր սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով այն կոչվել է Ուրաշտ անունով: Թեև արտաքուստ այդ նույն բնակիչներին տրվող անունները իրարից տարբեր են, բայց ներքուստ նրանք ունեն նույն բովանդակությունը, նույն իմաստը: Միևնույն բնակիչներին տրվող այդ անունների տարբերությունը առաջ է եկել այն լեզուների էթնիկական տարբերությունից, որոնցով ավանդվել են այդ անունները: Ընդ որում, հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն լեզվով այդ բնակիչները կոչվել են արմիններ, հնդիրանական ծագում ունեցող էլամերեն լեզվով այդ բնակիչները կոչվել են խարմիններ, իսկ սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով այդ նույն բնակիչները կոչվել են ուրաշտներ անունով: Տարբեր անուններով կոչվող և նույն իմաստը ունեցող բնակիչների անվան հիմքի վրա էլ առաջացել են Արմինա, Խարմինա, Ուրաշտու անուններով կոչվող երկրանունները: Շնորհիվ իրենց հիմքում գտնվող միևնույն բնակիչների, այդ երկրանունները նույնն են և իրենցից ներկայացնում են նույն երկիրը, բայց տարբեր անուններով՝ մի դեպքում այդ երկիրը կոչվում է Արմինա կամ Խարմինա, իսկ մի այլ

դեպքում այդ նույն երկիրը կոչվում է Ուրաշտու: Միևնույն երկրին տրվող այդ անունների տարբերությունը առաջ է եկել այն լեզուների էթնիկական տարբերությունից, որոնցով ավանդվել են այդ անունները: Ընդ որում, հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն և էլամերեն լեզուներով այդ երկիրը կոչվել է Արմինա (Խարմինա), իսկ սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով այդ նույն երկիրը կոչվել է Ուրաշտու:

Վերևի շարադրանքի ընթացքում մենք վերլուծեցինք «Բեհիստունյան» և «Նակշի-ռուստամյան» եռալեզու (պարսկերեն, էլամերեն, բաբելոներեն) սեպագիր արձանագրություններում հիշատակված, Արմինա, Խարմինա, Ուրաշտու երկրանունների և նրանց արմիններ, խարմիններ, ուրաշտներ բնակիչների անունների կազմությունը, որ դրանց բոլորի հիմքում ընկած է նույն արմին (խարմին) և ուրաշտ արմատը:

Այժմ մենք կաշխատենք վերլուծել մեր կողմից քննարկաման առարկա դարձած մյուս 4 արձանագրությունները, թե ինչպիսի արմատներ են ունեցել այդ արձանագրություններում հիշատակված Ուրարտու և Արմինա երկրանունները և նրանց ուրարտներ և արմեններ բնակիչների անունները:

1) Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված Կարխի կամ Տուշխանի մոնոլիթ սեպագիր արձանագրությունում հիշատակված Ուրարտու երկրի անունը, Ուրարտուի թագավորության անունը, ուրարտներ բնակիչների անունը համապատասխանում են հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդություններում հիշատակված Արմենիա երկրի անվանը, Արմենիա թագավորության անվանը, արմեններ բնակիչների անվանը:

2) Սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով գրված Աստվածաշնչի բնագրում Եսայի մարգարեի կողմից ջրհեղեղի ավանդությունում հիշատակված Ուրարտուի լեռների անունը համապատասխանում է հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով Աստվածաշնչի թարգմանության մեջ (Vulgate) հիշատակված Արմենիայի լեռների անվանը:

3) Սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով գրված Աստվածաշնչի բնագրում Եսայի մարգարեի կողմից մ.թ.ա. VIII դարում հիշատակված Ասորեստանի թագավոր Սինախերիբի հայրասպան որդիներին ապաստան տվող Ուրարտու երկրի

անունը համապատասխանում է հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով Աստվածաշնչի թարգմանությունում (Vulgate) հիշատակված Արմենիա երկրի անվանը:

4) Սենական ծագում ունեցող եբրայերեն լեզվով գրված Աստվածաշնչի բնագրում երեմիա մարգարեի կողմից մ.թ.ա. VI դարում հիշատակված Ուրարտուի թագավորության անունը համապատասխանում է հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով Աստվածաշնչի թարգմանությունում (Vulgate) հիշատակված Արմենիայի թագավորության անվանը:

Ի մի բերելով այդ 4 արձանագրությունների տվյալները մենք կարող ենք ընդհանրացնել հետևյալը:

1) Սենական լեզուներով հիշատակված Ուրարտու երկրի, Ուրարտուի թագավորության, ուրարտներ բնակիչների անունների «ուրարտ»

արմատը համապատասխանում է հնդեվրոպական լեզուներով հիշատակված Արմենիա երկրի, Արմենիայի թագավորության, արմեններ բնակիչների անունների «արմեն» արմատին:

2) Սենական լեզուներով հիշատակված Ուրարտուի լեռների անվան «Ուրարտ» արմատը համապատասխանում է հնդեվրոպական լեզուներով հիշատակված Արմենիայի լեռների անվան «արմեն» արմատին:

3) Սենական լեզուներով հիշատակված Ուրարտու երկրանվան «Ուրարտ» արմատը համապատասխանում է հնդեվրոպական լեզուներով հիշատակված արմենիա երկրանվան «արմեն» արմատին:

4) Սենական լեզուներով հիշատակված Ուրարտուի թագավորության անվան «ուրարտ» արմատը համապատասխանում է հնդեվրոպական լեզուներով հիշատակված Արմենիայի թագավորության անվան «արմեն» արմատին:

Այդպիսի ընդհանրություններ ունեին նաև վերևում հիշատակված «Բեհիստունյան» և «Նակշի-ռուստամյան» եռալեզու «պարսկերեն, էլամերեն, բաբելոներեն» սեպագիր արձանագրությունների Ուրաշտու և Արմենիա անունների «ուրաշտ» և «արմին» արմատները:

Հետևաբար մեր կողմից ուսումնասիրված 6 արձանագրություններում հիշատակված Ուրարտու (Ուրաշտու), ուրարտներ (ուրաշտներ) և Արմենիա (Արմինա), արմեններ (արմիններ) անունների հիմքում ընկած են «ուրարտ» («ուրաշտ») և «արմեն» («արմին»)

արմատները, որոնք համապատասխանում են իրար: Դրանց տարբերությունը արտահայտված է այն լեզուների էթնիկական տարբերությամբ, որոնցով ավանդվել են այդ արմատները: Ընդ որում, սենական լեզուներով այդ անունները կոչվել են Ուրարտու (Ուրաշտու), նրանց արմատները կոչվել են «ուրարտ» («ուրաշտ»), իսկ հնդեվրոպական և հնդիրանական լեզուներով այդ նույն անունները կոչվել են Արմենիա (Արմինա), նրանց արմատները կոչվել են «արմեն» («արմին»):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆ

- 1) **Ըստ նոր բացահայտված 29 սեպագիր արձանագրությունների**
- 2) **Ըստ նոր բացահայտված արքայական 19 հետախուզական նամակների**

Վերոհիշյալ 6 արձանագրություններից բացի ուրիշ արձանագրություններ էլ կան, որոնց մեջ հիշատակվում են Ուրարտու և Ուրաշտու երկրանունները, նրանց ուրարտներ, ուրաշտներ բնակիչների անունները: Սակայն եթե մեր կողմից ուսումնասիրված վերոհիշյալ 6 արձանագրությունների հետ կապված գոյություն ունեն հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն լեզվով, հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով, ինչպես նաև հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն և էլամերեն լեզուներով թարգմանությունները, ապա նոր բացահայտված արձանագրությունների հետ կապված նման թարգմանություններ չկան: Այդ բացը լրացնելու և հիշյալ նոր բացահայտված 51 արձանագրությունների և 19 արքայական հետախուզական նամակների թարգմանությունները ճիշտ կատարելու համար վերոհիշյալ 6 արձանագրությունների փաստերի հիման վրա մեզ մոտ անհրաժեշտաբար ծնունդ է առել լեզվական կայուն մի օրենք, որի մեջ հաշվի է առնվել վերոհիշյալ 6 արձանագրությունների «ուրարտ» («ուրաշտ») և «արմեն» («արմին») արմատները, թե դրանք ինչպիսի էթնիկական աշխարհի են պատկանում, ինչպիսի առանձնահատկություններ ունեն, որոնց շնորհիվ էլ բացահայտվում է այդ արձանագրությունների թարգմանությունը: Այդ «լեզվական կայուն օրենքի» շնորհիվ բացահայտվում է, որ բոլոր այն բառերը, որոնց հիմքում կան «ուրարտ» («ուրաշտ») սեմական ծագում ունեցող արմատները, այդ բոլոր բառերը թարգմանվում են հնդեվրոպական և հնդիրանական ծագում ունեցող Արմենիա (Արմինա), ուրարտներ (ուրաշտներ) բառերը:

Այդ «լեզվական կայուն օրենքը» տարածվում է նրանց լեզվի էթնիկական կառուցվածքի վրա, նրանց բառական արմատների կառուցվածքի վրա, որոնց շնորհիվ էլ կատարվում է Ուրարտու (Ուրաշտու), ուրարտներ (ուրաշտներ) բառերի և դրանց հետ կապված

նախադասությունների և նրանց հետ կապված ամբողջական տեքստերի թարգմանությունները:

Այս «լեզվական կայուն օրենքը» տարածվում է սեմական լեզուներով հիշատակված բոլոր այն արձանագրությունների և արքայական հետախուզական նամակների տեքստերի վրա, որոնցում հիշատակվել են Ուրարտու (Ուրաշտու) երկրների, ինչպես նաև նրանց ուրարտներ (ուրաշտներ) բնակիչների անունները :

Ասորեստանի թագավորները Ուրարտու (^{KUR}Urartu) երկրի և ուրարտներ (Urartia) բնակիչների մասին գրել են սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով բազմաթիվ արձանագրություններ, իսկ որոշ թագավորներ էլ այդ երկրների և նրանց բնակիչների մասին ասուրական հետախույզներից ստացել են արքայական հետախուզական նամակներ, որոնց ժամանակագրությունները որոշվում են այն թագավորների ժամանակագրություններով, որոնց ուղարկվել են այդ նամակները: Այդ բոլոր արմատական սկզբնաղբյուրների նկատմամբ մենք կիրառել ենք մեր կողմից հայտնաբերված «լեզվական կայուն օրենքը», այսինքն՝ կիրառել ենք մեր կողմից հայտնաբերված վերոհիշյալ 6 արձանագրությունների թարգմանության տվյալները՝ կապված սեմական ծագում ունեցող ասուրերեն և եբրայերեն լեզուներով հիշատակված Ուրարտու երկիր և ուրարտներ բնակիչներ, ինչպես նաև սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով հիշատակված Ուրաշտու երկիր և ուրաշտներ բնակիչներ բառերը և թարգմանել ենք, այդ բառերը իրենց մեջ պարունակող Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի սեմական ծագում ունեցող Տուշխանի կամ Կարխի մոնոլիթ արձանագրությունում, սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով գրված Աստվածաշնչում, «Բեհիստունյան» և «Նակշի-ռուստամյան» արձանագրություններում սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով գրված տեղեկությունները, որոնք կազմում են սկզբնաղբյուրներ Ուրարտու կամ Արմենիա պետության ծագման մասին և դրանցում հիշատակված Ուրարտու, ուրարտներ, Ուրաշտու, ուրաշտներ բառերը թարգմանել ենք, Արմենիա (Արմինա) երկիր և արմեններ (արմիններ) բնակիչներ բառերը այնպես, ինչպես այդ բառերը թարգմանվել են վերոհիշյալ 6 արձանագրություններում հիշատակված սկզբնաղբյուրներում, այն է՝ հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդություններում, հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով Աստվածաշնչի թարգմանությունում, «Բեհիս-

տունյան» և «Նակչի-ռուստամյան» արձանագրությունների սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով թարգմանություններում կապված հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն և էլամերեն լեզուներով թարգմանությունների հետ: Փաստորեն Ուրարտու կամ Արմինա պետության ծագումը բացահայտելու գործում կարևոր սկզբնաղբյուրներ են դարձել մեր կողմից բոլորովին նոր բացահայտված սեմական ծագում ունեցող լեզուներով գրված սեպագիր արձանագրությունները և սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված արքայական հետախուզական նամակները և նրանց թարգմանությունները:

Բոլորովին նոր բացահայտված այդ արձանագրությունների և արքայական հետախուզական նամակների թիվը միասին հասնում է 48-ի, որոնցից 29-ը կազմել են արձանագրությունները, իսկ 19-ը կազմել են արքայական հետախուզական նամակները: Եթե բոլոր արքայական հետախուզական նամակները գրվել են սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով, ապա արձանագրություններից 25-ը գրվել են սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով, 2-ը գրվել են սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով, իսկ 1-ը գրվել է սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով: Այդ 29 արձանագրությունների և հետախուզական նամակների տեքստերը վերևում հիշատակված 6 արձանագրությունների տեքստերի հետ կազմում են 54 տեքստեր: Դրանք բոլորն էլ ծառայում են հատկապես Ուրարտու կամ Արմենիա պետության ծագման բացահայտման գործին:

Բայց մեր այս աշխատությունը շարադրելիս, որպեսզի ամեն մի արձանագրության տեքստը ամբողջովին չմեջբերվի և աշխատությունը չծանրաբեռնվի այդ տեքստերով, մենք ամեն մի տեքստից մի-մի դիպուկ մեջբերում ենք կատարել ու նրանում հիշատակված Ուրարտու (Ուրաշտու) երկրանունը և ուրարտներ (ուրաշտներ) բնակիչների անունները թարգմանել ենք Արմենիա (Արմինա) և արմեններ (արմիններ), ի ցույց բոլորին, որ այդպես պետք է հասկանալ այդ տեքստերում հիշատակված բոլոր Ուրարտու (Ուրաշտու) և ուրարտներ (ուրաշտներ) անունները:

I. Ասորեստանի թագավոր Աշշուրնաժիրապալ II-ին (833-859) է պատկանում հիշյալ 36 արձանագրություններից միայն մեկը: Այդ արձանագրությունում Աշշուրնաժիրապալ II-ը պատմում է, որ ինքը այն թագավորն է «որի ձեռքերը նվաճել են Սուբնաթ գետի

ակունքներից մինչև Ուրարտու տարածված երկրները»⁵⁴: Այդ արձանագրությունում սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով հիշատակված Ուրարտու երկրանունը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է «Արմենիա երկիր»:

II. Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ը (859-824) իր արձանագրություններից 7-ի մեջ հիշատակել է Ուրարտու երկրի և նրա ուրարտներ բնակիչների մասին: Այդ 7 արձանագրություններից միայն մեկի մասին ենք մենք հիշատակել վերոհիշյալ 6 հայտնի արձանագրություններում, իսկ մյուս 6 արձանագրությունների մասին մենք կխոսենք այստեղ:

1) Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ը սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված իր 2-րդ արձանագրությունում պատմում է. «Իմ թագավորության 3-րդ տարում, իմ վերադարձի ընթացքում ես անցա Ալզի երկրի լեռնանցքով, Ալզի երկիրը, Սուխնու երկիրը, Դայանի երկիրը, Թունե երկիրը, Արգաշքուն՝ արքայական քաղաքը Ուրարտու երկրի, Գիլգանի երկիրը և Խուբուշքիա երկիրը հնազանդեցի»⁵⁵: Այդ արձանագրության մեջ հիշատակված Ուրարտու երկիրը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա երկիր:

2) Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ը սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված 3-րդ արձանագրությունում պատմում է. «Ես նվաճեցի Սուգունիան՝ քաղաքը Արամե ուրարտացու»⁵⁶: Այդ արձանագրության մեջ հիշատակված ուրարտացի Արամեն կապակցությունը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է արմենացի Արամե:

3) Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ը սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրված իր 4-րդ արձանագրությունում պատմում է. «Յնազանդեցի Էնզի, Գիլգանու, Խուբուշքի, Ուրարտու երկրները»⁵⁷: Այդ արձանագրության մեջ հիշատակված Ուրարտու երկիրը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա երկիր:

4) Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ը սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով գրած իր 5-րդ արձանագրությունում

⁵⁴ АВИИУ, № 24.

⁵⁵ АВИИУ, № 28.

⁵⁶ АВИИУ, № 29.

⁵⁷ АВИИУ, № 30.

պատմում է. «Ես անցա Թունիբունի լեռնանցքով, Արամե ուրարտացու բնակավայրերը, որոնք գտնվում էին Եփրատի ակունքների մոտ, ավերեցի, քանդեցի և հրկիզեցի»⁵⁸: Այդ արձանագրության մեջ հիշատակված Ուրարտուի բնակավայրեր կապակցությունը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա երկրի բնակավայրեր:

5) Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ը սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր 6-րդ արձանագրությունում պատմում է. «Արգաշբու քաղաքը՝ Արամե ուրարտացու արքայական քաղաքը, ես ենթարկեցի իմ ոտքերին»⁵⁹: Այդ արձանագրության մեջ հիշատակված Արամե ուրարտացու երկիրը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենացի Արամե:

6) Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ը սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր 6-րդ արձանագրությունում պատմում է. «Էնգիտե լեռնանցքից ելա՝ Սուխմու երկիրը, Դայանեի երկիրը և Ուրարտու երկիրը իր ծայրամասերով ենթարկեցի ինձ»⁶⁰: Այդ արձանագրության մեջ հիշատակված Ուրարտու երկիրը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա երկիր:

III. Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար III-ը (745-727) սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր սեպագիր արձանագրություններից չորսում հիշատակել է Ուրարտու երկրի մասին:

1) Այդ արձանագրություններից առաջինում Թիգլաթպալասար III-ը պատմում է. «Իմ թագավորության երրորդ տարում Սարդուրի ուրարտացին զայրացավ իմ դեմ և համաձայնության մեջ մտավ Մատիելեմ Բիտ-Ագուսցու, Սուլունալ Մելիդացու, Թարխուլարա Գուրգումեցու և Կուշթաշպի Կումմուխեցու հետ՝ հույսը դնելով մեկը մյուսի վրա: Աշշուրի ուժով և հզորությամբ ես մարտնչեցի նրանց դեմ... կազմակերպեցի մեծ ջարդ... գերեցի իմ ձեռքով 72.952 մարդկանց իրենց ունեցվածքի հետ»⁶¹: Այդ տեքստում սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով հիշատակված

⁵⁸ АВИИУ, № 31.

⁵⁹ АВИИУ, № 32.

⁶⁰ АВИИУ, № 33.

⁶¹ АВИИУ, № 41 (59)

«ուրարտացի» բառը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է «արմենացի»:

2) Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար III-ը սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր երկրորդ արձանագրությունում պատմում է, որ «Ուրարտուի Անգամու և Բենզու ամրոցները և նրա Կալլամա գետը գրավեցի ու մտցրի Ասորեստանի կազմում, ավելացրի տուրտանի (զորահրամանատարի) տան փոխարքայության վրա»⁶²: Այդ արձանագրությունում հիշատակված Ուրարտու անունը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա երկիր:

3) Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար III-ը սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր երրորդ արձանագրությունում պատմում է, որ «Ուրարտուի ընդարձակ տարածքում 60 բերու ճանապարհ վերից վար հաղթաբար ես ընթացա և չհանդիպեցի որևէ դիմադրության»⁶³: Այդ արձանագրությունում հիշատակված Ուրարտու անունը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա երկիր:

4) Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար III-ը սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր չորրորդ արձանագրությունում պատմում է. «Էնգիտի, Ուրարտու երկրի և Արպադ քաղաքի մասին»⁶⁴: Այդ արձանագրությունում հիշատակված Ուրարտու երկիրը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա երկիր:

IV. Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը (722-705) սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր 4 արձանագրություններում և արքայական հետախուզական 17 նամակներում հիշատակում է Ուրարտու (^{KUR}Urartu) երկրանունը և նրա բնակիչներին տրվող ուրարտներ (urartāia) անունը, որոնք հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով թարգմանվում են Արմենիա երկիր և արմեններ րնակիչներ, որոնց միացյալ թիվը հասնում է 21-ի:

⁶² АВИИУ, № 42 (28).

⁶³ АВИИУ, № 43.

⁶⁴ АВИИУ, № 45.

1) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր առաջին տարեգրությունում պատմում է. «Սուբու, Բալա և Աբիտիկնա քաղաքների բնակիչները, որոնք դաշինքի մեջ էին մտել Ռուսա ուրարտացու հետ, ես նրանց վերաբնակեցրի ուրիշ երկրներ»⁶⁵: Այդ տարեգրությունում հիշատակված Ռուսա ուրարտացի անունը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Ռուսա արմենացի:

2) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր երկրորդ տարեգրությունում պատմում է. «Ես ավերեցի Ուրարտուն, թալանեցի Մուծածիրը»⁶⁶: Տարեգրության այդ հատվածում հիշատակված Ուրարտու երկրանունը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

3) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր 49-րդ արձանագրությունում պատմում է. «Անդիայի և Ջիկիրտուի վրա, որտեղ ուղղված էր իմ հայացքը, իմ արշավանքը դադարեցրի, դեպի Ուրարտու դարձրի իմ դեմքը»⁶⁷: Այդ արձանագրության մեջ հիշատակված Ուրարտու երկրանունը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

4) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր 5-րդ արձանագրությունում պատմում է. «Ես կազմակերպեցի Ուրսա ուրարտացու ջարդը դժվարամատչելի Ուաուշ լեռան վրա»⁶⁸: Այդ արձանագրության մեջ հիշատակված Ուրսա ուրարտացին վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Ուրսա արմենացի:

5) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր 6-րդ արձանագրությունում պատմում է. «Ավերված Ուրարտուն, կողոպտված Մուծածիրը, այդ ժամանակ, ինչպես Ուրսան՝ թագավորը Ուրարտուի, մեծ

սարսափի մեջ, իր զենքի օգնությամբ կտրեց իր կյանքը»⁶⁹: Այդ արձանագրության մեջ հիշատակված Ուրարտու երկրանունը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

6) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր 7-րդ արձանագրությունում պատմում է. «Ամնատչելի Ուաուշ լեռան վրա ես կազմակերպեցի Ուրսա ուրարտացու ջարդը և իմ ձեռքը վերցրի նրա արքայական ցեղի 250 մարդկանց»⁷⁰: Այդ արձանագրությունում հիշատակված Ուրսա ուրարտացին վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Ուրսա արմենացի:

7) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր 8-րդ արձանագրությունում պատմում է. «Ավերված Ուրարտուն, կողոպտված Մուծածիրը, վնասված Անդիա և Ջիկիրտու երկրները»⁷¹: Այդ արձանագրության մեջ հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի անվան հետ են կապվում ասսուրական արքայական հետախուզական 17 նամակները:

1) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված 1-ին նամակում նամակագիրը պատմում է. «Ուրարտուի թագավորը վախենում է թշնամանքից»⁷²: Այդ նամակում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

2) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված 2-րդ նամակում նամակագիրը պատմում է. «Կգա արդյո՞ք քեզ մոտ Ուրարտուի թագավորը»⁷³: Այդ նամակում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

⁶⁵ АВИИУ, № 46.

⁶⁶ АВИИУ, № 47.

⁶⁷ АВИИУ, № 49.

⁶⁸ АВИИУ, № 52.

⁶⁹ АВИИУ, № 53.

⁷⁰ АВИИУ, № 54.

⁷¹ АВИИУ, № 55.

⁷² АВИИУ, № 50 (1).

⁷³ АВИИУ, № 50 (2).

3) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված 3-րդ նամակում նամակագիրը պատմում է. «3000 հետևակները, հրամանատարները և պետերը, որ Ուրարտական մարզի կառավարիչ Սեթինուն ուղարկել էր ինձ մոտ, հանդես են եկել Մուսասիրում և անցել են Սև գետի վրայով»⁷⁴: Այդ նամակում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

4) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր 4-րդ նամակում նամակագիրը պատմում է. «Ուրարտուի 5 մարզակառավարիչները հանդես են եկել Ուեսի քաղաքում»⁷⁵: Այդ նամակում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

5) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված 5-րդ նամակում նամակագիրը պատմում է. «Ուրգանան գրել է ինձ հետևյալը՝ Ուրարտուն, որը... ինչպես եկել է հիմա... նրա զորքը ջարդված է Ուասի քաղաքի մարզակառավարիչը սպանված է»⁷⁶: Այդ նամակում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

6) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված 8-րդ նամակում նամակագիրը պատմում է. «Այդ Կիմերացին դուրս ելավ Մաննա երկրից և Ուրարտու մտավ»⁷⁷: Այդ նամակում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

7) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված 9-րդ նամակում նամակագիրը պատմում է. «Նիսանի ամսի սկզբին ուրարտացին դուրս ելավ Տուրուշպայից և գնաց էլիզադա քաղաքը: Կակադանուն՝ նրա զորահրամանատարը, գնաց Ուեսի:

Ուրարտուի ամբողջ զորքը պարտված է»⁷⁸: Այդ նամակում հիշատակված ուրարտացի և Ուրարտու բառերը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում են արմենացի և Արմենիա:

8) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված 10-րդ նամակում նամակագիրը պատմում է. «Ուրարտուի թագավորը ինչպես գնաց Գամիր երկիր, այնպես էլ նրա զորքը լրիվ ջարդվեց»⁷⁹: Այդ նամակում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

9) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված իր 11-րդ նամակում նամակագիրը պատմում է. «Գուրիանիա մարզը գտնվել է Ուրարտուի և Գամիրայի միջև: Նա հարկ էր տալիս ուրարտական թագավորին»⁸⁰: Այդ նամակում հիշատակված Ուրարտու և ուրարտական բառերը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում են Արմենիա և արմենական:

10) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված 16-րդ նամակում նամակագիրը պատմում է. «Իմ թագավորը ասել է, որ Ուրարտուի թագավորի մասին տեղեկությունը ինչ որ կլսես, անմիջապես հաղորդիր»⁸¹: Այդ նամակում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

11) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված իր 17-րդ նամակում նամակագիրը պատմում է. «Ուրարտուի թագավորի մասին տեղեկությունը այն է, որ Անդիա երկրի և Ջիկիրտու երկրի սուրհանդակները եղան Ուասի քաղաքում և խոսեցին նրա հետ»⁸²: Այդ նամակում հիշատակված Ուրարտուի թագավորը վերոհիշյալ

⁷⁴ АВИИУ, № 50 (3).

⁷⁵ АВИИУ, № 50 (4).

⁷⁶ АВИИУ, № 50 (5).

⁷⁷ АВИИУ, № 50 (8).

⁷⁸ АВИИУ, № 50 (9).

⁷⁹ АВИИУ, № 50 (10).

⁸⁰ АВИИУ, № 50 (11).

⁸¹ АВИИУ, № 50 (16).

⁸² АВИИУ, № 50 (17).

սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիայի թագավոր:

12) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված իր 22-րդ նամակում նամակագիրը պատմում է. «Այժմ ես Ուրարտուի դեսպանի մասին կհայտնեմ Մաննուկի-Աշշուրի թիկնապահի միջոցով»⁸³: Այդ նամակում հիշատակված Ուրարտուի դեսպան կապակցությունը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիայի դեսպան:

13) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված իր 24-րդ նամակում նամակագիրը պատմում է. «Ուրարտուի թագավորի առողջության կամ հիվանդության մասին»⁸⁴: Այդ նամակում հիշատակված Ուրարտուի թագավոր արտահայտությունը վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիայի թագավոր:

14) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված 25-րդ նամակում նամակագիրը պատմում է. «Ինձ հասավ Աշշուրիսուլայի նամակը, որի մեջ գրված էր հետևյալը՝ ուկկիեցիների սուրհանդակը գնաց Ուրարտու»⁸⁵: Այդ նամակում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

15) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված 26-րդ նամակում նամակագիրը պատմում է. «Ուկկեցիների սուրհանդակը, որը գնացել էր Ուրարտու, վերադարձավ Ասորեստան»⁸⁶: Այդ նամակում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

16) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված 30-րդ նամակում հետևյալ տեղեկությունն է հայտնում նամակագիրը. «Արքային՝ իմ

տիրակալին հայտնի է, որ նրանք անջատված են Ուրարտուից»⁸⁷: Այդ նամակում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

17) Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված 41*-րդ նամակում հետևյալ տեղեկությունն է հայտնում նամակագիրը. «Միայն Ուրարտուի թագավորը...»⁸⁸: Այդ նամակում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

V. Ասորեստանի թագավոր Սինախերիբը (705-681) սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր արձանագրություններից մեկում հիշատակում է Ուրարտու անունը: Այդ արձանագրությունում Սինախերիբը պատմում է. «Իսկ այդ ջրերի զանգվածը ես դուրս բերեցի Թաս լեռան վրայով, որը Ուրարտուի սահմանի վրա գտնվող զառիթափ լեռն էր»⁸⁹: Այդ արձանագրությունում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

VI. Ասորեստանի թագավոր Ասարխադդոնը (680-669) սենական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր սեպագիր արձանագրություններից երկուսում և միակ նամակում հիշատակել է Ուրարտու երկրի մասին:

1) Այդ արձանագրություններից առաջինում Ասարխադդոնը պատմում է. «Ուրարտները, որոնք փախչում են Ուրարտուից դեպի Շուբրիա, Ռուսամ՝ թագավորը Ուրարտուի, գրում է նրան նրանց մասին, բայց նա չի լսում նրա հրամանը, չի համաձայնվում նրանց տեսնել, հանդուգն պատասխանում է նրան, պատասխանում է ատելությանը»⁹⁰: Այդ արձանագրությունում հիշատակված Ուրարտուն և ուրարտները վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում են Արմենիա և արմեններ:

2) Այդ արձանագրություններից երկրորդում Ասարխադդոնը պատմում է. «Ռուսամ՝ թագավորը Ուրարտուի,

⁸³ АВИИУ, № 50 (22).

⁸⁴ АВИИУ, № 50 (24).

⁸⁵ АВИИУ, № 50 (25).

⁸⁶ АВИИУ, № 50 (26).

⁸⁷ АВИИУ, № 50 (30).

⁸⁸ АВИИУ, № 50 (41*).

⁸⁹ АВИИУ, № 55.

⁹⁰ АВИИУ, № 67 (Л.).

որին անվանում են Յայա»⁹¹: Այդ արձանագրությունում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

1) Ասարխադդոնին հասցեագրված միակ նամակում, այդ նամակը ուղարկող նամակագիրը Ասարխադդոնին պատմում է. «Պահակային ծառայության վերաբերյալ պետք է ասել, որ այն հիմնականում հակադրված է Ուրարտուի ամրությանը»⁹²: Այդ նամակում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

VII. Ասորեստանի թագավոր Աշշուրբանապալը (668-633) սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած իր սեպագիր արձանագրություններից չորսում և իրեն հասցեագրված մի նամակում հիշատակվել են Ուրարտու երկրի և նրա ուրարտներ բնակիչների մասին:

1) Ասորեստանի թագավոր Աշշուրբանապալի սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրած հիշյալ չորս արձանագրություններից առաջինի մասին Աշշուրբանապալը պատմում է. «Իշթարդուրին՝ թագավորը Ուրարտուի, որի նախնիները, որոնք թագավոր են եղել, իմ թագավոր նախնիներին միշտ գրել են «եղբայր», իսկ այժմ Իշթարդուրին, ինչպես որդին է հորը ասում «տիրակալ», այնպես էլ նա ինձ գրում է՝ «թագավորին՝ իմ տիրակալին»⁹³: Այդ արձանագրությունում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

2) Այդ արձանագրություններից երկրորդի մասին Աշշուրբանապալը պատմում է. «Ուրարտուի մարզի կառավարիչ Անդարիան, որը ցած էր իջել գիշերվա կեսին և գրավել Քուլլիմների երկիրը, բայց Քուլլիմներին բնակեցված բնակիչները՝ ստրուկները, որոնք հնազանդ էին ինձ, գիշեր ժամանակ կազմակերպել էին մեծ ջարդ, ոչ մեկի բաց չէին թողել, իսկ Անդարիայի գլուխն էլ կտրել և ուղարկել էին ինձ Նինվեյում»⁹⁴: Այդ արձանագրությունում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ

⁹¹ АВИИУ, № 68 (а).
⁹² АВИИУ, № 69.
⁹³ АВИИУ, № 72 (X, 40-50).
⁹⁴ АВИИУ, № 73.

սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

3) Այդ արձանագրություններից երրորդի մասին Աշշուրբանապալը պատմում է. «Ես՝ Աշշուրբանապալս, թագավոր Ասորեստանի, Ուրսան՝ թագավորը Ուրարտուի, ուղարկեց դեսպաններ հարցնելու իմ հաջողությունների մասին»⁹⁵: Այդ արձանագրությունում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

4) Այդ արձանագրություններից չորրորդի մասին Աշշուրբանապալը պատմում է. «Այդպես են նաև ուրարտները՝ լեռնացիները հպարտ»⁹⁶: Այդ արձանագրությունում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

5) Սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված սեպագիր նամակը, որը Աշշուրբանապալի կողմից ուղարկվել է Ուրարտուի թագավոր Սարդուրի III-ին, հետևյալի մասին է պատմում. «Ասորեստանի թագավոր Աշշուրբանապալի նամակը Ուրարտուի թագավորին, նրա որդուն: Ամբողջ Ասորեստանը բարեհաջող է. քեզ, քո պալատին և քո երկրին թող լինի խաղաղություն: Այն ժամանակից, երբ աստվածը արքայական իշխանություն է տվել քեզ... դու որոնում ես ընկեր...այնպես որ ես ուրախ եմ...»⁹⁷: Այդ նամակում հիշատակված Ուրարտուն վերոհիշյալ սկզբնաղբյուրների տվյալների համաձայն թարգմանվում է Արմենիա:

Այժմ մենք կխոսենք վերջին 4 արձանագրությունների մասին:

1) Առաջին արձանագրությունը⁹⁸, պատկանում է Ռուսա I-ին (735-713): Այդ արձանագրությունը գրվել է 2 լեզվով՝ բիաիներեն լեզվով և ասսուրերեն լեզվով: Ընդ որում, դրանցից առաջինում Ռուսա I-ը, Իշպուլինի օրինակով, իր երկիրը կոչում է ոչ թե Ուրարտու, այլ Բիաինիլի անունով, որի հիմքում ընկած է նաիրյան ծագում ունեցող «Բիանի»⁹⁹ երկրանունը, որը համապատասխանում է հետագա Կարսի

⁹⁵ АВИИУ, № 76.
⁹⁶ АВИИУ, № 77.
⁹⁷ АВИИУ, № 79.
⁹⁸ УКН, № 264.
⁹⁹ УКН, № 127, I(8).

մարզում գտնվող Վանանդ¹⁰⁰ գավառի անվանը, որի «անդ» բառամասը անջատելուց հետո մնում է «վան» արմատը: Ի տարբերություն դրա Ռուսա I-ը Ուրարտու երկրանունը հիշատակել է իր այդ արձանագրության ասուրերեն տարբերակում՝ Բիաինիլի երկրանվան փոխարեն: Դրա պատճառը այն է, որ Բիաինիլի երկրանունը սկսած Իշպուինիի ժամանակից դիտվել է որպես արքայական դինաստիայի անուն, որը անհայտ է եղել ասորեստանցիներին և նրանց լեզվին, դրա փոխարեն ասորեստանցիներին հայտնի է եղել Ուրարտու անունը՝ որպես միջազգային ճանաչում ունեցող երկրանուն: Անշուշտ սա է պատճառը, որ Ռուսա I-ը իր պետությունը հիշատակել է 2 անուններով՝ սեփական լեզվով արձանագրությունում հիշատակել է սեփական արքայական դինաստիայի անունը, իսկ ասուրերեն լեզվով հիշատակել է միջազգային ճանաչում ունեցող Ուրարտու երկրանունը:

Ռուսա I-ի այդ երկլեզվյան արձանագրության Բիաինիլի երկրանվան ստուգաբանության շնորհիվ բացահայտվում է, որ այդ երկրանվան հիմքում ընկած է «վան» արմատը: Ինչ վերաբերում է այդ արձանագրության Ուրարտու երկրանվան ստուգաբանությանը, ապա հույները նրա 'RRJ բաղաձայնական արմատի ամեն մի բաղաձայնից առաջ մեխանիկորեն ավելացրել են իրենց այբուբենի A տառը և ստացել են Ararat «Արարատ» բառը և այն թողել են առանց թարգմանության, որը սխալ է, քանի որ Ararat «Արարատ» երկրանվան հիմքում պահպանվել է Urartu «Ուրարտու» երկրանունը իր 'RRJ բաղաձայնական արմատով: Ի տարբերություն հույների լատինացիները տարբեր էթնիկական ծագում ունեցող լեզուներով որևէ երկրի անունը տարբեր էթնիկական ծագում ունեցող լեզուներով թարգմանելիս հաշվի են առնվել նրանց տարբերությունները, առանձնահատկությունները: Այդպես էլ սեմական ծագում ունեցող լեզուներով հիշատակված Urartu «Ուրարտու» երկրանունը հնդեվրոպական էթնիկական ծագում ունեցող լեզուներով լատինացիները թարգմանել են Արմենիա, որը ճիշտ է, քանի որ Urartu «Ուրարտու» երկրանունը իր ձևով չի պահպանվել Արմենիա երկրանվան մեջ: Այդպես էլ թարգմանվել են նրանց բնակիչներին տրված արմեններ անունը: Սեմական ծագում ունեցող լեզուներով այդ երկրի բնակիչները կոչվել են ուրարտներ «ուրաշտներ», իսկ հնդեվրոպական և հնդիրանական ծագում ունեցող լեզուներով կոչվել

են արմեններ (արմիններ): Այս ամբողջ առանձնահատկությունները ընկած են նաև մեր կողմց հայտնաբերված «լեզվական կայուն օրենքի» հիմքում: Որևէ երկրանունը թարգմանելիս հաշվի է առնվել այդ լեզվի էթնիկական ծագման տարբերությունները, առանձնահատկությունները այն լեզվի նկատմամբ, որից թարգմանվում է տվյալ երկրանունը:

8) Երկրորդ արձանագրությունը վերաբերում է 612-609 թվականներին Բաբելոնի թագավոր Նաբուապալուսուրի և Մեդիայի (Մարաստանի) թագավոր Ումաքիշթարի կամ Կիակսարի միացյալ զորքերի հարձակման Ասորեստանի վրա և մ.թ.ա. 609 թվականին նրա պետության տապալմանը: Այդ մասին տեղեկություն են պահպանել սեմական ծագում ունեցող Բաբելոներեն սեպագիր ժամանակագրությունները¹⁰¹: Այդ ժամանակագրություններում Բաբելոնացիները հիշատակել են նաև Uraštu «Ուրաշտու» երկրի անունը¹⁰²:

Յետազոտողներից ոմանք այն կարծիքն են հայտնել, թե Բաբելոնի և Մեդիայի զորքերը այդ արշավանքի ժամանակ ներխուժել են նաև Ուրաշտու երկիրը, տապալել նրա պետությունը, որի պատճառով էլ հիշատակվել է նրա անունը: Սակայն մի շարք փաստերը ցույց են տալիս, որ Բաբելոնի և Մեդիայի զորքերը այդ ժամանակ չեն ներխուժել Ուրաշտու և նրա պետությունը այդ արշավանքից հետո մնացել է կանգուն: 1) Այդ փաստերից առաջինը այն է, որ ըստ Աստվածաշնչի տվյալների, մ.թ.ա. 594 թվականին, այսինքն՝ վերոհիշյալ արշավանքից հետո Ուրաշտուի պետությունը կանգուն էր ու հզոր, որի օգնությանն է դիմում Երեմիա մարգարեն, որ նա միանա Մանայի, Մեդիայի (Մարաստանի) Սկութիայի թագավորություններին և միացյալ ուժերով տապալեն Բաբելոնը: 2) Այդ փաստերից երկրորդը այն է, որ ըստ հայկական ժողովրդական ավանդությունների, վերոհիշյալ արշավանքից հետո Մեդիայի (Մարաստանի) թագավոր Կիակարը Ուրաշտուի թագավոր Սարգուրի IV-ին կամ Պարույրին իրեն այդ արշավանքի ժամանակ դաշնակցելու համար բարեկամության թագ է ուղարկում, այսինքն՝ ճանաչում է նրա թագավորությունը, նրա պետությունը¹⁰³, որը գոյություն ուներ այդ արշավանքից առաջ:

¹⁰¹ АВИИУ, № 81.

¹⁰² АВИИУ, № 81, прим.23.

¹⁰³ Խորենացի, Հայոց պատմություն, I, ԻԱ, էջ 120-121:

9) Եթե սեպագիր բաբելոներեն ժամանակագրությունում երկիրը կոչվել է սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով *Uraštu* «Ուրաշտու» գրելաձևով, ապա հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն լեզվով գրված Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունում թարգմանվել է Արմենիա (հմմտ. Արմինա) ձևով, այսինքն՝ պահպանվել է թարգմանության վերոհիշյալ ճիշտ ձևը:

10) Երրորդ արձանագրությունը պատկանում է Շամեշ-բարաբուլին, որը Աքեմենյան պետության կողմից մ.թ.ա. 415 թվականին նշանակված է եղել կառավարիչ (*šaknu*) *Uraštu* «Ուրաշտու» երկրի վրա և Մելիդու երկրի վրա, իսկ նրա արձանագրությունը գրվել է սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով¹⁰⁴:

Հետազոտողներից Ի.Ս. Դյակոնովը¹⁰⁵ այն կարծիքն է հայտնել, թե Մելիդու երկրում ապրել են արմենները, իսկ Մելիդուն եղել է արմենների երկիրը:

11) Հակառակ Ի.Ս. Դյակոնովի այդ տեսակետի, մեր կողմից հայտնաբերված «լեզվական կայուն օրենքը», ինչպես նկատեցինք վերևի շարադրանքում ցույց է տալիս, որ սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով հիշատակված Ուրաշտու երկիրը և նրա ուրաշտներ բնակիչները հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն լեզվով թարգմանվում են Արմենիա երկիր և արմիններ բնակիչներ, որոնց համապատասխանում են հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն լեզվով հիշատակված Արմենիա երկիր և արմեններ բնակիչներ: Հետևաբար արմիններ բնակիչները ապրել են Ուրաշտու կամ Արմինա երկրին համապատասխանող Արմենիա երկրում, այլ ոչ թե Մելիդու երկրում, որտեղ ըստ սեպագիր արձանագրությունների տվյալների ապրել են լուվիացիները, որոնք տարբերվել են արմիններ կամ արմեններ բնակիչներից: Հետևաբար Ի.Ս. Դյակոնովի տեսակետը արմենների մասին, թե նրանք ապրել են Մելիդու երկրում, սխալ է: «Լեզվական կայուն օրենքի» փաստերը ցույց են տալիս, որ Ուրաշտու կամ Արմինա երկրի բնակիչներն են եղել ուրաշտները (հմմտ. ուրարտները) կամ արմինները (հմմտ. արմենները), այլ ոչ թե Մելիդու երկրի լուվիացի բնակիչները:

12) Չորրորդ արձանագրությունը վերաբերում է մ.թ.ա. III-II դարերում գրված Կոււրանյան ձեռագրերի մեջ տեղ գտած *HWRRT* տերմինին¹⁰⁶: Այնտեղ տեղ գտած *HWRRT* տերմինը, որը հիշեցնում է Աստվածաշնչում տեղ գտած եբրայերեն լեզվով հիշատակված 'RRJ բաղաձայնական արմատը և համաշխարհային ջրհեղեղի հետ կապված ավանդությունը, որտեղ Նոյ նահապետի տապանը հանգրվան է գտել Ուրարտու կամ Արմենիա երկրի լեռների վրա, և մարդկային ցեղը փրկվել է ջրհեղեղի կործանումից:

Թեև Կոււրանյան ձեռագրերում բացակայում է «լեռներ» բառը, ինչպես նաև Նոյ նահապետի տապանի մասին պատմող ամբողջ հատվածը, բայց հաշվի առնելով, որ *HWRRT* բաղաձայնական արմատը հիշեցնում է Աստվածաշնչում տեղ գտած սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով գրված *Urartu* «Ուրարտու» երկիրը, որի լեռների վրա համաշխարհային ջրհեղեղի ժամանակ հանգրվան է գտել Նոյ նահապետի տապանը, և մարդկային ցեղը փրկվել է ջրհեղեղի կործանումից, ուստի այդ *HWRRT* տերմինը համադրվում է Աստվածաշնչի ավանդության 'RRJ բաղաձայնական արմատին, որի շուրջ Աստվածաշնչում ստեղծվել է համաշխարհային ջրհեղեղի ավանդությունը:

Կոււրանյան ձեռագրերում հիշատակված *HWRRT* բաղաձայնական արմատն էլ իրենից ներկայացնում է *Urartu* «Ուրարտու» երկրանվան 'RRJ բաղաձայնական արմատը, որը հույների կողմից դիտվել է որպես *Urartu* երկրանվան բաղաձայնական արմատ, որի ամեն մի բաղաձայնից առաջ դրվել է հունարեն լեզվի այբուբենի «A» տառը, ստացվել է *Ararat* «Արարատ» բառը, որը չեն թարգմանել հույները, իսկ լատինացիները Աստվածաշնչում հիշատակված այդ 'RRJ բաղաձայնական արմատը ընթերցել են *Urartu* «Ուրարտու», որը հնդեվրոպական ծագում ունեցող լեզուներով թարգմանել են *Armenia* «Արմենիա», որը տեղ է գտել մեր հայտնագործած «լեզվական կայուն օրենքում»:

Ուստի կարող ենք վստահաբար ասել, որ Կոււրանյան ձեռագրերում հիշատակվել է Արմենիա երկիրը, որի լեռների վրա համաշխարհային ջրհեղեղի ժամանակ հանգրվան է գտել Նոյ նահապետի տապանը, և մարդկային ցեղը փրկվել է ջրհեղեղի կործանումից:

¹⁰⁴ E. Unger, *Urartu* («Reallexicon der Vergeschichte», XIV, 1928), S.32.

¹⁰⁵ И.М.Дьяконов, *Предыстория армянского народа*, Ереван, 1968, с. 180-188.

¹⁰⁶ Б.Б. Пиотровский, *Ванское царство* (Урарту), с. 33.

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ, ՆՐԱ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ԳԻՐԸ

Գիրը, որպես մշակութային երևույթ, գծերով ստեղծված պատկերների, պայմանական նշանների, տառերի համակարգ է՝ իր մեջ պարունակվող գաղափարով, հասկացությունով¹: Գիրը հայկական լեռնաշխարհում ունեցել է իր զարգացման 4 փուլերը՝

1. պատկերագրության փուլը,
2. գաղափարագրության փուլը,
3. վանկագրության փուլը,
4. հնչյունագրության փուլը,

1. Առաջին փուլում, երբ մարդը ցանկացել է գրել, ոչ մազադաթ է եղել և ոչ էլ թուղթ: Նա գրել է ժայռերի, քարերի վրա: Ժայռերի, քարերի վրա գծերի օգնությամբ նկարել է կենդանիներին, հատկապես քարայծերին, որոնք մեծ թիվ են կազմել նրանց մեջ: Դրա պատճառով էլ այդ պատկերագրերը անցյալում կոչել են այծագրեր: Բայց քանի որ նրանց մեջ կային նաև ձիեր, վագրեր, ինչպես նաև նրանց վրա հսկող մարդիկ, այդ պատճառով էլ այդ գծապատկերները կամ գծանկարները այժմ կոչվում են պատկերագրեր կամ ժայռագրեր: Հայկական լեռնաշխարհում այդպիսի պատկերագրեր կամ ժայռագրեր են տարածված Գեղամա լեռներում գտնվող Սպիտակասարի, Գեղամաղանի կամ Աղմաղանի, ինչպես նաև Արագած լեռան, Վարդենիսի, Վայոց Ձորի և Սյունիքի լեռների շուրջը տարածված ժայռերին ու քարերին: Նման գծապատկերները կամ գծանկարները տարածված են նաև ուրիշ երկրներում (Ասորիք, Պաղեստին, Իրաք և այլն), որոնք նույնպես ունեն շատ հին անցյալ:

2. Հայկական լեռնաշխարհում գրի զարգացման երկրորդ փուլը վերաբերում է գաղափարագրությանը կամ հիերոգլիֆիկ գրությանը, երբ մարդը կենդանիների և մարդկանց ամբողջական պատկերները նկարելու փոխարեն վերցրել է պատկերագրերը նկարելու ընթացքում օգտագործված մեծ գծերը, դրանք փոքրացրել է, այդ փոքր գծերը միավորելով ստացել է շրջագծեր, որոնց ներսում ավելացրել է այդ փոքր գծերից, նրանց կողքին, որպես պայմանական նշաններ ավելացրել է փոքր կետեր և ստացել է տարբեր պատկերներ, հիերոգլիֆներ: Այդ գաղափարագրերը կամ հիերոգլիֆիկ գրերը տարբեր տեսքով հիմա էլ պահպանվել են եգիպտացիների, չինացիների, ճապոնացիների ու այլ ժողովուրդների գրության սիստեմներում: Այդպիսի գաղափարագրեր կամ հիերոգլիֆիկ գրեր պահպանվել են նաև Հայկական լեռնաշխարհում, որոնցով գրվել են հիերոգլիֆիկ արձանագրություններ, կոչվում են «ուրարտական կամ արմենական (հայկական) հիերոգլիֆիկ արձանագրություններ²»:

3. Հայկական լեռնաշխարհում գրի զարգացման երրորդ փուլը վերաբերում է սեպածև գրությանը, երբ մարդը հիերոգլիֆիկ գրերից վերցրել է փոքր ուղղահայաց և հորիզոնական գծերը, դրանք իրար միացնելով ստացել է սեպագիր պատկեր, սեպագիր գիր, ապա դրանք տարբեր դիրքով միացրել է իրար, ստացել է վանկագիր սեպագիր, դրանք իրար կցելով գրել է բառեր, նախադասություններ, ծավալուն արձանագրություններ, տարբերություններ:

Սեպագիր վանկագրությունը քաղաքական ասպարեզ է եկել մ.թ.ա. III հազարամյակում և հասել է մինչև մ.թ.ա. I հազարամյակի կեսը (մ.թ.ա. 338-301 թվականները): Այդ գրության հիմքը դրել են շումերները: Հետագայում այն տարածվեց սեմական ծագում ունեցող ասորեստանցիների, բաբելոնացիների, խուրիական ծագում ունեցող միտանացիների, հնդեվրոպական ծագում ունեցող խեթերի, Ուրարտու կամ Արմենիա պետության նոր արքայական դինաստիայի՝ հնդեվրոպական ծագում ունեցող նաիրյան ցեղերից բիաինացիների, հնդիրանական ծագում ունեցող էլամցիների ու պարսիկների մոտ:

4. Հայկական լեռնաշխարհում գրի զարգացման չորրորդ փուլը առնչվում է հնչյունական գրության հետ, որը սկիզբ է առել մ.թ.ա. I հազարամյակի կեսից (մոտավորապես մ.թ.ա. 338-301 թվականներից), երբ ավարտվել է սեպագիր վանկագրությունը, և նրա փոխարեն

² Գ.Ն. Սարգսյան, Հայերեն լեզվով հիերոգլիֆիկ արձանագրություններ ուրարտական դարաշրջանում, Էջմիածին, 2004, №2, էջ 46-52:

¹ Չ.Լոուկոտկա, Գրի զարգացումը, Երևան, 1955; Д. Дирингер, Алфавит, М., 1963:

քաղաքական ասպարեզ է եկել հնչյունագրությունը, երբ ցանկացած լեզվի ամեն մի հնչյունի համար կարող էին ստեղծվել գրեր, որոնցով կարող էին գրվել ու կարդացվել տեքստերը: Առաջին հնչյունագիր գրությամբ է գրվել փյունիկերենը, որից հետո հնչյունագիր են դարձել հունարենը, ապա՝ իտալերենը, լատիներենը, իսկ 405 թվականից հնչյունագիր այբուբեն է ստեղծվել հնդեվրոպական ծագում ունեցող ուրարտերեն կամ արմեներեն (հայերեն) լեզվի համար հանճարեղ Մեսրոպ Մաշտոցի ջանքերով:

§ 2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրականություն բառի հիմքում ընկած է գիր արմատը: Սա նշանակում է, որ գրականությունը այն ժամանակ է գրվել, երբ քաղաքական ասպարեզ է եկել գիրը:

1) Նախորդ շարադրանքից մեզ պարզ դարձավ, որ պատկերագրերի փուլում գծանկարներ են արվել, որոնք արձանագրությունների չեն վերածվել: Բայց այդ ժամանակ Չայկական լեռնաշխարհում առաջ են եկել ժողովրդի կողմից հյուսված բանավոր գրույցները, որոնք պատմել են կյանքի կարևոր երևույթների, մասնավորապես տարբեր էթնիկական ծագում ունեցող ցեղերի միջև մղվող կռիվների մասին՝ հանուն իրենց անկախության և իրենց տարածքների: Այդ ժամանակաշրջանին է վերաբերվել Չայկի և Բելի առասպելը, որը հայկական ժողովրդական բանավոր գրույցներով նետի նման ճեղքել է ժամանակի վարագույրը ու հասել մեզ: Անշուշտ այդ ժամանակ է հյուսվել Չայկի սերնդի բազմացումը և տարածվելը Չայկական լեռնաշխարհում, որը հասել է Մովսես Խորենացուն: Այդ ժամանակի հետ են կապված Չայկի սերնդին պատկանող գավառներին, ամրոցներին, քաղաքներին, բնակավայրերին ու նրանց արանքում ձգվող գետերին ու լճերին տրվող անունները: Յենց դրանք էլ հետագայում դիտվել են Չայկական լեռնաշխարհում բանավոր ձևով հյուսված գրականության մի մասը:

2) Գաղափարագրությունը թեև Չայկական լեռնաշխարհում լայն տարածում չի գտել, բայց, այնուամենայնիվ, այնտեղ տարածված գաղափարագիր (հիերոգլիֆիկ) որոշ արձանագրություններում աչքի

են զարնել հայերեն լեզվով բառերը³, որոնք հաստատում են, թե գրության այդ փուլում ակտիվ գործողության մեջ է դրվել հայերեն լեզուն: Դրա գլխավոր պատճառը այն էր, որ գաղափարագրության մեջ հաշվի չի առնվել, թե տվյալ լեզուն հնչյունների ինչպիսի այբուբեն կամ կաղապար է ունեցել՝ մեծ թե փոքր: Գրության այդ փուլում ավելի են հղկվել, կատարելագործվել վերոհիշյալ հայկական ժողովրդական բանավոր գրույցները, որոնք ձևավորվել են պատկերագրության փուլում: Այդպիսի գրույցներից են ետջրհեղեղյան ժամանակաշրջանում (Բաբելոնյան աշտարակաշինության առաջացումը, հայ ժողովրդի էպոսին Չայկի և նրա սերնդի ակտիվանալը) Չայկական լեռնաշխարհում սեմական ծագում ունեցող Բաբելոնի թագավոր Բելի և հնդեվրոպական ծագում ունեցող Չայկ նահապետի կռիվը, Չայկի հաղթանակը Բելի նկատմամբ, (Չայկական լեռնաշխարհում) Չայկի սերնդի բազմացումը և տարածվելը այնտեղ, Չայկի սերնդի նշանավոր մարդկանց՝ Արամանյակի, Արամայիսի, Շարայի, Ամասիայի, Գեղամի, Չարմայի, Արամի սերնդի բազմացումը Արարատի երկրում, այսինքն՝ Ուրարտուում կամ Արմենիայում (Չայաստանում):

3) Վանկագիր սեպագրության փուլում արդեն հաշվի է առնվել տվյալ լեզվի հնչյունների քանակը, որով կազմվել է այդ սեպագրության այբուբենը կամ կաղապարը: Այն կազմված է եղել 21 հնչյուններից (4 ձայնավոր՝ a,e,i,u և 17 բաղաձայն՝ b,d,g, h,l,m,n,p,q,s,š,ț,t,z հնչյուններից): Բնականաբար 36 հնչյուններ ունեցող ուրարտերեն կամ արմեներեն (հայերեն) լեզուն ի վիճակի չի եղել օգտվել այդ այբուբենից կամ կաղապարից, որը 15 հնչյուններով ավել էր նրանից (շուրջ 2 անգամ ավելի շատ): Սակայն 21 հնչյուններից կազմված խեթերեն և ասուրերեն լեզուներով գրված արձանագրություններում տեղեկություններ են պահպանվել Չայկական լեռնաշխարհի բնակիչների, այն է՝ ուրարտների կամ արմենների (հայերի) մասին: Դրանք պատմում են Չայկական լեռնաշխարհում գտնվող ցեղամիությունների (Խաթե, Նաիրի), այդ ժողովրդի պետական կազմավորումների (Չայասա կամ Ազգի, Ուրարտու կամ Արմենիա, Դայանի, հետագայում՝ Տայք), քաղաքների և ամրոցների (Արգաշքու, Արամալի, Ջանգիունա, Սուգունիա),

³ Դ.Ն. Սարգսյան, Չայերեն լեզվով հիերոգլիֆիկ արձանագրություններ ուրարտական դարաշրջանում, Էջմիածին, 2004, N9, էջ 47-52:

Ուրարտու կամ Արմենիա պետության հիմնադիր թագավորներ Մատակինայի, Արամեի (բանավոր գրույցների Արամի) մասին:

Սակայն Արամեի (Արամի) մահից հետո, թեև պահպանվել է նրա պետության Ուրարտու կամ Արմենիա անունը միջազգային ասպարեզում, բայց անկում է ապրում նրա արքայական դինաստիան: Նրան փոխարինում է նոր արքայական դինաստիան: Արամեի (Արամի) հիմնադրած պետությունը մնում է նույնը: Այն միջազգային ասպարեզում՝ հատկապես Ասորեստանում մնում է նույնը և կոչվում է նույն անունով՝ Ուրարտու կամ Արմենիա, իսկ նրա արքայական դինաստիան, որը փոխվում է, կոչվում է Բիաինիլի, որը ունեցել է հնդեվրոպական էթնիկական աշխարհին պատկանող նաիրյան ծագում: Նոր արքայական դինաստիան հիմնադրում է Նաիրի-Բիաինական ծագում ունեցող Սարգուրի I-ը (832-822), որը օգտվել է այդ ժամանակ լայն տարածում գտած ասուրերեն վանկագիր սեպագրությանից:

Թեև Սարգուրի I-ը իր արձանագրությունները գրում է ասուրերեն լեզվով, բայց նրա որդին և նրան հաջորդող թագավոր Իշպուլինին, իր հայր Սարգուրի I-ի կողմից ընդօրինակված վանկագիր սեպագիր արձանագրություն է գրում իր ցեղի՝ Բիանի կամ Բիաինիի ցեղի լեզվով, որը նույնպես 21 հնչյուններից էր բաղկացած, և սկսում է իր լեզվով գրել սեպագիր արձանագրություններ: Եթե նրա հայր Սարգուրի I-ը ասուրերեն լեզվով գրած իր արձանագրություններում իր երկիրը կոչում է Նաիրի անունով, որը բխում է Հայկական լեռնաշխարհում, մասնավորապես Արածանի գետի հյուսիսային ավազանում մ.թ.ա. XIII դարում քաղաքական ասպարեզ եկած Նաիրի ցեղամիության անունից, ապա Իշպուլինին իր երկիրը կոչում է ոչ Ուրարտու կամ Արմենիա անունով, ոչ էլ Նաիրի անունով, այլ կոչում է Բիաինիլի անունով, որը բխում է Նաիրի ցեղամիության էթնիկական ու տարածքային հիմքի վրա մ.թ.ա. IX դարում նաիրի ցեղամիության էթնիկական ու տարածքային հիմքի վրա ձևավորված Դայանեի պետության կազմում մտած Բիանի երկրի անունից: Իշպուլինին հաջորդող թագավորները ընդունում են նրա տեսակետը և իրենց արքայական դինաստիան կոչում են Բիաինիլի անունով: Իշպուլինին հաջորդում են՝ Սենուան, Արգիշթի I-ը, Սարգուրի II-ը, Ռուսա I-ը, Արգիշթի II-ը, Ռուսա II-ը, Սարգուրի III-ը, Սարգուրի IV-ը: Նրանք բոլորն էլ Բիաինիլի լեզվով գրում են վանկագիր սեպագիր արձանագրություններ: Նրանցից Արգիշթի I-ը և Սարգուրի II-ը գրում է նաև տարեգրություններ:

Իշպուլինին և Ռուսա I-ը գրել են նաև մեկական երկլեզվյան (Բիաիներեն, ասուրերեն) արձանագրություններ: Այս փուլում՝ կապված որդիների կողմից Ասորեստանի թագավոր Մինախեթրիի (705-681) սպանության հետ, ինչպես նաև այդ հայրասպան որդիները Ուրարտու կամ Արմենիա երկրում ապաստան գտնելու հետ, որոնց հիմքի վրա ձևավորվում են հայկական ժողովրդական բանավոր գրույցներ՝ հայ ժողովրդի «Սասնա ծռեր» էպոսի ստեղծման շուրջ⁴:

Մ.թ.ա. 585 թվականին անկում է ապրում Բիաինա-նաիրյան արքայական դինաստիան, իսկ նրա պետությունը միջազգային ասպարեզում շարունակվում է նախկինի նման կոչվել Ուրարտու կամ Արմենիա անունով: Փաստորեն պետության գոյության այս փուլում նոր արքայական դինաստիա է առաջանում: Այդ նոր արքայական դինաստիան, որը ոչ թե նաիրյան ծագում ունեցող բիաինիլի ցեղի շարունակությունն էր, այլ երկրի առաջին Արամե թագավորի ստեղծած ուրարտներ կամ արմեններ ցեղի արքայական դինաստիայի վերականգնումն էր՝ շուրջ 217 տարվա ընդմիջումից հետո: Այդ նոր արքայական դինաստիան այդ ժամանակ կոչվում էր հռչակված թագավոր Երիմենայի անունով: Երիմենայի արքայական դինաստիայի թագավորներն էին Երիմենան, Ռուսա III-ը և Ռուսա IV-ը: Այդ նոր արքայական դինաստիայի թագավորները շարունակում են իրենց արձանագրությունները գրել նաիրյան ծագում ունեցող բիաիներեն լեզվով: Երիմենայի արքայական դինաստիան անկում է ապրել մ.թ.ա. 522 թվականին: Այդ ժամանակ անկում է ապրել նաև Ուրարտու կամ Արմենիա պետության անունը: Երկիրը կոչվում է միայն Արմենիա կամ Արմինա անունով:

Ուրարտու կամ Արմենիա պետության նաիրյան ծագում ունեցող Բիաինիլի արքայական դինաստիայի և ուրարտական կամ արմենական ծագում ունեցող նոր արքայական դինաստիայի թագավորները իրենց կառավարման ընթացքում գրել են շուրջ 500-ի հասնող վանկագիր սեպագիր արձանագրությունները, որոնք հսկայական արժեք ունեն համաշխարհային հին գրականության ոսկե ֆոնդում:

Վանկագիր սեպագրությունը ավարտվում է մ.թ.ա. I հազարամյակի երկրորդ կեսի վերջում, մոտավորապես Անտիոք I-ից(338-301) հետո: Դրանից հետո մարդկությունը անցնում է հնչյունագիր գրությանը, որի շնորհիվ յուրաքանչյուր լեզվի ամեն մի հնչյունի համար, ինչպես

⁴ Д.Н. Саркисян, Страна Шубриа, Ереван, 1989, с.67-69

ընդգծվեց վերևում, կարող էր ստեղծվել տառ: Առաջինը դրան անցնում են փյունիկացիները, հետո հույները, իտալացիները, լատինացիները: 405 թվականին հանճարեղ Մեսրոպ Մաշտոցի ջանքերով ստեղծվում են նաև 36 հնչյուններ ունեցող հայերեն լեզվի համար ևս 15 նոր տառեր, և սկսվում է հայերեն լեզվով գրությունը⁵:

Գրության այդ նոր սիստեմին անցնելուց հետո հայ ժողովուրդը մինչև հիմա իր լեզվով ստեղծել է հսկայական քանակությամբ մեծարժեք գրականություն, որը իր ուրույն տեղն է գրավում համաշխարհային նոր գրականության ոսկե ֆոնդում:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐՎԱԾ ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՅԱՐՑԸ

§ 1. ՎԱՆԿԱԳԻՐ ԵՎ ՅԵՉՅՈՒՆԱԳԻՐ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵՎԱՆ ԳԱԼԸ ՅԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՒԱՇԽԱՐՅՈՒՄ

Ուրարտու կամ Արմենիա պետությունում գործողության մեջ են դրվել երկու լեզուներ՝ պետության հիմնական բնակիչների՝ ուրարտների կամ արմենների բանավոր կամ խոսակցական լեզուն և երկրում նոր հանդես եկած նաիրյան ծագում ունեցող բիաինացիների գրավոր լեզուն: Այդ տարբերությունը առաջ է եկել նրանից, որ երկրի հիմնական բնակիչների՝ ուրարտների կամ արմենների լեզուն ունեցել է բարդ հնչյունական կառուցվածք՝ նրա հնչյունների թիվը հասել է 36-ի, որոնք գրվել են 39 տառով, իսկ նաիրյան ծագում ունեցող բիաինացիների լեզվի հնչյունների թիվը հասել է ընդհամենը 21-ի: Սկսած մ.թ.ա. III հազարամյակից հին արևելյան ժողովուրդներից շումերները, որոնց լեզուն ունեցել է պարզ հնչյունական կառուցվածք (այդ լեզվի հնչյունների թիվը հասել է ընդհամենը 21-ի), անցել են սեպագիր գրության: Նրանք ապրել են Եփրատի և Տիգրիսի ստորին ավազանում: Որոշ ժամանակ անց շումերներին հետևել են սեմական ծագում ունեցող ասորեստանցիները, բաբելոնացիները, խուրիական ծագում ունեցող միտանացիները, իսկ որոշ ժամանակ անց՝ հնդեվրոպական ծագում ունեցող խեթերը, հնդիրանական ծագում ունեցող էլամցիները, պարսիկները, որոնց լեզուները ունեցել են 21 հնչյուններ:

Ի տարբերություն դրանց, ուրարտները կամ արմենները իրենց լեզվի հնչյունական կազմի ճոխության, առատության պատճառով չէին կարող անցնել այդ լեզվով սեպագիր գրությանը (թեև լեզվի հնչյունների ճոխությունը, առատությունը խոսում է այդ լեզվի հզորության մասին): Նույնիսկ մ.թ.ա. I հազարամյակի սկզբին, երբ ուրարտները կամ արմենները ստեղծում են Արամե թագավորի գլխավորությամբ պետություն, որը կարող էր դիմակայել ասսուրական պետության մեկը մյուսին հաջորդող ժանր արշավանքներին, ավելի անհրաժեշտություն է դառնում այդ պետության համար գրի

⁵ Յ. Աճառյան, Չայոց գիրը, Երևան 1968:

ստեղծումը՝ պետության զանազան պահանջները բավարարելու համար: Իր ժողովրդի լեզվի հնչյունների առատության պատճառով Արամե թագավորը չի կարողացել սեփական լեզվով գրել սեպագիր արձանագրություններ: Գրության անցնելը տեղի ունեցավ Արամեի մահից հետո, երբ փոխվեց երկրի արքայական դինաստիան, բայց պահպանվեց երկրի պետությունը: Արամեի ուրարտական կամ արմենական արքայական դինաստիայի փոխարեն Ուրարտուում կամ Արմենիայում առաջացավ նոր արքայական դինաստիա Սարգուրի I-ի (832-822) գլխավորությամբ: Սարգուրի I-ը, թեկուզ թշնամական Ասորեստանի լեզվով, բայց, այնուամենայնիվ, Հայկական լեռնաշխարհի բնակիչների կողմից գրում է առաջին սեպագիր արձանագրությունները¹: Այդ արձանագրություններում Սարգուրի I-ը երկիրը կոչում է ոչ թե Ուրարտու կամ Արմենիա, այլ մ.թ.ա. XIII դարից Արածանի գետի հյուսիսային ավազանում քաղաքական ասպարեզ եկած Նաիրի ցեղամիության անունով: Սարգուրի I-ի որդին և նրան հաջորդող թագավոր Իշպուհինն առաջին անգամ գրում է իր ցեղի լեզվով, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի բնակիչների լեզվով սեպագիր արձանագրություններ², որոնց տվյալներից էլ պարզվում է, թե նրա նախահայրենիքն է եղել մ.թ.ա. XIII դարում քաղաքական ասպարեզ եկած Նաիրի ցեղամիության էթնիկական ու տարածքային հիմքի վրա մ.թ.ա. IX դարում 31 երկրներից կազմված և Արածանի հյուսիսային ավազանում տարածված Դայանի(հետագա Դիաուխի կամ Տայք) պետության կազմում մտնող Բիանի կամ Բիաինիլի երկիրն է, որը տեղադրվում է հետագա Կարսի մարզում տարածված Վանանդ մարզում (հմտ Բիանի կամ Բիաինիլի երկրանվան «Բիան» արմատը (հետագա Կարսի մարզում գտնվող Վանանդ գավառի անվան «վան» արմատի հետ), որոնց հիմքում ընկած են «Բիան» կամ «վան» արմատները, որոնք նույն են, նույն իմաստն ունեն, որոնցից առաջինը գրվել է նաիրյան ծագում ունեցող բիաիներեն լեզվով, իսկ երկրորդը՝ ուրարտերեն կամ արմեներեն(հայերեն) լեզվով): Իշպուհինն հաջորդող մյուս թագավորները իրենց արքայական դինաստիան կոչում են Բիանի կամ Բիաինիլի անունով: Բայց, ի տարբերություն դրա, միջազգային ասպարեզում՝ Ասորեստանում, Բաբելոնում, Էլամում, Պարսկաստանում պետությունը, երկիրը կոչվում է Ուրարտու

¹ ՄԿԽ, N 1-3, 319-325.

² ՄԿԽ, N 4-10, 11-18.

կամ Արմենիա անունով՝ որպես միջազգային անվանում: Այդպես է եղել նաև Ուրարտու կամ Արմենիա պետության անկումից շատ տարիներ հետո, երբ նոր վերելք ապրող այդ պետությունը իր արքայական դինաստիաների անունով կոչվել է Երվանդունի, Արտաշեսյան, Արշակունի, Բագրատունի անուններով, իսկ միջազգային ասպարեզում պետությունը, երկիրը կոչվում է Արմենիա անունով (Ուրարտու անունով չի կոչվում, որովհետև սեմական ցեղերի կողմից տրվող այդ անունը մ.թ.ա. 331-330 թվականներից սկսած, որպես արխայիկ երևույթ անկում է ապրել (այս մասին հանգամանալից կխոսվի հետագա շարադրանքում):

Թեև Իշպուհինից սկսած նաիրյան ծագում ունեցող բիաիներեն լեզվով կատարվել են հզորության աստիճանի հասած Ուրարտու կամ Արմենիա պետության բոլոր տեսակի հաշվումները, գրվել են երկրի կյանքի մասին շուրջ 500-ի հասնող սեպագիր արձանագրությունները, բայց այդ լեզուն չտարածվեց երկրի ամբողջ բնակչության մեջ, չդարձավ նրան հասկանալի լեզու: Ամբողջ ժողովրդի համար ընդհանուր լեզու կար և դա ուրարտների կամ արմենների բանավոր, խոսակցական լեզուն էր: Նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր լեզուն մնաց որպես արքունիքի լեզու: Այդ լեզվով բարձր ժայռերի, քարերի վրա գրված սեպագիր արձանագրությունները անհասկանալի մնացին երկրի բնակիչներին, հատկապես պետության հիմնական բնակիչներին՝ ուրարտներին կամ արմեններին:

Նաիրյան ծագում ունեցող բիաինական բնակիչներն էլ շատ քիչ էին Ուրարտու կամ Արմենիա պետության ամբողջ բնակչության կազմում: Վերջիններս, ընհակառակը, շփվելով Ուրարտու կամ Արմենիա երկրի հիմնական բնակիչների՝ ուրարտուների կամ արմենների հետ, սովորում էին նրանց լեզուն և ժամանակի ընթացքում ծուլվում նրանց: Փաստորեն նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր արձանագրությունների լեզուն չկարողացավ դառնալ համաժողովրդական լեզու: Հակառակ դրան, պետության հիմնական բնակիչների՝ ուրարտների կամ արմենների բանավոր, խոսակցական լեզուն հանդես գալով որպես երկրի ամբողջ բնակիչների խոսակցական լեզուն, դարձավ ոչ միայն համազգային, այլ համաժողովրդական լեզու:

Մ.թ.ա. 522 թվականին անկում է ապրում Ուրարու կամ Արմենիա պետությունը, և նրա երկիրը նվաճվում է Աքեմենյան Պարսկաստանի կողմից: Այդ ժամանակից դադարում են նաիրյան ծագում ունեցող

բիաինական սեպագիր արձանագրությունները Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Ուրարտու կամ Արմենիա երկրի տարածքում:

Մ.թ.ա. 331-330 թվականներին անկում է ապրում Աքեմենյան կայսրությունը: Ուրարտները կամ Արմենները ազատագրվում են պարսկական լծից և այդ ժամանակից էլ հիմնադրում են իրենց նոր պետությունը՝ Օրոնտեսի կամ Երվանդի գլխավորությամբ, որը ստեղծում է Երվանդունի արքայական դինաստիան: Աքեմենյան կայսրության գերիշխանության տակ գտնվելու ժամանակ ասպարեզից դուրս են մնացել սեմական լեզուներով արմեններին տրվող ուրարտներ, նրանց երկրին տրվող Ուրարտու անունները, և պահպանվել են միայն նրանց տրվող արմեններ(արմիններ) նրանց երկրին տրվող Արմենա(Արմինիա) անունները:

Մ.թ.ա. 331-330 թվականների անկախությունից հետո արմենների կողմից հիմնադրված նոր պետությանը միջազգային ասպարեզում տրվում է միայն Արմենիա անունը, երկրի բնակիչներին էլ տրվել է միայն արմեններ անունը, որոնցով կոչում էին հնդեվրոպական ժողովուրդները հնագույն ժամանակներից: Շուրջ երկու դար (մ.թ.ա. 522-331) Աքեմենյան կայսրության տակ մնալուց հետո իրենց վաղեմությունը կորցնելուց հետո ուրարտներ ժողովուրդ, Ուրարտու երկիր, Ուրարտու պետություն անունները անհրաժեշտություն չեղավ վերականգնել մ.թ.ա. 331-330 թվականներին, որոնք չէին հիշատակվում պարսկական պետության կողմից, նամանավանդ որ դրանից հետո էլ սեմական ժողովուրդները իշխող դիրք չունեին միջազգային ասպարեզում, և անհրաժեշտություն չկար վերականգնել և հիշատակել ուրարտներ ժողովուրդ, Ուրարտու երկիր, Ուրարտու պետություն անվանումները:

Երվանդունիներին հաջորդող Արտաշեսյան արքայական դինաստիայի ժամանակ, հատկապես Տիգրան II-ի (95-55) օրոք, երբ Արմենիան խիստ հզորացավ, բայց դեռ երկրում չէր ստեղծվել սեփական գրություն: Սեփական գրության առաջացումը տեղի ունեցավ Արշակունյան արքայական դինաստիայի ժամանակ, մասնավորապես Վռամշապուհ թագավորի օրոք(389-414), երբ հանձարեղ եպիսկոպոս (ուսուցիչ) Մեսրոպ Մաշտոցը պահանջ է ներկայացնում պետությանը, որ բավական է օտար լեզուներով և օտար տառերով մեր երեխաներին դպրոցներում սովորեցնենք գրել ու կարդալ, որի հետևանքով մեր ազգը մութացման վտանգի առաջ է

կանգնելու: Այդ մասին իմանում են երկրի թագավոր Վռամշապուհը և կաթողիկոս Սահակ Պարթևը (387-439): Արքա Վռամշապուհը հայտնում է, որ Ասորիքում (Սիրիայում) ապրող Դանիել անունով եպիսկոպոսի մոտ հայերեն գրեր կան: Արքայի հանձնարարությամբ Վահրիճ անունով մի իշխանի ուղղարկում են Դանիելին մերձակից Յաբել երեցի մոտ: Վերջինս Դանիելից վերցնում է գրերը և Վահրիճի հետ բերում Յայաստան: Բայց այդ նշանագրերը չեն բավարարում հայերեն լեզվի հնչյունական համակարգի պահանջները, վորովհետև հայերեն լեզվի հնչյունների թիվը 36-ն էր, իսկ վահրիճյան տառերի թիվը ընդհամենը 21-ն էր: Մեսրոպ Մաշտոցը մի խումբ աշակերտների հետ գնում է Եդեսիա, Սամոսատ, վերամշակում է նշանագրերի հնչյունական համակարգը և 15 նոր տառերով լրացված պատրաստի տառերով 405 թվականին վերադառնում է Յայաստանի մայրաքաղաք Վաղարշապատ, և սկսվում է դպրոցներում ուսուցանել հայերեն լեզուն՝ նրան համապատասխանող հայերեն այբուբենով, դրանից հետո սկսվում է Աստվածաշնչի և ուրիշ գրքերի թարգմանությունները ու սեփական լեզվով գրել գրքեր մինչև հիմա, որոնք մեծ տեղ են գրավում համաշխարհային նոր գրականության ոսկե ֆոնդում՝ իրենց բարձր արժեքով:

§ 2. ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ՝ ՈՒՐԱՐՏՆԵՐԻ ԿԱՍ ԱՐՄԵՆՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ, ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԵՎ ՆԱԻՐՅԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԲԻԱԻՆԱՑԻՆԵՐԻ ՍԵՊԱԳԻՐ ԳՐԱՎՈՐ ԼԵԶՎԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՐԱՄԵՐԺ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտողներից Գ.Ա.Ղափանցյանը³, Գ.Ա. Մելիքիշվիլին⁴ և Ի.Ս. Դյուկոնովը⁵ շփոթել են Ուրարտու կամ Արմենիա պետության լեզուն կամ այդ պետության հիմնական բնակիչների՝ ուրարտների կամ արմենների բանավոր, խոսակցական լեզուն և նաիրյան ծագում ունեցող բիաինացիների սեպագիր գրավոր լեզուն միմյանց հետ:

³ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 28, 41:

⁴ Г. А. Меликишвили, 1) Склонени (Эргативный падеж). 2) О родстве урартского языка с Хурритским (УКН, ц. 53-61; 89-92).

⁵ И.М. Дьяконов, Хуррито-урартский и восточно-кавказские языки (Древний восток, III, Ереван 1978) с. 25-38:

Նրանք հաշվի չեն առել, որ Ուրարտու կամ Արմենիա պետության տարածքում օգտագործվող սեպագիր գրավոր լեզուն ոչ թե ուրարտների կամ արմենների, այլ նաիրյան ծագում ունեցող բիաինացիների լեզուն է: Սակայն այդ հետազոտողները միմյանց հետ շփոթելով այդ ցեղերի լեզուները՝ շփոթել են նաև այդ ցեղերի պատմությունները:

Ըստ Գ.Ա. Ղափանցյանի կարծիքի, Ուրարտուն ծագել է Ուրուատրի ցեղամիությունից, հետևաբար Ուրարտուի լեզուն ցեղակից է Միջագետքում գտնվող Ուրուատրի ցեղամիության լեզվին, որը ուներ խուրրիական ծագում:

Այդ կարծիքը վերագրվել է ինչպես Ուրարտու կամ Արմենիա պետության բանավոր, խոսակցական լեզվին, որը ուներ հնդեվրոպական ծագում, այնպես էլ նաիրյան ծագում ունեցող, հնդկարոպական էթնիկական աշխարհին պատկանող բիաինացիների սեպագիր գրավոր լեզվին: Գ.Ա. Մելիքիշվիլին էլ այն կարծիքն է հայտնել, թե ինչպես խուրրիերեն լեզուն է ունեցել եռգատիվ կամ ակտիվ կառուցվածք, այնպես էլ քարթվիլա-վրացական լեզուներն են ունեցել եռգատի կամ ակտիվ կառուցվածք, որի դեպքում նախադասության մեջ բացակայում է հայցական հոլովը, ուղիղ խնդիրը դրվում է ուղղական հոլովով, իսկ ենթական դրվում է եռգատիվ հոլովով: Ուստի ըստ Գ.Ա. Մելիքիշվիլու կարծիքի, Ուրարտուի լեզուն էլ ունեցել է եռգատիվ կամ ակտիվ կառուցվածք: Դրանից էլ Գ.Ա. Մելիքիշվիլին հետևություն է կատարել, թե Ուրարտուի լեզուն և ուրարտներ բնակիչները ունեցել են քարթվիլա-վրացական ծագումը: Ի.Ս. Դյուկոնովն էլ այն կարծիքն է հայտնել, թե եռգատիվ կամ ակտիվ կառուցվածք ունեցող Ուրարտուի լեզվին ցեղակից են ինչպես խուրրի-միտանի ցեղերի, այնպես էլ նախա-դադստանյան և վայնախյան ցեղերի, որոնց լեզուները ունեն եռգատիվ կառուցվածք: Փաստորեն հետազոտողներից Գ.Ա. Մելիքիշվիլու կողմից եռգատիվ կառուցվածքի գաղափարը լույս աշխարհ բերելով շփոթ է առաջացրել Ուրարտու կամ Արմենիա պետության բանավոր, խոսակցական, լեզվի, նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվի Ուրուատրի ցեղամիության ոչ թե գրավոր, այլ բանավոր լեզվի, քարթվիլա-վրացական, վայնախյան, նախա-դադստանյան ցեղերի բանավոր լեզուների միջև:

Ճշմարտությունը պահանջում է բացահայտել ինչպես Ուրարտու կամ Արմենիա պետության հիմնական բնակիչների՝ ուրարտների կամ

արմենների բանավոր, խոսակցական լեզվի ու նաիրյան ծագում ունեցող բիաինացիների սեպագիր գրավոր լեզվի, ինչպես նաև այդ ցեղերի ճշգրիտ պատմությունը: Այս խառնիճաղանջ վիճակը կարելի է պարզել համեմատական լեզվաբանության միջոցով՝ միմյանց հետ համեմատելով նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվի, Ուրարտու կամ Արմենիա պետության հիմնական բնակիչների՝ ուրարտների կամ արմենների բանավոր, խոսակցական լեզվի, խուրիերեն լեզվի և քարթվիլա-վրացական լեզուների և մյուս ցեղերի լեզուների քերականական կառուցվածքի (հնչյունաբանություն, ձևաբանություն, շարահյուսություն) և բառապաշարի համեմատական տվյալները:

1) Նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվի հնչյունաբանական առանձնահատկությունները:

1) Նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվի⁶ «r» բաղաձայնով հասարակ բառ չի սկսվում, իսկ հատուկներից էլ հայտնի է երկրի թագավորներին տրվող Rusa «Ռուսա» անունը: Այս երևույթը հատուկ է նաև հնդեվրոպական ծագում ունեցող խեթերենին, ուրարտերենին կամ արմեներենին (հայերենին): Ի տարբերություն դրանց, քարթվիլա-վրացերեն լեզուներում «r»-ով սկսվող բառերի թիվը շատ է:

2) Նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվում «l» բաղաձայնով սկսվող բառերի թիվը շատ քիչ է: Դրանք ընդամենը 3-ն են՝ laragi «արտ», lutu «կին», laku-du «փլչել»: Ի տարբերություն դրա, խուրիերեն և քարթվիլա-վրացերեն լեզուներով «l» բաղաձայնով սկսվող բառերի թիվը շատ է:

3) Նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվի գրական ձևում բացակայում են շաղկապները: Այդպես են ուրարտերեն կամ արմեներեն լեզվի հարավային բարբառները (Մոքս, Շատախ և այլն): Ի տարբերություն դրա, խուրիերեն և քարթվիլա-վրացերեն լեզուներում շաղկապները բավարար են:

Եթե անփոփեմք հնչյունաբանության հետ կապված տվյալները, ապա կարող ենք ասել, որ հնչյունաբանական տեսակետից նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզուն ամենից շատ մոտ է կանգնած հնդեվրոպական ծագում ունեցող ուրարտերեն կամ արմեներեն (հայերեն) լեզվին:

⁶ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 23-24:

II) Նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվի ձևաբանական առանձնահատկությունները:

Ա) Հոլովման համակարգը- Նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվի հոլովումը ինքնուրույն է և կատարվում է վերջից մասնիկների կցումով: Այդ լեզուն ունեցել է 7 հոլով⁷: Ստորև բերվում են այդ հոլովների անունները և դրանց վերջավորությունները՝

- 1) ուղղական հոլով (եզակի թիվ-s, որը գրվում է ճ, հոգնակի թիվ-l),
- 2) սեռական հոլով (եզակի թիվ-i, հոգնակի թիվ-ue, ui),
- 3) տրական հոլով (եզակի թիվ-e, հոգնակի թիվ-eu),
- 4) հայցական հոլով (եզակի թիվ-n, հոգնակի թիվ-n),
- 5) բացառական/գործիական (եզակի թիվ-noi, հոգնակի թիվ-a),
- 6) ուղևորական հոլով (եզակի թիվ-ad(i), հոգնակի թիվ-ašte),
- 7) ներգոյական հոլով (եզակի թիվ-a, հոգնակի թիվ-aše):

Ակներև է, որ նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզուն չունի եռատիվ կամ ակտիվ լեզվի կատեգորիա: Դրա փոխարեն այն ունի հայցական հոլովի կատեգորիա, բացառական և գործիական հոլովները հանդես են գալիս միասին, բայց ունի ուղևորական հոլովի կատեգորիա: Նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվի ենթական կամ գործողություն կատարող առարկան (սուբյեկտը) դրվում է ուղղական հոլովով, իսկ անցողական սեռի բայերի գործողությունը իր վրա կրող առարկան (օբյեկտը) կամ ուղիղ խնդիրը դրվում է հայցական հոլովով: Հետևաբար նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվին օտար է եռատիվ կամ ակտիվ կառուցվածքը: Այդպես են եղել հնդեվրոպական լեզուները:

Հետևաբար հոլովման կատեգորիայի հարցում նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզուն ունեցել է հնդեվրոպական կառուցվածք: Ի տարբերություն դրա, խուրրիական և քարթվիլա-վրացական լեզուները ունեն եռատիվ կամ ակտիվ կառուցվածք և տարբերվում են ինչպես բիաինա-նաիրյան և նրանց ցեղակից հնդեվրոպական լեզուներից:

Նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվի հոլովների վերջավորությունների մեծ մասը ունեն հնդեվրոպական ծագում⁸: Դրանք են՝

1) ուղղական հոլովի s(š) վերջավորությունը,

2) սեռական հոլովի «i» վերջավորությունը (հմետ հնդեվրոպական ծագում ունեցող ուրարտերեն կամ հայերեն լեզվի սեռական հոլովի «ի» վերջավորությունը),

3) կոնկրետ հայցական հոլովի «n» վերջավորությունը:

Բ) Խոնարհման համակարգը⁹, - Նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվի խոնարհումը ինքնուրույն է և կատարվել է վերջից մասնիկների կամ վերջավորությունների կցումով: Այդ մասնիկները կամ վերջավորությունները հիմնականում ունեն հնդեվրոպական ծագում:

Այսպես, օրինակ՝ այդ լեզվի հրամայական եղանակի երրորդ դեմքի հոգնակի թվի «tu» վերջավորությունը նման է հնդեվրոպական ծագում ունեցող խեթերեն լեզվի հրամայական եղանակի երրորդ դեմքի «-ndu» և հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվի հրամայական եղանակի երրորդ դեմքի «-nto» վերջավորություններին կամ մասնիկներին: Հետևաբար նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվի բայի խոնարհումը ունեցել է հնդեվրոպական ծագում, որին օտար են խուրրիերենը և քարթվիլա-վրացերենը:

Գ) Դերանունների համակարգը.- Նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվում դերանունները լինում են կամ ինքնուրույն կամ կցույթի ձևով: Օրինակ՝

1) šuki ^D H aldiše uburdu-duni «Ինձ հալդի Աստվածը հանձնարարեց»:

2) ^D H aldiš-me LUGAL-tuḫi aruni «Խալդին ինձ իշխանություն տվեց»:

Նաիրյան ծագում ունեցող բիայներեն սեպագիր գրավոր լեզվի դերանունները գրավոր խոսքում օգտագործվել են այնպես, ինչպես հնդեվրոպական ծագում ունեցող խեթերեն գրավոր լեզվի դերանունները¹⁰:

⁸ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 26:

⁹ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 24:

¹⁰ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 25:

⁷ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 20:

Այս փաստերը ցույց են տալիս նաիրյան ծագում ունեցող բիաիններեն սեպագիր գրավոր լեզվի կապը հնդեվրոպական աշխարհի հետ, որին օտար են խուրիական և քարթվիլա-վրացական լեզուները:

III) Նաիրյան ծագում ունեցող բիաիններեն սեպագիր գրավոր լեզվի շարահյուսական առանձնահատկությունները¹¹:

Ա) Նաիրյան ծագում ունեցող բիաիններեն սեպագիր գրավոր լեզվի ածական որոշիչը կամ գոյական հատկացուցիչի նման որոշիչը հնդեվրոպական ծագում ունեցող ժամանակակից հայերեն լեզվի որոշիչի նման դրվում է գոյականից առաջ: Այսպես, օրինակ՝

1) ^D Haldini usmaše «խալդյան փառք»:

2) inili ebanili «Այս երկրները»:

Դ) Նաիրյան ծագում ունեցող բիաիններեն սեպագիր գրավոր լեզվի հատկացուցիչը երբեմն սեռական հոլովով չի դրվում, այլ դրվում է իր հատկացյալի հոլովով: Այսպիսի երևույթ կար նաև հնդեվրոպական ծագում ունեցող խեթերեն լեզվում և հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն հին լեզվում՝ գրաբարում: Օրինակ՝ գրաբարում «Բարկության սրտիվ»-ի փոխարեն գրվել է «Բարկությանը սրտիվ»:

Նշված երկու փաստերն էլ ցույց են տալիս նաիրյան ծագում ունեցող բիաիններեն սեպագիր գրավոր լեզվի շարահյուսության աղերսները հնդեվրոպական ծագում ունեցող լեզուների, մասնավորապես խեթերեն և հայերեն լեզուների հետ¹², որոնց օտար են խուրրիերենը և քարթվիլա-վրացերեն լեզուները:

IV) Նաիրյան ծագում ունեցող բիաիններեն սեպագիր գրավոր լեզվի «-uzzi//-izzi» բառաստեղծական ածանցի, չեզոք սեռի բայերի «a» հատկանիշի, ինչպես նաև բառերի վերջում դրված «b» բաղաձայնի էթնիկական ծագման մասին¹³:

1) Նաիրյան ծագում ունեցող բիաիններեն սեպագիր գրավոր լեզվի «-uzzi//-izzi» բառաստեղծական ածանցը ավելացել է այդ լեզվի «arm» արմատի վրա և ստեղծել է armuzzi բառը: Այդ ածանցի էթնիկական ծագման մասին ուշագրավ է այն փաստը, որ «-uzzi//-izzi» բառաստեղծական ածանց է ունեցել նաև հնդեվրոպական ծագում ունեցող խեթերեն լեզուն, որով կազմվել են այդ լեզվի dupuzzi և ispantuzzi բառերը: Այս համեմատությունը ցույց է տալիս, որ նաիրյան ծագում ունեցող բիայներեն սեպագիր գրավոր լեզվի «-uzzi//-izzi»

¹¹ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 24-25:

¹² Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 27:

¹³ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 27:

բառաստեղծական ածանցը ունեցել է հնդեվրոպական՝ մասնավորապես խեթական ծագում, որին օտար են խուրրիերեն և քարթվիլա-վրացերեն լեզուները:

2) Նաիրյան ծագում ունեցող բիաիններեն սեպագիր գրավոր լեզվի չեզոք սեռի որոշ բայերը կազմվել են «a» հատկանիշի միջոցով¹⁴: Օրինակ՝ usstabi «արշավեց», nusanabi «եկավ» և այլն: Բայերի չեզոք սեռի այդ «a» հատկանիշը գոյություն ունի նաև հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն լեզվում: Օրինակ՝ ծխալ, թվալ, ճոճալ, փութալ, ցանկալ, տենչալ, սոսկալ, հուսալ, քքքալ, խշխշալ և այլն: Այս համեմատությունը ցույց է տալիս, որ նաիրյան ծագում ունեցող բիաիններեն սեպագիր գրավոր լեզվի «a» հատկանիշով կազմված չեզոք սեռի բայերը ունեն հնդեվրոպական, մասնավորապես հայկական ծագում, որոնք օտար են խուրրիերենին և քարթվիլա-վրացերենին:

3) Նաիրյան ծագում ունեցող բիաիններեն սեպագիր գրավոր լեզվի չեզոք սեռի բայերի III դեմքի եզակի թվի «-abi» կամ «-abe» վերջավորությունը նույն հնչյունաձևով և «a» լծորդով գոյություն է ունեցել հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն լեզվում, որտեղ «b» բաղաձայնը հայերենում հիշատակվել է որպես «վ» բաղաձայն¹⁵: Օրինակ՝ նաիրյան ծագում ունեցող բիաիններեն սեպագիր գրավոր լեզվում հիշատակված Biarna բառը հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն լեզվում հնչել է «Վան», ebanil բառը՝ «ավան», abili dubi բառակապակցությունը՝ «ավելացրի» (abili-ավել) և այլն: Այս համեմատությունը ցույց է տալիս, որ նաիրյան ծագում ունեցող սեպագիր գրավոր լեզվի «-abi» կամ «-abe» վերջավորությունը իր «a» լծորդի հետ ունեցել է հնդեվրոպական, մասնավորապես հայկական ծագում, որոնք օտար են խուրրիերենին և քարթվիլա-վրացական լեզուներին:

Նաիրյան ծագում ունեցող բիաիններեն լեզուն բառապաշարի հարցերում հիմնականում մոտ էր կանգնած հնդեվրոպական էթնիկական աշխարհին, քան թե խուրրիականին և քարթվիլա-վրացական լեզուներին: Եթե կան 6 բառեր, որոնք ունեն քարթվիլա-վրացական ծագում, իսկ 7 բառեր կան, որոնք ունեն խուրրիական ծագում, ապա հնդեվրոպական ծագում ունեցող բառերի թիվը բիաիններեն գրավոր լեզվում հասնում է շուրջ 51-ի: Այս փաստը ցույց է

¹⁴ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 27:

¹⁵ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 27-28:

տալիս, որ բիաիներեն գրավոր լեզվի բառապաշարը հիմնականում ունի հնդեվրոպական, մասնավորապես ուրարտական կամ հայկական ծագում, որոնք օտար են խուրիներեն և քարթվիլա-վրացերեն լեզուներին:

Այսպիսով քերականական կառուցվածքի (հնչյունաբանություն, ձևաբանություն, շարահյուսություն) և բառապաշարի հետ կապված փաստերը ցույց են տալիս, որ նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզուն կապված է ոչ խուրիական կամ միտանիական ցեղերի, ոչ քարթվիլա-վրացական ցեղերի, ոչ էլ նախադադստանյան կամ վայնախյան ցեղերի լեզուների հետ, որ ենթադրել են հետազոտողներ Բ.Բ. Պիոտրովսկին, Գ.Ա. Մելիքիշվիլին և Ի.Մ. Դյակոնովը, այլ կապված է հնդեվրոպական ծագում ունեցող լեզուների հետ, որոնց օտար է եղել եռգատիվ կառուցվածքը:

Նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզուն հնդեվրոպական ծագում ունեցող լեզուներից համեմատաբար մոտիկ է եղել Ուրարտու կամ Արմենիա պետության հիմնական բնակիչների՝ ուրարտների կամ արմենների լեզվի հետ:

Եթե Ուրարտու կամ Արմենիա պետության հիմնական բնակիչների՝ ուրարտների կամ արմենների լեզուն մեզ է հասել բանավոր խոսակցության միջոցով, ապա նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզուն մեզ է հասել Հայկական լեռնաշխարհի ժայռերի ու քարերի վրա կերտված սեպագիր գրերի միջոցով:

Նաիրյան ծագում ունեցող բիաիներեն սեպագիր գրավոր լեզվով մեզ են հասել շուրջ 500-ի հասնող սեպագիր արձանագրություններ: Այդ արձանագրություններում հիշատակված են շուրջ 400 բառեր: Առայժմ հայտնի են այդ բառերի 1/4-ի իմաստները, իսկ մյուս բառերի իմաստները կբացահայտվեն ապագա հետազոտությունների ընթացքում:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍԸ

§1. ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍԸ, ՆՐԱ ԾԱԳՄԱՆ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Ուրարտուի կամ Արմենիայի կիրառական արվեստը բաժանվում է չորս ճյուղերի: Դրանք են՝ 1) մետաղամշակության հետ կապված արվեստի ճյուղը, 2) փայտամշակության հետ կապված արվեստի ճյուղը, 3) կավագործության հետ կապված արվեստի ճյուղը, 4) քարագործության հետ կապված արվեստի ճյուղը:

ա) Մետաղամշակության հետ կապված արվեստի ճյուղը. Մետաղամշակության հետ կապված արվեստի ճյուղը իր հերթին բաժանվում է չորս ենթաճյուղերի: Դրանք են՝ 1) արձանագործական արվեստի ենթաճյուղ, 2) զարդագործական արվեստի ենթաճյուղ, 3) կենցաղային իրերի պատրաստման ենթաճյուղ, 4) զինագործական արվեստի ենթաճյուղ:

1) Արձանագործական արվեստի ենթաճյուղ,- Ուրարտական կամ արմենական պետությունում զարգացած է եղել մետաղամշակության հետ կապված ինքնատիպ արձանագործական կամ քանդակագործական արվեստը: Այդ արվեստը հեռու է ավելորդ զարդա մախշերից: Նրան բնորոշ է դինամիզմը, ինչպես նաև մեկ, երկու շտրիխով արվեստի առարկաներ կերտելու հատկանիշը: Այդպես է կերտված Վանի բերդից հայտնաբերված ուրարտական կամ արմենական պանթեոնի գլխավոր աստված Խալդիի հարսնացուլի՝ Արուբանիի, բրոնզե արձանիկը¹: Այն նստած դիրքում է, հագուստը երկար, որը բնորոշ է Արուբանիի հագուստին՝ հյուսված քառակուսի մախշերով, պարանոցը զարդարված է կախազարդով, որոնք ձգվում են մինչև մեջքին կապած լայն գոտին, գլխին երկար գլխաշոր, որը ծածկել է նրա վարսերը, ձեռքերը բացված վիճակում ձգվել են դեպի առաջ՝ մեկին գրկելու դիրքով, խոշոր աչքերից և նուրբ շուրթերից կենարար ժպիտ է ցայտում:

Քանդակագործական արվեստին բնորոշ առանձնահատկություններով է կերտված Տուշպա (Վան) մայրաքաղաքից հայտ-

¹ Բ.Բ. Пиотровский, Искусство Урарту (ИУ), Л., 1962, с.82.

նաբերված հալղի աստծու բրոնզե արձանիկը²: Նա ունի երկար հագուստ՝ երկար թևերով, երկար մորուք, որը բնորոշ է հալղի աստծուն, ձեռքերը ձգված են դեպի առաջ, որոնք ուզում են ասել, թե աստվածահայրը ինչ-որ մեկին որևէ բան է հաղորդում, հավանաբար ձեռքերից ձախում, որը կիսախուփ վիճակում է, եղել է ծառի ճյուղ, գլխին կրում է եղջերազարդ գլխարկ, մեջքին կապած է լայն գոտի:

Արվեստի նույն առանձնահատկություններով է կերտված Թեյշեբահնիից հայտնաբերված ուրարտական կամ արմենական պանթեոնի երկրորդ աստված Թեյշեբա աստծու բրոնզե արձանիկը³: Նա կանգնած վիճակում է, հագուստը երկար, թևերը հասնում են մինչև արմունկները, անմորուք, որը բնորոշ է Թեյշեբա աստծուն, գլխին կրում է եղջերազարդ գլխարկ, աջ ձեռքում բռնել է գուրզը, իսկ ձախած ձախ ձեռքում՝ մարտական կացիք: Եթե վերոհիշյալ արձանիկները ունեին կրոնական (պաշտամունքային) բնույթ, ապա Ռուսախինիլիից (Թոփրախ-կալե) և Ոսկե-բլուրից (Ալթին-թեփե) հայտնաբերվել են աշխարհիկ բնույթի բրոնզե արձանիկներ: Աշխարհիկ բնույթի և իրենց ծավալային չափով, այսինքն՝ մեծությամբ, ուրարտական կամ արմենական պետության արձանագործական կամ քանդակագործական արվեստի մեջ առաջին տեղն են գրավում Արդիհի քաղաքի տաճարում գտնվող այն երեք խոշոր արձանները⁴ որոնք պատկանում էին Իշպուհինի որդի Սարդուրիին (նա հավանաբար եղել է այդ տաճարի քրմերից), ինչպես նաև Արգիշթի I և Ռուսա I թագավորներին, որոնց մասին իր արձանագործություններում պատմում է Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը (722-705): Ընդ որում, Սարդուրիի արձանը ձուլված է եղել բրոնզից, Արգիշթի I-ի արձանը, որը ձուլված է եղել պղնձից, կրել է աստվածների աստղագույն խոյր (գլխարկ), իսկ Ռուսա I-ի արձանը, նրա երկու ձիերով և կառամարտիկով ու պատվանդամով ամբողջովին ձուլված պղնձից է եղել: Հին արևելքի արձանագործության բնագավառում իր տեսակի մեջ եզակի է եղել Արդիհի քաղաքում գտնվող հալղի տաճարի այն քանդակը, որը պատկերում է ցուլ, կով և հորթ⁵:

² ИУ, с.8.

³ Б.Б. Пиоторовский, Ванское царство (Урарту), М., 1959, (Приложения, II, № 1).

⁴ И.М.Дьяконов, Ассирио – вавилонские источники по истории Урарту (АВВИУ) (Вестник древней истории (ВДИ), М., 1951, № 2, 3, 4, текст № 49, стр. 367-405.

⁵ АВВИУ, № 49, стр. 307 – 405.

2) Ջարդագործական արվեստի ենթաճյուղ.- Ջարդագործական արվեստի ենթաճյուղի մեջ են մտնում բրոնզե գոտիները, բրոնզե ընծայական թիթեղները, կանացի այլ զարդերը (ականջօղեր, կախազարդեր, մանյակներ, ապարանջաններ և այլն):

ա) Բրոնզե գոտիներ – Առայժմ հայտնաբերվել են Բրոնզե 12 գոտիներ: Դրանցից 4-ը գտնվում են Հայաստանում, իսկ 8-ը՝ արտասահմանյան թանգարաններում: Հայաստանում գտնվող 4 գոտիներից 2-ը հայտնաբերվել են Թեյշեբահնիից, 1-ը՝ Էրեբունիից, 1-ը՝ Վարդենիսից (Սևանա լճի հարավում): Ընդ որում, Թեյշեբահնիի գոտիներից մեկի վրա՝ զարդանախշերի արանքում դրվագվել են ձիերի ու ցուլերի վրա կանգնած մարդիկ⁶: Այնտեղից գտնված մյուս գոտու վրա դրվագված են հալղի և Թեյշեբա աստվածները, որոնցից հալղին նստած է գահի վրա, որը դրված է առյուծի մեջքին, իսկ Թեյշեբան նստած է ցուլի մեջքին⁷: Էրեբունիից հայտնաբերված գոտին դրվագված է մարտակառքերի, հեծյալների և զինված հետևակայիների պատկերներով⁸: Այդ գոտին զուրկ է այն օրնամետներից, որ կային Թեյշեբահնիից հայտնաբերված գոտիների վրա: Վարդենիսից հայտնաբերված գոտին իր օրնամետներով նման է Թեյշեբահնիից հայտնաբերված առաջին գոտուն:

Արտասահման տեղափոխված 8 գոտիներից մեկը գտնվել է Մյունխենի թանգարանում, հինգը՝ Ադանայի գավառական թանգարանում, մեկը՝ Տոկիոյի թանգարանում, մեկը՝ Լուվրի թանգարանում: Օտար թանգարաններում պահվող այդ բրոնզե գոտիների հայտնաբերման տեղը անհայտ է, բայց հաստատ է, որ այդ գոտիները գտնվել են Արևմտյան Հայաստանում:

բ) Բրոնզե ընծայական թիթեղներ – Առայժմ հայտնաբերվել են բրոնզե ընծայական 8 թիթեղներ⁹: Դրանք բոլորն էլ տեղափոխվել են օտար թանգարաններ: Ընդ որում, դրանցից մեկը՝ գտնվում է Մյունխենի թանգարանում, երեքը՝ Լուվրի թանգարանում, երեքը՝ Տոկիոյի թանգարանում, իսկ մեկը՝ Ժնևի թանգարանում: Մյունխենի թանգարանում պահվող բրոնզե ընծայական թիթեղը կրում է հալղի աստծու պատկերը: Լուվրի թանգարանում պահվող բրոնզե երեք

⁶ ИУ, с. 74.

⁷ ИУ, с. 75.

⁸ ИУ, с. 76.

⁹ Ս.Գ. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը (Աղյուսակներ՝ 7-11, 17, 25, 27 (2), 28-30):

ընծայական թիթեղներից երկուսը կրում են Խալդիի և Արուբանիի պատկերները, իսկ մեկը՝ Թեյշեբա աստծու պատկերը: Տոկիոյի թանգարանում պահվող երեք ընծայական թիթեղներից մեկը կրում է Արուբանիի պատկերը, մյուսը՝ մի խումբ աստվածների պատկերները, իսկ երրորդը՝ Արծիվ - աստծու և երկու այլ աստվածների պատկերները: Դրանցից Մյունխենի թանգարանի մեկ ընծայական թիթեղը, Լուվրի թանգարանի երկու ընծայական թիթեղները, Տոկիոյի թանգարանի մեկ ընծայական թիթեղը և Ժնևի թանգարանի միակ ընծայական թիթեղը հայտնաբերվել են Յերկանիսից (Վանա լճի ավազան), իսկ մնացածների գտնվելու տեղը հայտնի չէ, բայց հաստատ է այն, որ դրանք գտնվել են Արևմտյան Չայաստանից:

գ) Կանացի ոսկե և արծաթե զարդեր – Կանացի այդպիսի զարդեր են գտնվել Ռուսաստանից¹⁰, Թեյշեբաից¹¹, Ոսկե - բլուրից¹²: Ընդ որում, Ռուսաստանից գտնվել են ոսկե մեդալիոններ և արծաթե կախազարդեր: Դրանցից ոսկե մեդալիոնների վրա դրվագված է Արուբանիի պատկերը, իսկ արծաթե կախազարդերի վրա՝ տարբեր աստվածների պատկերները:

Թեյշեբաիցից գտնվել են ոսկե ականջօղեր, արծաթե մեդալիոններ, մանյակներ, ոսկե և արծաթե քորոցներ, որոնց վրա նույնպես դրվագված են աստվածների պատկերներ, առյուծների գլուխներ և կենաց ծառեր: Թեյշեբաիցից հայտնաբերված ոսկե ականջօղերի վրա դրվագված են գեղեցիկ զարդանախշեր: Ոսկե - բլուրից հայտնաբերվել են ոսկե խոշոր կոճակներ, ոսկուց, արծաթից պատրաստված մանյակներ, որոնք ազուցվել են թանկագին քարերով:

դ) Բրոնզե այլ զարդեր – Բրոնզե այլ զարդեր են հայտնաբերվել Տուշպա (Վան)¹³ մայրաքաղաքից, նրա մոտ գտնվող ժամանակակից Գուշչի¹⁴ բնակավայրից, ինչպես նաև Ալիշարից¹⁵: Ընդ որում, Տուշպա (Վան) մայրաքաղաքից հայտնաբերվել է թռչունի թևեր ու պոչ և կանացի գլուխ ունեցող զարդ: Ինչպես Տուշպա (Վան) մայրաքաղաքից, այնպես էլ նրա մոտ գտնվող Գուշչի բնակավայրից

¹⁰ ИУ, с.84.

¹¹ ИУ, с. 85-88.

¹² Դ.Ն. Սարգսյան, Չայերեն լեզվով հիերոգլիֆիկ արձանագրություններ ուրարտական դարաշրջանում (Էջմիածին, 2004, №6), էջ 48:

¹³ ИУ, с. 58.

¹⁴ ИУ, с. 59.

¹⁵ Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), с. 175.

հայտնաբերվել են ցուլի բրոնզե գլուխներ, որոնք կրում են զարդեր: Ալիշարից հայտնաբերվել են ձիու բրոնզե զարդարանքներ:

3) Կենցաղային իրերի արվեստի ենթաճյուղ.- Բրոնզե կենցաղային իրեր են գտնվել Ռուսաստանից, Թեյշեբաիցից, Ոսկե - բլուրից և Ալիշարից: Ընդ որում, Ռուսաստանից հայտնաբերվել են՝ 1) Բրոնզե գահի ոտք, որի վրա ամրացած է բրոնզե մի իր, որը ունի առյուծի գլուխ ու թաթեր և թռչունի թևեր, 2) Բրոնզե գահի այնպիսի մի մասը, որը իրենից ներկայացնում է թռչունի թևեր ունեցող առյուծ. այն ունի մարդու իրան, թևեր, ձեռքեր, դեմք, աչքեր, քիթ, բերան. նրա դիմային մասը պատրաստվել է սպիտակ քարից, որի վրա ազուցվել են աչքերն ու հոնքերը (այժմ այն գտնվում է Էրմիտաժում), 3) Թեյշեբաիցից գտնվել է թռչունի կտուցով, աչքերով, մաշկով, թևերով և ճիրաններով պատկեր, 4) Նույն տեղից գտնվել է բրոնզե ճյուղավոր աշտանակ (մոմակալ), որի ոտքերը վերջավորվում են ցուլի պեղներով, որոնք դուրս են գալիս առյուծի բերանից (այժմ այն գտնվում է Չամբուրգի թանգարանում):

Թեյշեբաիցից հայտնաբերվել է գահի ոտք, որի վրա ամրացած է բրոնզե մի պատկեր, որը ունի առյուծի գլուխ ու թաթեր և թռչունի թևեր (այժմ այն պահվում է Փարիզի թանգարանում):

Արվեստի կատարյալ գործեր են ուրարտուական կամ արմենական պետության կենցաղային իրերից բրոնզե այն գավաթները, որոնք զարդարված են զանազան քանդակներով: Դրանցից են Թեյշեբաիցից հայտնաբերված բրոնզե այն 5 գավաթները, որոնք պատկանում են Ռուսա II-ին: Նրանց վրա քանդակված են ամրոցի աշտարակ, ծառ և առյուծի գլուխ¹⁶:

Ոսկե - բլուրից գտնվել է ոսկեպատ փայտյա կահույք, որի ոտքերը բրոնզից են և նման են ցուլի կամ առյուծի թաթերի: Ալիշարից գտնվել են՝ 1) բրոնզե գահի ոտք, որի վրա ամրացած է մի պատկեր, որը ունի թռչունի թևեր ու պոչ և կանացի գլուխ, 2) կաթսայի պատվանդանի ոտք:

4) Ջինագործական արվեստի ենթաճյուղ.- Ուրարտուական կամ արմենական պետության ներսում մետաղյա զենքերի պաշտամունքը հասել է բարձր աստիճանի: Դա հատկապես սկիզբ է առել այդ պետության հիմնադիր և նրա առաջին թագավոր Արամեի (859-832) ժամանակից, երբ երկրի զինվորները, կրելով բրոնզե զենքեր,

¹⁶ Г.А. Меликишвили, Урартские клинообразные надписи (УКН), М., 1960, текст № 270-274.

կարողացել են դեմ դուրս գալ Ասորեստանի գոռոզ թագավոր Սալմանասար III-ին (859-824) ու նրա մահասփյուռ զինվորներին, որոնք ուզում էին տապալել այդ նորաստեղծ պետությունը և նրա ժողովրդին դնել ծանր հարկի ու տուրքի տակ¹⁷: Սակայն ազատատենչ Արամեն ու նրա խիզախ զինվորները հանդգնած լինելով, որ ասորեստանցիները չեն տիրապետում լեռնային կռիվների գախտնիքներին և կրում են ծանր զենքեր (երկար նիզակ, ուղղանկյունաձև և երկար վահան), որոնք նպատակահարմար չէին լեռնային կռիվներին, ասուրական թագավորին ու նրա զինվորներին իրենց հետևից դեպի լեռներն են ձգում ու այնտեղ էլ լեռնային կռիվներին նպատակահարմար իրենց ոչ ծանր մետաղյա զենքերով (ոչ երկար նիզակ, ոչ մեծ կլոր վահան) վճռում պատերազմի ելքը իրենց օգտին: Դրանից հետո Ասորեստանի թագավորն ու նրա զինվորները ձեռնունայն ճողոպարում են իրենց երկիրը ճանապարհին ավերելով ուրարտական պետության անպաշտպան Արգաշքու և Ջանգիունա քաղաք - ամրոցները: Ուրարտական պետությունը մնում է կանգուն, երկիրն ու ժողովուրդը շարունակում են ապրել անկախ: Այս գործում ոչ միայն զինվորների քաջագործությունն ու խիզախությունը և նրանց թագավորի կռիվները վարելու հանճարն են որոշել պատերազմի ելքը, այլև լեռնային կռիվները վարելու համար նպատակահարմար մետաղյա զենքերը: Այդպես էլ ուրարտական պետության ներսում առաջ է եկել զենքի պաշտամունքը: Նույնիսկ Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ը իր Բալավաթյան¹⁸ պալատի բարձրաքանդակներում դրվագել է տվել այդ պետության զինվորների զենքերը՝ նրանց կառուցվածքային առանձնահատկություններով (ոչ մեծ ու կլոր վահանը, ոչ երկար նիզակը, բրոնզե կատարավոր սաղավարտը), որպիսիք չեն ունեցել այդ բարձրաքանդակներում պատկերված ուրիշ երկրների զինվորները:

Ուրարտական կամ արմենական պետությունը դրանից ոգևորված տարբեր առարկաների վրա դրվագել է տվել իր երկրի զենքի տարբեր տեսակները և դրանք ներկայացրել որպես պաշտամունքի առարկաներ:

¹⁷ АВИИУ, № 27,

¹⁸ L.W. King, Bronze reliefs from the gates of Salmanaser king of Assyria, London, 1915, tab. I (I - VI), II (I - VI), VII (I - VI).

Ձենքեր են պատրաստել ինչպես բրոնզից, այնպես էլ ոսկուց ու արծաթից, դրանք նվիրվել են տաճարներին որպես սրբություններ և նախատեսել են զոհեր մատուցել նրանց համար:

Ձենքի պաշտամունքը իր արտացոլումն է գտնում նաև ուրարտական կամ արմենական պետության արվեստի մեջ: Տարբեր տեսակի առարկաների, մասնավորապես բրոնզե գոտիների վրա դրվագվել են հետևյալ զինվորները իրենց զենքերի հետ, հեծյալ զինվորները իրենց զենքերի ու նժույգների հետ, կառամարտիկները՝ իրենց զենքերի ու մարտակառքերի հետ:

Ջինագործական արվեստը իր ամենաբարձր աստիճանին հասավ այդ պետության թագավորներ Արգիշթի I-ի և Սարգուրի II-ի ժամանակ, երբ զենքի շնորհիվ պետության հյուսիսային սահմանները հասան մինչև Վերին ծովի կամ Սև ծովի հարավում գտնվող Կուլխա կամ Կոլխիդա երկիրը, հարավային սահմանը՝ մինչև Բաբելոն կամ Բաբելոն երկիրը, արևելյան սահմանը՝ մինչև Արցախը և Փոքր Կովկասի լեռները, արևմտյան սահմանը՝ մինչև Խաթե ցեղամիությունը, (Փոքր Յայք), Մելիդու կամ Մալաթիա երկիրը, Կունախա կամ Կոմագենե երկիրը:

Չիասքանչ զարդանախշերով են դրվագվում կապարճները՝ որպես նետ ու աղեղի կամ հեռվից հարվածող զենքի տեսակի խորհրդանիշ, վահանները՝ որպես պաշտպանական զենքի տեսակի խորհրդանիշ, սաղավարտները՝ որպես հանդերձանքի և միաժամանակ պաշտպանական զենքի տեսակի խորհրդանիշ: Նույնիսկ զենքի տեսակներից վահանները, որոնք պատրաստվում էին ոսկուց ու արծաթից և դրվագվում էին հիասքանչ զարդաքանդակներով: Դրանք սովորական զենքեր չէին: Դրանք իրենց վրա կրում էին ծոնական արձանագրություններ երկրի թագավորների կողմից: Արվեստի առարկա դարձած այդ զենքերի դրվագումները շատ ինքնատիպ են: Դրանք զուսպ են, հեռու անիմաստ զարդանախշերից: Նրանցում առարկանները ներկայացվում են իրենց իրական տեսքով: Ամենուր իշխում են ռեալիզմի հատկանիշները:

Այդպիսի ոչ սովորական, պաշտամունքային նշանակություն ունեցող և արվեստի առարկա դարձած կապարճների¹⁹ թիվը հասնում է 20-ի: Դրանք հայտնաբերվել են Թեյշեբախնիից, պատկանում էին Սարգուրի II-ին և նրանց ամեն մեկի վրա մակագրված է Սարգուրի II-ի

¹⁹ Բ.Բ. Պիտրովսկի, Արվեստ, կրոն, գիր, գրականություն (Յայ ժողովրդի պատմություն, 33 ԳԱ հրատ., 1971), էջ 392:

ծոնական արձանագրությունը: Դրանք միօրինակ ձևով դրվագվել են մարտակառքերի ու հեծյալների պատկերներով, որոնք բաժանվում են ութ գոտիների:

Կապարձների այդ զարդապատկերները գրեթե նույնությամբ դրվագված են նաև Թեյշեբահինից հայտնաբերված սաղավարտների վրա, որոնց թիվը հասնում է 6-ի²⁰: Դրանք պատկանում են Արգիշթի I-ին ու Սարգուրի II-ին և կրում են նրանց ծոնական արձանագրությունները: Ի տարբերություն կապարձների, սաղավարտները աչքի են ընկնում զարդամոտիվների նրբությամբ, հարստությամբ, կոմպոզիցիոն կուռ կառուցվածքով: Սաղավարտների ճակատային մասի դրվագումները զարդարված են սրբազան ծառերի տասնմեկ պատկերներով, որոնց կողքերին կանգնած են աստվածների ֆիգուրները: Ծառերին փաթաթված են առյուծների գլխով օծերի ութ ֆիգուրներ: Սաղավարտների քունքի ու ծոծրակի մասերին դրվագված են երկուական հեծյալ ունեցող ութ մարտակառքերի պատկերներ: Այդպիսի սաղավարտներ, ինչպես ընդգծել է Բ.Բ. Պիոտրովսկին, չկան ուրիշ երկրների, մասնավորապես ասորեստանյան արվեստում:

Ինքնատիպ և ուրիշ ոչ մի երկրի քանդակագործական արվեստում իր կրկնակը չունեցող դրվագումներով են զարդարված Թեյշեբահինից 1951 և 1953 թվականներին հայտնաբերված այն վահանները, որոնք պատկանում են Արգիշթի I-ին ու Սարգուրի II-ին²¹: Դրանց միջնամասում դրվագվել են երեք համակենտրոն գոտիներ, որոնց վրա տեղավորված են առյուծների ու ցուլերի նուրբ դրվագված պատկերներ:

Բարձր արվեստով են դրվագվել Արդինի քաղաքի Խալդի աստծու տաճարում գտնվող ոսկյա վեց վահանները²², որոնք կշռել են 6 տաղանդ 12 մինա, այսինքն՝ 61,4կգ (1 վահանը կշռել է 10,26 կգ), որը արդեն բացառիկ երևույթ է ոչ միայն ուրարտուական պետության, այլև համաշխարհային մասշտաբով վերցրած զենքի պաշտամունքի գործում: Պաշտամունքային այդ բացառիկ վահանները նաև դարձել են արվեստի առարկաներ: Նրանց միջնամասում, ինչպես տեղեկացնում է Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը, դինամիզմով հագեցած մեծ արվեստով էին կերտվել ատամնացից շների գլուխներ:

²⁰ Նույն տեղ, էջ 392:

²¹ Նույն տեղ, էջ 392:

²² Նույն տեղ, էջ 392:

Կատարյալ արվեստի գործեր են եղել նաև պաշտամունքային նպատակով Արդինի քաղաքի Խալդի տաճարին նվիրված արծաթե 12 ծանր վահանները²³: Սարգոն II-ը տեղեկացնում է, որ նրանց վրա մեծ արվեստով դրվագված են եղել հրեշի, առյուծի և վայրի ցուլի գլուխներ: Պաշտամունքային զենքեր և միաժամանակ արվեստի հիասքանչ առարկաներ են գտնվել նաև Ռուսախինիլիի ավերակներից (հավանաբար այնտեղ կառուցված է եղել տաճար, որին նվիրել են կատարյալ արվեստով դրվագված պաշտամունքային զենքեր): Գտնվածները իրենցից ներկայացրել են բրոնզե վահաններ, որոնց միջնամասում դրվագել են ցուլերի ֆիգուրներ:

բ) Փայտամշակման արվեստի ճյուղ.- Փայտը քիչ է օգտագործվել ուրարտական կամ արմենական արվեստի մեջ: Ընդամենը հայտնի է 2 օրինակ: Մեկը Թեյշեբահինից հայտնաբերված փայտյա փոքրիկ արձանիկներն են²⁴, որոնք ունեն թիթեղյա շատ փոքրիկ գոտիներ, հերակալներ, զենքեր: Նրանց դեմքը ներկված է սպիտակ, իսկ զգեստը՝ կարմիր գույնի ներկով: Երկրորդը Ռսկե - բլուրից (Ալթին - թեփե) հայտնաբերված փայտե կահույքն է, որը ունի ոսկյա երեսապատում:

գ) Կավագործական արվեստի ճյուղ.- Ընդհանրապես կավագործությունը զարգացած է եղել ուրարտական կամ արմենական պետության ներսում: Սալմանասար III-ը իր Բալավաթյան պալատի բարձրաքանդակներում կերտել է տվել այն տեսարանը, թե ինչպես Արամեի ժամանակ, երբ ինքը ներթափանցել է այդ պետության տարածքը²⁵, այնտեղից կողոպտել է կավից պատրաստված խոշոր կարաս և սայլով տեղափոխել Ասորեստան: Հետագայում նման խոշոր կարասներ են հայտնաբերվել Թեյշեբահինից և այլ քաղաքներից ու ամրոցներից: Իսկ ինչ վերաբերում է կավագործության հետ կապված արվեստի ճյուղին, ապա պետք է ասել, որ նրա զարգացման հիմնական օջախներն են եղել Թեյշեբահին, Ռուսախինիլին և Ռսկե - բլուրը (Ալթին - թեփե): Թեյշեբահինից²⁶ հայտնաբերվել են կավե երեք մանր արձանիկներ, մարդ - կարիճի տեսքով աստծու կավե մի

²³ АВИИУ, № 49, стр. 367 – 405.

²⁴ Բ.Բ. Պիոտրովսկի, Արվեստ, կրոն, գիր, գրականություն, էջ 294; Դ.Ն. Սարգսյան, Հայերեն լեզվով հիերոգլիֆիկ արձանագրություններ ուրարտական դարաշրջանում, էջ 48:

²⁵ L.W. King, Bronze reliefs from the gates of Salmanaser king of Assyria, tab. I (I - VI).

²⁶ Բ.Բ. Պիոտրովսկի, նշվ. աշխ., էջ 394:

արծանիկ և ծիու ու ցլիկի կավե ֆիգուրներ: Ընդ որում, հիշյալ կավե երեք մանր արծանիկները իրենցից ներկայացնում են կանգնած վիճակում մորուքավոր մարդկանց ֆիգուրներ, որոնց գլխից մինչև մեջքը ծածկված է ձկան գլխի ձև ունեցող գլխարկներով, թեփուկավոր մաշկով ու պոչով: Արծանիկները ներկված են եղել վառ կարմիր գույնի ներկով: Մարդ - կարիճի տեսքով աստծու կավե արծանիկի դեմքը ներկված է եղել սպիտակ, աչքերը կարմիր, իսկ մորուքն ու մազերը՝ մուգ դարձնագույն ներկով: Ձիու և ցլիկի կավե ֆիգուրները հավանաբար եղել են մանկական խաղալիքներ:

Ոսկե - բլուրից (Ալթին - թեփե)²⁷ գտնվել են ինչպես ոսկորից, այնպես էլ կավից պատրաստված արծանիկներ:

Ըստ Յ. Գենոուիլլակի կարծիքի, ուրարտական կամ արմենական պետության շինությունները զարդարող կավե ֆիգուրները շատ մոտ են խեթական նմուշներին (այսպես կոչված՝ կապադովկյան խեցեղենին):

Ուրարտական կամ արմենական պետության բնակիչները բացի կավե արծանիկներ պատրաստելու արվեստից, պատրաստել են նաև կավե այնպիսի անոթներ, որոնք դիտվում են արվեստի կատարյալ գործեր: Նման անոթներ են գտնվել ինչպես Ռուսախինլիից²⁸, այնպես էլ Թեյշեբախիից: Ընդ որում, Ռուսախինլիից գտնվել են մեծ կարասների շրթերի բեկորներ, որոնք զարդարված են կենդանիների քանդակներով (կենդանիներից մեկը եղել է ցլիկ, իսկ մյուսը՝ գիշատիչ):

Թեյշեբախիից գտնվել են կավե անոթներ, որոնց վզի երկարությամբ նախշագոտի է կերտված, իսկ նրա վրա էլ կենդանիների գլուխներ են հյուսված: Այնտեղից գտնվել են կովկիթի ու կովի կավե արծանիկ, ինչպես նաև կավից հյուսված անոթներ՝ կանացի ճտկավոր կոշիկի տեսքով:

դ) Քարագործական արվեստի ճյուղ.- Ուրարտուն կամ արմենիան լինելով առատ քարերի երկիր, բնականաբար, այնտեղ մարդը պետք է զբաղվեր քարագործությամբ և ստեղծեր նաև քարագործական արվեստի գործեր՝ արծաններ, հարթաքանդակներ, կնիքներ, տուփեր, կախազարդեր, ուլունքներ: Քարագործական արվեստի այդպիսի նմուշներ են հայտնաբերվել Ռուսախինլիից, Թեյշեբախիից, Արգիշթիխինլիից, Ջիուկունիից, Կոգովիտից (Յին - Բայազետ): Ընդ որում, Ռուսախինլիից հայտնաբերվել է քարի վրա

²⁷ T.Ozguc, Urartu and Altintepe (Archaeology, 22, Cambridge, 1969), p. 256 – 263.

²⁸ ИУ, с. 90 – 91, 112.

քանդակված մի ֆիգուր, որի աջ ձեռքը վեր է բարձրացած, իսկ ձախը բռնել է ծառի ճյուղ²⁹:

Թեյշեբախիից³⁰ գտնվել է մոխրագույն բազալտ քարից կերտված մի արծան, որի մեջքին և ուսերին թափված են ոլորուն մազեր: Արծանը ունի սրածայր մորուք, ձեռքերը դրված են կրծքին, որոնցից աջը բռնել է գավազան, իսկ ձախը՝ աղեղ ու նետ: Չեն պահպանվել արծանի գլուխն ու ոտքերը: Թեյշեբախիից գտնվել է նաև քարե արծանի գլուխ:

Արգիշթիխինլիից (Դավթի - բլուր) հայտնաբերվել են քարե երկու արծաններ, որոնցից մեկը հավանաբար եղել է դարբնության հովանավոր աստվածը, իսկ մյուսը՝ խեցեգործության աստվածը:

Ջիուկունիից³¹ (Արծկե, այժմ՝ Ադիլջիազ, Վանա լճի հյուսիս - արևմտյան ափին) հայտնաբերվել են քարակերտ երկու բարձրաքանդակներ: Դրանցից մեկի վրա պատկերված է Թեյշեբա աստվածը ցուլի վրա կանգնած: Նրա շուրջը զարդարել են երկու կենաց ծառեր: Նա կրում է եղջյրազարդ գլխարկ, հագուստը, որը հյուսված է առատ զարդանախշերով, երկար է, թևերը հասնում են մինչև արմունկները, մորուք չունի, ձեռքերին կրում է բարակ ապարանջաններ, աջ ձեռքով բռնել է դիմացի կենաց ծառի տերևները, իսկ ձախ ձեռքը պարզած է դեպի առաջ՝ կիսաբաց վիճակում, ոչ լայն գոտու վրա կրում է գոտկադաշույն, նրա ոտքերի տակ գտնվող ցուլի մարմնի վրա դրվազված են զարդանախշեր: Երկրորդ քարակերտ բարձրաքանդակի վրա կերտված է ցուլի պատկեր: Ցուլի ամբողջ մարմինը ծածկված է մանր զարդանախշերով, որոնք նման են նույն տեղից գտնված նախորդ բարձրաքանդակի ցուլի մարմնի վրա պատկերված զարդանախշերին:

Կոգովիտից³² գտնվել է քարակերտ մի բարձրաքանդակ, որի վրա պատկերված են անծավալին շինության մուտքի երկու կողմերում կանգնած մարդկանց հսկայական ֆիգուրներ: Մուտքի վերին մասում քանդակված է այծի պատկեր: Մարդկանց ֆիգուրները երկար հագուստով են, ոչ մեծ սրածայր գլխարկով (խույր): Այդ բարձրաքանդակը ուրարտական պետության մոնումենտալ արվեստի հազվագյուտ նմուշներից է: Նրա բարձրությունը հասնում է մոտ 3

²⁹ Բ.Բ. Պիոտրովսկի, Արվեստ, կրոն, գիր, գրականություն, էջ 304 – 306:

³⁰ Ս.Յմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, աղյուսակներ (աղյուսակ 2 (2)):

³¹ Բ.Բ. Պիոտրովսկի, նշվ. աշխ., էջ 396 – 398:

³² Բ.Բ. Պիոտրովսկի, նշվ. աշխ., էջ 398:

մետրի: Բարձրաքանդակների հետ կապված փաստերից հասկացվում է, որ ուրարտական կամ արմենական պետության կիրառական արվեստի ճյուղերը բռնել էին ճարտարապետության հետ համադրվելու ուղի: Սակայն այդ երևույթը չհասավ իր ավարտին:

Արվեստի կատարյալ առարկաներն են թեյշեֆաինից³³ գտնված քարից պատրաստված կնիքները, ուլունքները, կախազարդերը, տուփերը, որոնք կրում են իրենց վրա տարբեր տեսակի նախշեր:

Ուրարտական կամ արմենական պետության արվեստի ստեղծողներն են եղել այդ պետության հիմնական տեղաբնիկ բնակիչները, որոնք սեմական ծագում ունեցող ասսուրերեն³⁴, բաբելոններեն³⁵, եբրայերեն³⁶ լեզուներով կոչվել են ուրարտներ (ուրաշտներ), նրանց երկիրը՝ Ուրարտու (Ուրաշտու) անուններով, հնդիրանական և հնդեվրոպական ծագում ունեցող պարսկերեն³⁷ և էլամերեն³⁸ լեզուներով կոչվել են արմիններ, նրանց երկիրը՝ Արմինա անուններով, հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն³⁹ լեզվով կոչվել են արմեններ, նրանց երկիրը՝ Արմենիա անուններով, ուրարտական սեպագիր արձանագրությունների ուրարտերեն⁴⁰ տարբերակներում կոչվել են համապատասխանաբար բիսինացիներ, ասսուրերեն⁴¹ տարբերակներում՝ նաիրցիներ, նրանց երկիրը՝ Բիսինիլի, Նաիրի անուններով, համաշխարհային ջրհեղեղի ժամանակից սկսած Հայկական լեռնաշխարհում հյուսված հայկական ժողովրդական ավանդություններում⁴² հայ ժողովրդի լեզվով կոչվել են հայ, նրա երկիրը՝ Հայք (Հայաստան) անուններով, որոնց հիմքում ընկած է սեպագիր արձանագրությունների խաթե կամ հայ ցեղանունը⁴³: Այդ բոլոր ցեղանունները և երկրանունները տրվել են նույն ժողովրդին և նույն երկրին: Իհարկե, ակներևաբար այդ

³³ ИУ, с.105.

³⁴ АВИИУ, № 4, 27-80.

³⁵ АВИИУ, № 81.

³⁶ АВИИУ, № 62, 83, (LI, 27), 86 (2).

³⁷ F.H. Weissbach, Die Keilinschriften der Achamenide (KA), Leipzig, 1911, S. 8-74; 86-91.

³⁸ KA, S. 8-74, 86-91.

³⁹ Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), с. 33.

⁴⁰ УКН, № 1-3, 19, 264.

⁴¹ УКН, № 1-3, 19, 264.

⁴² Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1961, գիրք I, գլուխ 10-11:

⁴³ Դ.Ն. Սարգսյան, Նոր փաստեր հայ ժողովրդի ծագման մասին կապված խաթե ցեղանունի հետ (Էջմիածին, 2003, N6), էջ 58-61:

անունների մեջ կան տարբերություններ: Բայց դրանք առաջացել են այն լեզուների տարբերություններից, որոնցով ավանդվել են այդ անունները:

Ուրարտական արվեստը միատարր է: Այն ստեղծել են այդ պետության տեղաբնիկ բնակիչները: Սակայն, այնուամենայնիվ, այդ արվեստի մեջ կան այնպիսի գծեր, որոնք շեղվել են ընդհանուր առանձնահատկություններից: Օրինակ՝ թեև ուրարտական արվեստին անհարիր է պատկերների վրա կերտել զարդանախշեր, բայց Ջիուկունիից (Արծե, այժմ՝ Ադիլջևազ) հայտնաբերված քարակերտ բարձրաքանդակների վրա կերտված ցուլերի ամբողջ մարմինը ծածկված է զարդանախշերով⁴⁴: Ուշագրավ է նաև այն փաստը, որ Ուրարտուում արձանիկները պատրաստել են մետաղից, բայց Ոսկե - բլուրից հայտնաբերվել են կավից պատրաստված արձանիկներ⁴⁵: Ուրարտական արվեստից կատարված այս շեղումների հիմքում ընկած են ոչ թե էթնիկական տարբերության գծերը, այլ դրանք բխում են աշխարհագրական միջավայրի առանձնահատկություններից, որտեղ պատրաստվել են արվեստի այդ գործերը: Եվ վերջապես դրանց թիվը այնքան փոքր է (ընդամենը 3 օրինակ), որ այն էթնիկական որակ չի կազմում ուրարտական կամ արմենական արվեստի մեջ:

Ի տարբերություն դրա, ուրարտական կամ արմենական արվեստը ազդվել է եվրոպական ժողովրդների արվեստից, իսկ շատ հարցերում էլ ինքն է ազդել եվրոպական ժողովուրդների, մասնավորապես լիկիացիների, կիպրիացիների, հույների, լատինացիների, հոնիացիների, պափլագոնիացիների արվեստի վրա ու դարձել նրանց հնագույն արվեստի նախատիպը:

⁴⁴ Բ.Բ. Պիոտրովսկի, Արվեստ, կրոն, գիր, գրականություն, էջ 396-398:

⁴⁵ T. Ozguc, Urartu and Altintepe (Archeology, 22, Cambridge, 1969), P. 256-263.

§2. ՈՒՐԱՐՏՈՒԻ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՎԵՏՍԸ, ՆՐԱ ԾԱԳՄԱՆ ԷԹՆՈԿՐԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Ուրարտական կամ արմենական պետության ճարտարապետական արվեստը բաժանվում է 5 ճյուղերի: Դրանք են՝ 1) ամրոցաշինության արվեստի ճյուղը, 2) տաճարաշինության արվեստի ճյուղը, 3) ագուցման (ինկրուստացիայի) արվեստի ճյուղը, 4) որմնանկարչության արվեստի ճյուղը, 5) ժայռափոր շինարարության արվեստի ճյուղը:

ա) Ամրոցաշինության արվեստի ճյուղը. - Ուրարտական կամ արմենական պետության համար կարևոր նշանակություն ուներ ամրոցների կառուցումը: Ամրոցները պաշտպանում էին երկիրը ինչպես օտար հարձակումներից, այնպես էլ երկրի ներսում առաջացած խռովություններից: Դրանք ունեին նաև հենակետային նշանակություն նոր արշավանքներ կազմակերպելու համար: Ուստի անհրաժեշտ էր անընդհատ ամրոցների կառուցման կատարելագործումը:

Ամրոցները հիմնականում կառուցվում էին ամուր և անմատչելի պարիսպներով: Անհրաժեշտության դեպքում կառուցվել են կրկնակի պարիսպներ՝ ներսի պարիսպներ և դրսի պարիսպներ: Դրանցից դրսի պարիսպների հաստությունը հասնում էր 3,5 մ, իսկ ներսի կամ ներքին պարիսպների հաստությունը՝ 2,1 մետրի: Պարիսպների բարձրությունը տարբեր մասերում տարբեր է եղել: Դրանք հասնում էին 6-12 մետրի: Նշանավոր ամրոցներ էին Արգաշքուն, Արամալին, Ջանգիունան, Սուգունան, Տուշպան, Էրեբունին, Արգիշթիխինիլին, Թեյշեբա քաղաքի բերդը և այլն: Ամրոցի պարսպի ներքևի մասը խոշոր քարերով էին շարվում (առանց շաղախի), իսկ վերևի մասը՝ հում աղյուսով: Ամրոցները ունեին գլխավոր և երկրորդական մուտքեր:

բ) Տաճարաշինության արվեստի ճյուղ. - տաճարները ծառայել են կրոնական (պաշտամունքային) նպատակների համար: Դրանք աչքի են ընկել իրենց գեղեցկությամբ ու շքեղությամբ: Դրանք և՛ դրսից, և՛ ներսից զարդարվել են աստվածներին նվիրված զենքերով, զարդերով: Այդպիսին է եղել Մուծածիր երկրի Արդինի մայրաքաղաքում ուրարտական կամ արմենական պետության կողմից

կառուցված Խալդի աստծու տաճարը, որը ըստ Բ.Բ. Պիոտրովսկու⁴⁶ կարծիքի, կառուցվել է Սենուաի (810-786) ժամանակ: Նրա ճակատը կառուցվել է լայնացող վերնամասով, 6 սյուններով կամ որմնամույթերով: Տաճարի ճակատային պատը զարդարել են ուռուցիկ միջնամասով կլոր վահանները, որոնք տեղադրվել են ինչպես սյուների, այնպես էլ նրանց արանքում եղած պատամասերի վրա: Այդ դեկորատիվ վահանները ձևով համընկնում են Ռուսախինիլիում (Թոփախ - կալե) և Թեյշեբաինիում (Կարմիր - բլուր) գտնվածներին, ինչպես նաև պետության առաջին թագավոր Արամեի (859-832) զինվորների վահաններին, որոնք կերտվել են Սալմանասար III-ի (859-824) Բալավաթիան պալատի բարձրաքանդակներում: Տաճարի առջև դրվել են արձաններ:

Խալդիի տաճարի այդ մանրամասները ցույց են տալիս ուրարտական կամ արմենական պետության տաճարաշինության կապը Փոքր Ասիայի ճարտարապետական մի շարք հուշարձանների և հին հունական դասական տաճարների նախատիպերի հետ⁴⁷, որոնք ասպարեզ են եկել ավելի ուշ ժամանակաշրջանում: Փաստորեն ուրարտական պետության տաճարաշինության արվեստը բացում է Առաջավոր Ասիայի, ինչպես նաև Փոքր Ասիայի ու Հին Հունական ճարտարապետական արվեստի պատմության անհայտ էջերը՝ իրենից ներկայացնելով ճակտոն և սյունաշար ունեցող տաճարային արվեստի հայտնի տիպերից հնագույնը, որը ընկել է հին աշխարհի ճարտարապետական արվեստի հիմքում⁴⁸: Լեհմանն – Հաուպտը կապ էր տեսնում⁴⁹ ուրարտական պետության տաճարային արվեստի և իրենից հետո ասպարեզ եկած Պափլագոնիայի (Փոքր Ասիայում) հուշարձանների արվեստի միջև: Փոքրասիական արվեստի հետ ուրարտական պետության արվեստի կապերը միայն Արդինի քաղաքի Խալդիի տաճարով չեն սահմանափակվում: Դեռ վաղուց հետազոտողները նշել են, որ Փոքր Ասիայում գտնվող հունիական ոճի սյուների խոյակները ուրարտական պետության համանման

⁴⁶ Բ.Բ. Պիոտրովսկի, Արվեստ, կրոն, գիր, գրականություն, (Հայ ժողովրդի պատմություն, ԳԳ ԳԱ հրատ., Երևան, 1971), էջ 400:

⁴⁷ Բ.Բ. Պիոտրովսկի, Արվեստ, կրոն, գիր գրականություն, էջ 402:

⁴⁸ Բ.Բ. Պիոտրովսկի, նշվ. աշխ., էջ 402:

⁴⁹ C.F. Lehmann – Haupt, Armenien einst und jetzt (Armenien), Berlin und Leipzig, 1926, II (2), S. 567, 576.

դեկորատիվ տարրեր են կրում⁵⁰: Այսպես, հոնեական նախազարդային արվեստին բնորոշ մոտիվներից մեկը, որը կազմված է տերևներից ոճավորված պսակի ձևով, իր նախատիպը ունի ուրարտական պետության արվեստում, բայց ոչ թե ճարտարապետական հուշարձաններում, այլ մետաղյա առարկաներում⁵¹, այսինքն՝ դեկորատիվ արվեստում: Փաստորեն ուրարտական պետությունը թե իր ճարտարապետական և թե դեկորատիվ արվեստով մեծ ազդեցություն է թողել հնդեվրոպական ցեղերի արվեստի, նրա հնագույն տիպերի վրա:

գ) Ազուցման (հնկրուստացիայի) արվեստի ճյուղը. - ուրարտական կամ արմենական պետության ճարտարապետական արվեստի մեջ գույնի հարցը մեծ նշանակություն է ունեցել: Ռուսախինիլի տաճարներից մեկը կառուցված է եղել բազմազույն քարերից: գունավոր քարերի օգտագործման արվեստի մասին է վկայում Ռուսախինիլիում բացված մեկ ուրիշ ճարտարապետական հուշարձանը: Նրա մոտ գտնվել են հուս աղյուսից կառուցված մի ինչ – որ շենքի, հավանաբար, պալատի ավերակների՝ ազուցվածքներով զարդարված քարե հատակի ու պատի մնացորդներ: Հատակի բաց և մուգ գույնի սալերի վրա փոսիկներ են փորվել, որոնց մեջ բազմազույն՝ սև, մուգ, կարմիր ու սպիտակ քարերից համակենտրոն շրջանակներ են հյուսվել⁵²: Ռուսախինիլիից գտնվել է առյուծի բրոնզե արձանիկ, որի դիմային մասը պատրաստվել է սպիտակ քարից, իսկ նրա վրա ազուցվել են աչքերն ու հոնքերը: Փաստորեն ազուցման մեթոդը կիրառվել է թե ճարտարապետական և թե կիրառական արվեստի մեջ:

դ) Որմնանկարչության արվեստի ճյուղը. - Ուրարտական կամ արմենական պետության ճարտարապետության մեջ լայն տարածում է ունեցել պատերի նախշաներկումը: Այդպիսի փաստեր են ընձեռում էրեբունիի և Թեյշեբախնիի հնագիտական պեղումները:

Էրեբունիում⁵³ ավերված բնակարանից հայտնաբերվել է պատերի սպիտակ ֆոնի վրա կապույտ ու կարմիր ներկով արված հիանալի որմնազարդերի մնացորդներ: Դրանք բաժանվել են 5 շերտերի: Առաջին շերտի վրա նկարված են շրջանակներ, որոնց մեջ

⁵⁰ Բ.Բ. Պիոտրովսկի, *Մշվ, աշխ.*, էջ 402:

⁵¹ Բ.Բ. Պիոտրովսկի, *Մշվ, աշխ.*, էջ 402:

⁵² Բ.Բ. Պիոտրովսկի, *Մշվ, աշխ.*, էջ 403:

⁵³ Բ.Բ. Պիոտրովսկի, *Մշվ, աշխ.*, էջ 403:

ներգծված են բազմաթիվ աստղեր: Երկրորդ շերտում նկարված է արմավազարդերի շարքը՝ կարմիր ու կապույտ գույների հաջորդականությամբ: Երրորդ շերտում նկարված են աստիճանաձև փոքր աշտարակներ: Չորրորդ շերտում նկարված են ցլիկների ու խոյերի պատկերներով նկարազարդված ոչ լայն ֆրիզը: Ավելի ներքև երևում են սրբազան ծառերին ու նրանց կողքին կանգնած աստվածներին պատկերող նկարները: Ծառերն իրենց ձևով, իսկ աստվածները իրենց կերպարներով հիշեցնում են Արգիշթի I-ի և Սարգուրի II-ի սաղավարտների վրա քանդակված ծառերն ու մարդկային կերպարները: Հինգերորդ գոտում երևում են աստվածների խոշոր պատկերները, օրինակ՝ 1952 թվականին գտնված առյուծի վրա կանգնած աստծու պատկերը: Հիշյալ ծառերի արտաքին ուրվագիծը, բունը և խոշոր պտուղները ներկված են կապույտ գույնով:

Էրեբունիից հայտնաբերվել են բազմազույն այնպիսի որմնանկարներ, որոնք հիմարևելյան արվեստի հրաշալիքներն են և իրենց աշխարհիկ բնույթով և ռեալիստական էությամբ շատ բարձր մակարդակի վրա են կանգնած⁵⁴: Այս որմնանկարների մեջ հանդես են գալիս ուրարտական կամ արմենական պետության ռազմիկները՝ գույնզգույն հագուստներով, հանդերձանքի ու զինավառության հետաքրքիր մանրամասներով: Այստեղ՝ թագավորական որսի շքեղ տեսարաններում ներկա են նաև պետության հաղթական թագավորը մարտակառքի վրա՝ նետածգության պատրաստ վիճակում, ինչպես նաև նրան շրջապատող մարդիկ՝ հետևազորն ու այրուծին: Սրանք բոլորը որսի շներով հետապնդում են խուճապահար նժույգների, վայրի ցուլերի, առյուծների ու ընձառյուծների: Նման տեսարաններ են թփուտներում, թաքնվող հորթուկի, կենդանուն պատառոտող կատաղի շների, սայլապանի, եզներին քշող երկրագործի պատկերները: Ուրարտական կամ արմենական պետության արվեստում որսի տեսարանները պատկերված են էրեբունիի դամբարանադաշտից հայտնաբերված բրոնզե գոտիների վրա⁵⁵: Որմնանկարչության հիանալի մոնշներից է էրեբունիից հայտնաբերված Խալդի աստծու նկարը: Նկարում Խալդին կանգնած է առյուծի վրա: Նրա հագուստը, որ զարդարված է ծառի ճյուղերով ու տերևներով, երկար է, թևերը ձգվել են արմունկներից թիչ ներքև, գլխին կրում է գլխարկ, ունի երկար,

⁵⁴ Բ.Բ. Պիոտրովսկի, *Մշվ, աշխ.*, էջ 403:

⁵⁵ Б.Б. Пиотровский, *Искусства Урарту*, Л., 1962, с. 76.

զանգուր և առատ մազերով մորուք, աջ ձեռքը բարձրացած է դեպի վեր՝ բացված վիճակում, իսկ ձախ ձեռքում, որը պարզած է դեպի առաջ, բռնել է ինչ – որ իր՝ հավանաբար սրբազան գայիսուն:

Ե) Ժայռափոր շինարարության արվեստի ծյուղը. - Ժայռափոր շինությունները եղել են երկու տեսակ՝ 1) ժայռերի մեջ փորված փոքրիկ խորշերը և 2) ժայռի մեջ փորված ընդարձակ խորշերը կամ շինությունները: Դրանք տարբեր նշանակություն ունեին: Դրանց մի մասը ուներ պաշտամունքային, իսկ մյուս մասը՝ դամբարանային նշանակություն:

1) Պաշտամունքային նշանակություն ունեցող ժայռախորշերը կոչվել են «խալդիի դարպասներ» կամ «խալդիի դռներ» (šešteli): Դրանց բարձրությունը հասել է 5,18 մետրի: Պաշտամունքային բնույթի ժայռախորշերում տեղադրվել են կրոնական բնույթի արձանագրություններ: Այդպիսին է «Միերի դուռ» կոչվող ժայռախորշը: Սա գտնվել է Վանի ժայռի մեջ, որտեղից հայտնաբերվել է Իշպուհինի ու Մենուայի կրոնական բնույթի արձանագրությունը՝ դիցարանի աստվածների անունների և նրանց համար նախատեսված զոհերի տեսակի ու քանակի մասին⁵⁶: Դեպի ժայռախորշը աստիճան է տանում, իսկ ժայռի ստորոտում կառուցված է ստորգետնյա պաշտամունքային մի շինություն: Պաշտամունքային բնույթ ունի «Աշուրի - դուռ» (Աշուրակերտ) կոչվող ժայռախորշը, որը գտնվում է Վանից հարավ - արևելք, Կոտուր գետի ակունքների մոտ: Այնտեղից գտնվել է Իշպուհինի ու Մենուայի կրոնական բնույթի մի այլ արձանագրություն⁵⁷: Մազկերտի ամրոցի այն խորշում, որտեղից գտնվել է Ռուսա I-ի սեպագիր արձանագրություններից մեկը, կա մի դուռ, որը տանում է դեպի ժայռափոր ընդարձակ շինությունը: Այն ունեցել է պաշտամունքային բնույթ: Հավանաբար պաշտամունքային բնույթ ունի Ռուսախինիլի ստորգետնյա շինությունը: Այնտեղ մեծ աստիճաններով կարելի է իջնել դեպի հարթակը, որտեղից մուտքը տանում է ստորգետնյա շինությունը: Այնտեղ հասնելու համար հարկավոր է անցնել թեք միջանցքով, որը 56 աստիճանոց սանդուխթ ունի: Լուսիսի համար արված փոքրիկ անցքերը լուսավորում են ժայռի մեջ փորված և հատակին ուղղանկյուն փոս ունեցող մեծ սենյակը: Այն

⁵⁶ Г.А. Меликишвили, Урартские клинообразные надписи (УКН), М., 1960, текст № 27.

⁵⁷ УКН, № 25.

անծավային տաճար է, թեև այնտեղից թե պաշտամունքային և թե սովորական բնույթի արձանագրություն չի գտնվել:

2) Դամբարանային նշանակություն ունեցող ժայռախորշերում փորվել են թաղման նպատակով փոքրիկ խցիկներ: Նման ժայռախորշեր են փորվել Վանի ամրոցում, զինանոցի մոտ: Այն իրենից ներկայացնում է ժայռափոր շինությունների կոմպլեքս: Նրա ներսի մասում փոսիկներ ունեցող խորշը տանում է դեպի 20 քմ մակերեսով և 2,55 մ բարձրություն ունեցող քառակուսի սենյակը: Այնտեղից կա մի այլ մուտք, որը տանում է երկու փոքր սենյակներ, որոնցից մեկից անցուղի է արված դեպի փոքր խցիկը (1,07 մ լայնությամբ և 0,8 մ բարձրությամբ), որը հավանաբար եղել է դամբարան, ուր դրվել է հանգուցյալի դիակը: Քարե դագաղ է գտնվել հատակի տակից, որը ցույց է տալիս, որ դիակը դազաղով դրվել է հատակի տակ: Իհարկե, «Մեծ քարայրում», «Իշկալայում» և «Նալթ - կյում», որոնք եղել են դամբարանային ժայռախորշեր, սարկոֆագները դրվել են բարձր տեղում:

Արաքսի աջ ափին, Ալիշար գորակայանի դիմաց 19-րդ դարում բացվել է ժայռափոր մի դամբարան: Այն բաղկացած էր կամարածև առաստաղով մի փոքր նախասենյակից և հարթ առաստաղով ու պատի մեջ փորված ուղղանկյուն խորշով – թաղման խցիկից: Այս դամբարանից գտնվել են բրոնզե առասարկաներ, որոնք պատկանում են ուրարտական կամ արմենական պետության կիրառական արվեստին: Ուրարտական կամ արմենական պետության այս արհեստական անծավները Լեհմանն – Հաուպտը⁵⁸ համեմատել է Փոքր Ասիայի նման կառույցների հետ: Նա համեմատելու համար փաստեր է բերել Եգիպտոսի, Էտուրիայի, Հունաստանի, Փյունիկիայի, Պաղեստինի անծավային շինություններից: Այնուամենայնիվ, չնայած ուրիշ երկրների նման կարգի շինությունների հետ ունեցած նմանություններին, ուրարտական կամ արմենական պետության անծավային շինությունները բազմաթիվ ինքնատիպ գծեր ունեն այդ պետության վերգետնյա ճարտարապետության հետ և նույնիսկ օգնում են վերականգնելու վերջիններիս անհայտ մնացած կողմերը: Այդ ընդհանուր գծերից մեկը այն է, որ այդ երկուսն էլ չէին կրում քարի վրա կատարվող նախազարդերը:

⁵⁸ C.F. Lehmann – Haupt, Armenia, II (2), S. 567, 576.

Ուրարտական կամ արմենական պետության արվեստի ստեղծողներն են եղել այդ պետության հիմնական բնակիչները, որոնք սեմական ծագում ունեցող ասուրերեն⁵⁹, բաբելոներեն⁶⁰, եբրայերեն⁶¹ լեզուներով կոչվել են ուրարտներ (ուրաշտներ), նրանց երկիրը՝ Ուրարտու (Ուրաշտու) անուններով, հնդիրանական և հնդեվրոպական ծագում ունեցող պարսկերեն⁶² և էլամերեն⁶³ լեզուներով կոչվել են արմիններ, նրանց երկիրը՝ Արմինա անուններով, հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն⁶⁴ լեզուներով կոչվում են արմեններ, նրանց երկիրը՝ Արմենիա անուններով:

Ինչպես նախորդ շարադրանքում ասվեց, որ Արամեի մահից հետո ամուր կերպով մնում է նրա հիմնադրած պետությունը և նրան տրվող Ուրարտու կամ Արմենիա անունները, բայց փոխվել է երկրի արքայական դինաստիան, որի ներկայացուցիչներից ոմանք իրենց սեպագիր արձանագրություններում իրենց երկիրը կոչում են Նաիրի, նրա բնակիչներին՝ Նաիրցիներ անուններով (Սարդուրի I), իսկ ոմանք էլ իրենց երկիրը կոչում են Բիաիմիլի, նրա բնակիչներին՝ Բիաիմացիներ անուններով (Իշպուլիմի և նրա հաջորդները): Բայց այդ անունները ոչ մի հետք չեն թողել երկրի, պետության և նրանց բնակիչների անունների վրա, քանի որ միջազգային ասպարեզում այդ նույն ժամանակաշրջանում երկիրը, նրա պետությունը կոչվել են Ուրարտու կամ Արմենիա, նրա բնակիչները՝ ուրարտներ կամ արմեններ անուններով (տես՝ ասուրերեն, բաբելոներեն, եբրայերեն, պարսկերեն, էլամերեն լեզուներով գրված արձանագրությունները):

Ուրարտական արվեստը միատարր է: Այն ստեղծել են այդ պետության տեղաբնիկ բնակիչները՝ ուրարտները կամ արմենները (հայերը): Սակայն, այնուամենայնիվ, այդ արվեստի մեջ կան այնպիսի գծեր, որոնք շեղվել են ընդհանուր առանձնահատկություններից: Օրինակ՝ թեև ուրարտական արվեստին անհարիր է պատկերների վրա կերտել զարդանախշեր, բայց Ջիուկունիից (Արծկե, այժմ՝ Ադիլջևազ)

⁵⁹ И.М. Дьяконов, Ассири – вавилонские источники по истории Урарту (АВВИУ) (Вестник древней истории (ВДИ)), № 4, 27-80.

⁶⁰ АВВИУ № 81.

⁶¹ АВВИУ № 62, 83 (LI, 27), 86(2).

⁶² F.H. Weissbach, Die keilinschriften der Achamenide (KA), Leipzig, 1911, S. 8-74; 86-91.

⁶³ KA, S. 8-74, 86-91.

⁶⁴ Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, с.33.

հայտնաբերված քարակերտ բարձրաքանդակների վրա կերտված ցուլերի ամբողջ մարմինը ծածկված է զարդանախշերով⁶⁵: Ուշագրավ է նաև այն փաստը, որ ուրարտուում կամ արմենիայում արձանիկները պատրաստել են մետաղից, բայց Ոսկե - բլուրից հայտնաբերվել են կավից պատրաստված արձանիկներ⁶⁶: Ուրարտական արվեստից կատարված այս շեղումների հիմքում ընկած են ոչ թե էթնիկական տարբերության գծերը, այլ դրանք բխում են աշխարհագրական միջավայրի առանձնահատկություններից, որտեղ պատրաստվել են արվեստի այդ գործերը: Եվ վերջապես դրանց թիվը այնքան փոքր է (ընդամենը 3 օրինակ), որ այն էթնիկական որակ չի կազմում ուրարտական արվեստի մեջ:

Ի տարբերություն դրա, ուրարտական կամ արմենական արվեստը ազդվել է եվրոպական ժողովուրդների արվեստից, իսկ շատ հարցերում էլ ինքն է ազդել եվրոպական ժողովուրդների, մասնավորապես լիկիացիների, կիպրիացիների, հույների, լատինացիների, հոնիացիների, պափլագոնիացիների արվեստի վրա ու դարձել նրանց հնագույն արվեստի նախատիպը:

⁶⁵ Բ.Բ. Պիոտրովսկի, Արվեստ, կրոն, գիր, գրականություն, էջ 396-398:

⁶⁶ Ozguc, Urartu and Altintepe (Archaeology. 22, Cambridge, 1969), p. 256-263.

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ ԿԱՄ ԿՐՈՆԸ, ՆՐԱ ԷԹՆՈԿՐԱԿԱՆ ԱՐՄԱՆՆԵՐԸ

Ուրարտու կամ Արմենիա պետության պաշտամունքը կամ կրոնը տարածված է եղել այդ պետության բուն տարածքում, որը գտնվել է Արածանիի միջին ավազանից դեպի հարավ ձգվող շրջանում, մասնավորապես Վանա լճի ավազանում: Սակայն հետազոտողներից Լեհմանն-Յաուպը¹ Ուրարտու կամ Արմենիա պետության գլխավոր աստված Խալդիի ծագումը որոնում է արևմտյան Անդրկովկասի ցեղերի մեջ: Իր այդ կարծիքը հաստատելու համար նա Խալդի աստծու անվան «խալ» բառամասը համադրում է արևմտյան Անդրկովկասի ցեղերից մեկի ժամանակակից հնչյունագիր լեզվի «խալ» արմատի հետ, որը նշանակում է «երկնային»:

Սակայն Լեհմանն-Յաուպտի այդ կարծիքը չի հիմնավորվում մի քանի պատճառներով: Պատճառներից մեկը այն է, որ Խալդին եղել է ոչ թե երկնային, այլ երկրային աստված: Ուրարտու կամ Արմենիա պետության երկնային աստվածներն են եղել գլխավոր եռաստվածներից երրորդը՝ արևի աստված Շիվինին և գլխավոր եռաստվածներից երկրորդը՝ կայծակի և ամպրոպի աստված Թեյշեբան:

Պատճառներից երկրորդը այն է, որ արևմտյան Անդրկովկասի տարածքը մտնում էր մ.թ.ա. XIII դարում հիշատակված Նաիրի ցեղամիության կազմում², իսկ մ.թ.ա. IX դարում այդ նույն տարածքը մտնում էր Նարիի ցեղամիության էթիկական ու տարածքային հիմքի վրա առաջացած 31 երկրներից կազմված Դայանեի³ պետության կազմում, որոնցում սեպագիր արձանագրությունները չեն հիշատակում, թե այդ տարածքներում գոյություն է ունեցել Խալդի աստծու պաշտունքը:

Չետագոտողներից ոմանք էլ այն կարծիքն են հայտնել, թե Խալդի աստծու պաշտամունքի կենտրոն է եղել Ուրմիա լճի հարավարևմտյան մասում գտնվող Մուծածիր երկիր Արդինի արքայական քաղաքը:

¹ C.F. Lehmann-Haupt, *Armenie einst and jetzi*, II. 2., Berlin and Leipzig, 1931, s. 93,

Б.Б. Пуотровский, *Ванское царство*, М., 1959, с. 224:

² АБУУ, N 3, 4, 5, 6, 7, 10, (IV, 43):

³ YKH, N 19, 264:

Սակայն սեպագիր արձանագրությունները երբեք չեն հիշատակել, որ Ուրարտու կամ Արմենիա պետության աստվածների պանթեոնը արքա Իշպուլինիի և նրա որդի ու արքայազն Մենուայի կողմից կազմելուց և երկրի Տուշպա արքայական քաղաքը Խալդի աստծու պաշտամունքի կենտրոնը հռչակելուց առաջ Մուծածիր երկրի Արդինի արքայական քաղաքում գոյություն է ունեցել Խալդի աստծու պաշտամունքը: Չակառակ այդ կարծիքի, սեպագիր արձանագրությունները հիշատակում են, որ Ուրարտու կամ Արմենիա պետության աստվածների պանթեոնը ստեղծելուց առաջ Խալդի աստծու պաշտամունքը գոյություն է ունեցել Վանա լճի ավազանում գտնվող Ցվաստան, Պատնոց, Լեսկ, Վան բնակավայրերում, ինչպես նաև երկրի Տուշպա մայրաքաղաքում⁴: Չետևաբար Խալդի աստծու պաշտամունքի հնագույն կենտրոն է եղել Վանա լճի ավազանը, ինչպես նաև Վանի տարածքում Սարդուիի I-ի և Իշպուլինի կողմից կառուցված Ուրարտու կամ Արմենիա պետության նոր կառուցված մայրաքաղաք Տուշպան⁵, որտեղից էլ այդ աստծու պաշտամունքը տարածվել է Ուրարտու կամ Արմենիա պետության կողմից նվաճված մյուս երկրներում, այդ թվում նաև Մուծածիր երկրում և նրա Արդինի⁶ արքայական քաղաքում, որտեղ էլ կառուցվել է Խալդի աստծու պաշտամունքին նվիրված նոր խոշոր կենտրոնը:

Ի տարբերություն Լեհմանն-Յաուպտի տեսակետի, ավելի հավանական է, որ սեպագիր արձանագրություններում հիշատակված Խալդի աստծու անունը կարելի է որոնել ուրատերենի կամ արմեներենի անմիջապես շարունակությունը հանդիսացող ժամանակակից հնչյունագիր հայերեն լեզվի «հաղթ» բառի մեջ, որը ակներևաբար իրենից ներկայացնում է սեպագիր արձանագրություններում հիշատակված Haldi «Խալդի» դիցանվան հնչյունական տառադարձումը: Է. Բ. Աղայանը⁷ այդ «հաղթ» բառը մեկնաբանում է՝ ուժեղ, հզոր, հաղթական, բարձր, վիթխարի, գերազանց, վսեմ, հաղթանակ բառերի իմաստներով: Պետք է ասել, որ այդ բոլոր բառերի իմաստները համապատասխանում են Ուրարտու կամ Արմենիա պետության արքաների սեպագիր արձանագրություններում հիշատակված Խալդի աստծու հատկանիշներին:

⁴ YKH, N 11, (A), 15, 17, 18:

⁵ YKH, N 11, (A), 15, 17, 18:

⁶ YKH, N 19, 264:

⁷ Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացարձակ բառարան, Երևան, 1976, էջ 795:

Երեբունի որմնանկարներում Խալդին միշտ նստած է կենդանական աշխարհի հսկայի՝ առյուծի վրա: Խալդիի մասին Ուրարտուի կամ Արմենիայի թագավորների ռազմական բնույթի սեպագիր արձանագրություններում ասվում է, որ նա արշավանքների ժամանակ գնում է Ուրարտու կամ Արմենիա երկրի զորքի առջևից, նա մենակ մտնում է նվաճվող երկրի սահմաններից ներս, հաղթում այդ երկրին, որից հետո նոր միայն Ուրարտու կամ Արմենիա երկրի թագավորն է իր զորքի հետ մտնում թշնամու երկրի, կողոպուտ և գերեվարություն կատարում այնտեղ:

Ուրարտու կամ Արմենիա պետության պաշտամունքի կամ կրոնի էթնիկական ծագումը որոշելու հարցում ուշագրավ է նաև այն փաստը, որ ըստ Վ.Վ. Իվանովի⁸ կարծիքի, Ուրարտու կամ Արմենիա պետության գլխավոր աստվածներից երրորդի՝ Շիվինի անունը ծագել է հնդեվրոպական էթնական աշխարհին պատկանող խեթերի լեզվի šiuhi «աստված» բառից և հետևաբար այդ աստծու անունը ունեցել է հնդեվրոպական ծագում:

Չափազանց ուշագրավ է նաև այն փաստ, որ Խալդի աստծու հարսնացուին տրվող Բազմաշտու անվան հիմքում ընկած է հնդեվրոպական ծագում ունեցող «բոգ» (աստված) բառը:

Աստուրական կործանարար արշավանքների ճանապարհը փակելու նպատակով Ուրարտու կամ Արմենիա պետությունը ձգտել է միավորել Հայկական լեռնաշխարհում գտնվող ցեղերին: Այդ գործում մեծ դեր է կատարել ուրարտական կամ արմենական պաշտամունքի կամ կրոնի տարածումը այնտեղ: Ժամանակի ընթացքում այնտեղ կառուցվել են դիցարանի գլխավոր աստվածներին նվիրված տաճարներ և կրոնական կենտրոններ:

Այսպիսով, հնդեվրոպական ծագում ունեցող ուրարտների կամ արմենների աստվածների պաշտամունքը կամ կրոնը ձևավորվել է մ.թ.ա IX – VI դարերում, երբ ձևավորվել ու քաղաքական ասպարեզ է եկել նրանց ստեղծած Ուրարտու կամ Արմենիա կոչվող հզոր պետությունը: Հետագայում, երբ անկում է ապրում այդ պետությունը, նրա հետ անկում է ապրում նաև նրա աստվածների պաշտամունքը կամ կրոնը:

⁸ В.В. Иванов, Хемский язык (Древние языки малой Азии), М., 1980, с. 136:

Եզրակացություն

1. Շումերա - Աքքադական դարաշրջանում (մթա 2639 թվականից սկսած) Աքքադ (հմմտ. Ասորեստան) երկրից արևմուտք (Ուրմիա լճի ավազանում) հիշատակվել է մի երկիր, որը սեմական ծագում ունեցող լեզուներով կոչվել է Արմանի անունով: Շումերա - Աքքադական դարաշրջանում այդ Արմանի երկիրը հասել է թագավորության կամ պետության աստիճանի, որի թագավորն էր Մատակինան: Նա եղել է Աքքադ երկրի հզոր թագավոր Նարամսինի (2238 - 2202) ժամանակակիցը: Նրանք ճակատամարտ են մղել միմյանց դեմ, որի ընթացքում մինչև վերջին մարդը զոհվել է ճակատամարտի դաշտում, որը գտնվել է Ուրմիա լճի հարավային ավազանում տարածված Պիր - Յուսեին բնակավայրի մոտ, ուր տարածված է Տիգրանակերտը: Մատակինայի անունը, ըստ Յ. Աճառյանի կարծիքի, ստուգաբանվում է հայերեն լեզվի «գետ», «ամբարտակ» բառերով: Այս կապակցությամբ ուշագրավ է այն փաստը, որ Աքքադ երկրի առաջին թագավոր Սարգոն Աքքադը Արմանի երկրից իր երկիրն է տանում հետևյալ ծառատեսակները՝ hashuru «խնձորենի», tutu «թթենի», saluru «սալորենի», sirdu «սիրդենի», որոնց անունները ունեն բնիկ հայերեն լեզվական ծագում: Նշված փաստերը վկայում են, որ Արմանի երկիրը ունեցել է հայերեն լեզվական ծագում ունեցող բնակչություն:

Ակներև է, որ Արմանի երկիրը հնդեվրոպական ծագում ունեցող լեզուներով կոչվել է Արմենիա անունով, իսկ հնդիրանական ծագում ունեցող լեզուներով կոչվել է Արմինա անունով: Ակներև է նաև, որ այդ Արմանի, Արմենիա, Արմինա երկրանունների սկզբում հիշատակված «Արմ» բառամասը եղել է այդ երկրանունների արմատը, «նի» բառամասը եղել է այդ երկրանունների վերջավորությունը, իսկ այդ երկրանունների արմատների ու վերջավորությունների արանքում գտնվող «ա», «ե», «ի» ձայնավորները եղել են Արմանի, Արմենիա, Արմինա երկրանունների ձևայնները, որոնց շնորհիվ որոշվել է, թե ինչպիսի էթնիկական լեզվով են հիշատակվել այդ երկրանուններից յուրաքանչյուրը: Ակներև է, որ դրանցից Արմանին հիշատակվել է սեմական ծագում ունեցող լեզուներով, Արմենիան հիշատակվել է հնդեվրոպական ծագում ունեցող լեզուներով, իսկ Արմինան հիշատակվել է հնդիրանական ծագում ունեցող լեզուներով:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ այդ Արմանի, Արմենիա, Արմինա երկրանունները հիշատակվել են Աստվածաշնչում:

Այդ կապակցությամբ իրենց վրա ուշադրություն են հրավիրում ինչպես Աստվածաշնչի մեկնիչներ Եսայու (VIII - VII դդ) և Երեմիայի (625 - 585) աշխատությունները, որոնք Աստվածաշնչի հետ թարգմանվել են հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով, այնպես էլ Պարսկաստանի թագավոր Դարեհ I-ի (524 - 485) պարսկերեն, էլամերեն, բաբելոներեն լեզուներով գրված սեպագիր արձանագրությունները, որոնք իրենց հերթին հաստատում են Արմանի երկրի գոյության իսկությունը:

Փաստորեն մ.թ.ա. IX դարի կեսին (մ.թ.ա. 859 թվականին) Հայկական լեռնաշխարհում, մասնավորապես Վանա լճի ավազանում քաղաքական ասպարեզ է գալիս մի պետություն, որը սեմական ծագում ունեցող ասսուրերեն և եբրայերեն լեզուներով կոչվել է ^{KUR}Urartu «Ուրարտու», սեմական ծագում ունեցող բաբելոներեն լեզվով կոչվել է ^{KUR}Uraštu «Ուրաշտու» անունով, իսկ նրա բնակիչները կոչվել են urartiaia «ուրարտներ» կամ uraštiaia «ուրաշտներ» անունով: Այդ պետությունը իր գոյությունը պահպանել է մինչև մ.թ.ա. VI դարի վերջին քառորդը (մ.թ.ա. 522 թվականը): Շուրջ մեկ դար այդ պետությունը ընթացել է վերելքի ուղիով, հասել հզորության աստիճանի և իր ձեռքն է վերցրել Առաջավոր Ասիայի առաջնությունը: Հզորության տարիներին նա նվաճել է շուրջ 130 մեծ ու փոքր երկրներ: Նրա գրաված տարածքի սահմանները հարավից դեպի հյուսիս ձգվել են Բաբիլոն կամ Բաբելոն երկրից մինչև Վերին ծովի կամ Սև ծովի հարավային ափին գտնվող Կուլխու կամ Կուլխիդա երկիրը, իսկ արևելքից դեպի արևմուտք ձգվել են Ուրտեխինի կամ Արցախ երկրից և Փոքր Կովկասի լեռներից մինչև Անդրեփրատյան Մելիդու կամ Մալաթիա և Կումախա կամ Կոմագենե երկրները: Այդ ընդարձակ նվաճումների ընթացքում նոր տեսք են ստացել Ուրարտուի պետական կարգը, տնտեսակարգը, հասարակարգը և մշակույթը:

Հետազոտողներ Գ.Ա. Ղափանցյանը, Գ.Ա. Մելիքիշվիլին, Բ.Բ. Պիոտրովսկին հաշվի չառնելով վերոհիշյալ փաստերը այն տեսությունն են առաջ քաշել, թե այդ Ուրարտու պետության բնակիչները և նրանց լեզուն ծագել են կենտրոնական Միջագետքում, մասնավորապես Կաշիարի լեռներից հարավ, Ասորեստանի մայրաքաղաք Նինվեյից հյուսիս տարածված խուրրիական ցեղերի կողմից մ.թ.ա. XIII դարում քաղաքական ասպարեզ եկած Ուրուատրի

ցեղամիության խուրրիական բնակիչներից, այդ բնակիչների խուրրիերեն լեզվից: Սակայն, հակառակ այդ հետազոտողների կողմից առաջ քաշված տեսությանը, սեպագիր արձանագրությունների փաստերը ցույց են տալիս, որ Ուրարտու պետության անունը ինչպես իր հնչյունական կառուցվածքով, այնպես էլ իր բառական իմաստով տարբերվում է Ուրուատրի ցեղամիության անունից: Եթե Ուրարտու անվան բաղաձայնական արմատն է՝ RRTJ-ն, ապա Ուրուատրի ցեղամիության անվան բաղաձայնական արմատն է՝ RTJR-ն, որոնք, ակներևաբար, տարբերվում են իրարից՝ իրենց հնչյունական կազմով: Եթե ^{KUR}Urartu «Ուրարտու» պետության անվան՝ RTJ բաղաձայնական արմատի մեջ գոյություն ունեն քթադական UR և AR գաղափարագրերը, ինչպես նաև JU վերջածանցը, որոնցից UR գաղափարագիրը նշանակում է «լուսավոր», իսկ AR գաղափարագիրը նշանակում է «անմատչելի», որոնք իրենց բառակազմում դրվող KUR «երկիր» սահմանիչի հետ նշանակում են «Լուսավոր երկիր», ապա ^{KUR}Uruatri «Ուրուատրի» ցեղանունը զուրկ է AR գաղափարագրից, ինչպես նաև JU վերջածանցից և նրա իմաստից: Փաստորեն Ուրարտուն և Ուրուատրին տարբերվում են իրարից ինչպես իրենց հնչյունական կազմով, այնպես էլ իրենց բառական իմաստով: Հետևաբար հետազոտողները սխալվել են Ուրարտու պետության անվան և Ուրուատրի ցեղամիության անվան համադրության հարցում:

Ներքոհիշյալ բազմաթիվ փաստերն էլ ցույց են տալիս, թե սեմական ծագում ունեցող ասսուրերեն, եբրայերեն լեզուներով ավանդված Urartu «Ուրարտու» երկիրը, նրա urartiaia «ուրարտներ» բնակիչները բաբելոներեն լեզվով կոչվող Uraštu «Ուրաշտու» երկիրը, նրա uraštiaia «ուրաշտներ» բնակիչները համապատասխանում են հնդեվրոպական ծագում ունեցող հունարեն և լատիներեն լեզուներով կոչվող Armenia «Արմենիա» երկրին, նրա armeniaia «արմեններ» բնակիչներին, ինչպես նաև հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն լեզվով կոչվող Armīna «Արմինա» երկրին, նրա arminai «արմիններ» բնակիչներին և էլամերեն լեզվով կոչվող Harmīna «Խարմինա» երկրին, նրա harmīnaia «խարմիններ» բնակիչներին:

Ա. Մ.թ.ա. IX դարի կեսին «Նաիրի երկրի ծովի» կամ «Վանա լճի» ավազանում քաղաքական ասպարեզ եկած պետությունը Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի (859-824) սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված «Տուլխանի» կամ «Կարխի» մոնոլիթ

արծանագրությունում հիշատակված է Ուրարտու երկիրը, որի հիմնադիր թագավորն է եղել Արամեն (859-832): Հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդությունները հիշատակում են, որ «Ադի ծովակի» կամ «Վանա լճի» ավազանում քաղաքական ասպարեզ է եկել նաև մի պետություն, որը կոչվել է Արմենիա անունով: Այդ պետության հիմնադիր թագավորն է եղել Արամը: Թեև Արմենիա պետության քաղաքական ասպարեզ գալու ժամանակաշրջանն անորոշ է, բայց հայտնի է, որ Արմենիա պետության հիմնադիր թագավոր Արամին հաջորդել է նրա ավանդական որդի Արա Գեղեցիկը, որին սիրահետել է Ասորեստանի ավանդական թագուհի Շամիրամը: Ասորեստանի թագուհիներից հունարեն և հայկական ավանդություններում միայն մեկն է կրել Շամիրամ անունը, որի սեպագիր ձևն է եղել Սամնուրամաթ: Սամնուրամաթ-Շամիրամը եղել է Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի (859-824) որդի Շամշի-Ադադ V-ի (824-783) կինը: Փաստորեն ինչպես Արմենիայի թագավոր Արա Գեղեցիկից, այնպես էլ Ասորեստանի թագուհի Շամիրամ-Սամնուրամաթից մեկ սերունդ առաջ ապրել են Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ը և Արմենիա պետության հիմնադիր թագավոր Արամը կամ Արամեն: Դրանցից Արամ անունը ավանդական ձևն է, իսկ Արամեն անունը սեպագիր գրելաձևն է: Այդպես էլ դրանց պետությունները նույն են, բայց սեպագիր գրելաձևով այն կոչվել է Արմենիա (Արմինա), իսկ ավանդական գրելաձևով կոչվել է Արամ, Արմենիկ, իսկ հայերեն լեզվով այն կոչվել է Հայք կամ Հայստան: Ակներև է, որ Արամը, որը հիմնադրել է Արմենիա պետությունը, Սալմանասար III-ի (859-824) ժամանակակիցն է: Վերևում էլ իմացանք, որ այդ նույն ժամանակաշրջանում էլ, «Նաիրի ծովի» կամ «Վանա լճի» ավազանում քաղաքական ասպարեզ է եկել նաև Ուրարտու պետությունը Արամեն (859-824) թագավորի գլխավորությամբ: Մինևույն տարածքում, մինևույն ժամանակաշրջանում և մինևույն անունը կրող թագավորի հետ կապված այս փաստերը ցույց են տալիս, որ Ուրարտու պետությունը և Արմենիա (հմմտ. Հայք, Հայաստան) պետությունը նույնն են, բայց հիշատակվել են տարբեր անուններով: Ընդ որում, այդ պետությունը սեմական ծագում ունեցող լեզուներով կոչվել է Ուրարտու (Ուրաշտու), իսկ հնդեվրոպական և հնդիրանական ծագում ունեցող լեզուներով կոչվել է Արմենիա (Արմինա): Դրանց անունների տարբերությունը առաջ է եկել այն լեզուների էթնիկական տարբերությունից, որոնցով ավանդվել են այդ անունները: Դրանցից

Ուրարտուն (Ուրաշտուն) ավանդվել է սեմական ծագում ունեցող ասուրերեն, բաբելոներեն, եբրայերեն լեզուներով, իսկ Արմենիա (Արմինա) անունը ավանդվել է հնդեվրոպական և հնդիրանական ծագում ունեցող հունարեն, լատիներեն, պարսկերեն, էլամերեն լեզուներով:

Բ. Սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով գրված Աստվածաշնչի 'RRJ (= Urartu) «Ուրարտու» երկիրը, որտեղ ինչպես վկայված է Եսայի (մ.թ.ա. VIII դ) մարգարեի կողմից, ապաստան են գտել Ասորեստանի թագավոր Սինախերիբի (705-681) հայրասպան որդիները, հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով Աստվածաշնչի թարգմանությունում (Vulgate) կոչվել է Armenia «Արմենիա» երկիր, որը հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդություններում համարվել է «մեր աշխարհ», «մեզ մոտ», այսինքն՝ Հայք, Հայաստան (հմմտ. Արմենիա):

Գ. Սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով գրված Աստվածաշնչի 'RRJ (= Urartu) «Ուրարտուի» թագավորությունը, որի օգնությանն է դիմել մ.թ.ա. 594 թվականին Երեմիա մարգարեն (625-585), (այսինքն՝ մ.թ.ա. VII դ), հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով Աստվածաշնչի թարգմանությունում (Vulgate) կոչվել է Armenia «Արմենիա» թագավորություն, իսկ հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ժողովրդական ավանդություններում այն կոչվել է «մեր ազգի թագավորություն», այսինքն՝ հայերի թագավորություն՝ Հայք, Հայաստան (հմմտ. արմենների թագավորություն):

Դ. Սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով գրված Աստվածաշնչի Եսայու (մ.թ.ա. VIII դ) մարգարեությունում 'RRJ (= Urartu) «Ուրարտուի» լեռները, որոնց վրա համաշխարհային ջրհեղեղի ժամանակ հանգրվան է գտել Նոյ նահապետի տապանը, հնդեվրոպական ծագում ունեցող լատիներեն լեզվով Աստվածաշնչի թարգմանությունում (Vulgate) կոչվել են Արմենիայի լեռներ (Super montes Armentae):

Ե. Դարեհ I-ի (522-484) «Բեհիստունյան» եռալեզու (պարսկերեն, էլամերեն, բաբելոներեն) սեպագիր արծանագրության սեմական ծագում ունեցող բաբելոներեն տարբերակի Uraštu «Ուրաշտու» երկիրը և նրա uraštaia «ուրաշտներ» բնակիչները նույն արծանագրության հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն և

էլամերեն տարբերակներում կոչվել են Armina «Արմինա» երկիր և arminaia «արմիններ» բնակիչներ:

Չ. Դարեհ I-ի (522-485) «Նակշի-ռուստամյան» եռալեզու (պարսկերեն, էլամերեն, բաբելոներեն) սեպագիր արձանագրության սեմական ծագում ունեցող բաբելոներեն տարբերակի **Uraštu** «Ուրաշտու» երկիրը և նրա **uraštaia** «ուրաշտներ» բնակիչները նույն արձանագրության հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն և էլամերեն տարբերակներում կոչվել են Armina «Արմինա» երկիր և arminaia «արմիններ» բնակիչներ:

Ակներև է, որ եթե մ.թ.ա. IX դարի կեսից մինչև մ.թ.ա. VI դարի վերջին քառորդը Հայկական լեռնաշխարհում քաղաքական ասպարեզ եկած հզոր պետությունը սեմական ծագում ունեցող ասորեստանցիները, երբայացիները, բաբելոնացիները կոչել են Ուրարտու (Ուրաշտու) անունով, իսկ նրա բնակիչներին կոչել են ուրարտներ (ուրաշտներ) անուններով, ապա հնդեվրոպական ծագում ունեցող արմենները, լատինացիները այդ հզոր պետությունը կոչել են Արմենիա, նրա բնակիչներին՝ արմեններ, իսկ հնդիրանական ծագում ունեցող պարսիկները և էլամցիները այդ պետությունը կոչել են Արմինա (Խարմինա), նրա բնակիչներին՝ արմիններ (խարմիններ): Հետևաբար առաջ է գալիս այն եզրակացությունը, որ սեմական լեզուներով ավանդված Ուրարտու (Ուրաշտու) երկիրը և նրա ուրարտներ (ուրաշտներ) բնակիչները համապատասխանում են հնդեվրոպական և հնդիրանական լեզուներով ավանդված Արմենիա (Արմինա) երկրին և նրա արմեններ (արմիններ) բնակիչներին: Իսկ դա նշանակում է, որ այդ պետության բնակիչների լեզուն եղել է արմեններենը կամ հայերենը: Սակայն այդ պետության սեպագիր արձանագրությունների լեզուն տարբերվում է արմեններեն կամ հայերեն լեզվից: Դրա պատճառն այն է, որ այդ պետության թագավոր Արամեի կամ Արամի մահից հետո փոխվել է այդ երկրի արքայական դինաստիան: Այդ պետության նոր թագավոր Սարգուրի I-ը իրեն համարում է ոչ թե Արամեի կամ Արամի որդին, այլ ոմն Լյուքիպրի որդին, որը թագավոր չի եղել: Եթե Արամեի կամ Արամի անվան մեջ առկա է նրա երկրին տրվող Արմենիա և նրա բնակիչներին տրվող արմեններ անունների «արմեն» արմատը կամ հիմքը, ապա երկրի նոր թագավոր Սարգուրի I-ի որդի Իշպուհին և նրան հաջորդող թագավորները իրենց երկիրը կոչում են բուրոսի օտար ծագում ունեցող Բիաինիլի անունով, որի ակունքը գտնվել է Արածանի գետի

հյուսիսային ավազանում տարածված նաիրյան ծագում ունեցող Դայանեի պետության կազմում մտնող Բիանի երկրում: Այս փաստերը վկայում են, որ եթե Արամեի կամ Արամի ստեղծած Ուրարտու կամ Արմենիա պետության բնակիչների, այն է՝ ուրարտների կամ արմենների լեզուն եղել է ուրարտերենը կամ արմեներենը, ապա նոր արքայական դինաստիայի հիմնադիրները, այն է՝ բիաինացիները ունեցել են նաիրյան ծագում, որոնց նախահայրենիքն է եղել Արածանի հյուսիսային ավազանում տարածված Նաիրիի ցեղամիության մեջ մտնող Բիանի երկիրը: Նրանց լեզուն, բնականաբար, նույնպես ունեցել է Նաիրի-բիաինական ծագում: Իհարկե, Նաիրի անունը օտար չի եղել նաև Արածանի հարավային ավազանում տարածված ուրարտներին կամ արմեններին: Այդ տարածքի կենտրոնում գտնվող «Ադի ծովակը» կամ «Վանա լիճը» Սալմանասար III-ի սեպագիր արձանագրություններում կոչվել է «Նաիրի երկրի ծով» (*tāmtū ša māt Nairi*) անունով: Դա նշանակում է, որ բիաինացիների լեզուն թեև տարբերվել է ուրարտների կամ արմենների լեզվից, բայց նրանք ունեին շատ հեռավոր ցեղակցական կապ: Նոր արքայական դինաստիայի թագավորները, սկսած այդ արքայական դինաստիայի հիմնադիր Սարգուրի I-ի (832-822) որդի Իշպուհինի (822-810) ժամանակից, սեպագիր արձանագրություններ են գրել ոչ թե ուրարտերեն կամ արմեներեն լեզվով, այլ բիաիներեն լեզվով: Դա բացատրվում է նրանով, որ սկսած շումերների ժամանակակից սեպագիր արձանագրությունները գրելու համար ընտրվել է այնպիսի լեզուն, որը ունեցել է փոքր հնչյունական կազմ, քանի որ նրա հետ աշխատելը ավելի հեշտ է եղել: Այդպիսի լեզվի հնչյունների թիվը չի անցել 20-21 հնչյուններից: Այդ է պատճառը, որ Ուրարտու կամ Արմենիա պետության ժամանակ նախասիրությունը տրվել է բիաիներեն լեզվին, որի հնչյունների թիվը հասել է 21-ի, այլ ոչ թե արմեներենին կամ ուրարտերենին, որի հնչյունների թիվը հասել է 36-ի, որոնք գրվել են 39 տառով: Բայց եթե միապաղաղ (տրաֆարետ) ձևով ժայռերի, քարերի վրա գրվող բիաիներեն սեպագիր լեզուն չի կարողացել զարգանալ, հարստանալ և դառնալ համաժողովրդական լեզու և դուրս մղել ասպարեզից ուրարտների կամ արմենների խոսակցական, բանավոր լեզուն, ապա հակառակ դրան, ուրարտների կամ արմենների խոսակցական, բանավոր լեզուն, որը մինչ այդ էլ համազգային լեզու էր, երբ դեռ չէր փոխվել երկրի արքայական դինաստիան, և դեռ չէր առաջացել սեպագիր գրությունը, դրանից

հետո էլ ժամանակի ընթացքում ավելի է հարստացել, հզորացել և դարձել համաժողովրդական խոսակցական, բանավոր լեզու, երբ դադարել է գործածությունից բիաիներեն սեպագիր գրությունը: Նույնիսկ վանկագիր սեպագրությունից հետո էլ, երբ իր հնչյունների առատության պատճառով ուրարտների կամ արմենների լեզվով հնարավորություն չէրավ հնչյունագիր գրության անցնել այնքան ժամանակ, մինչև որ հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը հասկանալով դրա պատճառը, որը թաքնված է հնչյունների շատության մեջ, և ուրարտների կամ արմենների լեզվի համար ստեղծեց սեփական այբուբեն, ու նոր ստեղծվեց ուրարտերեն կամ արմեներեն լեզվով գրությունը: Այս ամբողջ փաստերը հաշվի չեն առնվել վերոհիշյալ հետազոտողների կողմից, որ սեպագիր ժամանակաշրջանում արմենների լեզվով գրության բացակայության պատճառով արմեններին համարել են եկվոր ցեղեր և դուրս թողել նրանց ունեցած տեղն ու դերը Յին Արևելքի պատմագրությունից:

Եթե այս եզրակացությունը սկիզբ է առել մեր կողմից բացահայտված վերոհիշյալ 6 արձանագրությունների տվյալների հիման վրա, ապա այն մեկ անգամ ևս հաստատվում է մեր կողմից բոլորովին նոր հայտնաբերված սեմական ծագում ունեցող սեպագիր տեքստերի շնորհիվ, որոնց մեջ կան 29 արձանագրություններ և 19 ասուրական արքայական հետախուզական նամակներ, որոնք հետախույզները ուղարկել են իրենց ժամանակակից ասուրական թագավորներին: Դրանցում անխտիր հիշատակված են Ուրարտու (Ուրաշտու) երկրի և նրանց ուրարտներ (ուրաշտներ) բնակիչների անունները, որոնք թարգմանելիս մենք հաշվի ենք առել վերոհիշյալ 6 արձանագրությունների թարգմանության տվյալները և հայտնաբերել ենք լեզվական կայուն մի օրենք, որը տարածել ենք այս 48 սեպագիր տեքստերի թարգմանության վրա ու ստացել ենք Արմենիա (Արմինա) երկրի և արմեններ (արմիններ) բնակիչներ հասկացությունները:

Ասորեստանի թագավորների այդ սեպագիր արձանագրությունները և նրանց ուղարկված այդ արքայական հետախուզական սեպագիր նամակները մեր սույն աշխատության մեջ հիշատակված են ըստ ասուրական թագավորների կառավարման հաջորդականության: Այդ 29 սեպագիր արձանագրություններից 1-ը պատկանում է Ասորեստանի թագավորներից Աշշուրնաժիրապալ II-ին (883- 859), 6-ը պատկանում են Սալմանասար III-ին (859- 824), 4-ը պատկանում են Թիգլաթպալասար III-ին (745-727), 7-ը պատկանում

են Սարգոն II-ին (722-705), 1-ը պատկանում է Սինախերիբին (705-681), 2-ը պատկանում են Ասարխադդոնին (680-669), 4-ը պատկանում են Աշշուրբանապալին (668-633): Մնացած արձանագրություններից մեկը, որը գրվել է դարձյալ սեմական ծագում ունեցող ասուրերեն լեզվով, ոչ թե պատկանում է ասուրական, այլ բիաինական թագավոր Ռուսա I-ին (735-713), որը այդ թագավորի երկլեզվյան (բիաիներեն, ասուրերեն) արձանագրության ասուրերեն տարբերակն է: Այնտեղ հիշատակված Ուրարտու երկրանունը, որը թարգմանվում է, ինչպես ընդգծվել է նախորդ շարադրանքում, Արմենիա երկիր: Հաջորդ արձանագրության հեղինակը անհայտ է: Այն գրվել է 612-609 թվականների պատերազմից հետո, երբ Բաբելոնի թագավոր Նաբուսապալուսուրի (Նաբուսալասարի) և Մեդիայի (Մարաստանի) թագավոր Ումաքիշթարի (Կիաքսարի) զորքերը կործանում են ասուրական պետությունը, որի կապակցությամբ գրում են բաբելոններեն լեզվով սեպագիր ժամանակագրություններ, որտեղ հիշատակում են Ուրաշտու երկրանունը սեմական ծագում ունեցող բաբելոններեն լեզվով, որը մեր կողմից վերևում հիշատակված 6 արձանագրությունների օրինակով թարգմանվում է Արմինա երկիր: Հաջորդ արձանագրությունը գրել է մ.թ.ա. 415 թվականին Ուրաշտու երկրի և Մելիդու երկրի վրա Աբենենյան պետության կողմից նշանակված կառավարիչ Շամեշ-բարաքքուն: Մեր կողմից վերևում հիշատակված 6 արձանագրությունների օրինակով կամ մեր կողմից հայտնաբերված «լեզվական կայուն օրենքի» համաձայն այդ երկրներից Ուրաշտու երկիրը թարգմանվում է Արմինա երկիր: Հաջորդ արձանագրությունը գրվել է III-II դարերում, որը հայտնաբերվել է Կուլբանյան ձեռագրերում HWRRT ձևով: Այն գրվել է սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով և հիշեցնում է Աստվածաշնչի ջրհեղեղի ավանդությունը, երբ, ըստ Եսայի մարգարեի, Նոյ նահապետի տապանը հանգրվան է գտնում 'RRT = Urartu «Ուրարտու» երկրի լեռների վրա և մարդկային ցեղը փրկվում է ջրհեղեղի կործանումից: Մեր կողմից վերևում հիշատակված 6 արձանագրությունների օրինակով այդ 'RRT = Urartu «Ուրարտու» երկրի լեռները թարգմանվում են Արմենիա երկրի լեռներ, որոնց շնորհիվ մարդկային ցեղը փրկվում է ջրհեղեղի կործանումից: Ինչ վերաբերում է ասուրական արքայական հետախուզական նամակներին, ապա դրանցից 17-ը հետախույզները ուղարկել են Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին, իսկ մեկն ուղարկել են

Ասորեստանի թագավոր Ասարխադդոնին, իսկ մյուսն էլ ուղարկել են Ասորեստանի թագավոր Աշշուրբանապալին: Նամակների տեքստերում, ինչպես արձանագրությունների տեքստերում է, դարձյալ սենական ծագում ունեցող լեզուներով հիշատակված են Ուրարտու և Ուրաշտու երկրանունները և նրանց ուրարտներ ուրաշտներ բնակիչների անունները: Մենք այդ 19 ասուրական արքայական հետախուզական նամակները վերլուծելիս հաշվի ենք առել վերոհիշյալ 6 արձանագրությունների թարգմանության տվյալները և մեր կողմից հայտնաբերված «լեզվական կայուն օրենքի» փաստերը և ուշադրություն ենք դարձրել այդ 19 հետախուզական նամակների տեքստերում տեղ գտած Ուրարտու (Ուրաշտու) և ուրարտներ (ուրաշտներ) բառերի վրա ու դրանք թարգմանել ենք Արմենիա (Արմինա) երկիր և արմեններ (արմիններ) բնակիչներ:

Արդյունքում վերոհիշյալ 6 արձանագրությունների, նոր հայտնաբերված 30 արձանագրությունների և 19 հետախուզական նամակների տեքստերը միացնելով ստացվել են 54 տեքստեր: Դրանց մեջ հիշատակված Ուրարտու (Ուրաշտու) երկրները և նրանց ուրարտներ (ուրաշտներ) բնակիչները համազոր են հնդեվրոպական ծագում ունեցող Արմենիա (Արմինա) երկրին և նրանց արմեններ (արմիններ) բնակիչներին: Դրանցից առաջինները, այսինքն՝ Ուրարտու (Ուրաշտու) երկիրը և նրա ուրարտներ (ուրաշտներ) բնակիչները մեր կողմից հայտնաբերված «լեզվական կայուն օրենքի» հիման վրա թարգմանվում են Արմենիա (Արմինա) երկիր և արմեններ (արմիններ) բնակիչներ: Նրանց անունների տարբերությունը առաջացել է այն լեզուների էթնիկական տարբերություններից, որոնցով ավանդվել են այդ անունները: Ուստի հաշվի առնելով այս հսկայական փաստերը այսուհետև համարձակորոն կարող ենք ասել, որ ուրարտական պետությունը դա արմենական կամ հայկական պետությունն է:

Այս բացահայտումը բոլորովին նոր խոսք է Ուրարտու կամ Արմենիա պետության մութ հարցերը լուսաբանելու գործում: Փաստորեն այդ լուսաբանման շնորհիվ ի հայտ է գալիս, որ Արմենիա երկիրը, պետությունը և նրա արմեններ բնակիչները գոյություն են ունեցել ու հիշատակվել են Ասորեստանի թագավորներ Աշշուրնաժիրապալ II-ի, Սալմանասար III-ի, Թիգլաթպալասար III-ի, Սարգոն II-ի, Սինախերիբի, Ասարխադդոնի, Աշշուրբանապալի ժամանակներից, որը անտեսել են վերոհիշյալ հետազոտողները,

մասնավորապես նրանցից Բ.Բ. Պիտտրովսկին: Աստվածաշնչի ջրհեղեղի ավանդությունը ցույց է տալիս, որ ուրարտները կամ արմենները եղել են տեղաբնիկներ, և նրանք ծագել (ծնվել) ու ապրել են Ուրարտու կամ Արմենիա երկրում, քանի որ Ուրարտու կամ Արմենիա երկրի լեռների վրա է հանգրվանել համաշխարհային ջրհեղեղի ժամանակ Նոյ նահապետի տապանը, և մարդկային ցեղը փրկվել է համաշխարհային ջրհեղեղի կործանումից այդ Ուրարտու կամ Արմենիա երկրի լեռների շնորհիվ:

2. Ուրարտական կամ արմենական պետության պարբերացումը (պերիոդիզացիան) ունեցել է 4 գլխավոր փուլեր: Առաջին փուլը սկսվել է այդ պետության քաղաքական ասպարեզ գալու արշալույսից մինչև այդ պետության կողմից կազմակերպվող նվաճողական արշավանքները: Առաջին փուլի բնորոշ գիծը այն է, որ նրա ընթացքում ուրարտական կամ արմենական պետությունը սահմանափակված էր իր բուն տարածքի և իր բուն բնակչության շրջանակներում: Այդ փուլը համընկնում է Ուրարտուի կամ Արմենիայի առաջին թագավոր Արամեի (859-832) և նրան հաջորդող Սարդուի I-ի (832-822) կառավարման ժամանակաշրջանի հետ:

Երկրորդ փուլը սկսվել է այն ժամանակվանից, երբ ուրարտական կամ արմենական պետությունը ձեռնարկել է նվաճողական արշավանքներ, որոնց ընթացքում նվաճել է շուրջ 130 մեծ ու փոքր երկրներ, ձեռք բերել մեծ քանակությամբ գերիներ, կողոպուտ, այդ երկրների մի մասը դրել հարկի տակ, մյուս մասը միացրել Ուրարտուի կամ Արմենիայի տարածքին ու խիստ հզորացել: Երկրորդ փուլի բնորոշ գիծը այն է, որ նրա ընթացքում ուրարտական կամ արմենական պետությունը խիստ վերելք է ապրել և Ասորեստանից իր ձեռքն է վերցրել Առաջավոր Ասիայի առաջնությունը: Այդ փուլը համընկնում է Ուրարտուի Արմենիայի թագավորներ Իշպուլիմի (822-810), Մենուայի (810-7896), Արգիթի I-ի (786-764), Սարդուրի II-ի (764-735) կառավարման ժամանակաշրջանի հետ:

Երրորդ փուլը սկսվել է Սարդուրի II-ի կառավարման վերջին շրջանից, երբ Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար III-ը, նախ մ.թ.ա. 743 թ Արպադդի, ապա՝ մ.թ.ա. 735 թ Կիշթանի ճակատամարտերում պարտության է մատնում Սարդուրի II-ին և նրա կողմից թանակահանգի: Վերջին ճակատամարտից հետո ներխուժում է Ուրարտուի կամ Արմենիայի սահմաններից ներս, պաշարում նրա

Յուշպա (աստուրերեն Տուրուշպա) արքայական քաղաքը, որտեղ փակվել էր Սարգուրի II-ը, ասպատակում երկիրը: Դրանից հետո տապալվում է Սարգուրի II-ի կողմից ստեղծված հակա-աստուրական կռալիցիան, Ուրարտուից կամ Արմենիայից անջատվում են երկրի հարավարևմուտքում, հարավում և հարավարևելքում նվաճված շատ երկրները: Այդ բոլորից հետո քաղաքական աշխարհում Ուրարտուն կորցնեն է իր հեղինակությունը, և նրա ձեռքից Առաջավոր Ասիայի առաջնությունը կրկին ացնում է Ասորեստանին: Այդ ժամանակվանից սկիզբ է առնում ուրարտական պետության պարբերացման (պերիոդիզացիայի) վայրէջքի փուլը: Այդ փուլը շարունակվում է ընդհուպ Ուրարտուի կամ Արմենիայի թագավորներ Ռուսա I-ի (735-713), Արգիշթի II-ի (713-685), Ռուսա II-ի (685-645), Սարգուրի III-ի (645-635), Սարգուրի IV-ի (635-585) կառավարման ժամանակաշրջանը:

Չորրորդ փուլը սկսվել է մ.թ.ա. 585 թվականից, երբ Մեդիայի ու Լյուդիայի (Լիդիայի) միջև մղվող քառանյա պատերազմը ավարտվում է մի պայմանագրով, որի համաձայն Հալիս գետից դեպի արևմուտք գտնվող երկրները անցնում են Լյուդիայի գերիշխանության տակ, իսկ այդ գետից դեպի արևելք գտնվող երկրները, որոնց մեջ էր մտնում նաև Ուրարտուն կամ Արմենիան, անցնում է Մեդիայի գերիշխանության տակ, որի թագավորն էր Կիաքսարը (625-585)(Լյուդիայի թագավորն էր Կրեսոսը): Այդ ժամանակ Ուրարտուի կամ Արմենիայի թագավոր Սարգուրի IV-ին հաջորդում է Էրիմենան, երբ արդեն Մեդիայի գահին Կիաքսարին հաջորդել էր Աստիագես կամ Աժդահակը (585-550): Ուրարտու կամ Արմենիա պետությունը թեև պահպանել էր իր արքայական գահը, բայց դարձել էր Մեդիային հարկատու երկիր ու պարտավոր էր նրան տարեկան տրամադրել էր 4.000 հեծյալ և 20.000 հետևակ զինվոր, որը կազմում էր երկրի զինվորական ուժի կեսը, ինչպես նաև պարտավոր էր վճարել էր 50 տաղանդի չափով հարկ, որը կազմում էր 1515 կգ արծաթ կամ 200.000 ոսկի ռուբլի: Ուրարտու կամ Արմենիա պետությունը ոչ միայն դառնում է Մեդիայի հարկատու երկիր, այլև չի կարողանում դիմել նվաճողական արշավանքների, այսինքն՝ զրկվել էր նաև քաղաքական անկախությունից:

Ուրարտական պետության վերջին թագավորներ Սարգուրի IV-ի, Էրմիմայի, Ռուսա III-ի և Ռուսա IV-ի ժամանակագրությունները հայտնի չեն: Ժողովրդական ավանդությունները հիշատակվում են այդ նույն ժամանակաշրջանում Ուրարտու կամ Արմենիայի պետության թագավորներ Պարուրի, «Երվանդ կամ Արմենի հայր Տիգրանի»,

«Երվանդ կամ Արմենի», «Երվանդ կամ Արմենի որդի Տիգրանի» մասին: Ակներևաբար դրանցից ժողովրդական ավանդություններում հիշատակված թագավորները համապատասխանաբար համընկնում են սեպագիր տեքստերում հիշատակված թագավորներին: Դրանցից առաջինը եղել է Կիաքսարի (625-585), երկրորդը՝ Աժդահակի կամ Աստիագեսի (585-550), երրորդը՝ Կյուրոս Մեծի (550-529), իսկ չորրորդը՝ Կամբյուսեսի (529-522) ժամանակակիցը: Ուստի Կիաքսարի, Աժդահակի, Կյուրոս Մեծի և Կամբյուսեսի ժամանակագրությունները պայմանական կարգով կարելի է վերագրել ինչպես ժողովրդական ավանդություններում, այնպես էլ սեպագիր արձանագրություններում համապատասխանաբար միմյանց համընկնող թագավորներին: Փաստորեն Սարգուրի III-ին (645-635) Ուրարտու կամ Արմենիա երկրի գահին հաջորդել է Սարգուրի IV–Պարուրը, երբ Մեդիայում թագավորում էր Կիաքսարը (625-585), Սարգուրի IV–Պարուրին հաջորդել է Ռուսա IV–«Երվանդ–Արմենի որդի Տիգրանը», երբ Մեդիայում թագավորում էր Կամբյուսեսը (529-522): Ռուսա IV–«Երվանդ–Արմենի որդի Տիգրանով» ավարտվում է Ուրարտու կամ Արմենիայի թագավորությունը, քանի որ Կամբյուսեսին հաջորդող Դարեհ I-ի (522-485) թագավորության սկզբին, այսինքն՝ մ.թ.ա. 522 թ. Պարսկաստանի գերիշխանության տակ գտնվող երկրները զրկվում են իրենց թագավորներից, որոնց փոխարինում են պարսկական սատրապները: Ուրարտու կամ Արմենիայի սատրապ է դառնում Դարեհ I-ի փեսան՝ Արտոքմեսը: Չորրորդ փուլի բնորոշ գիծը այն է, երբ Ուրարտու կամ Արմենիան նախ զրկվում է տնտեսական և քաղաքական անկախությունից, իսկ վերջում էլ զրկվում է իր թագավորությունից, որից հետո ավելի է ծանրանում ժողովրդի տնտեսական վիճակը, քանի որ 4 անգամ ավելանում է Պարսկաստանին վճարվող հարկի քանակը (ըստ Յերոզոտոսի հաղորդած տեղեկության, Արմենիան և Պակտյուիկեն Պարսկաստանին վճարում էին 400 տաղանդ հարկ, մոտավորապես դրա կեսը, այսինքն՝ 200 տաղանդը պիտի բաժին հասներ Արմենիային, որը հավասար էր 6060 կգ արծաթի կամ 800.000 ոսկի ռուբլու), իսկ երկրի զինվորական ուժն էլ, որը կազմում էր 8000 հեծյալ և 40000 հետևակ, ամբողջափն ենթարկվում է Պարսկաստանին: Այդ պատճառով Դարեհ I-ի թագավորության սկզբին, այն է՝ մ.թ.ա. 522 թ. Պարսկաստանի դեմ Ուրարտուն կամ Արմենիան ապստամբում է, որի ընթացքում տեղի են ունենում 5 արյունահեղ ճակատամարտեր: Սակայն այդ

ապստամբությունը ավարտվում է պարտությամբ, քանի որ Պարսկաստանը այդ ժամանակ ավելի ուժեղ էր:

Ուրարտական կամ արմենական պետության դինաստիական կառուցվածքի մեջ առանձնանում են՝ 1) Արամեի կամ Արամի արքայական դինաստիան (859-832), 2) Սարգոհրի I-ի արքայական դինաստիան (832-585), 3) Էրիմենայի արքայական դինաստիան (585-522): Այդ երեք դինաստիաներից առաջինը և երրորդը ունեին բնիկ ուրարտական կամ արմենական ծագում, իսկ երկրորդը ուներ նաիրի-բիսինական ծագում: Այդ բոլոր արքայական դինաստիաների ժամանակ միջազգային ասպարեզում միշտ կանգուն է մնացել երկրի պետությունը, որը սեմական լեզուներով կոչվել է Ուրարտու (Ուրաշտու) անունով, իսկ հնդեվրոպական և հնդիրանական լեզուներով կոչվել է Արմենիա (Արմինա) անունով: Նրա բնակիչները միջազգային ասպարեզում միշտ կոչվել են այդ պետության հիմնական, տեղաբնիկ ուրարտների կամ արմենների անունով:

3. Ուրարտական կամ արմենական պետության կազմավորումը տեղի է ունեցել երեք փուլերով, որոնցից վերջինը ունեցել է 3 ենթափուլեր: Առաջին փուլը, որը համընկնում է ուրարտական կամ արմենական պետության պարբերացման առաջին փուլին, վերաբերել է այդ պետության քաղաքական ասպարեզ գալուն: Առաջին փուլը համընկնում է Արամեի (859-832) և Սարգոհրի I-ի (832-822) կառավարման ժամանակաշրջանի հետ:

Ուրարտական կամ արմենական պետության կազմավորման երկրորդ փուլը, որը համընկնում է այդ պետության պարբերացման վերելքի փուլին, սկսվել է այն ժամանակից, երբ սկսվել են ուրարտական կամ արմենական թագավորների նվաճողական արշավանքները: Դրանց ընթացքում ուրարտական կամ արմենական պետությունը նվաճել է իր շրջակայքում գտնվող շուրջ 130 մեծ ու փոքր երկրներ: Նվաճված այդ երկրների տնտեսական միջոցների և մարդկանց ֆիզիկական ուժի շնորհիվ ուրարտական կամ արմենական պետությունը խիստ վերելք է ապրել և Ասորեստանից իր ձեռքն է վերցրել Առաջավոր Ասիայի առաջնությունը: Ուրարտական կամ արմենական պետության կազմավորման II-րդ փուլը համընկել է այդ պետության թագավորներ Իշպուլինիի (822-810), Մենուայի (810-786), Արգիշթի I-ի (786-764), Սարգոհրի II-ի (764-735) կառավարման ժամանակաշրջանի հետ:

Ուրարտական կամ արմենական պետության կազմավորման երրորդ փուլը, որը համընկնում է այդ պետության վայրէջքի փուլին, ունեցել է երեք ենթափուլեր:

Առաջին ենթափուլը սկսվել է Սարգոհրի II-ի կառավարման երկրորդ փուլից, երբ Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար III-ը մ.թ.ա. 735թ. Կիշթանի ճակատամարտում պարտության է մատնում Սարգոհրի II-ին, տապալում նրա ստեղծած հակա-ասսուրական կռալիցիան, ներխուժում Ուրարտուի կամ Արմենիայի սահմաններից ներս, ասպատակում երկիրը: Դրա հետևանքը լինում է այն, որ Ուրարտուի կամ Արմենիայի կողմից նվաճված այն երկրները, որոնք տարածված էին երկրի հարավում, հարավարևմուտքում և հարավարևելքում, անջատվում են նրանից: Ուրարտուի կամ Արմենիայի կազմավորմանը շարունակում են միայն մասնակցել այն երկրները, որոնք գտնվում էին երկրի հյուսիսում, հյուսիսարևմուտքում և հյուսիսարևելքում, այսինքն՝ հեռու էին Ասորեստանի ազդեցությունից:

Երկրորդ ենթափուլը համընկնում է Ուրարտուի կամ Արմենիայի թագավոր Ռուսա I-ի (735-713) կառավարման ժամանակաշրջանին: Ռուսա I-ը փորձում է վերականգնել իր երկրի կորցրած առաջնությունը: Այդ նպատակով նա փորձում է ձեռնարկել նվաճողական արշավանքներ: Թեև նա նվաճում է 19 երկրներ Սևանա լճից այն կողմ, բարձր լեռների վրա ու նպաստ բերում իր երկրի կազմավորմանը, բայց այդ երկրներից նա ոչ մի կողոպուտ չի կարողանում ձեռք բերել: Նա ստիպված ուշադրությունը կենտրոնացնում է սեփական երկրի տնտեսության զարգացման վրա: Նա երկրի հարավարևելքում ստեղծում է հակա-ասսուրական կռալիցիա և կռիվներ է մղում Ասորեստանի սահմանամերձ լեռներում: Սակայն Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը (722-705) նկատելով այդ ամենը, ինքը նախահարձակ է լինում, Ռուսա I-ին մ.թ.ա. 714թ հաղթում Ուաուշի ճակատամարտում, տապալում նրա ստեղծած հակա-ասսուրական կռալիցիան, մտնում Ուրարտուի կամ Արմենիայի խորքերը, ասպատակում երկիրը, որի հետևանքը լինում է այն, որ երկրի հարավարևելքի շատ երկրներ անջատվում են Ուրարտուից կամ Արմենիայից և անցնում Ասորեստանի գերիշխանության տակ: Ռուսա I-ի գործողությունները, փաստորեն, ավելի են խորացնում ուրարտական կամ արմենական պետության վայրէջքը:

Երրորդ ենթափուլը հանդնկնում է Արգիշթի II-ի (713-685) և Ռուսա II-ի (684-645) կառավարման ժամանակաշրջաններին: Նրանք Ասորստանին չգրգռելու և նոր առիթներ չտալու Ասորեստանին հարձակվելու Ուրարտուի կամ Արմենիայի վրա և նոր մարզեր, երկրներ չանջատելու նրանից, իրենց նվաճումները կատարում են նրանից հեռու: Արգիշթի II-ը 6 երկրներ է նվաճում Ուրմիա լճի հյուսիսարևելյան կողմում, մեկ երկիր էլ նվաճում է Սյունիքում: Ռուսա II-ը նվաճում է 2 երկրներ Փոքր Ասիայի հյուսիսարևելքում: Իրենց նվաճած այդ 9 երկրներով Արգիշթի II-ը և Ռուսա II-ը, այնուամենայնիվ, նպաստ են բերում իրենց երկրի կազմավորման գործընթացին:

Ռուսա II-ին հաջորդող ուրարտական կամ արմենական թագավորները, որոնք կառավարում են վայրէջքի փուլում, ընդհանրապես նվաճումներ չեն կատարում, նոր երկրներ էլ չեն անջատվում Ուրարտուից կամ Արմենիայից, և ուրարտական պետության կազմավորման մեջ, փաստորեն, նոր փոփոխություններ չեն առաջանում:

Անկման փուլում, որը սկսվել է մ.թ.ա. 585 թվականից և ավարտվել է մ.թ.ա. 522 թվականին, ուրարտական կամ արմենական պետության նոր կազմավորման մասին խոսելն անհիմնաստ է:

4. Զետագոտողներից ոմանք, այդ թվում Պ. Ջինանսկին Ուրարտուի պետական կառուցվածքը ներկայացրել են աղավաղված ձևով: Նախ՝ նրանք «Ուրարտուի պետական կառուցվածքը» վերնագիրը հիշատակել են «Ուրարտական պետության կառուցվածքը» ձևով, որը սխալ է, քանի որ նման հարցադրում գոյություն չունի, «պետության կառուցվածքը» ուսումնասիրման թեմա չէ: Զետագոտողները իրենց հորինած «Ուրարտական պետության կառուցվածքը» վերնագրի տակ ուսումնասիրել են այդ պետության արքայական տան, երկրի զորքի, արքայական խորհրդի կառուցվածքը, որոնք վերաբերում են երկրի կառավարման համակարգին: Մինչդեռ Ուրարտուի կամ Արմենիայի պետական կառուցվածքը, որի մեջ են մտնում այդ պետության տարածքը, նրա սահմանները, նրա բնակչությունը և վարչա-տարածքային բաժանումը, դուրս են մնացել ուսումնասիրման տեսադաշտից:

Ուրարտուի կամ Արմենիայի պետական կառուցվածքի էությունը արտահայտող այս շատ կարևոր հարցերը բացահայտելիս հենց

առաջին հայացքից անհրաժեշտություն է դառնում դրանց բննարկումը ըստ այդ պետության պարբերացման (պերիոդիզացիայի) փուլերի:

Ուրարտական կամ արմենական պետության պարբերացման (պերիոդիզացիայի) նախնական փուլում, երբ նոր է քաղաքական ասպարեզ եկել այդ պետությունը, նրա տարածքը սահմանափակված էր Վանա լճի հարավային, արևելյան, հյուսիսային ափերից և այնտեղից մինչև Արծանիա կամ Արածանի գետի հարավային կողմը ձգվող տարածքի շրջանակներում: Իսկ երբ այդ պետությունը վերելք է ապրում և նվաճում իր շրջակայքում գտնվող շուրջ 130 մեծ ու փոքր երկրները, բնականաբար, նրա տարածքը խիստ մեծանում է: Այդ պետության պարբերացման (պերիոդիզացիայի) վայրէջքի փուլում, երբ նրանից անջատվում են շատ երկրներ, մասնավորապես երկրի հարավում, հարավարևելքում և հարավարևմուտքում գտնվող երկրները, բնականաբար, այդ տարածքը փոքրանում է (դրանից հետո ընդամենը 28 նոր երկրներ են նվաճվում): Երկրի տարածքի մեջ բուն Ուրարտուից կամ Արմենիայից կետրոնական Ուրարտուից կամ Արմենիայից բացի կայուն կերպով մտնում են Խաթե ցեղամիությունը, Դայանի-Դիաուխի պետությունը և Եթիունի ցեղամիությունը, որոնցից առաջինը գտնվել է երկրի հյուսիսարևմուտքում տարածված Փոքր Զայքում և Վերին Եփրատի ավազանում, երկրորդը՝ երկրի հյուսիսում, որը ձգվել է Արածանիից մինչև Սև ծովը և Վերին Եփրատից մինչև Քուռ գետը, երրորդը՝ երկրի հյուսիսարևելքում, որը ձգվել է Արարտյան դաշտավայրից մինչև Արցախը և Կարսից մինչև Սյունիքը (ներառյալ Նախիջևանը):

Ուրարտական կամ արմենական պետության տարածքի փոփոխման հետ փոփոխվում են նաև նրա սահմանները: Դրանք հիմնականում անկայուն են եղել վերելքի և վայրէջքի փուլերում:

Ուրարտական կամ արմենական պետության տարածքի փոփոխման հետ, բնականաբար, փոփոխվել է նաև նրա բնակչությունը: Վայրէջքի փուլում այդ պետության հարավում, հարավարևելքում և հարավարևմուտքում գտնվող մեղա-մամական, ասսուրա-բաբելոնական, խուրի-շուբիական, արամեական, հյուսիս-սիրիական, խեթա-լուվիական և փռյուզիական աշխարհին պատկանող բնակիչները իրենց տարածքների հետ անջատվում են Ուրարտուի կամ Արմենիայի բնակչությունից: Բուն Ուրարտուում կամ Արմենիայում կենտրոնական Ուրարտուում կամ Արմենիայում գտնվող ուրարտների կամ արմենների հետ այդ պետության բնակչության կազմում ամուր

կերպով մնում են հաթե ցեղամիության, Ղայանի-Դիաուխի պետության և Էթիունի ցեղամիության բնակիչները, որոնք պատկանում էին հնդեվրոպական ծագում ունեցող ուրարտական կամ արմենական էթնիկական աշխարհին: Փաստորեն ուրարտական կամ արմենական պետության բնակչության կազմում տեղ են գրավում մեծաքանակ ուրարտական կամ արմենական և նաիրյան-բիայնական ցեղերը, որոնք ունեին հնդեվրոպական ծագում: Այս վիճակը պահպանվել է մինչև մ.թ.ա. 522 թվականը, այսինքն՝ մինչև Պարսկաստանի թագավոր Դարեհ I-ի (522-485) կառավարման սկզբը, երբ ամբողջ երկիրը սեմական ծագում ունեցող լեզուներով կոչվում է Ուրաշտու (Ուրարտու), իսկ հնդիրանական և հնդեվրոպական լեզուներով կոչվում է Արմինա (Արմենիա), այնպես էլ այդ երկրի բնակիչներն են հավասարապես կոչվում թե ուրաշտներ (ուրարտներ) և թե արմիններ (արմեններ) անուններով: Մ.թ.ա. 522 թվականին Դարեհ I-ը վերացնում է Ուրաշտու-Արմինա կամ Ուրարտու-Արմենիա երկրի պետությունը, նրա թագավորությունը և երկիրը վերածում պարսկական սատրապության, որի վրա որպես կառավարիչ նշանակում է պարսկական ծագում ունեցող սատրապին: Ուրարտու կամ Արմենիա պետության բնակիչները՝ ուրարտները կամ արմենները ապստամբում են պարսկական պետության դեմ և մղում 5 արյունահեղ ճակատամարտեր: Դրանցից 3-ի ժամանակ ուրարտները կամ արմենները հաղթանակի են հասնում պարսկական զորքի նկատմամբ և թժնամուն դուրս քշում իրենց երկրի սահմաններից: Սակայն պարսկական զորքը ստանում է նոր համալրում և մեկ տարի հետո հաղթանակի է հասնում մյուս 2 ճակատամարտերում ու ներխուժում Ուրարտու կամ Արմենիայի սահմաններից ներս և երկիրը ենթարկում իրեն: Դրանից հետո անկախության, ինքնուրույն պետության համար մղվող ուրարտների կամ արմենների պայքարը իր նպատակին հասավ մ.թ.ա. 330 թվականին, երբ անկում ապրեց Աթենյան կայսրությունը և վերականգնվեց Ուրարտու կամ Արմենիա պետությունը: Բայց Աթենյան կայսրության կազմում շուրջ 200 տարի մնալու ընթացքում անկում է ապրել ուրարտներ անունը: Այդ ժամանակից սկսած վերականգնված պետությունը կոչվեց միայն Արմենիա անունով, իսկ նրա բնակիչներն էլ կոչվում են միայն արմեններ անունով:

Ուրարտական կամ արմենական պետության տարածքի և բնակչության փոփոխման հետ փոփոխություն է կրում նաև երկրի վարչա-տարածքային բաժանումը: Ուրարտական կամ արմենական

պետության պարբերացման (պերիոդիզացիայի) սկզբնական փուլում, երբ նոր է այդ պետությունը հանդես եկել քաղաքական ասպարեզ, նրա վարչա-տարածքային բաժանման հիմքում դրված էր քաղաք-ամրոցը իր շրջակայքի բնակավայրերով հանդերձ: Իսկ վերելքի փուլում, երբ ուրարտական կամ արմենական պետությունը հսկայական տարածքներ է նվաճում, անհրաժեշտաբար փոխվում է նրա վարչա-տարածքային բաժանումը: Նրա հիմքում դրվում է ամբողջական ցեղային երկիրը: Սակայն հաճախակի կրկնվող ապստամբությունների ժամանակ մի քանի ցեղային երկրները միանում էին իրար և ցնցում Ուրարտու կամ Արմենիա պետության հիմքերը: Այս հանգամանքը ստիպում է պետությանը ցեղային երկրի փոխարեն վարչա-տարածքային բաժանման հիմքում դնել մարզային բաժանումը: Սակայն դա շատ դանդաղ է առաջ ընթանում երկրում, որի պատճառով էլ պետությունը թուլացել է և հասնում վայրէջքի ու անկման: Ի տարբերություն դրա, Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար III-ը իր երկրի վարչատարածքային բաժանման հիմքում ցեղային երկրի փոխարեն դրել է մարզային բաժանման սկզբունքը, հզորության հասավ և պարտության մատնեց Ուրարտու կամ Արմենիա պետության թագավոր Սարգուբ II-ին և նրանից ետ վերցրեց առաջավոր Ասիայի առաջնությունը:

5. Ուրարտական կամ արմենական պետության կառավարման համակարգը բաղկացած էր երկու մասից: Առաջինը կենտրոնական Ուրարտուի կամ Արմենիայի կառավարման համակարգն էր, իսկ երկրորդը՝ հպատակ (այդ թվում նվաճված) երկրների կառավարման համակարգը: Ընդ որում, կենտրոնական Ուրարտուում կամ Արմենիայում պետական կառավարումը իրականացավ է կառավարման տարբեր օրգանների միջոցով: Դրանք բաժանվել են երկու խմբի՝ պետական կառավարման կենտրոնական օրգաններ և տեղական կառավարման օրգաններ: Ուրարտուի կամ Արմենիայի պետական կառավարման կենտրոնական օրգաններն են կազմել երկրի արքունիքը (սրա մեջ են մտել երկրի մշտական զորքի զինվորական վերնախավը (սրա մեջ են մտել երկրի արքան և արքայի խորհրդականները), զնդապետները, հրամանատարները, ավագները), ուրարտական մարզպետությունը (սրա մեջ են մտել ուրարտական մարզերի պետերը):

Արքան հանդես է եկել իբրև երկրի գերագույն տիրակալը: Նա համարվել է երկրի գերագույն գլխավոր դատավորը: Նրա հրամանով էր սկսվում արշավանքը, կնքվում խաղաղությունը, նրա հրամանով էին նշանակվում կամ ազատվում երկրի բարձրագույն մարմինները, լինեն արքայական կալվածքներում կամ այլուր, թագավորի հրամանով ու կարգադրություններով էին տեղերում հանցագործներին դատում: Թագավորը նաև երկրի ամենամեծ հարկահանն էր: Նա էր հարկի տակ դնում նվաճված երկրները: Նա իր արքայական գնդով արշավում և գանձում էր հարկի տակ դրված երկրներից հարկը, երբ այդ երկրները հրաժարվում էին ինքնական վճարել այն: Ուրարտական կամ արմենական պետությունում ստեղծվել էր թագավորական ժառանգական դինաստիա: Թագավորը իր որդիներից մեկին ընտրում էր թագաժառագ և նրան մասնակից դարձնում իր երկրի կառավարմանը:

Ուրարտուի կամ Արմենիայի թագավորը ունեցել է իր «խորհրդականները»: Սակայն դրանք այն դերը չունեին Ուրարտուում կամ Արմենիայում, ինչը կարող էին ունենալ ցեղային մի երկրում, որտեղ տոհմական ավագանին ուներ ուժեղ ազդեցություն երկրի թագավորի վրա: Իսկ Ուրարտուում կամ Արմենիան, որը հասել է ռազմա-ստրկատիրական պետության աստիճանի, արդեն ետին պլանի վրա էր մղվել տոհմական ավագանին:

Ուրարտուում կամ Արմենիան, լինելով հզոր ռազմա-ստրկատիրական պետություն, ուներ իր հզոր զորքը: Այդ զորքի միջոցով էր իրականացվում երկրների նվաճումը, կատարվում գերեվարությունը, հարկահանությունը, ձեռք բերվում կողոպուտը: Ձորքը Ուրարտուում կամ Արմենիայում, փաստորեն, դարձել էր պետության կառավարման գլխավոր լծակը: Նրա բաղկացուցիչ մասերն էին կազմում արքայական զունդը, երկրի մշտական զորքը, ուրարտական կամ արմենական մարզերի պետերի զորքերը և աշխարհագորը:

Ուրարտական կամ արմենական զորքը կազմված է եղել կառամարտիկներից, հեծյալներից և հետևակներից: Բանակում օգտագործվող զենքի տեսակներից են եղել՝ նիզակները, նետ ու աղեղը, պարսատիկները, իսկ զինվորական հանդերձանքներից են եղել՝ զրահները, վահանները, սաղավարտները, կապարձները, զոտիները: Բանակում որպես զինվորական փոխադրամիջոց օգտագործվել են մարտականքերը և ձիերը: Ուրարտական կամ արմենական մշտական զորքը ունեցել է 2 զորահրամանատարներ:

Սակայն նրանք ինքնուրույն չեն գործել: Նրանք կատարել են երկրի թագավորի հրամանները:

Մարզի պետի պաշտոնը ժառանգական չի եղել: Ուրարտուի կամ Արմենիայի թագավորն է նշանակել մարզերի պետերին, որոնք պարտավոր են եղել կատարել երկրի թագավորի հրամանները:

Կենտրոնական Ուրարտուի կամ Արմենիայի պետական կառավարման տեղական օրգաններն են կազմել՝ արքունի կալվածքների վերակացուները («Կնիքի մարդը» կամ «կնիք բռնողը», «հաշվի մարդը», «փողի մարդը», «ցանքսի մարդը», «ավագ հովիվը», «ալայե», կամ «տերը», «պալատի մարդը» (պալատի անձնակազմի պետը), «բնակավայրի ավագը» կամ «գեղջավագը»): Նրանց միջոցով էր թագավորը իրականացնում արքունի կալվածքների կառավարումը: Նրանք կատարում էին թագավորի հրամանները:

Փաստորեն ուրարտական կամ արմենական պետությունը թեև ունեցել է կառավարման ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական օրգաններ, բայց, այնուամենայնիվ, այն իրենից ներկայացրել է որպես մոնարխիա կամ միապետություն, քանի որ նրա գլուխ կանգնած էր միայն մի անձնավորություն՝ բացարձակ միապետը, արևելյան տիպի բռնակալը, միանձնյա թագավորը, որին պարտավոր էին լսել ու ենթարկվել բոլոր տիպի ղեկավար օրգանները:

Ուրարտուի կամ Արմենիայի հպատակ (այդ թվում նվաճված) երկրների կառավարման համակարգը ունեցել է իր առանձնահատկությունները: Ուրարտուի կամ Արմենիայի թագավորները տիտղոսաշարերում իրենց համարել են ինչպես թագավոր կենտրոնական Ուրարտուի կամ Արմենիայի, այնպես էլ թագավոր «բազում երկրների», որոնց մեջ են մտել Ուրարտուին կամ Արմենիային հպատակ (այդ թվում նվաճված) երկրները: Հպատակ (այդ թվում նվաճված) երկրները, ըստ իրենց կառավարման համակարգի, բաժանվել են հիմնականում 4 խմբի: 1) երկրներ, որոնց կառավարումը իրականացվել է ավանդական թագավորների միջոցով, 2) երկրներ, որոնց կառավարումը իրականացվել է ցեղապետների միջոցով, 3) երկրներ, որոնց կառավարումը իրականացվել է տոհմական համայնքների միջոցով, 4) երկրներ, որոնց կառավարումը իրականացվել է մարզերի պետերի միջոցով:

Ուրարտական պետության կառավարումը իրականացվել է հարկային և իրավական համակարգերի կենսագործունեությամբ: Ընդ որում, ուրարտական կամ արմենական պետությունում գործել են

հարկային գերատեսչություններ և գործակալություններ: Դրանք գործել են ինչպես կենտրոնական Ուրարտուում կամ Արմենիայում, այնպես էլ ծայրագավառներում (հպատակ ու նվաճված երկրներում): Հարկային գործակալության գլուխ կանգնած էր երկրի արքան: Նա էր որոշում նվաճված երկրների վրա դրված հարկերը գանձելու ժամկետները: Ուրարտուում կամ Արմենիայում բազմազան են եղել հարկ ձեռք բերելու աղբյուրները և հարկերի տեսակները:

Ուրարտական կամ արմենական պետությունում, որը ունեցել է ռազմա-ստրակտիրական բնույթ, գոյություն են ունեցել սեփականության երեք ձևեր՝ 1) պետական, 2) մասնավոր, 3) տաճարային: Ուրարտական կամ արմենական իրավունքը, իրավական նորմերը կոչված են եղել ծառայելու իրենց ռազմա-ստրակտիրական պետությանը, նրա սեփականության այդ երեք ձևերին: Ուրարտուում կամ Արմենիայում իրավական նորմերի, օրենքների ժողովածու կամ կողտես չի եղել: Դրան փոխարինել են թագավորական արձանագրություններն ու տարեգրությունները: Եթե թագավորական արձանագրություններից ամեն մեկը իրենցից ներկայացնում էր որպես արքայական մի հրամանագիր, ապա տարեգրությունները իրենցից ներկայացնում էին որպես բազմաթիվ հրամանագրերի ժողովածու կամ կողտես: Իրավական նորմերի խախտումները եղել են երկու տեսակ: Դրանիցից մեկը վերաբերվել է բնակչության առօրեական, կենցաղային փոխհարաբերություններին, իսկ մյուսը՝ պետությանը, մասնավորապես արքայական արձանագրությունների փչացմանը, նախատեսված հարկերից հրաժարվելուն՝ հարկատու երկրների կողմից: Եթե առաջինի դեպքում պատիժ (սանկցիա) չի նախատեսվել, այլ ուղղակի բավարարվել են խախտված նորմների վերականգնումով, ապա երկրորդի դեպքում նախատեսվել է պատիժ (սանկցիա): Արքայական արձանագրություններ փչացնողների համար սահմանվել է պատժի (սանկցիայի) ամենաբարձրագույն ձևը՝ մահապատիժը, իսկ հարկից հրաժարվող երկրների թագավորներին սպասվել է պատժի գանազան միջոցներ՝ ծունկի գալը, ոտքեր համբուրելը, երկրից հեռանալը, նրա ժողովրդին գերեվարելը և այլն:

6. Ուրարտական կամ արմենական պետությունը ունեցել է զարգացած տնտեսություն: Ուրարտուում կամ Արմենիայում գոյություն են ունեցել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր և տաճարային

տնտեսություններ: Ուրարտական կամ արմենական և ասսուրական սեպագիր արձանագրությունները տեղեկություններ են պահպանել Ուրարտուի կամ Արմենիայի պետական տնտեսության զարգացման, նրա փոփոխության փուլերի մասին: Դրանք, բնականաբար, համընկել են ուրարտական կամ արմենական պետության պարբերացման (պերիոդիզացիայի) փուլերի հետ: Ուրարտուի կամ Արմենիայի տնտեսությունը, երբ այդ պետությունը նոր է քաղաքական ասպարեզ եկել, սահմանափակված է եղել բուն Ուրարտուի կամ Արմենիայի տարածքներից ստացած եկամուտների շրջանակներով: Ըստ Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի Բալավաթյան պալատի բրոնզե բարձրաքանդակների տվյալների, այդ փուլում Ուրարտուի կամ Արմենիայի տնտեսության հիմնական ճյուղերն են եղել՝ դաշտավարությունը (հացահատիկի մշակություն), անասնապահությունը, բրուտագործությունը և մետաղամշակության հետ կապված զինագործությունը, զարդագործությունը: Ուրարտական կամ արմենական պետության վերելքի փուլում, երբ այդ պետությունը դիմում է նվաճողական արշավանքների և ձեռք է բերում մեծ քանակությամբ գերիներ, կողոպուտ, հարկ ու տուրք, վերելք է ապրում նաև նրա տնտեսությունը: Ուրարտական կամ արմենական պետության վայրէջքի փուլում, երբ խիստ սահմանափակվում են նվաճողական արշավանքները, վայրէջք է ապրում նաև երկրի տնտեսությունը: Ուրարտական կամ արմենական պետության անկման փուլում, երբ այդ պետությունը ոչ միայն նվաճումների չի դիմում, այլև ինքն է ենթարկվում պարսկական պետությանը և նրան թե զինվորական և թե տնտեսական հարկ է վճարում, բնականաբար, անկում է ապրում նաև նրա տնտեսությունը: Փաստորեն ուրարտական կամ արմենական պետության տնտեսական կյանքը անխզելիորեն կապված է նրա քաղաքական կյանքի հետ: Երբ քաղաքական ասպարեզում ուրարտական կամ արմենական պետությունը վերելք է ապրում, ինքնստիքյան վերելք է ապրում նաև նրա տնտեսությունը: Վերելքի փուլում ուրարտական կամ արմենական պետության տնտեսության ավանդական ճյուղերի կողքին տեղ են գրավում այգեգործությունը, ամրոցաշինությունը, արհեստական ոռոգման ցանցի ստեղծումը, առևտուրը և այլն:

Ուրարտուի կամ Արմենիայի մասնավոր և տաճարային տնտեսությունների մասին այնքան փաստեր չկան, որ դրանք էլ վերլուծվեն այդ պետության պարբերացման (պերիոդիզացիայի)

փուլերի հաջորդականությամբ: Մասնավոր տնտեսության մասին թեև փաստերը սուղ են, բայց, այնուամենայնիվ, հասկացվում է, որ մասնավոր տնտեսություններ են ունեցել ուրարտական կամ արմենական պետության ներկայացուցիչները՝ արքայական տան անդամները, զինվորական վերնախավի անդամները, արքայական պալատի անձնակազմի պետերը, ինչպես նաև շարքային մարդիկ: Ուրարտական կամ արմենական պետությունը, մասնավորապես երկրի թագավորը թույլ է տվել մասնավոր տնտեսություններ ստեղծել երկրում և հոգ է տարել դրանց աշխատանքները հաջող կազմակերպելու ուղղությամբ:

Ուրարտուի կամ Արմենիայի տաճարները ունեցել են ինչպես հողագործական և անասնապահական, այնպես էլ պատրաստի գույքի տնտեսություններ: Դրանցից անասունները և պատրաստի գույքը տաճարները ստացել են նվիրատվության ճանապարհով: Նման նվիրատվություն են կատարել երկրի արքաները: Անասունները տրամադրվել են զոհաբերության համար: Պատրաստի գույքը, որի մեջ մեծ տեղ են գրավել զենքերը, ունեցել է զարդի (տաճարները զարդարելու) նպատակ: Դրանք հատկապես նվիրվել են ուրարտական կամ արմենական աստվածների պանթեոնի զխավոր Աստված Խալդիին: Հողագործական տնտեսություններից ստացված եկամուտներով ապրել են ուրարտական կամ արմենական կրոնի սպասավորները: Մեծ քանակությամբ պատրաստի գույք է ունեցել Մուծածիր երկրի Արդինի արքայական քաղաքում գտնվող ուրարտական կամ արմենական պանթեոնի զխավոր Աստված Խալդիի տաճարը, որի մասին տեղեկություն է պահպանել Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը (722-705), երբ թափանցել է այնտեղ ու կողպտել այդ գույքը:

7. Ուրարտուի կամ Արմենիայի հասարակարգի՝ նրա սոցիալական հարաբերությունների մասին տեղեկությունները առնչվել են ուրարտական կամ արմենական քաղաքների, ամրոցների և նրանց շրջակայքի բնակավայրերի հետ: Այս տեսակետից Ուրարտուի կամ Արմենիայի քաղաքներից ուշադրության են արժանի Ռուսախինիլի քաղաքը, «Ռուսայի փոքր քաղաքը» և Թեյշեբաինի քաղաքը: Դրանցից առաջինը գտնվել է Ուրարտուի կամ Արմենիայի կենտրոնական մասում՝ Վանա լճի ավազանում, երկրի Տուշպա արքայական քաղաքի արևելքում, երկրորդը՝ բուն Ուրարտուի կամ Արմենիայի

ծայրամասերից մեկում (Բաստամում՝ Ուրմիա լճից հյուսիսարևմուտք, Մակուի օկրուգում), երրորդը՝ նվաճված Ագա (Ուագա, Վագա) երկրում (Կարմիր բլուր՝ Երևանից հարավարևմուտք, Արարատյան դաշտավայրում): Այնպես որ, պետության տարբեր մասերում գտնվող այդ քաղաքների սոցիալական կյանքը ընդհանուր պատկերացում կարող է տալ ընդհանրապես Ուրարտուի կամ Արմենիայի քաղաքների սոցիալական կյանքի մասին:

Ռուսախինիլի քաղաքի հասարակության խավերից են եղել՝ 1) «մարինները» կամ պալատից դուրս աշխատող արհեստավորները, որոնց մեջ են մտել «թարդաշխենները» և «գավաթագործները», 2) պալատից դուրս, պետական տնտեսությունում հարկադիր աշխատանք կատարող «ներքինիները», որոնց մեջ են մտել «պատանիները», «հաշվի մարդու մոտ աշխատողները», «մանածագործուհիները», «շնապահները», 3) «շուրեխները» կամ ներկայացուցիչները «բազում երկրների», որոնք ենթարկվում էին Ուրարտուին կամ Արմենիային, 4) «ժողովրդի մարդիկ» կամ շարքային, աշխատավոր մարդիկ, որոնք վերցվել էին համայնականներից՝ աշխատեցնելու նպատակով, 5) «էշիաթները պալատի» կամ «էշիաթ մարդիկ պալատի», որոնց մեջ են մտել «պալատի ներքինիները», «խալբիվները պալատի», «զինեգործները պալատի», «ծիպիքաները պալատի», 6) «ունկաիթաները» կամ «ունկաիթա մարդիկ», որոնց մեջ են մտել ոմն «Ուբիաբիի մոտ աշխատողները», «ջորեպանները», «գարուրդա զինագործները», «պուլիացիները» կամ «Պուլի երկրի մարդիկ»: Ռուսախինիլիի հասարակության անդամները հավասար իրավունքներից չեն օգտվել: Այնտեղ գտնվող «հաշվի մարդը» և ոմն Ուբիաբին, որոնց առջև մարդիկ են ծառայել, եղել են այդ հասարակության իշխող, արտոնյալ դասի, տերերի դասի ներկայացուցիչները, իսկ մյուսները եղել են ճնշվածների դասի, ծառաների կամ ստրուկների դասի ներկայացուցիչները:

«Ռուսայի փոքր քաղաքի» հասարակության խավերն են ներկայացրել «պալատի մարդը» (պալատի անձնակազմի պետը), որը մասնավոր սեփականատեր էր (ուներ իր սեփական այգին), պալատում աշխատող, պարհակային աշխատանք կատարող ամրոցաբնակ տեղացի մարդիկ, որոնք զուրկ էին սեփականությունից: Նրանք իրավունք չունեն առանց երկրի թագավորի հրամանի հեռանալ պալատից, հրաժարվել

աշխատանքից: Նրանք իրենց աշխատանքի դիմաց սնվում էին պետության հաշվին, այսինքն՝ ապրում էին պետական բավարարությամբ: Նրանք իրավունք ունեն կազմել ընտանիք, ունենալ երեխաներ: Նրանց չափահաս երեխաները պարտավոր էին աշխատել պալատում, կատարել պարհակային աշխատանքներ և ապրել պետության բավարարությամբ, իսկ անչափահաս երեխաները ծնողների նման ապրում էին պետության բավարարությամբ: Ծերերը, որոնք ի վիճակի չէին աշխատել, մնում էին պալատում և ապրում պետության բավարարությամբ: Նրանք իրավունք չունեին հեռանալ պալատից առանց թագավորի հրամանի: Փաստորեն պալատում պարհակային աշխատանք կատարող ամբողջաբնակ, տեղացի մարդիկ, որոնք զուրկ էին սեփականությունից և ապրում էին պետության բավարարությամբ, գրեթե մոտ էին կանգնած ուրարտական կամ արմենական ստրուկներին, որոնք նույնպես զուրկ էին սեփականության իրավունքից և ապրում էին պետության բավարարությամբ: Ի տարբերություն նրանց, ստրուկները զուրկ են եղել նաև անձնական իրավունքից (վերջիններս կարող էին ամուսնանալ միայն թագավորի թույլտվությամբ):

Թեյշեբահնի (Կարմիր-բլուր) քաղաքում հասարակությունը հիմնականում բաժանված է եղել սոցիալական տարբեր խմբերի միջև, որոնցից մեկը եղել է ունևոր և ունեցել է սեփական տնտեսություն, իսկ մյուսը եղել է ոչ ունևոր և ապրել է պետական բավարարությամբ: Առաջինը ներկայացրել է Ուրարտուի կամ Արմենիայի ունևորների, սեփականատերերի դասը, իսկ երկրորդը՝ ստրուկների դասը, որի անդամները զուրկ էին ոչ միայն սեփականությունից, այլև անձնական իրավունքից (նրանք կարող էին ամուսնանալ միայն երկրի թագավորի թույլտվությամբ): Այնտեղ գոյություն են ունեցել թե պետական և թե մասնավոր ստրուկներ: Ստրուկները, չդիմանալով ստրկական կյանքի ծանր պայմաններին, հաճախ դժգոհել են ու դիմել փախուստի: Այդ պատճառով էլ հետապնդվել ու հալածվել են ուրարտական կամ արմենական պետության կողմից:

Քաղաքների շրջակայքի բնակավայրերի բնակիչները ունեցել են տարբեր սոցիալական կազմ: Այնտեղ ապրել են ինչպես հողագործությամբ զբաղվող մարդիկ, այնպես էլ երկրի արքայի եղբայրները, նրա արքայական զարմը:

Ուրարտական կամ արմենական ամբողջներում ապրել են երկրի մշտական զորքի զինվորները, որոնք խաղաղ ժամանակ աշխատանքներ են կատարել և պետությանը վճարել են մարտակառքերի և հեծելու ձիերի հարկ: Այդ զինվորները հիմնականում ձեռք են բերվել երկրի համայնականներից: Երբ նրանք զորացրվել են, վերադարձել են իրենց համայնքները:

Ամբողջների շրջակայքի բնակավայրերում ապրել են այնպիսի մարդիկ, որոնք զբաղվել են հողագործությամբ, անասնապահությամբ և ձիաբուծությամբ: Դրանք եղել են երկրի համայնականները:

Ուրարտական կամ արմենական զորքի զինվորների կազմի մեջ են մտել, ինչպես ընդգծվեց վերևում, հետևակները, հեծյալները և կառավարողները: Դրանցից կառավարողները եղել են երկրի վերնախավի անդամները, իսկ հետևակները և հեծյալները պատկանում էին համայնականների խավին:

Ուրարտական կամ արմենական համայնականները պետությանը որպես հարկ վճարել են ձիեր, ջորիներ, կովեր, ցուլեր, ոչխարներ, մարտական զենքեր, նետի աղեղներ, նետի սլաքներ, գարի, գինի, յուղ, պղինձ, ստրուկներ, ինչպես նաև այնպիսի մարդիկ, որոնք զինվորներ չեն եղել (հավանաբար նրանք տնտեսական աշխատանքներ են կատարել):

Նվաճված երկրներից ուրարտական կամ արմենական պետությունը ձեռք է բերել մեծ քանակությամբ գերիներ, կողոպուտ, հարկ ու տուրք: Եթե գերիների մի մասը մտցվել է երկրի զորքի մեջ, ապա մյուս մասը ստրկացվել է:

8. Ա) ԳԻՐԸ.- Ուրարտուի կամ Արմենիայի մշակույթի անբաժան մասն է հանդիսացել գիրը, որը ունեցել է իր զարգացման 4 փուլերը՝ 1) պատկերագրության փուլը, 2) գաղափարագրության կամ հիերոգլիֆիկ գրության փուլը, 3) վանկագրության փուլը, 4) հնչյունագրության փուլը:

1) Պատկերագրության փուլը սկիզբ է առել դեռևս մ.թ.ա. XII հազարամյակից, երբ նախնադարյան մարդուն գալիս է փոխարինելու ժամանակակից մարդը կամ բանական մարդը (homo sapiens): Այդ ժամանակաշրջանում մարդը ապրում էր որսորդության միջոցով: Հայկական լեռնաշխարհը հարուստ էր որսի կենդանիներով: Այնտեղ ապրող մարդը սկսած մ.թ.ա. VIII հազարամյակից իր որսի կենդանիներին պատկերել է ժայռերի ու քարերի վրա: Գեղամա ու

Սյունիքի լեռներից, ինչպես նաև Արագածից այժմ հայտնաբերվում են ժայռերի ու քարերի վրա կերտված կենդանիների խմբային գծանկարները: Նրանց մեջ իրարից տարբերվում են քարայծների, ձիների, վագրերի և այլ կենդանիների, ինչպես նաև նրանց վրա իրենց մահակներով հսկող մարդկանց գծանկարները, որոնք իրենցից ներկայացնում են որպես պատկերագրեր: Այդ պատկերագրերը կերտվել են ուղղահայաց և հորիզոնական խոշոր գծերով:

2) Գաղափարագրության կամ հիերոգլիֆիկ գրության փուլում մարդը ուղղահայց և հորիզոնական խոշոր գծերի փոխարեն օգտագործում է փոքր աղեղնաձև գծերը, որոնք իրար միացնելով մարդը ստացել է շրջանագծեր, որոնց մեջ պայմանական կարգով ավելացրել է տարբեր դիրք և տարբեր մեծություն ունեող կետեր ու փոքրիկ գծեր ու ստացել գաղափարագրի իմաստ ունեցող պայմանական գրեր՝ տարբեր իմաստներ ունեցող առարկաների համար: Այդպիսիներից են մարդու ոտքը, ձեռքը, գլուխը, ինչպես նաև գույների իմաստները արտահայտող գաղափարագրերը կամ հիերոգլիֆիկ գրերը:

3) Վանկագրության փուլը սկիզբ է առել մ.թ.ա. III հազարամյակից: Մարդը ուղղահայաց և հորիզոնական փոքր գծերը իրար միացնելով ստացել է սեպածև վանկագիր տառեր, որոնցից ամեն մեկի մեջ կա թե բաղաձայնի և թե ձայնավորի իմաստ (իհարկե, երբ տվյալ տառը միայն ձայնավոր հնչյունի համար է ստեղծվել, նրա մեջ, բնականաբար, բացակայում է բաղաձայն հնչյունը և նրա իմաստը):

Մարդու կողմից ստեղծված վանկագիր տառերի թիվը չի անցել 21-ից: Ուստի նրա այդ տառերը ծառայել են միայն 21 հնչյուններ ունեցող լեզուների համար: Այդպիսի լեզուներից էին՝ շումերների, սեմական ծագում ունեցող ասորեստանցիների, բաբելոնացիների, խուրրիական ծագում ունեցող միտանացիների, հնդեվրոպական ծագում ունեցող նեսի-խեթերի, հնդիրանական ծագում ունեցող էլամցիների, պարսիկների լեզուները, որոնցով գրվել են սեպագիր արձանագրությունները:

Ի տարբերություն դրանց, Ուրարտու կամ Արմենիա պետության հիմնական և տեղաբնիկ բնակիչների՝ ուրարտների կամ արմենների լեզվի հնչյունների թիվը հասել է 36-ի, որոնք գրվել են 39 տառերով, այսինքն՝ վերոհիշյալ լեզուներից 15 հնչյուններով կամ տառերով ավել վերոհիշյալ լեզուներից, որի պատճառով էլ ուրարտների կամ

արմենների լեզվով սեպագիր արձանագրություններ չեն գրվել ինչպես երկրի առաջին և հիմնադիր թագավոր Արամեի ժամանակ և նրանից հետո: Սակայն Արամեի մահից հետո թեև պետությունը մնում է կանգուն և նրա անունով է կոչվում միջազգային ասպարեզում՝ ասորեստանցիների, բաբելոնացիների, երայացիների, էլամցիների, պարսիկների կողմից Ուրարտու կամ Արմենիա անունով, բայց փոխվել է երկրի արքայական դինաստիան, որը կոչվել է Բիաինիլի անունով: Բիաինացիների լեզուն ուներ 21 հնչյուն, այսինքն՝ 15 հնչյուններով պակաս (կամ 2 անգամ պակաս) ուրարտների կամ արմենների լեզվի հնչյունների թվից, որի պատճառով էլ նրանց լեզվով Սարգուրի I որդի Իշպուլիմի ժամանակաշրջանից սկիզբ է առնում ուրարտական կամ արմենական պետության մեջ սեպագիր արձանագրությունների գրությունը բիայնացիների լեզվով, իսկ ուրարտների կամ արմենների լեզուն մնում է որպես երկրի բնակիչների համար բանավոր, խոսակցական լեզու:

4) Հնչյունագրության փուլը սկիզբ է առել մ.թ.ա. 330 թվականից, քանի որ վանկագրությունը այլևս չէր բավարարում մարդկանց պահանջները: Հնչյունագրությունը անսահման ամփոփություն ուներ վանկագրության համեմատությամբ, քանի որ վերացրել էին գրության անցնելու 20-21 հնչյունների հետ կապված սահմանափակումները: Այժմ կարելի է ամեն մի լեզվով գրության անցնել: Բայց այս դեպքում պետք է, նախ՝ հայտնի լինեին տվյալ լեզվի հնչյունների ճշգրիտ քանակը, ապա գրված լինեին այդ հնչյունների քանակին համապատասխան տառերը: Բայց քանի որ ուրարտերեն կամ արմեններեն լեզվի հնչյունների թիվը 15-ով (գրեթե կրկնակի անգամ) ավելի էր, ուստի պետք է նախ հաշվել, թե որ հնչյուններն են դրանք, դրանց համապատասխան էլ տառեր պետք է ստեղծվեին, որից հետո նոր միայն կարելի էր ուրարտերեն կամ արմեններեն լեզվի համար հնչյունների և տառերի համակարգ, կաղապար կազմվել: Դրա համար հարկավոր էր բացահայտել այդ ամբողջ գաղտնիքը և նոր միայն անցնել ուրարտերեն կամ արմեններեն լեզվի հնչյունական գրությանը: Այդ գաղտնիքը հետագայում պարզեց հանձարեղ Մեսրոպ Մաշտոցը՝ նա հաշվեց ուրարտերեն կամ արմեններեն (հայերեն) լեզվի հնչյունների թիվը, ստեղծեց այդ հնչյուններին համապատասխան բոլոր տառերը՝ (նախ և առաջ վերոհիշյալ 15 հնչյունների համար ստեղծեց տառերը, որ մինչ այդ չէին գրվել), ապա նոր անցավ հայերեն լեզվով գրությանը:

Բ) ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.- գրականությունը Ուրարտու կամ Արմենիա պետության մեջ ծնունդ է առել այն ժամանակից, երբ առաջ է եկել վանկագրությունը: Այն գրվել է ոչ թե թղթի, այլ ժառյերի, քարերի և հում աղբյուրների վրա: Այս կապակցությամբ ուշագրավ է, որ Յին Արևելքի, մասնավորապես Ասորեստանի արքայական տներում հում աղյուսի վրա գրված (բայց հետագայում թրծված) ուսումնական տեքստերը դիտվել են որպես գրքեր և նրանցով սովորեցրել են սեպագրությունը, պատմական ու գիտական արժեք ունեցող նյութերը:

Ուրարտու կամ Արմենիա պետության վանկագրությունը սկիզբ է առել Սարգուրի I-ի ժամանակից, բայց այն գրվել է թշնամական Ասորեստանի լեզվով: Իշպուհինի ժամանակից գրվել են Յայկական լեռնաշխարհի ցեղերից մեկի լեզվով, տվյալ դեպքում՝ հնդեվրոպական ծագում ունեցող նաիրի-բիաինական լեզվով, որը հարազատ է եղել այդ լեռնաշխարհի բնակիչներին, այնտեղ առաջացած հզոր պետությամբ՝ Ուրարտուին կամ Արմենիային: Ուրարտու կամ Արմենիա պետության ներսում գրվել են շուրջ 500 սեպագիր արձանագրություններ, որոնք դիտվում են որպես գրականության մուշնեթ: Դրանք արժեքավոր տեղ են գրավում համաշխարհային հին գրականության ոսկե ֆոնդում:

Գ) ԼԵՁՈՒՆ.- Ուրարտու կամ Արմենիա պետության ներսում գործողության մեջ են դրվել ինչպես պետության հիմնական, տեղաբնիկ բնակիչների՝ ուրարտների կամ արամների բանավոր, խոսակցական լեզուն, այնպես էլ Արածանի գետի հյուսիսային ավազանում ապրող նաիրյան-բիաինական ծագում ունեցող Բիանի երկրի բնակիչների՝ բիաինացիների լեզվով գրված սեպագիր արձանագրությունների լեզուն: Սակայն բիաինացիների լեզվով սեպագիր արձանագրությունները գրվում էին հիմնականում ժառյերի ու քարերի վրա, շատ քիչ դեպքում նաև հում աղյուսների վրա, և այն էլ սեպագիր-վանկագիր տառերով, որոնք ոչ միայն անհասկանալի էին ուրարտներեն կամ արմեներին, այլև բիաինացիներին: Այդ պատճառով էլ բիաինացիները շփվելով ուրարտների կամ արամների հետ, սովորում էին նրանց լեզուն և մոռացության մատնում իրենց լեզուն: Երբ դադարեց սեպագիր վանկագրությունը գործածվելուց մ.թ.ա. 331-330 թվականներին, արդեն ամբողջ բիաինացիները խոսում էին ուրարտների կամ արմենների լեզվով, ծուլվել էին նրանց: Ուրարտների կամ արամների բանավոր, խոսակցական լեզուն համազգային լեզու լինելուց բացի դարձավ համաժողովրդական լեզու: Բիաինացիների լեզուն ուներ հնդեվրոպական ծագում: Այն հեռավոր ցեղակցական

կապ ուներ ուրարտների կամ արմենների (հայերի) հնդեվրոպական ծագում ունեցող լեզվի հետ:

Դ) ԱՐՎԵՍՏԸ.- Ուրարտու կամ Արմենիա պետության մշակույթի անբաժան մասն է կազմում այդ պետության արվեստը, որը բաժանում է 2 խմբի՝ կիրառական արվեստի խումբ, ճարտարապետական արվեստի խումբ:

Ա) Կիրառական արվեստի խումբը բաժանվում է 4 ճյուղերի, որոնց թվին են պատկանում 1) մետաղամշակության արվեստի ճյուղը, 2) փայտամշակության արվեստի ճյուղը, 3) կավագործության արվեստի ճյուղը, 4) քարագործության արվեստի ճյուղը: Դրանիցից մետաղագործության արվեստի ճյուղը բաժանվում է մի քանի ենթաճյուղերի: Դրանք են՝ 1) արձանագործական արվեստի ենթաճյուղը, 2) զարդագործական արվեստի ենթաճյուղը, 3) կենցաղային իրերի արվեստի ենթաճյուղը, 4) զինագործական արվեստի ենթաճյուղը:

Քանի որ Ուրարտու կամ Արմենիա պետության նպատակն էր՝ փակել ասուրական կործանարար արշավանքների ճանապարհը, ուստի Ուրարտու կամ Արմենիա պետությունը պետք է խաղաղ թե ռազմական ճանապարհով միավորումը Յայկական լեռնաշխարհի ցեղերին: Յանուն այս նպատակի իրագործման, Ուրարտու կամ Արմենիա պետությունը պատրաստում է զանազան տիպի մետաղյա զենքեր: Դրանցից մասնավորապես արքաների զենքերը պատրաստվում էին արվեստի կատարյալ ձևերով և դառնում արվեստի կատարյալ նմուշներ: Այդպիսին են թագավորների համար պատրաստված վահանները, սաղավարթները: Դրանք պաշտամունք էին առաջացնում ժողովրդի մեջ զենքի նկատմամբ: Կատարյալ արվեստի նմուշներ են նաև Ուրարտու կամ Արմենիա երկրի կանացի զարդերը:

Բ) Ուրարտուի կամ Արմենիայի ճարտարապետական արվեստի խումբը բաժանվում է 5 ճյուղերի՝ 1) ամրոցաշինության արվեստի ճյուղը, 2) տաճարաշինության արվեստի ճյուղը, 3) ազուցման (ինկրուստացիայի) արվեստի ճյուղը, 4) որմնանկարչության արվեստի ճյուղը, 5) ժայռափոր շինարարության արվեստի ճյուղը:

Ասուրական պետության կործանարար արշավանքների ճանապարհը փակելու նպատակով Ուրարտու կամ Արմենիա պետությունը կառուցում է հոյակապ և ամուր ամրոցներ: Այդ պետության ճարտարապետական արվեստի գործեր են տաճարները:

Խալդի աստծուն Մուծածիր երկրի Արդինի քաղաքում կառուցված տաճարը ուրարտական կամ արմենական կատարյալ արվեստի նմուշ է իր զենքերով ու զարդերով և կառուցման ձևերով: Արվեստի կատարյալ նմուշներ են իրենցից ներկայացնում որմնանկարչության արվեստի ճյուղի գործերը: Այդպիսին են Էրեբունի ամրոցի որմնանկարները:

Ուրարտու կամ Արմենիա պետության արվեստը ազդվել է եվրոպական ժողովուրդների արվեստից, իսկ շատ հարցերում էլ ինքն է ազդել եվրոպական ժողովուրդների, մասնավորապես լիկիացիների, կիպրիացիների, հույների, լատինացիների, հռնիացիների, պափլագոնացիների արվեստի վրա ու դարձել նրանց հնագույն արվեստի նախատիպը:

Ուրարտու կամ Արմենիա պետության արվեստը ստեղծել են այդ պետության հիմնական բնակիչները՝ ուրարտները կամ արմենները:

Ե) ՊԱՇՏԱՍՈՒՆԷ ԿԱՍ ԿՐՈՆԸ.- Յետազոտողներից Լեհմանն-Յուսուպը Խալդի աստծու ծագումը որոնում է արևմտյան Անդրկովկասի ժամանակակից ցեղերի մեջ, որի պատճառով էլ Խալդի դիցանվան «խալ» բառամասը համադրում է այդ ցեղերի ժամանակակից հնչյունագիր լեզվում տեղ գտած «խալ» արմատի հետ, որը ունի «երկնային» իմաստ:

Սակայն փաստերը ցույց են տալիս, որ Խալդին ոչ թե երկնային, այլ երկրային աստված է: Երկնային աստվածներ են եղել արևի աստված Շիվինին և կայծակի ու ամպրոպի աստված Թեյշեբան: Այնուհետև, Խալդի աստծու անվան հիմքում ընկած է ոչ թե երկնային իմաստ արտահայտող ժամանակակից արևմտյան Անդրկովկասի անհայտ ցեղերից մեկի լեզվի ինչ-որ բառի «խալ» արմատը, այլ ուրարտերենի կամ արմեներենի անմիջապես շարունակությունը հանդիսացող հայերեն լեզվի «հաղթ» բառը, որը Է.Բ. Աղայանը ստուգաբանում է՝ ուժեղ, հզոր հաղթական, բարձր, վիթխարի, գերազանց, վսեմ, հաղթություն բառերի իմաստներով: Ակներև է, որ Խալդի դիցանվան տառադարձումը հանդիսացող «հաղթ» բառի իմաստները գրեթե համապատասխանում են սեպագիր արձանագրություններում Խալդի աստծուն վերագրվող հատկանիշներին՝ նա խիզախ է ու քաջ, նա է առաջինը մտնում նվաճվող երկրի սահմաններից ներս, հաղթում այդ երկրին, իսկ Ուրարտու կամ Արմենիա երկրի թագավորն ու նրա զորքը միայն վերջում են մտնում այդ երկիրը և այնտեղից ձեռք բերում գերիներն ու կողոպուտը:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ, ըստ Վ.Վ. Իվանովի կարծիքի, Ուրարտու կամ Արմենիա պետության պանթեոնի գլխավոր եռաստվածներից երրորդի՝ Շիվինիի անունը ծագել է հնդեվրոպական էթիկական աշխարհին պատկանող նեսի-խեթերի լեզվի ճիսու «աստված» բառից:

Առավել հատաքրքիր է նաև այն, որ Խալդի աստծու հարսնացուին տրվող Բագմաշտու անվան հիմքում ընկած է հնդեվրոպական ծագում ունեցող «բոգ» (աստված) բառը:

Մատնանշված փաստերը ցույց են տալիս, որ հնդեվրոպական ծագում ունեցող ուրարտների կամ արմենների (հայերի) մշակույթը սկիզբ է առել Չայակական լեռնաշխարհում սկսած մ.թ.ա. XII հազարամյակից, երբ նախնադարյան մարդուն գալիս է փոխարինելու ժամանակակից մարդը կամ բանական մարդը (homo sapiens): Այդ մշակույթը իր կատարելության է հասել մ.թ.ա. IX – VI դարերում, երբ ուրարտները կամ արմենները (հայերը) ստեղծում են իրենց Ուրարտու կամ Արմենիա (Չայք, Չայաստան) կոչվող հզոր պետությունը: Ուրարտու կամ Արմենիա պետության պաշտամունքը կամ կրոնը ներկայացնող աստվածները հիմնականում ունեցել են հնդեվրոպական, մասնավորապես հայկական էթնիկական ծագում, այլ ոչ թե միայն խուրրիտական, որ ենթադրել են հետազոտողներ Գ.Ա.Ղափանցյանը, Գ.Ա.Մելիքիշվիլին, Բ.Բ.Պիոտրովսկին և Ն.Վ.Չարությունյանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

ա/ Սկզբնաղբյուրներ / սեպագիր/

- 1.Th. Bauer, Ein Erstbericht Asarhaddons (Zeitschrift für Assyriologie und verwandte Gebiete, Berlin, 1931).
2. W.V. Benedict, Two Urartian Inscriptions from Azerbaijan (Journal of Cuneiform Studies, XIX, New Haven, 1965, № 2).
3. A. Billerbeck und F. Delitzsch, Die Inschriften auf den Scheinen (Beiträge zur Assyriologie und semitischen Sprachwissenschaft, band VI, Leipzig, 1909).
4. S. Birch, Cuneiform Text of the Balawat Inscriptions of Shalmaneser III (The Bronze Ornaments of the Palace Gates of Balawat, London, 1880).
5. R. Borger, Der Gottesbrief (Die Inschriften Asarhaddons Königs von Assyrien, Graz, 1956).
6. E.A.W. Budge and L.E. King, Annals of the Kings of Assyria, I, London, 1902.
- 7.C.J.Gadd, The Fall of Nineveh (The Newly Discovered Babylonian Chronicle, № 21. 901, in the British Museum, London, 1923).
8. A.K. Grayson, Assyrian and Babylonian Chronicles (Texts from Cuneiform Sources, V, tablet B.M.22.047, Locust Valley-New York, 1975).
9. A.K. Grayson, Assyrian Royal Inscriptions, Wiesbaden, Vol. I, 1972, Vol.II, 1976.
- 10.R.F. Harper, Assyrian and Babylonian Letters, London, II, 1893,III,1894, IV, 1895, VI,1897.
- 11.H.Hoffman, J.Friedrich, Der urartische Kandelaber in Hamburg und seine Keilinschrift (Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft, Bd.111, N.F.36, Leipzig, 1961, Ht.2).
- 12.Keilschrifttexte aus Boghazkoi, Leipzig, 1923-1975.
13. Keilschrifturkunden aus Boghazkoi, Berlin, 1921-1975.
- 14.L.W.King, Bronze Reliefs from the Gates of Shalmaneser King of Assyria, London, 1915.
- 15.F.W. König, Handbuch der chaldischen Inschriften, Graz, 1955, Teil I: 1957, Teil II.

16. A.H. Layard, Inscriptions in the Cuneiform Characters from Assyrian Monuments, London, 1851.
17. C.F. Lehmann-Haupt, Corpus Inscriptionum Chaldicarum, Berlin und Leipzig, 1935, Teil II.
- 18 D.D. Luckenbill, Ancient records of Assyria and Babylonia, Chicago, I, 1926; II, 1927.
- 19 L.Messerschmidt, Keilschrifttexte aus assur historischen Inhalts, Band II, Leipzig, 1911.
20. H.C. Rawlinson, The Cuneiform Inscriptions of Western Asia, vol. III, London, 1870.
21. P. Rost, Die Keilschrifttexte Tiglat-Pileasers III, Leipzig, 1893.
22. M.Salvini, Die urartäischen Tontafeln (Bastam, I, Berlin, 1979).
- 23.M. Salvini, Ayanis, I, Roma, 2001.
- 24.A.H. Sayce, The Cuneiform Inscriptions of Van (Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland, London, 1893).
25. E. Schrader, Keilinschriftliche Bibliothek, Berlin, I, 1889, II, 1890.
- 26.O.Schroeder, Keilinschrifttexte aus Assur historischen Inhalts, Band II, Leipzig, 1922.
27. F. Thureau-Dangin, Une relation de la huitième campagne de Sargon, Paris, 1912.
- 28.F. Thureau-Dangin et M.Dunand, Til-Barsib, Paris, 1936.
- 29.L.Waterman, Royal Correspondence of the Assyrian Empire, I-IV, Ann Arbor, 1930-1936.
- 30.F.H. Weissbach, Die Keilschriften der Achämeniden, Leipzig, 1911.
- 31.E.F.Weidner, Die Annalen des Königs Assurbelkala von Assyrian (Archiv für Orientforschung, Berlin, 1930, Band VI).
- 32.H. Winckler, Šupria (Altorientalische Forschungen, II, Leipzig, 1901).
33. H. Winckler, Die Keilschrifttexte Sargons, Bd.I, Leipzig, 1889.
- 34.Н.В. Арутюнян, Корпус урартских клинописных надписей, Ереван,2001.
- 35.И.М.Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (ВДИ,1951, №№ 2,3,4)
- 36.И.М.Дьяконов, Урартские письма и документы, М.-Л., 1963.
37. Г.А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960.

բ/ Գրականություն

- 38.Ն. Աղոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972:
39. Բ.Ն. Առաքելյան, Ուրարտուն և հայ ժողովրդի կազմավորումը /Բ.Ն. Առաքելյան, Գ.Բ. Ջահուկյան, Գ.Խ. Սարգսյան, Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988/:
40. Հ.Ս. Ավետիսյան, Հնագույն էթնիկական տեղաշարժերը և Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. II-I հազարամյակում / ՊԲՀ, 1994, հ.հ.1-2 /:
41. Լ.Ա. Բարսեղյան, Հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը պատմության մեջ, Երևան, 1996:
42. Մ.Ա. Իսրայելյան, Ուրարտական մի հուշարձան Երզնկայի մոտ / ՊԲՀ, 1967, հ.4/:
43. Մ.Ա. Իսրայելյան, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971:
44. Է.Վ. Խանգաղյան. Կ. Հ. Մկրտչյան, Է.Ս. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973:
45. Հ. Հ. Կարազյոզյան, Սարդուրի III-ի հրամանագիրը / ՏՀԳ, 1960, հ.10/:
46. Հ. Հ. Կարազյոզյան, Սեպագիր տեղանուններ, Երևան, 1998:
47. Ս.Ս. Կրկյաշարյան, Երվանդունի արքայատոհմը Հայաստանում / ՊԲՀ, 1973, №4/:
48. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, I, /Երևան, 1971/:
49. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986:
50. Ս.Գ. Հմայակյան, Հայկ Նահապետի մասին առասպելն ու Կիրճա քաղաքը Նիբուրի լեռներում / ՊԲՀ, 1992, հ.1/:
51. Գ.Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940:
52. Մովսես Խորենցի, Հայոց պատմություն, Երևան, 1961:
53. Գ.Բ. Ջահուկյան, Ուրարտերենը և հայերերը / Բ.Ն. Առաքելյան, Գ.Բ. Ջահուկյան, Գ.Խ. Սարգսյան, Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988/:
54. Գ.Խ. Սարգսյան, Մովսես Խորենցու „Հայոց Պատմությունը „ և սեպագրական աղբյուրները / ՊԲՀ, 1992, հ.հ. 2-3/:

55. Դ.Ն. Սարգսյան, Խորենացու „ Պատմության „ մեջ հիշատակվող Հայաստան երկիրը Ուրարտուն է , այլ ոչ թե Շուբրիան / ՊԲՀ, 1984, հ.3/:

56. Դ.Ն. Սարգսյան, Էրեբունի անվան մեկնաբանման հարցի շուրջ / ԼՀԳ, 1990, հ.8/:

57. Դ.Ն. Սարգսյան, Ուրարտացիներ, ալարոդներ, արմեններ հարցի մասին / ՊԲՀ, 1991, հ.1/:

58. Դ.Ն. Սարգսյան, Ուրարտուի սոցիալ-տնտեսական հարաբերությունները կապված „ Ռուսայի փոքր քաղաքի „ և նրա շրջակայքի բնակավայրերի հետ / ԼՀԳ, 1998, հ.1/:

59. Դ.Ն. Սարգսյան, Սոցիալ-տնտեսական կյանքը ուրարտական Ռուսախինիլի քաղաքում / ՊԲՀ, 1998, հ.3/:

60. Դ.Ն. Սարգսյան, Ուրարտուի բնակավայրերի տիպերը և նրանց բնակչության սոցիալական կազմը / Բանբեր Երևանի համալսարանի, 1999, հ.1/:

61. Դ.Ն. Սարգսյան, Ուրարտական համայնական և գինվորական խավերի փախհարաբերությունները / ԼՀԳ, 1999, հ.1/:

62. Դ.Ն. Սարգսյան, Ուրարտական պետության հարկային և իրավական համակարգերը / Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ / ՄՄԱԵԺ, հ.XVIII, Երևան, 1999/:

63. Դ.Ն. Սարգսյան, Բիբլիական «Արարատի լեռները» ըստ սեպագիր արձանագրությունների/ ՊԲՀ, 2001, №2/:

64. Դ.Ն. Սարգսյան, Շողագա, Երևան, 2002:

65. Դ.Ն. Սարգսյան, Դայաենի-Դիաուխի պետության գրաված տարածքը և բնակչության հայկական ծագումը / ԼՀԳ, 2003, №2/:

66. Դ.Ն. Սարգսյան, Բիբլիական «Արարատ երկիրը» ըստ սեպագիր արձանագրությունների և ժողովրդական ավանդությունների / ՊԲՀ, 2003, №3/:

67. Դ.Ն. Սարգսյան, Նոր փաստեր հայ ժողովրդի ծագման մասին կապված Խաթե ցեղամիության հետ / Էջմիածին, 2003, № 9/:

68. Դ.Ն. Սարգսյան, Խայաշա-Ազգի պետության գրաված տարածքը, հայկական ծագումը և քաղաքական կյանքը / Էջմիածին, 2004, №1/:

69. Դ.Ն. Սարգսյան, Ուրարտական պետության կառավարման համակարգը / ԼՀԳ, 2004, № 3/:

70.Դ.Ն. Սարգսյան, Ուրարտական պետության պարբերացման /պերիդիզացիայի/ գլխավոր փուլերը/ ՊԲՀ, 2004, №3/:

71. Դ.Ն. Սարգսյան, Հայերեն լեզվով հիերոգլիֆիկ արձանագրություններ ուրարտական դարաշրջանում /Էջմիածին, 2004, № 6/:

72. Դ.Ն. Սարգսյան, Խորենացու «Հայոց պատմության» մեջ հիշատակված ավանդության հայկական պետական կազմավորումը կամ Արմենիա պետությունը ըստ սեպագիր արձանագրությունների /Նոր-Ղար, 2004, №4/:

73. Դ.Ն.Սարգսյան, Բիբլիական «Արարատի թագավորությունը» ըստ սեպագիր արձանագրությունների (Ազդարար, Կալկաթա (Հնդկաստան) 2011թ.,), № 7, էջ 24-25:

74. Դ.Ն. Սարգսյան, Արցախը Ուրարտական դարաշրջանում (Բազմավեպ, Վենետիկ, 2011թ., № 9 (հրատարակման ընթացքի մեջ է)):

75. Դ.Ն. Սարգսյան, Ուրարտուի կիրառական արվեստը, նրա էթնիկական արմատները (հանդես, ամսօրեայ, Վենա, № 11, 2011):

76. Ա.Վ. Քոսյան, Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999:

77. Ա.Վ. Քոսյան, Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999:

78.Н.В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту,Ереван, 1964.

79.Н.В. Арутюнян,Бианили (Урарту), Ереван,1970.

80.И.М. Дьяконов, Заметки по урартской эпиграфике. II (ЭВ,1952,VI).

81.И.М. Дьяконов, К вопросы о судьбе пленных в Ассирии и Урарту (ВДИ,1952, №1).

82.И.М.Дьяконов,Сравнительно-грамматический обзор хурритского и урартского языков (Переднеазиатский сборник, М.,1961).

83.И.М. Дьяконов, Некоторые данные о социальном устройстве Урарту (Сборник памяти академика А.И.Тюменева, 1963).

84.И.М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968.

85.И.М. Дьяконов, Малая Азия и Армения около 600 г. до н.э. и северные походы вавилонских царей (ВДИ, 1981, № 9)

86.И.М. Дьяконов, Хуррито-урартский и восточно-кавказские языки (Древний Восток, III, Ереван, 1978).

87.П.Кальмеуер, Символ Халди (Древний Восток, IV, Ереван, 1983).

88.Г.А.Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Ереван,1940.

89.Ксенофонт, Киропедия, М.,1976.

90.Л.А.Липин, Аккадский (вавилоно-ассирийский) язык, словарь, выпуск II, Л.,1957.

91.Я.А.Манандян, О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956.

92.А.А.Мартиросян, Город Теушебаици, Ереван, 1961.

93.А.А. Мартиросян, Аргиштихинили, Ереван, 1974.

94.Н.Я. Марр, Надпись Русы II из Маку (Записки Восточного отделения русского археологического общества, XXV, Петербург, 1921).

95.Г.А. Меликишвили, Диухи (ВДИ, 1951, № 4).

96.Г.А. Меликишвили, Некоторые вопросы социально-экономической истории Наури-Урарту(ВДИ, 1958, № 2).

97.Г.А. Меликишвили, Наури-Урарту, Тбилиси, 1954.

98.Г.А. Меликишвили, К вопросу о хетто-цупанийских переселенцах в Урарту (ВДУ, 1958, № 2).

99.И.И.Мещанинов, Аннотированный словарь урартского (бианского) языка, Л., 1978.

100.М.В.Никольский, Клинообразные надписи ванских царей (Древности восточные, т. I, вып. III, 1883).

101.Б.Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944.

102.Б.Б. Пиотровский, Кармир-Блур, I , Ереван, 1950.

103.Б.Б. Пиотровский,Клинообразные надписи на бронзовых чашах из раскопок на Кармир-блуре в 1949 г. (ЭВ, 1951, У).

- 104.Б.Б. Пиотровский, Кармир-блур, II, Ереван, 1952.
- 105.Б.Б. Пиотровский, Кармир-блур, III, Ереван, 1955.
- 106.Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959.
- 107.Б.Б. Пиотровский, Искусство Урарту, Л., 1962.
- 108.Б.Б. Пиотровский,, Урартская надпись из раскопок Кармир-блур, связанная с основанием Эрбуну (ЭВ, 1966, XVII).
- 109.Д.Н. Саркисян, Страна Шубриа, Ереван , 1989.
- 110.Д.Н. Саркисян, О некоторых документах страны Аза, связанных с социальными отношениями в Урарту (Вестник общественных наук, Ереван, 1988, № 3).
- 111.Священные книги (Ветхага завета, для употребления еврейми), Вена, 1877.
- 112.В.С. Сорокин, Археологические данные для характеристики социально-экономического строя Урарту (ВДИ, 1952, № 2).
113. М.А.Хачикян, Хурритский и урартский языки, Ереван , 1985.
- 114.N. Adonts, Historie d'Arménie, Paris, 1946.
- 115.R.D. Barnett, The Excavations of the British Museum Toprak Kale Near Van (Iraq, Vol. XII, Part I, London, 1950).
- 116.W. Belck, C.F. Lehmann, Uber neu armenische Keilinschriften Zeitschrift für Ethnologie, XXIV, Heft II, Berlin, 1898.
- 117.P.Calmeyer, Tu den Eisen Lanzenspitzen und die Lanze des Haldi (Bastam, I, Berlin, 1978).
- 118.I.M. Diakonoff and S.M. Kashkai, Geographical Names According to Urartian Texts (Repertoire Géographique des Textes Cunéiformes, IX, Wiesbaden, 1981).
- 119.E.Forrer, Die Provinzeiteilung des assyrischen Reiches, Leipzig, 1920.
- 120.A.Goetze, Zeitschrift für Assyriologie und Verwandte Gebiete, N.F., VI, Leipzig, 1930.
- 121.Herodotus, Historiarum Libri IX, London, 1960.
- 122.W. Kleiss, Ein Urartäisches Gazellenkopt-Trinkgefäß aus Bastam (Archaeologische Mitteilungen aus Iran, Neue Folge,6, München–Teheran,1973.)

- 123.W. Kleis und H. Hauptman, Topographische Karte von Urartu (Archaeologische Mitteilungen aus Iran, Ergänzungsband 3, Berlin, 1976).
- 124.C.F. Lehmann–Haupt, Armenian einst und jetzt, Berlin und Leipzig, Band II, Heft 1, 1926, Heft 2, 1931.
125. C.F. Lehmann–Haupt, Materialien zur älteren Geschichte Armenians und Mesopotamiens, Berlin, 1907.
- 126.J.Marquart, Eranšahr nach der Geographie des Pseudo-Moses Chorenacci, Berlin, 1901.
- 127.W. Nagel, Ein urartäischer Helm aus dem Argisti-Magazin (Archiv für Orientforschung, XIX, Berlin, 1960).
- 128.Strabonis, Geographica, Leipzig, 1915-1925.
- 129.A.Ungnad, Subartu, Berlin, 1936.
- 130.H. Winckler, Orientalistisch Literaturzeitung, Berlin, 1907.
- 131.Xenophontis, Cyropaedia, Gothae, 1838.
132. Paul E. Zimansky, Ecology and Empire: the structure of the Urartian state, Chicago, 1985.
133. (24) Dimitri Nikolay Sargsyan, Architectural art of Urartu, the origination of its ethnic roots journal of Oriental and African studies, vol. 19 (2010), p.367-371 (Athens-Greece).
- 134.(25) Dimitri Nikolay Sargsyan, Applied art of Urartu the origination of its ethnic roots journal of Oriental and African studies, vol. 20. (2011), p. 286-295 (Athens-Greece).
- 135.(26) Dimitri Nikolay Sargsyan, The worship and religion of the Urartian state the roots of its ethnic origin (Journal of Oriental and African studies, vol.26(2014)/p. 376-385 (Athens-Greece)).

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

- AKA**– E.A.W. Budge and L.W. King, *Annals of the Kings of Assyria*, I, London, 1902.
- AFO– Altorientalische Forschungen, Leipzig, 1901.
- BA –Beiträge zur Assyriologie und semitischen sprachwissenschaft, Band VI, Leipzig, 1909.
- BRGS–L.W. King, *Bronze Reliefs from the Gates of Shalmaneser King of Assyria*, London, 1915.
- CICH–C.F. Lehmann–Haupt, *Corpus Inscriptionum Chaldicarum*, Berlin und Leipzig, II, 1935.
- Handbuch–F.W. König, *Handbuch der chaldischen Inschriften*, Graz, Teil I, 1955; Teil II, 1957.
- JRAS–journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland, London, 1893.
- KAH,I–Messerschmidt, *Keilschrifttexte aus Assur historischen Inhaltes*, Band I, Leipzig, 1911.
- KAH,II – O.Schroder, *Keilschrifttexte aus Assur historischen Inhalts*, Band II, Leipzig, 1922.
- KBo–Keilschrifttexte aus Boghazkoi, Leipzig, 1923-1975.
- KUB–keilschrifturkunden aus Boghazkoi, Berlin, 1921-1975.
- Xen.Cyrop. – Xenophonits *Cyropaedia*, Gothae, 1838.
- ZA-Zeitschrift für Assyriologie und verwandte Gebiete, N.F., ¾, Beerlin, 1931.
- АВИИУ–И.М.Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (ВДИ, 1951, NN2,3,4,),М.**
- ВДИ–Вестник древней истории, М.
- ВОН–Вестник общественных наук, Ереван.
- ЗВО–Записки Восточного отделения Русского археологического общества, Санкт–Петербург.
- ЗСЫ– Н.В.Арутюнян, *Земледелие и скотоводство Урарту*, ереван, 1964.
- КУКН– Н.В.Арутюнян, *Корпус урартских клиписных надписей*, Ереван, 2001.
- УКН– Г.А. Меликишвили, *Урартские клинообразные надписи*, М., 1960.

- УПД– И.М.Дьяконов, *Урартские письма и документы*, М.-Л., 1963.
- ЭВ– Эпиграфика Востока, М.
- ԼՂԳ– Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան:**
- ՄՄԱԵԺ– Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ:**
- ՊԲՀ– Պատմա–բանասիրական հանդես, Երևան:
- ՏՀԳ – Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ - ԱՐՄԱՆԻ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ (ՀԱՅԱՍՏԱՆ) ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ԸՍՏ ՇՈՒՄԵՐԱ - ԱՔՔԱԴԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱԴԲՅՈՒԲՆԵՐԻ 3

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ - ԱՐՄԱՆԻ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ (ՀԱՅԱՍՏԱՆ) ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ԸՍՏ ԱՔՔԱԴ ԵՐԿՐԻ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՎՈՐ ՍԱՐԳՈՆ ԱՔՔԱԴԻ ՍԵՄԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 3

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ - ԱՐՄԱՆԻ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ (ՀԱՅԱՍՏԱՆ) ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՔՔԱԴ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱԳԱՎՈՐ ՆԱՐԱՄՍԻՆԻ ՍԵՄԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 6

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ - ԱՐՄԱՆԻ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ (ՀԱՅԱՍՏԱՆ) ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՇՇՈՒՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱԳԱՎՈՐ ԱՇՈՒՐՅԱՆ ՍԱՐԳՈՆԻ ՍԵՄԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 10

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ - ԱՐՄԱՆԻ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ (ՀԱՅԱՍՏԱՆ) ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՍՈՐԵՍԱՆԻ ԹԱԳԱՎՈՐ ԱԴԱԴՆԵՐԱՐԻ- I (1336-1305) ՍԵՄԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 12

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ - ԱՍՈՐԵՍԱՆԻ ԹԱԳԱՎՈՐ ԱՇՇՈՒՐՆԱԾԻՐԱՊԱԼ II-Ի ՈՐԴԻ ՍԱԼՄԱՆԱՍԱՐ III-Ի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԱՆԻ (ԱՐՄԵՆԻԱ) ԵՐԿՐԻ ԹԱԳԱՎՈՐ ԱՐԱՍԵԻ ԴԵՄ ՄՂԱԾ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԻ ԵՎ ՆՐԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ 13

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ 17

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ - ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ 17

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ - ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՏԵՂ ԳՏԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 31

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ - ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆ ԸՍՏ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 42

§ 1. ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԵՏԱՋՈՏՈՂՆԵՐԻ ՍԽԱԼՆԵՐԻՔՆԵԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ 47

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ - ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆ ԸՍՏ`

1) Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի սեմական ծագում ունեցող Կարխի կամ Տուշխանի, մոնոլիթ սեպագիրարձանագրության,

2) Հայկական ժողովրդական ավանդությունների,

3) Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունների,

4) «Բեհիստունյան» և «Նակշի-ռուստամյան» սեպագիր արձանագրությունների..... 55

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ - ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆ`

1) Ըստ նոր բացահայտված 29 սեպագիր արձանագրությունների

2) Ըստ նոր բացահայտված արքայական 19 հետախուզական նամակների 76

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ - ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ, ՆՐԱ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ 94

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ - ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 94

§ 1. ԳԻՐԸ 94

§ 2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 96

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ - ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐԱԾ ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ԼԵՋՈՒՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ 101

§ 1. ՎԱՆԿԱԳԻՐ ԵՎ ՀՆՉՅՈՒՆԱԳԻՐ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵՎԱՆ ԳԱԼԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ 101

§ 2. ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ՝ ՈՒՐԱՐՏՆԵՐԻ ԿԱՄ ԱՐՄԵՆՆԵՐԻ ԲԱՆԱԿՈՐ, ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶԿԻ ԵՎ ՆԱԻՐՅԱՆ ԾԱԳՈՒԲ ՈՒՆԵՑՈՂ ԲԻԱԻՆԱՑԻՆԵՐԻ ՍԵՊԱԳԻՐ ԳՐԱՎՈՐ ԼԵԶԿԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՐԱՄԵՐԺ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՔՆՆԱՂԱՏՈՒԹՅՈՒՆԸ.....	105
ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ - ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ	
ԱՐՎԵՍՏԸ.....	113
§ 1. ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ, ՆՐԱ ԾԱԳՄԱՆ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ.....	113
§ 2. ՈՒՐԱՐՏՈՒԻ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ, ՆՐԱ ԾԱԳՄԱՆ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ.....	126
ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ - ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՄ ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏԱՄՈՒԲԸ ԿԱՄ ԿՐՈՆԸ, ՆՐԱ ԷԹԻԿԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ.....	134
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	137
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ	
ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ	170
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ	178

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՍԱՐԳՍՅԱՆ ԴԻՄԻՏՐԻ
САРГИСЯН ДИМИТРИЙ
SARGSYAN DIMITRI**

**ԱՐՄԱՆԻ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ ԵՎ ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՍ ԱՐՄԵՆԻԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԸՍՏ ՍԵՊԱԳԻՐ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ**

**ПРОИСХОЖДЕНИЕ ГОСУДАРСТВ АРМАНИ ИЛИ АРМЕНИЯ И
УРАРТУ ИЛИ АРМЕНИЯ И ИХ КУЛЬТУРА ПО КЛИНОПИСНЫМ
ИСТОЧНИКАМ**

**ORIGIN THE STATES ARMANI OR ARMENIA AND URARTU OR
ARMENIA AND THEIR CULTURE BY CUNEIFORM SOURCES**

Խմբագիր՝
Տեխնիկական խմբագիր՝
Կազմի ձևավորում՝

Աթանասիոս Թ. Ֆոտոպոլուս
Արգիշթի Սարգսյան
Գագիկ Սարոյան

Ստորագրված է տպագրության՝ 10.07.14: Չափսը՝ 70x100 1/16:

Թուղթը՝ օֆսեթ: Տպագրության եղանակը՝ օֆսեթ:

11.5 տպագրական մամուլ:

Տպաքանակը՝ 300: